





I-486







YUNURU



1873

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ	
Խմբագրութիւնից	Դ—Դ
ՀԱՅՈՒԹՈՒԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ	
Հայ մամուլի վիճակի տռիթով, Ա. Գուլամիլիւանց.	Ե-ԺԴ
ՏԵՂԱԳՐԱԿԱՆ	
Աարպատականը ներկայումս.	1
Պարկաստանից և Տաճկաստանից, Ալէրտու	19
Սարուշէն զիւղը, Արշախչյան.	44
Հայ թիսելը հայաստանում, Կոնդցի «Բարեկառ Հայութու» բայում ժէ.	
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ	
Յիշատակաց ծրար մը, Ա. Տէլիանց.	49
ԿԵՆԱՍԱԳՐԱԿԱՆ	
Մատթէս և պիտօնոս Իզմիրյան, Առէջ.	65
Ստեփաննոս և պիտօնոս Միլթարեան.	119
Աարպատականի Հայոց ապագան, Երանեան	147
Խորէն արքեպիտօնոս Նար-Պէյ, ***	156
ԲԱՆԱՍԵՂԱՌԻԹԻՒՆՆԵՐ	
Բէթղէչէմի ոյրի սուրբ մանկիկը, Ա. Իսահակէան. .	162
Ռափայէլ Պատկանեանի յիշատակին, Գ. Գահ. Մէրտու-Դանց. .	163
Աղէտը, Յ. Կոստանդնաց	164
Այուղադ.	165
Քուոի ափին, Հայ Արմէն	166
ՄԱՍԵՆԱԳՐԱԿԱՆ	
Ֆ. Դոստուսի. Յիշատակարան մեռեալ տանից (Յաւել-Լուածում) շարունակելիք.	49—72
ՄԱՍԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ	
Դաշտական պատմութիւնից, Քրդականի և Միջազգեարքի վրայով, Միլլէր-Սիմոնի և այլն. . .	167
ԲԱՆԱՍԵՂԱՌԻԹԻՒՆՆԵՐ	
Վրաց ժողովրդական երգեր, Հայ Արմէն.	198
ԱՅԼ ԵՒ ԱՅԼ Ք	199
ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ	
Գեղարուեստարը և նորա նշանակութիւնը	1—11
Գեղարուեստների մասին, Լ. Մ.	11—18
ՑԱՅՑԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ	205

Ա Ռ Ա Ք Ս

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ

ՊԱՏԿԵՐԱՁԱՐԴ ՀԱՆԴԵՍ

1893

Գ Ի Ւ Թ Ա

Հ Ի Ն Գ Ե Բ Ո Ր Դ Տ Տ Ա Ր Ի

Ա-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ
ՏՊԱՐԱՆ Յ. Ի. ԼԻԲԵՐՄԱՆԻ

ІІІ ІІІ

УЧІВОДОВІ РОЗСІЇ
Із земельної
Історії, біографії

Дозволено цензурою Спб. 12 Мая 1893 г.

Типографія Я. І. Лібермана, Вознесенській пр., д. 38—4.

Ս Ի Ք Ա Ն Ի Խ Օ Ս Զ

Դէսքերի ինչ ինչ անյաջող բերմամբ՝ այսօր ռուսաց հասարակութիւնը, իսկագէս ասած, դեռ ևս ոչ մի որոշ գաղափար և ձիշտ տեղեկութիւն չունի կազմած իր հարազատ հայրենսակիցների մասին՝ թէ՛ Տաճկահայտաստանում և թէ՛ Պարսկաստանում, մասնաւանդ վերջնի վերաբերմամբ, չնայելով որ արիւնակցական կապից զատ՝ մեր պարսկահայ եղայրները ապրում են մեր քթի տակ՝ ամենայն կողմից, մասնաւանդ այժմեան պայմաններում, նշանաւոր մի հայկական աշխարհում:

Խիստ մեծ կարեորութիւն տալով նաև պարսկահայ հասարակութեան բարոյական շահերին, մենք այսուհետեւ մասնաւորապէս հետեւելու ենք պարսկահայոց կեանքի ելեկչներին և տշխատելու ենք հիմնական կերպիւ ծանօթացնել ռուսահայոց նոցա կեանքի և իրաց վիճակի հետ:

Եյս տեսակէտով մենք մի առանձին գոհութեամբ զետեղում ենք և ներկայ զրքում մեր երկու-երեք աշխատակիցների գրութիւնները, որոնց մէջ այս և այն պատրուակով շօշափում են պարսկահայ ժողովրդի կենսական շահերը: Առցա մէջ, անշուշտ, առաջին տեղն է բռնում պարսկահայոց համար Հայժառականոց հիմնելու կենսական խնդիրը, որի վերայ գարձնում ենք մեր կարող ազգայինների մասնաւոր ռւշագրութիւնը:

Տպագրելով Մատթէոս եպիսկոպոս Իզմիրլեանի կեն-
սագրութիւնը, որ կազմուած է մեր մասնաւոր պատուէրով,
յուսանք՝ որ մեր ընթերցող հասարակութիւնը կընդունի մեծ
սիրով և որը կարդալով՝ կենսագրութեան հետ զուղընթա-
ցաբար՝ կը ծանօթանայ նաև վերջին երկու երեք տասնեակ
տարիներում կատարուած տաճկահայոց մի կարգ շահագրո-
գիու խնդիրների և նշանաւոր անձնաւորութեանց հետ։ Ցա-
ւում ենք, որ ստիպուած եղանք այս գրութեան միջից գուրս
թողնել մի քանի յշյժ հետաքրքիր տեղեկութիւններ։

Նմանապէս ցաւում ենք, որ մեր հանդիսի նիւթական
միջոցի սղութեան պատճառով կարող չեղանք «Արաքսի»
մի քանի բաժիններում զետեղել մեր ձեռքում եղած պատ-
րաստի նիւթերը։

Հանդ. Գարեգին Արուանձտեանի կենդանագիրը փորա-
գրութեան ժամանակ աւրուելու պատճառաւ չ'մտաւ այս
գրքի մէջ քննադատական յօդուածի հետ միասին։



ՀԱՍՏՐԱԿԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ

ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ԴԵՐԱՎՈՐՈՒՄ ՎԻՃԱԿԻ ԱԹԻԹՈՒՎ

Հայ մամուլի դերը ներկայումս աւելի ու աւելի զգալի է գառնում: Հայ կեանքի հորիզոնում ամենուրեք սկսում են կընձռատ և յուղիչ կերպարանք առնել մի կարգ կենսական խրնդիրներ, որոնց լուծման կամ բարւոք նպաստման մտազրադ հոգոր, որպէս գեմնկեան մի սուր, ծանրացած է Հայ մամուլի վերայ: Այսպիսի առկախ խնդիրներ այնքան կուտակուել և բարգուել են այսօր Հայ կեանքում և բոլորն էլ ոչ միայն դիւրին վճռելի, այլ զօրաւոր լրջութիւն, կամք ու խելք պահանջող, որ Հայ հասարակական կեանքով զբաղուող գործիչն բաւական է մի որ և է խնդրի ձեռք զարնել, ինչ մինը միւսի հետևից թափվում են նորա տռաջ բազմաթիւ այդպիսիները, ամենն էլ կարեոր, ամենն էլ ստիպողական: Այսպէս, աշա՞մ մեր խառնուշփոթ կեանքը ի՞նչ վիճակ է ըստեղծել Հայ գործիչ համար, ինչ թշուառութիւնների սայթաքող ուղի է պատրաստած նորան:

Կարիքը ճանապարհ է բանում, ուստի և Հայ կեանքի առկախ խնդիրների բարւոք լուծման համար էլ պէտք է վերջապէս միջոցներ փնտռել, պայմաններ ստեղծել: Այդ և այդ պէտք է լինի, մանաւանդ այժմ Հայ մասնուլի նշա-

նաւոր ծառայութիւնը։ Մամուլը ոյժ է և խիստ վիթխարի ոյժ ժողովրդին զեկավարելու խնդրում։ Նորա ձայնը աշեղ է և զօրաւոր և պէտք է այդպէս էլ լինի միշտ մեղնման բարոյապէս մի թոյլ ազգի համար, երբ ժողովրդի ինքնաճանաչութիւնը ստորին վիճակի մէջ է գտնվում, իսկ կեանքի պայմանները ամենուրեք առանց այն էլ ոչինչ խրախոյս չեն աւետում։

Այս տեսակէտով մենք համոզուած ենք, որ եթէ մեր ազգի բարոյական գործերը երբ և իցէ յաջող ընթացք առնեն, այդ բանում նշանաւոր դերը յատկացնելու է մամուլին, ժողովրդի այդ առաջնորդին, որը ժողովրդից անպայման աւելի հիւատես է և աւելի ծանօթ իրաց վիճակի հետ։ Այս օրուան օրս լուսաւոր աշխարհը մամուլից է առաջնորդվում, էլ ուր մնաց մեղնման մի ժողովրդին, որը աղջութեան վերաբերեալ խնդիրների նկատմամբ բացի հայ մամուլից և ոչ մի տեղից միջոց չունի առաջնորդուելու։ Այսպէս է մամուլի հայ մամուլի կոչումը, նշանակութիւնը մեղ համար։

Ուստի այժմ հարցն այն տեղ է, թէ արդեօք հայ մամուլը ներկայում այնպիսի պայմանների մէջ է գտնվում, որ կարող լինի մատուցանել իր շօշափելի ծառայութիւնը այն հասարակութեանը, որի համար հրատարակվում է։ Ահա այն զլիսաւոր յենակէտը, որի վերայ է այսօր խսկապէս մեր խօսքը։

Մամուլի անկախ ու յաջող գոյութեան համար անհրաժեշտ է երկու կարեօր պայման։ բարոյական և նիւթական ոյժ Որպէս իւրաքանչիւր պարբերական հրատարակութեան գոյութեան համար կարեօր է նորա բարոյական—զաղափարական կեանքը, այնքան էլ ոչ պակաս, զուցէ աւելի ևս, անհրաժեշտ է նորա նիւթական կողմը, ըստ որում առանց վերջնի, մամուլը որքան էլ բարձր ու վսեմ զաղափարներով առաջնորդուի իւր գոյութեան շրջանում, որքան էլ մեծ տոկունութիւն, եռանդ, անվեհեր կամք ցոյց տայ գէպի կենսական հրատապ խնդիրները, այնուամենայնիւ ևս հաստատ հողից, խոշոր սխալներից և ակնյայտնի անհարթութիւններից գերծ չի կարող լինիլ եթէ նիւթապէս կաշկանդուած, անել վե-

Ճակի մէջ գտնուի: Իսկ այսօր, ի՞նչ վիճակ ունի մեր ներկայ հայ մամուլը, լինի նա ամենօրեայ, շաբաթական, ամսօրեայ կամ կիսամեայ:

Թողնելով մամուլի այս ու այն պայմանները, որոնք առանձնապէս նպաստաւոր լինել չեն կարող նորա զարդացմանը, այստեղ մենք միայն մատնացցյա կանենք այն մի կարևոր կէտի վերայ, որը իսկապէս հայ մամուլի ինքնօրինութիւնը, նորա գործունէութեան շրջանը, թարմ երիտասարդական եռանդը ու աւիւնը կաշկանդում, սարկացնում և միանգամայն մեռցնում է: Զը լինի այդ կէտը, մամուլը ինչ պայմանների մէջ էլ հրատարակուի, ինչպիսի խոչընդուներ էլ նորան պատաշեն, բաւական է միայն որ մամուլի զլուս կանգնած անձինք իրենց գործին անձնատուր, հոգով ու մըտքով նուիրուած լինեն նորան, նա այնուամենայնիւ իր նշանաւոր գերը, կոչումը այս ու այն եղանակաւ,—որ մամուլի ղեկավարի շնորհքիցն է կախուած,—կը կատարի և այդպիսով կարդարացնէ այն յօյսը, որ հասարակութիւնը գրած ունի նորա վերայ և սպասում է նորա իրադործումը նորանից: Ինչպէս մի որ և է բոյսի մի հատիկ սերմնացու, ինչ հողի մէջ էլ որ ընկնի՝ պարարա, ընտիր կամ աղտոտութիւններով լի կամ ժայռերի զլիսին ու քարանձաւների միջում՝ այսպէս թէ այնպէս բնակալելով կըծի ու կը ծաղկի, եթէ միայն նորան մնունդ տուող ջուրը-անձրեւ և արեգակը մատակարարեն իրենց օգնութիւնը,—այնպէս և մամուլը, անձնուէր մամուլը,—որ իր ջուրն ու արեւ առնելու է իր ժողովրդի արիւն ու մարմին գարձած կեանքից,—գոյութիւն կունենայ և խիստ արդիւնարար՝ եթէ միայն նորան չէ պակասում՝ այն հողը, որի վերայ կանգնելով սկսում է իր աման շրջանը: Այդ կէտը՝ մամուլի նիւթական վիճակն է:

Այսօր հայ հասարակութիւնը ամեն երկրներում մեր այս ու այն բաղմաթիւ խնդիրների մասին խօսելիս կամ յուգուելիս՝ իր անտիրական վիճակում՝ աչքը յառած է հայ մամուլին, թէ նա ի՞նչ կասէ, ի՞նչպէս կը լուսաբանէ խնդիրը կամ ի՞նչ ելք կառաջարկէ, որտեղ յանգելու է և վերջապէս դոհացնելու

կամ հանդարտայնելու է հասարակութեան յուղիչ տրամադրութիւնը:

Ահա մօտաւորապէս ի՞նչ պահանջներ կայ ծանրացած մամուլի վերայ, ի՞նչպէս նա արթուն հովուի նման պարտաւոր է ուշի ուշով հետևել հայ հասարակական խնդիրներին ամենուրեք՝ պարզելու ու լուսաբանելու այս ու այն խնդիրը, հարցը՝ նորանոր մտքեր մտցնել զարթեցնել ու ստեղծել ժողովրդի մէջ, նորա մեռած անշարժ կեանքին հոգի ու շունչ ներշնչել այլ և այլ կենդանի յօդուածներով, առաջ մղել գործութէութեան ընդունակ՝ բայց գեռ անփորձ մատաղ ոյժերը և այլն և այլն:

Բայց ներելի է հարցնել հայ հասարակութիւնից, թէ արդեօք նա իրաւունք՝ այն էլ բարոյական իրաւունք՝ ունի սպասելու այդ և անելու այդպիսի պահանջներ այն մամուլից, որին համարեա թէ ոչինչ չտալուց զատ՝ իր մի քանի շարժած կոպէկներովն էլ կաշկանդած՝ անել վիճակի մէջ է դրած նորան. ի՞նչ սե հողը տայ իւր գլխին հայ խմբագիր-հրատարակիչը, երբ նա իր կաշուի վերայ փորձել ու փորձում է այն անտանելի վիճակը, կենդանի նահատակութիւնը, որը նա ստիպուած է լուռ ու մունջ տանել յանուն՝ ոչ այս ու այն բախտախնդիր, միայն գարգակ կեանքի հանդստութիւն որոնող ու անտարբեր՝ թէե միշտ քննադատող՝ հայ հասարակութիւնների—որոնք մամուլի հետ ոչ մի կապով կապուած չեն և չեն էլ ուղում կապուել—այլ միայն յանուն այն բարոյական բարձր զաղափարին, որ իւրաքանչիւր ազնիւ իդէալիստի փայփայած ու գուրզուրած բաղձանքն է կաղմում իւր շրջանի, իւր ազգի վերածնութեան վերաբերմամբ:

Եթէ այսօր մի որ և է մատենագիր, ազատ ու և է մասնաւոր հայեացքներից, միտք յղանար նկարագրել արդի հայ խմբագիր-հրատարակչի բարոյական ամբողջ պատկերը, երեան հանէր այն ներքին՝ յուղիչ ու սովորական մարզուն անհասկանալի կեանքի մանրամասնութիւնները, դրչի մի թեթև հարուածով նշանակէր այն սոսկալի ներքին փոթորիկը, հոգեկան յուղմունքը և բարոյական մաքառումը—ինչպէս օր. ազ-

գային ամենամեծ կենսական խնդիրների նկատմամբ ո և է խոչնդոտների հանդիպելիս, երբ նա միջոց չի ունենում զանազան պատճառներով իր ցանկութիւնը կատարելու թերթին միջոցաւ կամ նոյն իսկ մի ո և չնչին արգելքի պատճառով առաջ գայ դա զրաշարի, տպարանի կամ թղթավաճառի կամայականութիւնից՝ երբ օրուան հրատապ խնդիրը, թերթի բարցյական նամուսը-պատիւր քիչ է մնում յօդս ցնդի, — այդ ժամանակ միանդամյն հաւատացած ենք, որ մեր հասարակութեան առաջ երեան կը գան այնպիսի սոսկալի պատկերներ, որ նա իրօք այն ժամանակը կը զգար, թէ ովքեր են իրեն հասարակական գործիւները, ի՞նչ տեսակ հոգեկան ու ֆիզիքական չարչարանքների ու թշուառութիւնների են դատապարտուած նոքա: Եթէ հայ հրապարակագրների համեստութիւնը վերաւորած չզգայինք, երկար կանգ կառնէինք այս խնդիրի վերայ, ըստ որում այստեղ՝ հայ խմբագիր-հրատարակչի անձնաւորութեան մէջ՝ թագնուած են հասարակութեան աչքից այն ամենը, ինչ որ փոթորկի պէս յուզում ու ալեկոծում է: Հայ գործիչ սիրտը:

Իշարկէ, հասարակութեանը ի՞նչ փոյթ, թէ հայ պարբերականի խմբագիր-հրատարակիչը յաճախ զրաշարից առաջ՝ է՞ն արշալոյսին՝ յանուն այս-ինչ այն-ինչ խնդիր՝ տպարանումը զրաշարին է սպասում, նորան շողոքորթում, որ զէթ այդ տագնապում նա նորան չը ձգի ու չը հեռանայ, քանի՛ քանի՛ գիշերներ, արշալոյսեր հայ խմբագիր-հրատարակիչը անց է կացնում զրաշարների հետ տպարանում... Այս բոլորը մեր ժամանակի հայ գործիչի բնորոշ յատկանիշներն են, որ մենք մեզ թոյլ տուինք թեթև կերպով գծելու: Մենք հաւատացած ենք, որ եթէ հայ հրատարակիշները այդքան ջանք ու Ճիպի զէթ հարիւրերորդը գործ գնէին մի ուրիշ գործի վերայ, նոքա ոչ միայն մեծ ապահովութիւններ ձեռք կը բերէին, այլ և մեծաղումար հարստութիւն կը դիղէին:

Այսօր, երբ հայ կեանքը այնքան նշանաւոր շրջան է անցկացնում՝ որ սպասելի էր զէթ այժմ, այսպիսի մի խորհրդաւոր ժամանակամիջում, մամուլին իր կաշկանդիչ կապերից ա-

զատ տեսնել որ նա կարողանար՝ որքան ներում են իր ոյժերը՝ հասարակութեանը նոր ուղղութեան, նոր գործունէութեան մղելու ու առաջնորդելու, —ահա նոյն իսկ այդ միջոցում Թիֆլիսի ամբողջ հայ մամուլը իր ներկայացուցիչներով՝ դժուար չէ աեսնել թէ որքան ջանք ու ճիղ և միանգամայն գովելի եռանդ է գործ դնում իրեն գոյութիւնը պահպանելով հանդերձ գործել ոչ այնքան, որքան ինքը կը ցանկանար ներկայումս, այլ որքան կարողանում է և որքան ոյժ ունի գործելու; Միթէ այսօրուան օրս Թիֆլիսի հայոց թերթերը մասնաւոր կենդանութիւն, աշխոյժ, հոգի չէին տալ իրենց փայփայած հրատարակութիւններին, եթէ հայ ընթերցող հասարակութիւնը ճանաչէր, և որ էավեռն է, կատարէր իր չնչին բարոյական պարտականութիւնը, իւրաքանչիւր փոքր ի շատէ տալահով մարդ բաժանորդագրութեամբ նպաստէր այս կամ այն թերթին, որին աւելի համակրում է և որի միջոցաւ ցանկանում է արտայայտուած տեսնել հայ ժողովրդի նուիրական հայեացքները, սուրբ իղձերը: Մինչև ե՞րբ հայ մամուլը այսպիսի թշուառ ու անել պայմանների մէջ պէտք է շարունակէ իր գոյութիւնը, մինչև ե՞րբ մեր մեծախօս քննադատները ձրի կարդան հայ թերթերը կամ մի երկու ռուբլիով այս կամ այն թերթին տալով իրենց պարտաւորութիւնը կատարած վերջացած համարեն: Վերջապէս միջոց տուէք հայ թերթին դուրս գալ իր կապկապանքից ազատ խօսելու, գատելու, առաջնորդելու հայ ժողովրդին նորա կենսական պահանջների մէջ:

Եյս բոլորի հանդէպ դեռ ամօթով պէտք է նշանակենք այստեղ մեր միջոց ունեցող հայերի այն խայտառակ ու զղուեցուցիչ վարմունքը, որ նոքա ցոյց են տալիս զէպի հայ մամուլը, —նիսիա-բաժանորդագրութիւնը: Զարմանալի յատկանիշներ են ստեղծուել մերոնց մէջ. կարծէք հայ թերթի հրատարակիչը զգացմունքի, զաղափարի արտայայտիչ ըզլենի, ժողովրդի կենսական բարձր շահերին ծառայելիս չի լինի, այլ մի այնպիսի առետրական, որին ձեռնառու է նիսիա ասլրանք վաճառել. . . .

Ամօթ է այսպիսի վիճակի մէջ դնել հայ թերթին, որը առանց այն էլ մի լաւ օր չի տեսնում ու չունի էլ ներկայ պայմաններում. ուստի գէթ թողէք նա մնայ միշտ իր բարձր իղձերի աշխարհում և մի վրդովէք նորա այդ հոգեկան դրութիւնը ձեր չնչին կոպէկանոց հաշիւներով:

Նարունակ կը լսես, թէ մեր մէջ մարդ չկայ, զործող չկայ. յիրաւի, որ մեծ ու խիստ մեծ տնձնուիրութիւն է պահանջվում ներկայումն այն անձից, որ յանդզնութիւն ունենայ մտնել հայ հասարակական ասպարէզը, մամուլի շրջանը, ուր նորա համար ոչինչ քաղցր ու ազեղ բաներ չոկան ու չն սպասում, այլ դոցանից զատ, ամեն բան կայ, — չարչարանք, թշուառութիւն, չքաւորութիւն, սորա հետ միասին անձի արատաւորումն, վիրաւորանք, քսութիւն, մատնութիւն. . . .

* * *

Այժմ աւելորդ չենք համարում մի երկու խօսք էլ ասել մասնաւորապէս «Արաքսի» վերաբերմամբ:

«Արաքսը» հրատարակուելու օրից ծանօթ է հայ հասարակութեանը, ուստի այստեղ մենք լուսում ենք: Խօսենք միայն նորա հրատարակութեան առիթով:

«Արաքսի» հրատարակութեանը ձեռք դարնելով և տարէց-տարի նորան ճոխացնելով, մենք մեղ թոյլ էինք տալիս յուսալ որ վերջ ի վերջոյ «Արաքսը» կարող կլինի հրատարակուել այնպէս, որ նիւթական կողմը գէթ մեղ աղատ կրկացուցանէ զանազան չարչարանքներից և թշուառութիւններից, մանաւանդ որ «Արաքսի» գործում սկզբից մինչեւ այժմ մենք միայն լինելով մեր վերայ էր ծանրացած մեր ոյժերից միանգամայն վեր նիւթական ծանրութիւնը: Ով որ զաղափար ունի լաւ հրատարակութիւնների վերայ, աւելի ևս՝ բազմաթիւ նկարներով լի գեղարուեստական ընտիր ապագրութեան՝ նա, միանգամայն հաւատացած ենք, ոչ միայն կը զարմանայ «Արաքսի», գրքերի համեմատմամբ երեք ռուբլ

Խղճալի բաժանորդագրութեան վերայ, այլ մինչև անգամ չկ հաւատայ իրողութեանը։ Դեռ ի՞նչ էր «Արաքսի» վերջին տարիների գրքերի հետ համեմատաբար մեր հանդիսի առաջին գրքի տպագրութիւնը, որ Վիեննայի «Հանդէս Ամսօրեայի» ընտիր հրատարակութեանց գործին իրազեկ՝ խմբագրութիւնը այս տողերն էր գրում 1888 թ. ապրիլ թուահամարի 65 երեսում։ «...Չնորանան+ յիշւ՝ որ այս հա-+ ուր աղաֆրունէանի՝ պատիւրալարց՝ և սպուտը հապորչին և յաջորդ հրատարակւնեւ՝ սպուտարագոյն հապորչին գինն է միասին՝ 3 լունէւն է միայն, որ սպուտիւն գովունեւն է և լարձանաւնէ միան- գունայն»։—Բայց արի ու տես, որ մերոնք «Արաքսի» պէս ընտիր փորագրութիւններով լի հանդէսի երկու գրքի հա- մար ճանապարհածախով հանդերձ այն էլ թանգ են հա- մարում և ամեն մի բաժանորդ գրուղը ուղղում է դեռ նո- րան էլ երախտապարտ մնաս. թողնենք դեռ մի կողմը, որ գտնվում են բազմաթիւ այնպիսի անձինք, որոնք այնպիսի միջոցներով են բաժանորդ գրվում ու բաժանորդագրութիւնը ուղարկում, որ միանգամայն զզուեցուցիչ է այստեղ յիշա- տակելն անգամ։

Այժմ չերկարացնելով մեր խօսքը՝ մենք մեր հասարա- կութեան ուշագրութիւնը կը հրաւիրէինք և մեր հանդիսի վերայ, ըստ որում ստիպուած ենք նորա հետ վերջ ի վերջոյ բացէրաց խօսել քանի որ մենք կուղէինք հարցը միանգա- մայն ընդ միշտ պարզել։

Եթէ կայ մի հասարակութիւն, որի սրտին մօտ է և «Արաքսի» գյութիւնը, այն ժամանակ այդ հասարակու- թեանը մենք գիմելու ենք այս առաջարկութեամբ։

Անտարակոյս ներկայ տարուայ երկրորդ զիրքը կը հրա- տարուի գեկտեմբերին. իսկ այնուհետեւ 1894 թուականի հրատարակութեան համար մենք այսօր գեռ ոչինչ որոշ բան չենք կարող ասել ըստ որում եթէ «Արաքսի» բաժանորդա- գրութիւնը այս առաջին գրքի գուրս գալուց յետոյ փու- թով բաւարար կերպարանք չառնի և անկանոն բաժանոր- դագրութիւններով սկսէ գործը յառաջ ընթանալ, այն ժա-

մանակ ցաւօք սրտի՝ մեր փայփայած սուրբ իղձերի հակառակ՝ ստիպուած կլինենք այս տարուայ երկրորդ գրքով վերջ տալ երիտասարդական աւինով և կեանքով լի մեր հրատարակութեանը:

Հայ հասարակութիւնը խիստ անտարբեր, եթէ չասել՝ չափազանց տգեղ կերպով՝ է վերաբերվում դէպի իր մամուլը. իւրաքանչիւր հայ մարդ այստեղ այնտեղ հարիւրներ կշղրտէ, իսկ հայ լրագրին, հայ հրատարակութեանը չի ուղի ստորագրուել կամ թէ եթէ ստորագրուի էլ, այդ էլ ասլագայում վճարելու պայմանով:


Ճիշտ է, անցեալ տարի մեր բաժանորդների թիւը յանգեցաւ 1200-ի և բոլորը սպառուեցաւ. բայց այս թիւը գոյացաւ այն ժամանակ, երբ երևայ երկրորդ գիրքը: Այնուամենայնիւ չնայելով այդ բաժանորդագրութեանը, մենք դարձեալ զգալի վնաս ունեցանք, զիսաւորապէս նորա համար, որ ստորագրուողը սկզբից չի ստորագրվում, որպէս զի հրատարակին էլ իր գործը իմանայ և այնպէս էլ նորան դարձնէ, այլ այդ բաժանորդագները սկսում են ժողովուել այն ժամանակ, և այն էլ չեն գումարներով երբ արդէն ժամանակին փողի պակասութիւնից աշազին ծախսեր և պարագեր են դիզուել հրատարակչի վերայ:

Ահա, այսօր, երբ մենք հրատարակում ենք այս առաջին գիրքը, խմբագրութեանս մէջ հազիւ հազյունուարից մինչև այժմ ստացուել է 556 ռուբլի, իսկ մինչև այսօր հանդիսի միայն առաջին դրքի սոսկ տպաղրութեան ծախսն է 1763 ռուբլի, առանց փոստի ծախսի, որ հարիւրներ է արժենում: Այժմ հետաքրքիր է հարցնել թէ այն մէծախօս մարդկանց, որոնք կանոնաւորապէս իր ժամանակին են պահջում հրատարակուած տեսնել «Արաքսը» և թէ վերասեայ կամ ապագայում ստորագրուող այն բաժանորդաց, թէ արդեօք ի՞նչ փողով կամ ի՞նչ միջոցով կարող ենք ծածկել այդ բացը, որ տասնեակ մանէթների խնդիր չէ, այլ հազարների. մի՛թէ հայ ընթերցողները վերջապէս մտածում են, որ հայ հրատարակիները յայտնի զրամատէրներ են, որ կան-

Խօրէն իրենց փողով կարող են հրատարակել և ապագայում՝
վերադարձնել իրենց դումարը։ Զէ, չէ, սիրելի հայրենակից-
ներ, հայ հրատարակիչները թերեւս ամեն բան ունեն, միայն ոչ
փող. ուստի եթէ կամենումէք կամհակրումէք նոցա հրա-
տարակութեանը, վազօրօք ստորադրուեցէք և նախ, ինքներդ
ժամանակին հասցրէք ձեր բաժանորդագինը, որ հայ հրա-
տարակիչն էլ օր առաջ հրատարակելով իր թերթը դոհաց-
նի ձեղ. թէ չէ այսպիսի եղանակաւ բան մի յուսաք, և մի
զանգատուէք հայ հրատարակից, մի վերաւորէք առանց այն էլ
նորա վիրաւորուած սիրտը, շարունակ գողոմունքների մէջ
հողեկան աշխարհը, այլ եթէ ինքներդ ոչինչ ընդունակ չէք
անելու կամ կարող չէք անել, թողէք զէթ հայ հրատարակ-
չին իր վեճակին մէջ, ազատէք նորան ձեր կոպիտ նամակնե-
րից, —կեանքի հոսանքը նորան կուղեկցէ և ցոյց կը տայ նո-
րան իր անելիքը.....

Այսական







Головка.
Гонье.

Автогравія Эд. Гонье



ՏԵՂԱԳՐԱԿԱՆ

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԸ ՆԵՐԿԱՅՈՒՄԸ

Մենք շատ ցաւելով իմացանք նաև Ատրպատականի այժմեան ժամանակաւոր կառավարիչ և Պարսկա-Հնդկաստանի թեմի առաջնորդական փոխանորդ Խաչատուր ծ. վ. Կարապետեանի մահը: Ծնորհիւ իւր երկարատե կեանքին Պարսկաստանի խորքում և իւր նշանաւոր ծանօթութիւններին պետական պաշտօնեաների հետ, նա առ այժմ ամենից յարմար անձը համարուեց սինողի կողմից՝ Ատրպատականի հանդուցեալ առաջնորդին առ ժամանակ փոխանորդելու համար՝ մինչեւ նորընտիր Հայրապետի իւր զահը ժամանելը: Թէև նա ակզբում, ինչպէս այդ լինում է ամենայն նոր նշանակուած առաջնորդի հետ Ատրպատականում, իր գէմմիայն դժգոհութիւններ ու բողոքներ զարթեցրեց, սակայն վերջերս մի երկու դէպքում ցոյց տուեց նոյնպէս, որ ընդունակ է վճռական քայլեր անել իւր հօտը պաշտպանելու համար հալածանքներից,—էլ չենք ասում թէ նա որքան լաւ գործեր է կատարել իւր հին պաշտօնում՝ Խսպահանում եղած ժամանակ:—Որովհետեւ նոր նշանակուած առաջնորդը շատ բան ունի անելու այդ կարեոր երկրում և որովհետեւ նորա մասին ծանօթութիւններն էլ մեր մէջ տարածուած չեն, այդ պատճառով այստեղ մենք տալիս ենք մեր ձեռքին եղած մի քանի տեղեկութիւնները իրերի ներկայ վիճակի մասին՝

իբրև առաջնորդող ծանօթութիւններ այդ երկրում գործունէութեան համար: Այս տեղեկութիւններից մի քանիսը քաղել ենք անցեալ տարի «Արաբս»-ի Բ. զրքի մատենախօսական բաժնում խօսուած զրքից (Muller-Simonis, Du Caucase au Golfe Persique. 1892, P.), իսկ միւսները մեր ձեռքում կային ուրիշ աղքիւրներից: Տեղեկութիւնները տալիս ենք այն կարգով ինչ կարգով բերուած են (Արաքս)՝ նոյն զրքի մէջ Ատրպատականի մասին մի քանի վիճակաղրական տեղեկութիւնները, որոնք, պէտք է ասսծ, համեմատաբար հին են և այժմ փոքր ի շատէ փոփոխուած: Սակայն մենք չենք կրկնի այն, ինչոր այնտեղ մի անգամ արդէն իբրև Ճիշտ տեղեկութիւն բերուած է:

1. Թաղիղ գուղագութեան մօտ 650 տուն հայերով, Ղալում՝ 250 տուն, Լիլավյում՝ 400 տուն մօտաւորապէս. իւրաքանչիւր թաղում եկեղեցիներին կից կանգնած են օրիորդաց և տըղայոց դպրոցներ իրենց կից գրադարան-ընթերցարաններով և թատրոնական դահլիճներով, որտեղ ուսուցչական խմբերը երբեմն ներկայացումներ են տալիս: Լիլավյի դպրոցներում ուսանում են 60—90 տղայ և 30—60 աղջիկ. աղքատների որդոցը կրթուելու միջոց տալու համար և որ բողոքականների դպրոցները չենան՝ ինքը այդ թաղի ժողովուրդը ամեն տարի 40—60 չքաւոր սաների հողաք իւր վրայ է առնում՝ այդ նպատակով առանձին ժողովարարութիւն անելով. նոքա հոգում են այսպիսով իրենց ուսուցչական խմբի (որ չորս ուսուցչեց և մի վարժուհուց է լինում բաղկացած սովորաբար) ոռօճիկը, որը մասամբ էլ ուրիշ աղքիւրներից է զյանում: Նորահասաւատ տպարանի արդիւնքը նոյնպէս դպրոցների վերայ է գնում: Դրաբոցների հոգաբարձութիւնը կապալով է տուել տպարանը, յայտնի չէ ի՞նչ գումարով: — Թաւրիզի իւրաքանչիւր թաղ ունի իւր թաղապետը՝ նշանակուած կառավարութիւնից՝ և իւր յատուկ գոյնի զրօշակը: Հայոց թաղերի (կամ ինչպէս կոչում են պարսիկները՝ էրմէնիսթանի) թաղապետը կոչուում է Ղալաբէկ և զրօշի գոյնն է կարմիր:

Թաւրիզի շըջակայքի երեք հայ զիւղերն են Սոհլուր, Մուժամիքար և Աշղամուկը, ընկած քաղաքից վեց աշխարհաղրական

մղոնի չափ հիւսիս, Ղարագաղի լեռների հարաւային լանջերին՝ միմեանցից մի քանի վերստերով բաժանուած: Ամենաբազմամարդին է Մուժամբարը, 120 տուն երկրագործ հայերով, մի քարշէն հօյսկապ եկեղեցով (մօտ 200 տարուայ) և մի երկայարկ սիրուն երկսեռ գլուխով չորս սենեակներից բաղկացած, գիւղի ամենալաւ տեղում: Հինութիւնը սկսեցին 1891-ին և տւարտեցին յաջորդ տարին՝ բոլորը գիւղացոց նուիրատուութիւններով ու ջանքերով: ունին ուսուցիչ և վարժուհի: Գիւղի օգն ու ջուրը և գիրքը հիսնալի են (թաւրիղեցոց ամարտնոց): Երջակայքում հին ուխտատեղիներ կան, որոնցից նշանաւոր է Աներեցյթ բլուրը (իբրև խաչի աներեցյթանալու տեղ): Երջակայ անտառներից գիւղայիք ածուկս են շինում՝ թարիզ տանում ծախում: անտառի մերձաւորութիւնը նրանցից լու հիւսներ է պատրաստել, և մուժամբարցի վարպետը կովկաս է զնում այն տեղի մեծ քաղաքներում իւր արհեստար բանացնելու: Գիւղեց հիւսիս բարձրանում է Աղթուշ՝ լեռու (8000 ոտք բարձր), Ղարագաղի լեռների ամենաբարձր գաղաթներից մինը:

2. Աղբաբեկ + աղապ՝ 20 տուն հայերով կէսը խեղջ արհեստաւորներ, միւսները վաճառական, մի եկեղեցով և մի ընդարձակ, լուսաւոր և մաքուր երկսեռ գլուխով (քարտէղներ, պատկերներ պատերին կախ, միօրինակ գասազբեր), որին կից է զրադարանը: ունի և բնմական պարագաներ: Ուսուցիչը ստանում է տարեկան 300 ռուբլե:

3. Ղարադաղի գտաւառ: Հայերը կեղրոնացած են երեք գաւառակիներում, որոնք միմեանցից 1—2 աղաջ (6—12 վերստացի) հեռաւորութիւն ունին և որոնց իւրաքանչիւրը պարունակում է 9—12 զիւղեր: Քէյվան գաւառակի զիւղերն են՝ Սարանլի, Ասրան, Կալալի, Դէլէմի, Ահվանլի, Թօքէդէրէ, Կէնսէրայ, Էշրէֆ և Սըղըն: Տղմար զաւառակի զիւղերն են՝ Խւկիւթիւ 42 տուն, Խանագահ՝ 100 տուն, Սարդու՝ 25 տուն (հին եկեղեցով, ծերերի ասելով 600 տարուայ), Ղուլուզին՝ 28 տուն, Շաւլին 10 տ., Նորաշէն և Օղան միասին 60 տ., Ղշաղ՝ 28 տ. (առաջ 60 տ. էին, բայց անցեալ տարի մի մասը յըռուեց), Աղա-

դան (յայտնի չէ մեղ): Միւս գաւառակի և նորա գիւղերի մասին մենք չունենք տեղեկութիւններ: Քէյվանում մօտ 250—300 տ. միւս երկու գաւառակներում 600—650 տ. հայ կայ, ընդամենը Ղարադաղում մօտ 900 տուն հայ կայ: Գիւղերի մէջ ամենաբազմամարդն է Խանագեահը, որ կարող է Ղարադաղի լուսաւորութեան կեղրոնը կոչուել, որովհետեւ 1888-ից սկսած ունի Ղարադաղի միակ դպրոցը՝ հին քարաշէն կամարակապ եկեղեցու հարաւակողմբ: Հետաքրքրական է այդ դպրոցը. 8 արշին երկայնութիւն և 2½ արշին լայնութիւն ունի, պատուհանների փոխանակ չորս ծակեր են բացուած, որոնցից մի-մի կատու հաղեւ ներս սողայ, ամսուր բաց՝ ձմեռը թղթած: Ներսը մի քանի կոտրատած նստարաններ են շարուած, որոնց վերայ նստել չել լինում և մանուկները խոնաւ գետնին են թափթփում: Զմեռը 60-ի չափ աշակերտներ են լինում, իսկ զարնանտմին գրեթէ բոլորն էլ ցրուում են՝ ուսուցին շուարած թողնելով, որովհետեւ ո.ո.ծիկները դժուարութեամբ է ստանում: Ուսուցչի ո.ո.ծիկը ինչպէս այստեղ նոյնպէս էլ գրեթէ միւս գաւառներում, ամսական մի զան է իւրաքանչիւր աշակերաից, — նաև սենեակ, վառելիք և ուտելիք: Գիւղացիք իրենց առաջին ուսուցիչների ո.ո.ծիկը ժամանակին չը հասցրին, ծուլութիւն արեցին և գուցէ մի քանիսն էլ բոլորովին կտրեցին. այդ պատճառով ուսուցիչը թողեց և հեռացաւ. այն ժամանակ խանագեահիք իւրատուեցին և սկսեցին աւելի խնամքով վերաբերուել դէպի ուսուցիչը. այդ պատճառով երեք տարի միայն դպրոցը՝ իւր շինութիւնից դէսը՝ ուսուցչի երես է տեսել: Զը գիտենք՝ այս տարի էլ ունին ուսուցիչթէ ոչ: Գիւղացիք խոստանում են ամենայն ճշութեամբ կատարել իրենց պարտքը, տարեկան 50 թուման (145 ռուբլ) և սենեակ, ուտելիք և վառելիք տալ, միայն թէ իրանց զուրկ չը թողնեն փոքր ինչ լսսից: Սցդ գիւղի դպրոցին են նայում և շոջակայ մանր գիւղերը: Աղաղանումն էլ դպրոց են շինում այժմ: — Առ հասարակ Ղարադաղի բոլոր հայ գիւղերն ընկած են գրեթէ մի զծի վերայ արևմուտքից արևելք՝ Արաքսի մօտերքով, իրարից կէս-կէս ժամ հեռու, անտառապատ լեռների լանջերին կամ անմատչելի ժայռերի կա-

տարներին և խոր ձորերում; որոնց միջև ընկած շաւիղները բարձրանում ու ցածրանում են ժայռերն ու խաղաղ հովիտները: Մի քանի զիւղեր իրենց անմատչելի զիրքի շնորհիւ աղատ են մնացել արտաքին թշուառութիւններից և պատսպարել են այդպիսի ժամանակները շրջակայ զիւղացիներին: Այդպիսի մի զիրք ունի և Խանագեահը, արևելքից և Հիւսիսից բարձրանում են ահագին ժայռեր, հարաւից և արևմուտքից ընկած է խոր ձորը. զիւղը երեք մուտք ունի. երկուսը ժայռերի միջով երկու նեղ կիրճերից անցնելով, և մէկն էլ ձորի անդունդից վեր բարձրանալով: Խորը և վեհ տպաւորութիւն է անում Ղարադաղի բնութիւնը. անտառապատ կապոյտ լեռների վերայ հեռու հարաւում մէզն է արշաւում, իսկ փոքր ինչ հեռու ժայռերի տակով Արաքսը շտապում է «գէսի ծով»: Շուրջդ լի է վեհութեամբ և հայ հին աւերակներ ամեն մի քայլում՝ քեզ տուում են, որ դու գտնուում ես քո նախնեաց հարազատ հայրենիքում:— Այժմ Ղարադաղի բոլոր զիւղերն էլ աղատուել են զիւղաէր խաների իշխանութիւններից և իրենցից ընտրուած տանուտէրներով են կառավարուում (Քէյվանի զիւղերի կառավարութիւնը առանձին է): Արտաքուստ ապահովուելով՝ զիւղացիք այժմ սկսել են իրար գէմ ներքին կոփւներ, թշնամութիւն, անպատմելի յիշոցներ, տուրութակ և նոյն իսկ արիւնհեղութիւններ: Քանի որ խաների ձեռքի տակ էին, վախենում էին, որովհետեւ ամենափոքր վէճի համար ահագին ջաշնայ էին առնում երկու վիճող կողմէրից էլ բայց քանի որ աղատուել են, ամեն Աստուծու օր կոփւն անպակաս է: Իսկ նենդաւոր քեօխվաները աշխատում են, որ ժողովուրդը կրկին իր նախկին տէրերի ձեռք ընկնի, որ նոյա անունով կարողանան աւելի հարստահարել նորան:— Ղարադաղիք էլ իրենց անտառներից ածուխ են շինուած թաւրիզի համար:

4. Խոյ +աղաւ+ և գուտու: Քաղաքի պարսպից գուրս՝ արուարձանների երեք թաղերում—Վերին կամ Աղայի թաղում, Փոս թաղում և Ցածր թաղում կամ Քոչարաղում—ապրում են մօտ 100 տուն հայեր, երկու եկեղեցով և. Սարգիս (100 տարուայ, այժմ շատ խարխուլ) և ս. Աստուծածին (նորագցնը),

երկու քահանայով (մինը զառամեալ), մի ողօրմելի ուսումնարանով և Սարգսի բակում և մի աւելի ողօրմելի ուսուցչով որ իր ձեռքի տակ ունի 15—20 աշակերտ (ամսական մի զռան իւրաքանչիւրից վարձ է ստանում, այն էլ ապառիկ): Ահա մի քանի տարի է Խոսրովյաի կաթոլիկ առաքելութեան մի ձեռնասուն ասարի շամաշայ (սարկաւադ) պաշտօն է ստացել իրեն ոռջիկ տուողներից՝ այս քաղաքում դպրոց բանալու՝ ձրի ուսուցանելու. Հայ մանուկները այնաեղ են յաճախում, որով հետեւ ձրի է: Շամաշան խիստ ատելութիւն է սերմանում դէպի հայերը իր աշակերտների սրտերում: Հայերը սաստիկ թուլացել են իրենց եկեղեցուց:

Գաւառում 4 հայաբնակ գիւղեր կան,— Սէյդավար՝ քաղաքից $\frac{3}{4}$ ժամ հեռու, գաւառի ամենամեծ հայաբնակ գիւղը՝ 80 տուն հայերով, մի եկեղեցով ու մի քահանայով, որ առաջնորդական գործակատար է Խոյ գաւառի և Կօթուրի, անցնալ տարուայ գեկտեմբերից ունի մի ուսուցիչ. Վար՝ 40 տուն, մի եկեղեցով ու մի քահանայով. Դիզա՝ 15 տուն, մի եկեղեցով առանց քահանայի (Սէյդավարի քահանան է հոգումնոցա պէտքերը). Մահլապոն (թէ Մահլապան) առաջ մեծ աւան, իսկ պարսից տուած նեղութիւններից ազատուելու համար բնակիների գաղթելուց յետոյ՝ այժմ 20 տուն հայեր, որոնցից կէսը (158 հոգի, ինչպէս վկայում է կաթոլիկ առաքելութեան 1890 թ. մասնաւոր հաշիւը) նոյն նեղութիւններից ազատուելու համար 1889 թ. կաթոլիկութիւն ընդունեց: Հայերը քահանայ չունեն, գիմնում են Սէյդավարի քահանային: Այս գիւղի հայոց եկեղեցին ու գերեզմանատունը կաթոլիկներն ուղեցին խլել հայերից, բայց սէյդավարցիք օգնութեան հասան և 50 թումանի չափ ծախսի տակ ընկնելով՝ կարողացան ազատել հայ կալուածները կաթոլիկների ոտնձգութիւններից: Առ հասարակ հայ գիւղերը սաստիկ նեղուում են պարսիկներից: — Խոյի դաշտը նոյնպէս լի է հայկական աւեր վանքերով ու գերեզմանատներով՝ զանազան թուրք գիւղերում, որոնցից ոմանք ուխտաեղի են այսօր էլ հայ գիւղացոց համար: Սէյդավարից կէս ժամը հեռու մի բլրի վրայ է և Վարդանի մատուռ-ուխտաեղին:

5. Մակու գտաւաւ և գիւղաւաղաւ: Գիւղաքաղաքում 80 տուն հայ կայ, որից 35 տուն բուն քաղաքում, իսկ 45 տուն մի արուարձանում: Առաջ բոլորն էլ քաղաքումն էին կենում: Բայց երբ վերջերս հարուսաները կամեցան բաժանուել աղքատ դասակարգից, այն ժամանակ՝ Մակուի խանը վերջինին մի զեղեցիկ արուարձան շնորհեց բնակութեան համար՝ քաղաքից զուրս: Ունին մի ուսուցիչ (եթէ մինչեւ այսօր մնացել է), որ ուսուցանումէ 40—45 մանուկներ: Մակուից զիպի արևմուաք է ընկած Քիշմիշթափա հայ գիւղը՝ 60 տուն, առանց գպրոցի, իսկ Մակուի հարաւ-արևելեան կողմը ո. Թաղէոս հռչակաւոր վանքն է, 20 տուն խիստ աղքատ հայ ժողովրդով:

6. Մաճաստ գտաւաւ, որի հայաբնակ զիւղերից միայն դրաբ-րոցներ ունեն հաւթուանը՝ 350 տուն, Փայաջուկ՝ 250 տուն, Մահլամ՝ 200 տուն և Ղալասար՝ 45 տուն: Հաւթուանումն է Մալմաստի գրադարանը, սկսեալ 1886-ից, այնտեղ զիւղացու որդիք երեկոյեանները փոքր ինչ մտաւոր մնունդ են ստանում: Սոքա և Մառնա զիւղը զուտ հայաբնակ են: Մահլամ զիւղի ուսուցիչը Թաւրիզի «Սէր» ընկերութեան ընծայած առաջին պտուղն է: (ին-Քաղաք *) զիւղն էլ ունի իւր ուսուցիչը, որ նորա քահանան է (անցեալ տարի Միխթարեան եպիսկոպոսից ձեռնադրուած զիւղի վերայ): Միւս զիւղերից մենք զիտենք Ղզլջամայ՝ 40 տուն հայերով (50 տուն էլ թուրք), որի եկեղեցուն կից մի սենեակում ծալապատիկ նստած ուստած ուստանում են 20-ի չափ աշակերտներ, Մաւրայ զիւղը՝ 100 տուն զուտ հայ (22 հոգի կաթոլիկ են գարձել՝ վերցիշեալ աղքիւրի հոմաձայն) և 250 տուն պարսիկներ, մի փառաւոր եկեղեցով, երկու քահանայով և մի տղայոց մասնաւոր գպրոցով, որ աշակերտների թոշակով է պահպանում իր գոյութիւնը: Եյս զիւղի հարաւ-արևմտեան ծայրումն է Մար-Գիւղերգիլ ասորոց վանքը, այժմ հայ Միխթարեան վարդապետների գործունէութեան կեղրոն:

Մալմաստը իբրև բուն հայկական գաւառ՝ ունի բազմաթիւ ուխտատեղիներ, որոնցից նշանաւոր է Դէրիկայ Աստուածամօր

*) Սա զին Ասորապատականի մայրաքաղաք Մալմաստն է, նախնի հայաստանի առաջին քրիստոնեայ քաղաքներից մինը, որ իւր անունը տուել է գաւառին: Նա այժմ էլ երբեմն չին-Մալմաստ է կոչուամ:

Հնագարեան վանքը, Դուշմանի ձորում (Դիւշմէն-դէրէ), Պարսից և Տաճկայ սահմանազլիսին, որ իր բուժիչ հանքային ջրերով (ծծմբաջրեր) հրաշագործի համբաւ ունի և փափագելի է հայ ժողովրդին: Մի ժամանակ ծաղկեալ վեճակ ունէր վանքը և ընդարձակ հողեր, որոնք անհոգութիւնից՝ ժամանակի ընթացքում՝ պարսիկ սէլիստ աղաների ձեռքն անցան, մանաւանդ՝ երբ այդ կողմերում խիստ յայտնի Յովհաննէս վ. Բաղունին (որին «Քաջալ վարդապետ» են կանչում տեղացիք) կողոպտեց վանքը և՝ թողնելով վանահայրութիւնը՝ անցաւ Տաճկաստան: Վանքը այնուհետեւ ամսյացաւ, և սալմաստցիք քրդերի երկիւղից բարձի թողի արին իրենց ուխտատեղին և նորա հողերը ձորի մէջ, որոնց վերայ ամառները քրդերն սկսեցին եայլաղ անել որոշեալ հարկ տալով գորա փոխարէն պարսիկ սէլիստներին: Բայց 1889 թուին, մի երիտասարդ, Մովսէս Միքայէլեան, եկաւ Սալմաստ և ափսոսալով նորա ամսյութեան վերայ՝ առաջնորդից իրաւունք խնդրեց վանքը կառավարելու, և ստացաւ: Այնուհետեւ քաջ երիտասարդը միայնակ նստած վանքի չորս պատերում՝ սկսեց գիմագրել աւագաներին, որոնք յարձակումներ էին անում վանքի վերայ, և առաջնորդի ու էմիրնիզամի զործակցութեամբ փոքր ի շատէ նոցա հեռու է պահում վանքից: Միենցն ժամանակ նա զնում է վանքի համար մի քանի կաոր հող և մի քանի զլուխ տաւար՝ ոմանց նիւթական օժանդակութեամբ, և սալմաստցիք վստահութեամբ սկըսում են ուխտ գալ նորոգում են վանքի մօտ մի քանի խարխսուլ խրճիթները և վանքի քայքայուած զմբէթը, մինչև որ վերջապէս հանդուցեալ առաջնորդը վանահայրութեան կոնցիկ է տալիս Բաղրեաննայ ո. Յովհաննէս (Խւչիլիսէի) վանքի միաբան Բաղրատա վ. Թաւաքալեանին, որ համնում է իւր պաշտօնավայրը 1891 օգոստոսին: Այդ ժամանակից վանքն սկսեց աւելի ծաղկել՝ յետ զնուեցան հողերի մեծ մասը, որոնց համար վանահայրը ժողովարարութիւն արեց Սալմաստում, Խոյում և Ուրմիում, այսպիսով վանքն ապահովուեց նիւթապէս: Սակայն դեռ վանքը ըստնէր արտաքին ապահովութիւն, առանց պարսպի էր և քրդերի երկիւղից՝ օգոստում էր միայն իրեն մերձա-

կայ հողերից, մինչդեռ լուս հողերը հեռու էին ընկած, անապահով ու վտանգալից ձորում, որտեղ քրդերն ազատ եայլաղ էին անում տարուայ տմենալաւ եղանակներին: Սյդպիսի վտանգալից վեճակին զոհ գնաց անցեալ տարի Մովսէսը, սպանուելով ձորում քրդերից: Բայց վերջապէս վանահօրը յաջողուեց պարիսպ շինելու հրամանը ստանալ և այդպիսով փոքր ի շատէ ապահովել վանքի բնակիչներին ու նոցա կայքը: — Իւր դիրքի շնորհիւ վանքը նաև ուրիշ նշանակութիւն ունի: Իբրև Սալմաստի և Վանի միջև հաղորդակցութեան համար միակ յարմար անցըը (Եթէ չը հաշուենք աւելի հեռու ընկած Կոթուրի Ճանապարհը հիւսիսում), նա քարվանների սովորական Ճանապարհն է երկու երկրների մերձակայ գաւառներում առևտուրի հաղորդակցութիւն պահպանելու համար: Նորա ապագան մեծ է: այդ պատճառով կաթոլիկները վաղուց ձգտում են այդ նըշանաւոր կէտին տիրանալ բայց մինչև օրս նրանց այդ չէ յաջողուել: Այսօր քրդերի շնորհիւ այդ Ճանապարհը երկիւղալի է և սակաւամարդ: — Դերեկի վանահայրը Սալմաստի յաջորդն է և միենցն ժամանակ նորա և շրջակայքի հայ գպրոցների ընդհանուր վիրատեսուչ Մենք ցաւելով լսեցինք, որ վանքի պարիսպները այժմ քանդել են: — Սալմաստում 1200 տուն հայ կայ, 26 հայաբնակ զիւղերով, որոնց իւրաքանչիւրի մէջ հազեւ 10—20 հասակաւոր տղամարդ լինի. բոլորը պանդիստութեան են գնացել:

7. Ուշմայ ժաղատ և ժառաւ: Քաղաքում 45 տուն հայ կայ, գորա մէջ հաշուելով նաև Սալմաստից այնտեղ հաստատուած մի քանի վաճառականներին, մի փառաւոր եկեղեցով, որ կարող է ամբողջ թեմում միակը համարուել իւր գեղեցկութեամբ (շինութիւնն սկսուեց 1889, աւարտուեց 1891, օծուեց անցեալ տարի վարդանանց տօնին Տ. Թաւաքալեանի ձեռքով) և մի երկայարկ գեղեցիկ գպրոցով նոյն եկեղեցու բակում (շինուած անցեալ տարի՝ եկեղեցու օծման ժամանակ յիշեալ վարդապետի յորդորմամբ) և մի քանի անձանց ջանքերով հաւաքած նուրիատութիւններով. նուրիատունների մէջ յիշելի են այրի տիկնայք Մանիա Հասրաթեան և Բերսարէ Պեարկօկինեան,

որոնք հարիւրական թուման նուիրեցին և 5 տարով ստորագրուեցին այդքան վճարել ամեն տարի): Զը դիտենք, դասաւանդութիւնն սկսուել է թէ ոչ Տեղացի հայերը խնամացած են ասորիների հետ, նոյցա զգեստն են հագնում և նոյցա լեզուն խօսում, այնպէս որ չի կարելի իմանալ, հայ են թէ ասորի. շատերը իրենց և հայ են ասում, և ասորի: Ասորիք այստեղ ունեն 6 եկեղեցի (Երկու բողոքական, երկու կաթոլիկ, մի նեստորական, մի եպիսկոպոսական), մի ասորերէն լրադիր «Զարիբդ-Բարա» («Յրեգակի Ճառագայթ») անունով նեստորականների համար, որ հրատարակուում է Ուրմիոյ բողոքականների տպարանում:

Քաղաքի շրջակայրում հետեւեալ զուտ հայաբնակ զիւղերը կան, — Գեարզաբագ՝ 150 տուն, մի պարզ եկեղեցով և չորս քահանայով, Բաբարի՝ 150 տուն, մի եկեղեցով, Նախչուան-Թաթա՝ 160 տուն, մի եկեղեցով չորս քահանայով, և Խալո՛՝ 40 տուն, մի եկեղեցով և մի քահանայով: Խահվայ ունի 100 տուն հայ և 30 տուն ասորի. Հայերն ունեն մի եկեղեցի և մի քահանայ: Ամբողջ գաւառի գիւղերում 1200 տուն հայ կարելի է հաշուել առանց մի դպրոցի. նոքա մեծ մասամբ թրքախօս են, մանաւանդ Բաբառու գաւառակում:

8. Քիւրդիստանի ժամանակ: Նորա պլիսաւոր քաղաքում, Սովուճ-Բուլախում (Ուրմիոյ լճի հարաւային կողմը, 15,000 բընակչով) 120 վաճառական հայ կայ (450 հրէայ և մնացածը քիւրդ) մի եկեղեցով ու քահանայով առանց դպրոցի. Հայ մանուկները բողոքականների դպրոցն են յաճախում և հայերէն լեզուով այնտեղ ս. զիրք են անդիր անում: — Քաղաքից 3 ժամ հեռու է Դերելէք հայ գիւղը՝ 60 տուն բնակչով, որոնք քրդերէն ու թուրքերէն են խօսում, մի եկեղեցով ու քահանայով: Սնցեալ տարի (1892) Սովուճ-Բուլախի հայ վաճառականները սկսեցին զիւղում մի դպրոց շինել տալ, որ գեռ չաւարտած դասաւանդութիւնն էր սկսուել խօնաւ զետնի վերայ. ուսուցիչը նոյն զիւղեցն է, Արամեան դպրոցի ընթացաւարտ: Գիւղից և իբարից կէս-կէս ժամ հեռու են ընկած հայաբնակ զիւղերը՝ Պլզըլգորի՝ 15 տուն և Կաֆիս՝ 10 տուն, առանց եկեղեցու և դպրոցների:

Գաւառուակների մէջ հայաբնակ է Սուլ-Դուղի (ջրալի գաշտ) բերրի գաշտը՝ 150 զիւղերով, որոնցից հայաբնակ են նազարէյ՝ 60 տուն, մի ցեխաշէն եկեղեցով և մի քահանայով, թօվիդ-Ավայ՝ 12 տուն, առանց եկեղեցու և քահանայի, Գեօն-Ավայ՝ 7 տուն (նոյնարէս), Թուն-Դէնսայ՝ տուն (նոյնարէս), Մէհամմադեար՝ 60 տուն, մի եկեղեցով և մի քահանայով հասանլի՝ 7 տուն (առանց եկեղեցու և քահանայի), Բատանի՝ 6 տուն (նոյնարէս): Բոլոր Սուլդուղիք ընդամենը 162 տուն՝ թրքախօս են, դաղավար ընկեն աղջի և կրօնի մասին:

9. Մարտզայ ժամանք և գաւառում՝ Քաղաքում (Թաւրիզից հարաւ, Որմիոյ լճի հարաւ-արեւելեան կողմը) 100 տուն հայ կայ, որոնք քնակուած են մի առանձին թաղում, էրմէնիսթանում: ունեն ա. Յովհաննէս անունով մի եկեղեցի (100 տարուայ շէնք, հնացած) և մի զառամեալ քահանայ: Եկեղեցու բակում գպրոցի ողորմելի շէնքը կայ. երեմն լինումէ ուսուցիչ երեմն ոչ հայերի վերայ կարդուած է մի յատուկ վերատեսուչ և ավար. ժողովուրդը խիստ տղէտ է. շատերը թուրքերէն են խօսում, կանանց հազուստը թրքական է: Մխիթարեան եպիսկոպոսը մի խիստ նամակ էր զրել անցեալ տարիները և յորդորել էր հայ հասարակութեանը փոխել իրենց կանանց զգեստները: Հայերը մեծ մասամբ հիւսն են (քաղաքը շինուած է Սոհունդ լեռան հարաւային փէշերին), գիւնեվաճառ և զլիաւորապէս զինագործ (Մարթինի լաւ հրացաններ են շինում):

10. Նախաչայի Հանքը Արաքսի ափում, ժայռերի մէջ ամրացած, և բարձր ու ամուռ պարսպով պատած: Վանքը օրէցօր քայքայուում է վանահօր և նորա նախորդների անհոգութիւնից: Այժմեան վանահայր Վահան վարդ. Գէորգեան սինոդին քանի անգամ խնդիր է տուել հեռանալու դէպի Ռուսաստանի մի ուրիշ վանք, բայց մերժուել է:

Ամփոփենք և եղբակացնենք: Ատրպատականի կրթական դործը ներկայումն հետևեալ պատկերն է ներկայացնում: — չորս գպրոց Թաւրիզում իրենց երկու ընթերցարաններով, մի զրպրոց Մուժամբարում, մի գպրոց Արգաբիլում իր ընթերցարանով, երեք գպրոց Սալմաստում մի ընթերցարանով և մի զըպ-

բոց Ուրմիում, ընդամենը 10 հաստատուն գպրոց և ընթերցարաննով, որոնցից միայն վեց գպրոց և երկու ընթերցարան գաւառներում, իսկ մնացածը թաւրիզում, աղջիկներ սովորում են թաւրիզի երկու գպրոցներում, Արդաբիլում, Մուժամբարում և կարծեօք նաև Սալմաստում (ընդամենը 5 տեղ:) իսկ եթէ սորա վերայ տւելացնենք նաև Ղարադաղում, Սալմաստում, Քիւրդիստանում և Մարաղյում եղած անհաստատ գպրոցները, ել չենք խօսում Խոյի, Մակուի և Սալմաստի մասնաւոր գպրոցների մասին, այն ժամանակ մենք կըտեսնենք որ այս երկում՝ համեմատելով առաջուայ տարիներին՝ կրթական գործը զգալի կերպով յառաջացել է և ժողովուրդը շատ աւելի ինքնայօժար նպաստում է ուսման գործին՝ քան երբ և իցէ:

Սակայն չը պէտք է յափշտակուել այդ աւետումը լսելով: Դպրոցներից մի քանիսի գրութիւնը շատ խղճալի է, ինչպէս այդ տեսանք մի երկուսի նկարագրութիւնից, և այսօր կան՝ էգուց չըկան. ուսուցիչը հեռանում է թէ չէ, գպրոցն ել փակուում է: Իսկ գիւղերում ուսուցիչ ասած բանդ շատ տեղու այլ ինչ է, եթէ ոչ Վանից ու Բաղէշից եկած մի քանի համալներ և կամ «պատուելիներ», իսկ երբեմն ել Արամեան գպրոցի ընթացաւրաներ. լաւ ուսուցիչների պակասութիւնն ամեն տեղը զալի է: — Բացի այդ, դրեթէ բոլոր գիւղական գպրոցներն աղքատ են նիւթապէս և բոլորովին զուրկ գասական ամենայն յարմարութիւններից: Նոյն իսկ զասագրեր ճարելն ել խիստ գրժուար է լինում այդ երկրի խորքերում: Մեր Կովկասի հրատարակութիւնները այնաեղ չեն հասնում, կամ շատ գժուարութեամբ, գոնէ թաւրիզում պէտք է լինէր յատուկ զրավաձառնոց, որ մեր գասագրերից ստանար մասնաւոր զեղով և զիւղերից ու քաղաքներից իրեն դիմողներին հասցնէր: Սակայն պէտք է խտրութիւն գնել և զասագրերի մէջ: Ատրպատականի տղէտ զիւղացին արհամարհում է փոքր ինչ իրաւամբ շան և կատուի պատկերները կրող զրբերը, և աւելի լաւ է համարում նոյս տեղ իւր երեխայի ձեռքը տալ Սաղմօս և Նարեկ: Դասագրքերի մէջ այս կողմից տմենայարմարն է նոյն ժողովրդի հոգով զրուած և կամ նորա մանկական երեակայութեան ար-

դիւնք եղող բանսաստեղծութիւնների ժողովածուն և նորա վերայ հիմնուած ուսուցումը, քան թէ գուցէ շատ շնորքով կազմած՝ բայց անպէտք ինքնաստեղծ բանահիւսութիւնը։ Ուստի և, ճանաւանդ այս կողմերում, միշտ նախագասելի են Վասպուրականի ժողովը գանձերը, որոնք հաւաքուած են պ. Ս. Մանդինեանի յօրինած ընթերցարաններում։

Բայց գասազրքերի և առհասարակ գրքերի լայն ծաւալումը Աստրապատականում ընդ միշտ հաստատ հողի վերայ դնելու համար՝ անհրաժեշտ կարեոր է, որ մեր հրատարակիչները մի մասնաւոր (և բաւական խոշոր) զեղչ նշանակեն իրենց բոլոր գրքերի և առաւելապէս գասագրքերի վերայ յատուկ Պարսկաստանի համար, ինչպէս որ այդ փոքր ի շատէ գործագրում են ուրիշ տեղերի մի քանի հայ հրատարակիչները։ Առաջարկելով այդ նոյնը նաև Կովկասի մեծայարդ հեղինակներին և հրատարակիչներին, կը ցանկայինք որ ըստ կարելոյն փութով մի հայ գրախանութ բացուէր Թաւրիզում, որ իիստ էժան գներով գրքերը Աստրապատականի գիւղերում տարածելուն նպաստէր։ Մենք իմացանք որ պ. Գ. Այլաղեանը յանձն է առել գրքեր և գասական պիտոյքներ հասցնել Պարսկաստանի կարօս հայ գիւղերին։ Առ այժմ այդ շատ լաւ է. թող մի ուրիշն էլ ուրիշ բան անի։

Սակաւ չեն և այնպիսի դէպքեր, երբ դպրոցի գործը խանգարուում է առատաձեռն հասարակութեան մի քանի անդամների անբարեմտութիւնից և իրեն ժողովրդի ծուլութիւնից։ Արդարիլի բաւական ապահովուած դպրոցը մի ժամանակ յանկարծ փակուեց, որովհետեւ մի մորդ գումարներն իր ձեռքում պահած լինելով օգտուել էր նոցանից իւր վաճառտկանական ձևոնարկութիւնների համար։ Իսկ ինքը ժողովուրդը թէ ուսումը սիրում է և յարգում և պատրաստ է ամեն տեսակ զոհողութիւններ անել նորա համար, բայց չափազանց ծոյլ է և անշարժ։ «Աղա, կասի քեզ Ղարաղաղը հայը, մենք անտէր ենք, մեր հոգաը քաշող չըկայ. մեզ պէտք է մի իշխանաւոր մարդ՝ որ մեզ համար ուսուցիչ ուղարկի և նրա վճարքը մեղանով կարգի դնել տայ. մենք սովոր ենք հրամաններ կատարելու. մէկը պէտք է հրամայի և մէնք կատարենք. իսկ եթէ բանը թողնուի

մեղ անկարելի է, որ մենք մի բան անենք, որովհետև անկարելի է որ իրարու հետ համաձայնենք»: Այդպիսի մարդոց հետ գործ ունենալիս պէտք է անդադար խթել նոցա կողքին, և սաստիկ խթել, որ նոքա տեղեց շարժուեն:

Յամենայն գէպս, ամբողջ Ասրպատականում կարգին ուսուցիչների սով է. վատերն էլ չեն ճարուում. ժամանակ է նոցա վարժապետներ տալու վերայ մաածել:

Այժմ մէ տանի արելէին-նի-ննէշ դան+ չընաւան օդար առա-+ ելու-նի-ննէրէ ճառին: — Միջին և ստորին դարերում կրօնական հոռմը երբ յաջողութիւն ըրտաւ հայոց մէջ, ընդհատառակը՝ խիստ ընդդիմութեան հանդիպեց, այն ժամանակ Արևմուտ-քում իր կորուստները փոխարինելու համար՝ աչքերը դարձրեց գէպի Արևելքի նեստորական ասորիները, որոնք ապաւինած և ամրացած էին Քիւրզիստանի լեռներում իրենց կրօնապետի՝ Մար-Շիմոնի ձեռքի տակ: Այդ նպատակով անցեալ դարի վեր-ջերը Մոսուլում՝ իբրև կեզրոնում՝ հաստատուեց Դոմինիկեան մի առաքելութիւն, որ իր ծիւղերը տարածում էր գէպի հիւ-սիօ՝ հարաւային հայաստանի նշանաւոր կեզրոնները և մանա-ւանդ Զաւ գեաի հովառում: Արդէն բաւական արմատներ էր բռնել նոցա գործը, որ Ամերիկայում գարուս սկզբին (1810 թուականին) կազմուեց «Արտաքին առաքելութեանց տե-սուների ամերիկեան խորհուրդը» որ կառավարում էր ամերիկական բողոքական բազմաթիւ դաւանութիւնների բո-լոր արտաքին առաքելութիւնները: Նա նոյնպէս իւր ուշքը դարձրեց ասորոց վերայ, և որովհետև Պարսկաստանի ասո-րիները գեռ զրեթէ անձեռնմխելի էին մնացել կաթոլիկնե-րից, ուստի և 1835 թուին ուղարկեց նոցա մէջ առաջին մի-սիոնարներին, որոնք եկան և Ուրմի քաղաքում իրենց կեղրոնը հաստատեցին: Կաթոլիկ աշխարհը իսկոյն զգաց վտանգի մեծու-թիւնը, — ամբողջ տաճկական Քիւրզիստանը բնականաբար են-թակայ էր լինելու բողոքականների յարձակմանը և կաթոլիկու-թեան գործը սցդ տեղում: զուցէ վերջնական հարուած էր կրե-լու հոռմը անհրաժեշտ համարեց մի առաքելութիւն ունե-նալ Պարսկաստանում՝ իբրև դիմադիր բողոքականութեանը,

և ոմն Բորէ, յետաշըջուած կաթոլիկ Ֆրանսիայի յանձնակատառը Պարսկաստանում՝ որ գալով այդ այդ երկիրը՝ ուսումնաբաններ էր հաստատել Սալմաստում և Ուրմիում բերել տուեց 1840 թուին առաջին լազարիստ միսիոնարներին (Ֆուրնիէ, Դարնիս և Կլիւղէլ). նոքա կեղրոնացան Ուրմիայում, յաջորդ տարին էլ Թաւրիպում, շարունակելով զեկավարել Բորէի գպրոցը Խոսկահանի Հայոց մէջ: Սակայն կաթոլիկների մուտքը երբէք սիրով չէին կարող դիտել ոչ Հայերը, ոչ այն ժամանակուայ ուստաց գեսպանը Թէհրանում և ոչ նոյն իսկ Պարնից կառավարութիւնը: Ուստի Շահի մի Փիրմանով ընդհանրապէս արգելուեց հաւատափոխութեան քարողութեւնը՝ երկրից արտաքսելու սպառնալիքով: Այդ ոլատճառով միսիոնարներից մինը (Ֆուրնիէ) արտաքսուեց: Սակայն մասցեալ երկուսը յամառութեամբ՝ շարունակեցին իրենց զործը, իսկ միւս կողմից յարաբերութիւնները լարուել սկսան նոցա և բողոքական ընկերութեան միջև: Վերջինիս զլուաւորը և Հիմնագիրը ամենաջերմ մշնամին դարձաւ կաթոլիկութեան թէ իւր մի նշանաւոր՝ զրուածքում («Ութը տարի Պարսկաստանում նեստորական քըրիստոնեաների մէջ») և թէ իր յետագայ զործունէութեան մէջ: Նա դատ բաց արեց լազարիստների դէմ, մեղադրելով նոցա Արդիշայի (տառի գիւղ Որմիոյ լճի հարաւ-արևմտեան ափին, Բարանլուտ-չոյ գեախ ձախ կողմը) եկեղեցու տեղը յափրշտակելու զործում (այդ նեստորական եկեղեցին նոքա նորոգելու ձեռնարկեցին, քանի որ իրենք սեփական եկեղեցի գեռ չունէին): Դատը Թէհրանում քննուեց և երկու միսիոնարներն էլ արքայական ֆիրմանով երկրից արտաքսուելու դատավարութեցան: Սակայն Կլիւղէլ կարողացաւ պահուել և խոյս տալ պատժից, մինչև որ Թէհրան ուղարկուեց ֆրանսիական կառավարութեան քաղաքական զործակալը՝ Դը-Արտիժ (1866) և ապատութիւն շնորհել տուեց միսիոնարինք ֆրանսիական ներկայացուցչի մուտքը՝ Թէհրանում կաթոլիկութեան ձանապարհ Հարթեց: այսպիսով նորա զժուար ժամանակներն անց կացան, առաքելութիւնը հաստատ հողի վերայ կանգնեց, և Կլիւղէլ նշանակուեց Պարսկաստանում չոռվի զործակալ (գէլէզատ):

Հազարիստներն իրենց մի Ճիւղը հասաւատեցին նաև Սալմաստի Խոսրովա դիւղաքաղաքում (Քին-Քաղաքից մի ժամ գեպի արևելք, այժմ 300 տուն ասորիներով), որտեղ կաթոլիկութիւնը պատահարար մօւտք էր գործել դեռ անցեալ դարու վերջերից, և խրախոյս ու օժանդակութիւն ստանալով Մոսուլից՝ մինչև անգամ նեստորական էր դարձրել տեղւոյն եպիսկոպոսին (որ գնաց Ախալցխա պաշտօնապէս ընդունեց կաթոլիկութիւնը):

Ներկայում կաթոլիկութիւնը հետեւալ պատկերն է ներկայացնում Ատրապատականում: Հռովմի գործակալը Պարսկաստանում ներկայում է Մոնթեթի անունով մի եպիսկոպոս. նըստումէ Ուրմիում: Լաղարիստների տռաքելութիւնը այնտեղ բաղկացած է 5 միտոնարներից. նոքա միայնակ չեն եկել այլ իրենց հետ բերել են Եւրոպացից նաև 7 «Քյորեր», որոնք կուսանաց վանքն են կազմում: Նոցա բնակարանները զետեղուած են միասին՝ քաղաքի ծայրում, պարսպի մօտ. ունին մի փառաւոր եկեղեցի. գպրոցում սովորում են 100-ի չափ աշախերտներ, որոնցից 12 հոգի ամեն տարի ուղարկուում են Խոսրովացի գըպրոցը կատարելագործուելու. որբանոցում 50 որբեր կան. գաւառում ունեն 45 գպրոց. զաւառի ասորի զաշաներից (քահանաներից), — որոնք կաթոլիկութեան անցնելուց յետոյ սկսել են չամուսնանալը — 50 հոգի նոցա գործակից են և նոցա ձեռքին են նայում: «Քյորերն» ունեն մի բուժարան, մի օրիորդաց դպրոց, պատուպարան, և հիւանդներին էլ այցելութիւններ են անում տներում: Ուրմիոյ առաքելութիւնը Եւրոպացից ստանումէ տարին հետեւալ գումարները, — հաւատոյ քարողութիւնից և Արևելեան գպրոցներից՝ 15,500 ֆրանկ, Աւստրիայից՝ իբրև պատարագների վարձ տեղացի հոգեորականութեանը՝ 15,000 ֆրանկ, իսկ Հռովմի գործակալը ստանումէ առանձնապէս 13,000 ֆրանկ (որից 2000 ֆ. Սալմաստի հայ Մխիթարեան վարդապետներին, 2000 ֆ. Իսպահանի Ճիւղին և 1500 ֆր. տեղացի հոգեորականութեանը), ընդամենը միմիայն Ուրմիոյ առաքելութիւնը ստանումէ 23,000 ֆ. իր և իր գործի համար:

Խոսրովայումն էլ որտեղ նստում է կաթոլիկ ասորոց մի արքեպիսկոպոս, կան 4 կամ 5 Եւրոպացի միսիոնարներ,

որոնց օգնական են 3 ասորի քահանաներ: Թուշով նոցա հաւասար են (7 հոդի) և «Գթութեան քոյրերը», որոնք տեղացի կանոնցից են ջոկնուած: «Քոյրերն» ունեն որբանոց, պատսպարան, օրիորդաց դպրոց. իսկ միտիոնարներն ունեն մի միջնակարգ գիշերօթիկ դպրոց սեմինարիա անունով, որտեղ միայն 15—20 հոգի են սովորում: Նոցանից ովլ պէտք է կրօնաւորուի, սովորումէ աստուածաբանութիւն: Սակայն դպրոցը չի արդիւնաւորում եռանդուն միտիոնարների ջանքերը, տղայքը ձանձրացած կիսատ են թողնում դպրոցը և փախչում, այնպէս որ իւր հիմնարկութեան օրից (1844) մինչեւ այժմ 20 քահանայ հազիւ է գուրս եկել դպրոցից՝ նորա վերայ արած ծախքերը յետ դարձնելու համար. իսկ այդ ծախքերը շօշափելի են: Սեմինարիայի կողքին կայ և մի տարբական տղայոց դպրոց, որի ուսուցիչներն են զիւղացի ասորիները և երբեմն էլ նշյն սեմինարիայի աշակերտները: Խոսրովայի Ճիւղը ստանումէ տարեկան 15,000 ֆրանկ հաւատաց Քարոզութիւնից և Արեելեան դրայրոցներից (Հռովմում), իսկ տեղական կղերի պահպանութեան վրայ ծախսուումէ Աւտորիայից ստացած գումարը: Երկու Ճիւղերն էլ ստանում են երբեմն նաև խոշոր նուէրներ եւրոպայից: Ուրեմն երկու առաքելութիւնները ստանում են 58,000 ֆրանկ, իսկ եթէ հաշուենք նաև տեղական կղերի, հայ միտթարեանների և Խսպահանի համար ստացածները (30,000), կրստանանք 88,000 ֆր., որ տարեկան Եւրոպայից Պարսկաստան են փոխադրում կաթոլիկութեան գործը առաջ մղելու համար:

Ամբողջ Պարսկաստանում կաթոլիկ ժողովուրդը բաժանուած է երեք առաքելութեան վերայ. ա. Ուրմիոյ առաքելութեան ժողովուրդը կազմում են քաղաքում 346 հոգի, զաւուում 3600 հոգի. ամենից շատ կաթոլիկները յըրուած են Շահար-չայի (քաղաքի միջովը անցնող գետի) գաւառակում, այնուհետեւ Նավլու-չայի (Ուրմիայից հիւսիս), Բերենդուս-չայի (Ուրմիայից հարաւ): թ. Խոսրովայի առաքելութեան ժողովուրդը 3350 հոգիէ. ամենից շատ են Խոսրովայում՝ 1740, Փաթաւուրում՝ 600 և Գեավիլանում՝ 210 հոգի: գ. Թէհրանի առաքելութեանը ստորագրուում են քաղաքում՝ 230 հոգի (մեծ մասը

Հայեր), Խոպահանում՝ 220 հոգի (բոլորը Հայեր). Ընդամենը ամբողջ Պարսկաստանում կաթոլիկների թիւն է մոտ 8300 հոգի:

Բողոքականութեան պատկերը Ատրպատականում, «Ա. Մ. Ն. բողոքական եկեղեցու արտաքին առաքելութեանց խորհրդի *» 53-րդ տարեհաշում (1890 թ.) համաձայն, հետեւեալն է.

ա. Ուժից առաջ և վճակայից. Միսիոնարների թիւն է 6 (մինը բժիշկ, միւսը աշխարհական, մատցեալը հոգեօրական), նոյնքան էլ նոցա կանայք, մի առանձին կին բժիշկ միսիոնար, 5 միսիոնարուհիք, տեղացի՝ 63 քարոզիչներ, 21 ուսուցչուհիներ և 104 ուսուցիչներ, 20 եկեղեցական սպասաւորներ, 28 պատահական «Հաղորդողներ», 1941 խակական հաղորդողներ, տարուայ մէջ աւելացել են 103. զպրոցների թիւն է 114, զիշերօթիկ աղջայք՝ 100 հոգի, աղջիկներ՝ 76, երթևեկներ 1432 աղայ և 413 աղջիկ, ընդամենը սովորում են 2021. հոգեօր կոչման են պատրաստուում 12:—Ուրմիայից մի մղոն հեռու կանգնած է նոցա ահազին եռայարկ քօլէջը, որտեղ սովորում են 140 աղջայք (շատը 20—25 տարեկան): Աւարտած Հայ երիտասարդներից ուղարկում են զիւղերը իբրև քարոզիչ կամ ուսուցիչ Ուրմիայի առաքելութեան Ճիւղերն են՝

բ. Քէ-րդէստանը՝ երկու միսիոնար (մինը բժիշկ), 8 տեղացի քարոզիչներ, տեղացի 12 ուսուցիչ 100 հաղորդող 15 զբարոց 170 աղայ և 30 աղջիկ երթևեկներով՝ ընդամենը 210:

գ. Թաւրիզը և նորա վրձակայից՝ 2 միսիոնար և նոցա կանայք և մի բժիշկ, 3 կին միսիոնարներ, 7 տեղացի քարոզիչներ, 4 ուսուցչուհի և 9 ուսուցիչ 58 հաղորդողներ, 9 զպրոց, 20 աղայ և 25 աղջիկ զիշերօթիկ, 83 աղայ և 44 աղջիկ երթեկ՝ ընդամենը 172. պատրաստուում են 4 հոգի հոգեօր կոչման:*

*) 1810-ին կազմուած «Խորհուրդը» բաժանուեց 1837-ին երկու խմբի. մէկը իրեն ուղղակի սկսեց անուանել յատկապես «Բողոքական կամ պիտակիտորեան եկեղեցու արտաքին առաքելութեանց խորհուրդ» (այժմ «Board» կամ «Բորդ»), իսկ միւսը շարունակեց իւր նախկին անունը կրել և նախկին վարչութեանը հաստակուել 1870-ին երկուաը կրկն միացան իրար միայն առաջինը. պէտք է գործեր Սիրիայ-յում, Պարսկաստանում, Արևելան Ափրիկէում և Աննեկայի հնդիկների մէջ (նիւ-նօրքի նահանգում): Միացեալ խորհուրդը այժմ կոչուում է «Բողոքական եկեղեցի Ամերիկայի Միացեալ նահանգներում»:

**) Այս յօդուածը՝ որ բոլորովին պատրաստ էր, անկարող եղանք ամբողջով ին տպագրել այս գրքում

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆՆԵՐՍ

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ ԵՒ ՏԱՇԿԱՍՏԱՆԻՑ

(Զուղայից մինչև Մուշ.)

Ատրպատականի Թաւրիկ քաղաքը գնալու համար պէտք է ուղեռուել Ջուղայից, իսկ Ալմաստ գնալու համար՝ ամենամօտիկ Ճանապարհով՝ Շախտախտից, որ մի թըրքաբնակ գիւղ է Արաքսի ոռւսաց ափի վերայ: Արաքսի պարսից եզերքում, պարսկական Ջուղայում՝ բացի մաքսատնից, փոստից և հեռագրատնից՝ կայ և մի հիւրանոց ընդարձակ բակով, որի մէջ գեղեցիկ պարահեղ է ձգած դոյնզգոյն ծաղեկներով և շալքուանով: Հիւրանոցի սենեակները կահաւորուած են պարսից Ճաշակով, —յատակի վերայ փոռւած են գորգեր, պատերի տակ շարուած են բազմոցներ, դռան մէծութիւն ունեցող լուսամնաւոները, որոնց բացանելու ժամանակ կէսը վերե են բարձրացնում, հազըրած են գոյնզգոյն ապակիներով: Հիւրանոցի տէրը՝ առերեսս քաղաքավարի՝ իր հիւրերին Ճանապարհ գնելիս լաւ կողոպատում է՝ արտասովոր գներ պահանջելով թէ գիշերելու և թէ ուտելիքի համար: Հիւրանոցի ներքեի յարկումն է փոստը:

Ջուղայից Թաւրիկ կարելի է քարվանով երեք օրումը հասնել, իսկ եթէ փոստատարին ուղեկցել՝ փոստից ձի վարձելով կարելի է մի օրուզիշերում համնել: Ինչպէս քարվանը ունի իւր անյարմարութիւնները ծանր գնալու, փոքր ի շատէ կարգին իջեաններ չըլինելու պատճառով, նոյնպէս և փոստով գնալը քիչ անհանգստութիւն չէ տալիս. իւրաքանչիւր կայարանում միայն երեք կամ չորս ժամ են հանգստանում և ապա դարձեալ շտապով Ճանապարհը շարունակում: Ջուղայից Թաւրիկ կառքի Ճանապարհ չըկայ: փոստով գնացողը վարձում է մի թամբած ձի, որը իւրաքանչիւր կայարանում փոխվում է. նոյնպէս փոխվում է կայարանից կայարան ուղեկցող հեծեալ առաջնորդը: — Ջուղայից երկու երեք

ժամուայ տարածութեան վերայ ճանապարհն անցնում է նեղ կիրճի միջով: Նրջակայքում ապրում են վրանարնակներ, որոնք շատ անգամ դուրս են գալիս իրանց որջերից ճանապարհորդներին կողոպտելու: Ճանապարհին պատահած գիւղերը բոլորը թրբարնակ են. այդ կողմերը ոչ մի հայարնակ գիւղ չըկայ: Զիւառները ուղին կտրճ կտրելու համար բարձրանում են լեռները և գարձեալ իջնում հովիտները. լեռների վերայ ճանապարհը մի նեղ շաւիղ է, իսկ հովիտներում այնքան լայն է. որ կառքով էլ կարելի է գնալ:

Զուղայից Թաւրիկ ճանապարհի վերայ գտնվում էն Մարանդ և Սօֆիանդ գիւղաքաղաքները. երկուսն էլ դաշտավայրի վերայ են և փոստի կայարաններ են: Մարանզում և Սօֆիանզում հայեր չեն բնակվում: Երկուսն էլ ունին մի ընդարձակ փողոց, որոնց միջով անցնում է փոստային ճանապարհը. միւս փողոցները նեղ ծուռումուո ու կեղտոտ են: Փողոցներում մարդ չի երեսում, երբեմն երբեմն անցնում են կապոյտ սաւանով փաթաթուած ու երեսները բուբենդով քօղարկած կանայք. մարդիկ, հաւանական է, շըջակայ այգիներում աշխատում են:

Սօֆիանզից Թաւրիկ ճանապարհն անցնում է ընդարձակ դաշտի միջով. երկու կողմից ճամանչում են ոսկեփայլ արտերը իրանց ծածանուող հասկերով. գիւղերի մօտ ընկած են բոստաններ և խաղողի այգիներ:

Կէս գիշեր էր՝ որ մենք հասանք Թաւրիկ: Թաղաքը խորը քնի մէջ էր: Մի ժամի չափ բաղաքի ոլոր-մոլոր փողոցներով անցնելուց յետոյ՝ եկանք քաղաքի կենդրոնը, ուր դոնվում էր գլխաւոր շուկան, և կանգ առանք Գիւրջի կոչուած քարվանսարայի դռանը: Երկար՝ բաղիսելուց յետոյ, վերջապէս, դուռը մեղ բացին: Այդ քարվանսարայի սենեակները, ինչպէս և ամենուրեք Պարսկաստանի իջևաններում, կեղտոտ, փոշոտ, գիշերուայ միջատներով լիքն են: Հետեւեալ օրը ես շտապեցի վարձել ինձ համար մի սենեակ Թաւրիկի հայարնակ թաղում: Վարձու սենեակները Թաւրիկում էժան են: Վարձած սենեակս կահաւորած էր. պատու-

Հանները դէպի բակն էին նայում. բակում կար ծաղկանց և ջրի աւազան:—Հայոց երկու (Ղալս և Լիլտվայ) թաղերը իրանց մաքրութեամբ, գեղեցիկ շնչերով և բակերով, որոնցից զրեթէ իւրաքանչիւրը օժտուած է ծաղկանոցով և աւազանով, նաև շուկային մօտ լինելու պատճառով, աւելի պարտուպատշաճ տեսք ունեն, քան թուրքերի թաղերը. սուրա համար հիւպատոսները, եւրոպացի վաճառականները, բողոքական միսիոնարները իրանց բնակութիւնները հաստատած են հայոց թաղերում:

Ատրպատականի հայաբնակ գաւառներից նշանաւորը Սալմաստն է. նա ընկած է Ուրմիոյ լճի հիւսիս արևմտեան կողմը: Թաւրիզից Սալմաստ երեք օրուայ ձանապարհ է, որ յածախակի երթեւեկութիւնների պատճառով բաւական ապահով է, այնպէս որ կարիք չըկայ քարվաններ կաղմելու, թէե դարձեալ բանում են քարվաններ դէպի Կարին, Արգարիլ և այլ տեղեր: Ես վարձեցի ջորեպան չարվադարից մի ձի. նա ունէր երկու ձի, միւսի համար ձանապարհորդ չըմարուեցաւ: Առհասարակ չարվագարները իրանք ոտով են գնում. այդպէս 50,—60 զրաստից բաղկացած քարվաններում բոլոր չարվագարները բայլում են, սորանց հետ միասին և այն ձանապարհորդները, որոնք խեղճութեան պատճառով կարողութիւն չունին զրաստ վարձելու, քարվանը հանդարտ է գնում: և օրական 25-30 վերստ քայլելը գժուար չէ: Մենք անցանք Թաւրիզի թրքական թաղերը և Ստամբուլ-Գափուսի դուռը, որից յետոյ տարածվում էին խաղողի այգիները: Սյուտեղից գուրս եկանք ընդարձակ դաշտը, որի եզերքներում երեսում էին լեռներ: Երեկոյեան պահուն հասանք Թասասու թրքաբնակ գիւղը: Այս բոլոր զիւղերը ձանձրալի միօրինակութիւն են ներկայացնում:—Երկար ցեխի պատեր, կեղտոտ, նեղ, ծուռ փողոցներ և մեռելային հանդարտութիւն: Առաւօտը վաղ Թասսուից գուրս եկանք: Դարձեալ դաշտ է: Երբեմն երբեմն պատահում էին մեզ մենաւոր անցորդներ կամ իշապաններ՝ բեռցած աւանակներով: Հանդիպեցանք և միսիոնարների, որոնք կառքով Սալմաստից Թաւրիզ էին գնում: Կառքից շատ առաջ

Էր ընկել իրենց ուղեկից ամերիկուհին՝ ձիռ վերայ՝ նստած:

Այդ օրը անցանք Զելլի-Խալել գիւղը. այստեղ էլ քրիստոնեաց բնակիչ չկայ: Երբորդ օրը հասանք Դիլման: Դեռ Դիլման չկայած՝ մի մաքսային ծառայող (բախտաբար) կանգնեցրեց մեզ և պահանջեց առաջանքնի. քիչով չեր բաւականանում: իմ ընդդիմութիւնս և չարվագարի միջամտութիւնը օգուտ չունեցաւ. չարվագարը մինչև անդամ լաւ ծեծ կերաւ բախտարից:—Սալմաստի գաւառագլուխ քաղաքը Դիլմանն է. Դիլմանի ազգաբնակութիւնը բացառապէս մահմետական է: Հայերը բնակվում են գիւղերում, որոնց թիւը հաշվում են քսանևեօթը: Չուտ հայկական ազգաբնակութեամբ գիւղերը 4, 5 հատ են, իսկ ֆայածներում հայերը ապրում են խառն ասորիների և մահմետականների հետ. Սալմաստում հաշվում են 1200 տուն հայ: Սալմաստը սահմանակից է և Թիւրքայի հազբակ գաւառին, որը Վանի կուսակալութեան մի մասն է: Աշխարհազրական գիրքը, որի շնորհիւ Սալմաստի ազգաբնակութիւնը մշտական յարաբերութիւնների մէջ է Անդրկովկասի և Վանի ու մասամբ էրզրումի կուսակալութեանց ազգաբնակութեան հետ, հարուստ բուսականութիւնը և գեղեցիկ ու բարեխառն կիման մի կողմից, միւս կողմից ժողովրդի աննախանձելի կացութիւնը ազգային զիտակութեան տեսակետից, պարսից կառավարութեան նպաստաւոր ընթացքը հայերի վերաբերմամբ և նորանց յառաջադիմութեանը գէմ խոզնդոտներ չըյարուցանելը,—բաւականին համոզիչ հանգամանքներ են, որոնք կարող են հրաւիրել իրանց վերայ հայ բանիմաց դասակարգի ուշազրութիւնը:

«Արաքսի» անցեալ տարուայ Բ. զրբում *) յառաջ բերուած տեղեկութիւններից պարզ երեսում է, թէ ինչ ողորմելի վեճակի մէջ է պարսկահայոց կրթական դործը: Ատրպատականի թեմը չունի թեմական գպրանոց, մի այնպիսի դպրանոց, որը կարողանար մատակարարել գիւղական դպրոցների համար ուսուցիչներ: Թաւրիզում, առաջնորդանիստ քաղաքում գտնուող Արամեան գպրոցը, շատ

*) Տեսնել 1892 թ. գեկտեմբերի գիրքը՝ էջ 52—57:

Հեռու է թեմական դպրանոցի տեղը բռնելուց: Արամեան դպրոցը թէև նիւթականի կողմից բաւական ապահովուած է և ունի Յ տարուայ գասընթացք, բայց չունի նպատակայարմար ուղղութիւն և ամբողջ թեմի պահանջներին պատշաճ ծրագիր. աշակերաների մէջ զրեթէ չըկան գաւառացիներ: Ընթացաւարաները, 16,—17 տարեկան պատանիներ, չն ներշնչվում այնպիսի ոգով որ ապագայում ինքնակրթութեամբ զարգանան, մի քանի լեզուներից և տուարկաներից ձեռք բերած կյատուր տեղեկութիւնները շուտով մոռացվում են: Արամեան դպրոցին նպատակայարմար ուղղութիւն տալը և թեմականի բարեփոխելը առաջնորդից պիտի սպասենք:

Առաջին անգամ վիճակի կրթութեան գործի վերայ ուշադրութիւն է դարձնում Մուշեղեան եպիսկոպոսը, սա Սալմաստի մի քանի գիւղերում առանց մեծ ծախքերի դպրոցների համար շինութիւններ է կառուցանում: Ժողովուրդը օգնում է եպիսկոպոսին, որը զրամով, որը բանուուրութեամբ, դպրոցներում գնում է ուսուցիչներ, ինքը միշտ վերահասու է լինում նորանց: Մուշեղեան եպ, զրեթէ շարունակ շրջելիս է եղել թեմում, մսիթարելիս ժողովուրդին և պաշտպանելիս նորան հարսաահարութիւններից: Նա մեռնում է Ուրմիոյ կողմերը մի գիւղացու տան: Այս եպիսկոպոսի անունը օրհնութեամբ է յիշվում գաւառաբնակ պարսկահայոց մէջ: Մուշեղեանի շիրմը գտնվում է Սալմաստի Փայիաջուկ գիւղի եկեղեցու բակում: Հանգամանքները պահանջում են որ կանոնաւոր ընթացքի մէջ զրուի կրթական գործը թեմում: գորա համար անհրաժեշտ է մի կենդրունական վարժարան բանալ Սալմաստում: Կեղբոնական վարժարանը ահազին զարկ կարող է տալ գաւառաբնակ պարսկահայոց ազգային ինքնաճանաշութեանը. նա կարող է՝ ի դէպ՝ իւր բարոյական ազգեցութիւնը տարածել և սահմանակից թիւրքահայ նահանգների վերայ, եթէ գիւրութիւն և միջոց ունենայ գաւառիարակել այնտեղի մատաղ սերնդից բանիմաց լուրջ անհատներ. չը մոռանանք ևս, որ նա ծանր հարուած կըտայ կաթուիկ և բողոքական միսիոնարներին:

Գեղեցիկ է Սալմաստի ընդհանուր տեսարանը. տեսնուս
ես ընդարձակ կանաչազարդ գաշտ, որի եզերքները հեռվում
շրջապատուած են շղթայակապ լեռներով. գաշտի միջով
արծաթափայլ հոսանքով անցնում է Զօլա գետը, որից
Ճիւղաւորվում են բազմաթիւ առուներ դէպի իւրաքանչիւր
զիւղի արտերը՝ պէտք եղած ժամանակը նոցա ջրելու համար։
Գիւղերը մէկը միւսից մէկ կամ երկու ժամ հեռաւորութեան
վերայ են ծառատունիներով շրջապատուած. և այդիների մէջ
թաղուած։ Սալմաստի ամենաբազմամարդ զուտ հայաբնակ
զիւղն է Հաւթուանը մօտաւորապէս 400 տուն բնակչով. զիւ-
ղի միջովն անցնում է մի լայն մեծ փողոց. միւս փողոցները
նեղ են, ծուռումուռ։ Տները շրջապատուած են բարձր, 2—3
սաժենի չափ, ցեխի պատերով. շատերը ունին ընդարձակ
բակեր գիւղական կեանքի բոլոր յարմարութիւններով օժ-
տուած. բակում մի փոքր տեղ է զատուած ծաղկանոցի
համար։ Գիւղի շրջակայքում զետեղուած են գիւղացոց այգի-
ները, յետոյ տարածվում են արտերը, արօտատեղիները և ծա-
ռաստանները։ Գիւղամիջում գտնվում է եկեղեցին, որ բա-
ցի բակից՝ ունի և պարտէղ. եկեղեցու մէջ պահվում է Բար-
դուղիմէս առաքեալի ածը. իսկ եկեղեցու բակում՝ մի առան-
ձին շինութեան մէջ, որը կառուցուած է Մուշեղիան եպիսկո-
պոսի ջանքերով, զետեղուած է գիւղական դպրոցը։ Հաւթու-
անում իմ գնացած տարին ուսուցչութիւն էր անում Վ. Գո-
լօշեանը։ Սքանչելի էր տեսնել հայ իդէալիստին, որ ոգես-
րուած աղնիւ գաղափարներով, համակել էր իր շուրջը գիւ-
ղացիներից մի շրջան, որի մէջ մեծամասնութիւնը տեղացի
հայ երիտասարդներ էին, կար և մի քահանայ և մի ծերունի։
Այդ շրջանի ողին ինքը Գոլօշեանն էր, նա բաւական ներ-
գործել էր գիւղացիների թէ սրտի և թէ մտքի վերայ.
երկուերեք տարի առանց որ և է վարձատրութեան դասա-
տվութիւն անելով հաւթուանում, նա ձեռք էր բերել յարգանը
և համակրութիւն գիւղական հասարակութիւնից իր բարի
և խելացի բնաւորութեամբ։ Գոլօշեանը և իր մտերիմ ընկեր
Աղրիպպասեանը իրանց անձնանուիրութեամբ անկեղծ հայրե-

նասէրների անուան արժանացած են մեր աղքային նոր տարեգրութիւնների մէջ: Յիշեալ ծերունու անունը Մսեր էր. սա մի առանձին դոցունակութեամբ յիշում էր, որ ինքը մի ժամանակ Ռաֆֆիի վարժապետն է եղել. նա վարժեցրել էր մեր տաղանդաւոր հեղինակին նախնական զրագիտութեան մէջ: Մսերը բարի և աշխոյժ բնաւորութեան տէր ու զուարձախօս մարդ էր. նա բաւական կարգացած էր, և աշխատում էր աւելի ևս ընդարձակել իր մտաւոր հորիզոնը՝ միշտ յարաբերութիւնների մէջ մտնելով և շփուելով նոր մարդկանց հետ. նա ուրիշ ծերունիների նման չէր, որոնք բարձրից են նայում նոր սերնդի վերայ:

Եերունի Մսերը այնքան բարի եղաւ, որ յանձն առաւ ինձ ուղեցել միւս զիւղերը: Հաւթուանին կից գտնվում է ասորաբնակ Խոսրովա զիւղը, որի բնակիչների վարք ու բարքը շատ ընկած է շնորհիւ կամուլիկ միսիոնարների: Հավթուանից յետոյ յայտնի է Սալմաստում Փայիաջուկ զիւղը մօտ 300 տուն հայերով. զիւղը աւելի զիւղաբաղաբի տեսք ունի. փողոցները մաքուր, տները կոկիկ պարտէզներով և շրջապատուած բարձրատիր պատերով: Եկեղեցու բակում կառուցուած է առանձին շինութիւն դպրոցի համար դարձեալ Մուշեղեան եպիսկոպոսից շինած. եկեղեցու բակում՝ դրան մօտ՝ գտնվում են Սամունեանց և Մուշեղեանց եպիսկոպոնների շերիմները: Սաւրա զիւղի մասին լուր է տարածուած, թէ բնակիչները խաշագողութեամբ են պարապում զիւղամիջում մենք տեսանք մի քանի երկարամօրուս մարդիկ, որոնք իրար հետ խօսակցում էին ծանրը և լուրջ կերպով. սոքա կասկածու հայեացքներ էին ձգում մեր վերայ. Հագած ունին աղնիւ մորթուց մուշտակ, և թանգազին դտակներ, սորանք շատ տեղ պտտած և եփուած մարդիկ էին երեսում: Երկար տարիների պանդրիստութիւնից յետոյ տուն վերադարձող խաշագողները հանգիստ կեանք են վայելում իրանց ընտանեկան օջախում: Խաշագողների տները գեղեցիկ են, շատերը երկյարկանի, ընդարձակ բակերով, ծաղկանոցներով և աւաղաններով:

Աշնան վերջերն էր: Ես շտապում էի, որ ձմեռը գեռ չե-

կած Մուշ համեմ: Ես վարձեցի մի ձի Հին-քաղաք կոչուած զիւղում, որտեղից մեկնում է Վան գնացող քարվանը: Քարվանը Ճանապարհ է ընկնում կէս զիշերին, այդ ժամանակ մի տեսակ իրարանցում ու շարժում է սկսվում Ճանապարհորդների մէջ: ամենքը կապկապում են իրանց իրեղէնները և երթի են պատրաստվում: Քարվանը մէկ ժամ գնալուց յետոյ լուսաղէմին հասաւ Զինջիլ-քարասի ձորը, որին հայերը Դուշմանաձոր են կոչում: Այդ ձորի մէջն է Դերիկայ վանքը: Մեր քարվանի մէջ կային ուխտաւորներ, և որովհետեւ գեռ ցրտերը չէին սկսուել, ուստի՝ ինչպէս սովորութիւն է՝ ուխտաւորները բաց օդի տակ իրանց վրանները զարկեցին: Մի քանիսը վրանն էին պատրաստում, միւսները գնացել էին լեռներից ցախարմատներ ժողովելու՝ կրակ անելու համար: Նաև կերակուրը ուտելուց յետոյ գնացին վանքից կէս ժամ հեռաւորութեան վերայ դանուող քրդաբնակ Դերիկ զիւղի մօտիկ, ծծմբային ջրումը լողանալու. այդտեղ մի փոքր բնական աւազան կայ, որի խորութիւնը մարգուս մինչև մէջքը կը լինի. հէնց այգահեղ էլ լողանում են: Դերիկ զիւղի բնակիները բուրդ են. սորանց հողերը բերրի չեն, այլ քարքարոտ: Այս զիւղը շատ սիրուն ու բանաստեղծական տեսք ունի, ընկած մի լեռան լանջի վերայ, առջեկից խորունկ ձորի միջով հոսում է Դերիկ գետը, որ անցնելով Հին-քաղաքի միջով թափում է Ուրմիոյ լիճը. թէե այս գետը սակաւաջուր է, բայց աղմկալից: Գիւղի հանդէս լեռան վերայ գտնվում է մի աւերակ բերդ. ուխտաւորները լողանալուց յետոյ սկսան հրացանաձորութիւն անել բերդի պարսպի դէմ: Ուխտաւոր սալմաստեցիք միշտ իրենց հրացանները փորձում են այս պարսպի վերայ:

Ճանապարհը Դերիկից յետոյ անցնում էր լեռների վերայով: Այստեղ նկատուեց եղանակի փոփոխութիւն. բարեխսառն զով օրերից յետոյ զգացինք ձմեռուան սառնամանիքը. սկսաւ ձիւն գալ և փշել սաստիկ բամի: Ճանապարհը ամայի և քարքարոտ է, տեղ տեղ նկատվում են քրդի զիւղեր: Մինչեւ Բարգուղիմոս առաքեալի վանքը տասն երկու ժամ

է տեսում: Խաչգեապուկ լեռնաշղթան որոշում է պարսից և թիւրքաց սահմանադիմը. այստեղից մինչ Բարդուղիմէսս առաքեալի վանքը հինգ ժամուայ ճանապարհ է: Վանքը գտնվում է Հաղբակ կոչուած գաւառում, որի գաւառազուլս քաղաքը Բաշգալէն է, Վանի վելայէթում: Բաշգալէում 40 տուն հայ հաղեւ լինի. բացի թիւրքերից կան տարիներ, հրէաներ և պարսիկներ. հայերը հողագործ են: Պարսկաստանից Բաշգալէ փոխադրում են՝ զլիսաւորապէս պարսիկների ձեռքով՝ ձերմակ և ներկած կտաւ, փայտեղէն, բամբակ ու մրգեղէն: Բարդուղիմէսս առաքեալի վանքը կառուցուած է մի բարձր բլրի վերայ, որի չորս կողմը տարածվում է Հաղբակի գաշտը, գաշտի վերայ գտնվում են 15 հայ գիւղեր: Վանքի տակը՝ բլրի ստորոտում՝ վանքի գիւղն է, որը 40 տուն հայ է պարունակում: Ս. Բարդուղիմէսս վանքը ամենահին վանքերից մինն է. Թէ՛ արտաքին և թէ՛ ներքին տեսքով հնագոյն վանքերի ձեւն ունի. սեղանը բաց չէ, ինչ պէս միւս հայ տաճարներում, այլ բաժանուած է գասից պատով, որի մէջ շինուած է մի գուռ գէպի սեղանը, որ ամենահին վանքերին է յատուկ միայն: Թէ՛ տաճարի մէջ և թէ՛ գուրսը նորոգութեան նշաններ չեն նկատվում. վանքի բակում գանուած շինութիւնները խարխուլացած են: Բարդուղիմէսս—Առաքեալի զլիսաւոր եկամուտը լինում է Սալմաստի հայերից, որոնք խոշոր նուիրաբերութիւններ են անում վանքին՝ տաւար, ոչխար խոստանալով. իր ժամանակին վանքի նուիրակը զալիս է և ժողովում է խոստացածները: Իսկ ինչ որ վերաբերում է վանքի վեճակին, Հաղբակին, պէտք է ասել որ Հաղբակեցիք շատ անմիշթար կացութեան մէջ են հարստահարութիւններից: Բարսյական վեճակն էլ անսփոփ է,—քահանաները տղէտ են, վանքի վանահայրը, անարժան Բաղունին, գործիք է գարձած և աջակցում կեղեքիներին: Դպրոցներ բացի Վանքից և Բաշկալէից, ոչ մի տեղ չըկան:

Բարդուղիմէսսի վանքից ճանապարհը անցնում է գէպի Խօշաբ. ուղին իջնում է կամ բարձրանում է լեռների

բարձրավանդակները. մի կողմից բարձրաբերձ ասպառած լեառն, միւս կողմից գահավէժ խորխորատ և այդ երկուսի միջով մի նեղ շաւիղ, աշա շատ տեղ այսպէս է ճանապարհը. շատերը ճանապարհորդներից, մանաւանդ ցեխին, կառ սառած ու սայթաքուն տեղերը, զգուշութիւնից գերադասում են ոսքով զնալը: Այդ ճանապարհին գտնվում է Չուխ-Գեազուկը և նոյնանուն գիւղը. Չուխում կան բազմաթիւ ծմակներ, այրեր և կիրճեր. այստեղ քաջութեամբ կռուելով ընկան Գօլօշեան և Ազրիպասեան: Խօշաբը զիւղաքաղաք է հրապուրիչ տեսքով. ձեր առաջ բացվում է մի ձոր, որի երկու կողմը լեռան լանջերը վարդարուած են դալարով. մի քիչ հեռու աշագին ժայռի վերայ կանգնած է մի աւերակ բերդ իր աշտարակներով: Չորի միջով հոսում է խլացուցիչ յորձանքով Խօշաբ գետը, որի եզերքները՝ աջ ու ձախ՝ կանաչագեղ արօտատեղիներ են. գետի վերայ շինուած է մի խարխուլ կամուրջ. կան և ջրազայներ: Խօշաբի բնակիները, մեծ մասամբ, քուրդ են, բացի մի քանի թիւրք պաշտօնատարներից:

Խօշաբից քարվանը գնում է Վան: Ճանապարհի զիւղերը մեծ մասամբ հայաբնակ են: Մենք անցնում ենք զաշտավայրով. հեռվում երեսում է գեղեցիկ Վանը. տհա և գտնվում ենք նորա շրջակայքում, որոնք ոռոզվում են յորդահոս առուներով: Եղանակը մշուշապատ էր. Վանի հայաբնակ թաղերը անցնելուց յետոյ հասանք բաղաքի կենդրոնը: Կենդրոնում գտնվում է շուկան, որը ընդարձակ է և տեղ նորոգուած. այստեղ են բոլոր վարչական ատեանները: Մի քիչ հեռու խրոխտաբար բարձրանում է բնական քարաժայռի վերայ կառուցուած Վանի հռչակաւոր բերդը: Բերդի չորս կողմը, քարաժայռի ստորոտում, տափարակի վերայ զետեղվում են թրքական թաղերը. շուկայից բերդի մօտովը՝ մի լայն ճանապարհ տանում է դէպի Այգեստան: Այգեստանը հայերի թաղըն է. սորա փողոցները լայն են և երկար. փողոցների երկու կողմից վազում են առուներ, որոնք շատ են նպաստում թաղի մաքրութեանը: Առհասարակ թիւրքիայի քաղաքներում միշտ

Հանդիպում ես սոսկալի աղտօտութեան. անմաքրութիւնները փողոցն են թափում, որոնք նեխվում են և տպականում օդը զաղըալի գարշահոտութեամբ. անմաքրութիւնը և հակառողջ պայմանները աչքի են ընկնում մանաւանդ թրբական թաղերում: Այդեստանի տները օժտուած են պատշաճաւոր յարմարութիւններով և ճոխացած չքնաղ պտղաւէտ այդիներով:

Հիանալի է Վանի ընդհանուր տեսարանը. մի կողմից՝ գեղատեսիլ ալեծուփ կապտաջուր ծովակը, միւս կողմից՝ հրաշագեղ ժայռի վերայ ամրակառոյց բերդը, ընդարձակ այդիների մէջ թաղըւած Այգեստանը, լայնանիստ լեռնաշղթաներով բոլորուած դաշտը,—գերբնական տպաւորութիւն են թողնում Ճանապարհորդի վերայ: Վանի պէս բնական սիրուն տեսարանով բաղաքներ ոչ միայն Հայաստանում, այլ ամբողջ աշխարհում բեւ կը գտնուին:

Թէկ ես Վանում դէպերի բերմամբ փոքր ժամանակ մնայի, սակայն սեպուհ պարտականութիւնս համարեցի տեսնել Վարագոյ վանքը, որտեղ պանծացել էր իր նշանաւոր ու հանրօգուտ գործունէութեամբ մեր պաշտելի Հայրիկը: Վարագը զտնվում է Վանի հարաւարեւելեան կողմը՝ լեռների մէջ: Ճանապարհը դաշտով է, վանքին գեռ չը հասած բլրի վերայ սկսվում է մի ձեռատունկ ծառուղի: Խորհրդաւոր լոռութիւն էր տիրում վանքի բակում, կենդանութեան նշոյլներ չէին նկատվում: Վարագոյ վարժարանը, որտեղ մի ժամանակ կրթվում էր ազգի մանկտին, այժմ թափուր էր. թանգարան գրադարանը և տպարանը զոց էին ու ամսյի: Վանքի բակը ընդարձակ է և չորս կողմը շինութիւններ են, որոնց մէջ են նաև վարժարանը ու տպարանը. տաճարի աջ և ձախ կողմերում զետեղուած են թանդարան-գրադարանը: Տաճարը, որ վերանորոգուած է արտաքին ու ներքին կողմից, գեղեցկատեսիլ է: Վարագի նշանաւոր հնութիւնն է Վասպուրականի Սենեքերիմ թագաւորի գահը*), որ գրուած է ասաճարի ձախակողմեան դասում՝ սեղանից ցած:

*.) Տես «Արաքսի» այս գրքի 59 երեսում, պ. Տէվկանցի յօդուածում:

Ծան, իմբ.

Տիսուր տպաւորութիւնների ներքոյ վերադարձայ քաղաք: Այս անուանի սրբավայրը ճռնող Վանահայրը տարագրուած էր հայրենիքից դուրս, ամայացել էր վարժարանը աշակերտներից, դոյցուել էր այն տպարտնը, որտեղից մի ժամանակ «Արծիւ Վասպուրականի» միջոյաւ ինքնաճանաշութեան և հայրենասիրութեան կայծեր էին արծարծվում կիսամեռ հայութեան անդամների մէջ, ոչ միայն հայրենիքում, այլ և նորանից դուրս տարագիր ազգայինների մէջ: Փոշոտուել էին նաև հնումը ճոխ ու կենդանի գրադարանի մատեանները:

Վանից Բաղէշ կարելի է դնալ ծովով էլ ցամաքով էլ: Ցամաքային ճանապարհն անցնում էն Խշտունեաց լեռների ստորոտներով և հասնում է Բաղէշ քարվանով - 3-4 օրուայ մէջ. այս ճանապարհը գժուար անցանելի է, ուստի շատերը, մանաւանդ ամառը, դերագասում են ծովային ճանապարհը: Վանից հարկաւոր է նաւով ուղեսորուել Դատուանի նաւահանգիստը: Դատուանից մինչև Բաղէշ ցամաքով հինգ ժամուայ ճանապարհ է: Վանայ լճի վերայ շողենաւեր չեն բանում, որոնց գոյութիւնը աւելի կը զիւրացնէին ծովակի եղերքներում զտնուող քաղաքների և զիւղերի յարաբերութիւնները. ուստի ծովով ճանապարհորդողը պէտք է նստի առագաստաւոր նաւ: Սոքա բոլորն էլ նահապետական ձեի են և զուրկ ամեն յարմարութիւններից. փոթորկի ժամանակ վտանգաւոր են, նպաստաւոր հողմ լենելիս զիւրագնաց են, իսկ հակառակ զէպքում ձանձրալի կերպով դանդաղ: Վանի նաւահանգիստը Աւանց զիւղն է. այդտեղ են սովորաբար կանդ առնում առագաստանաւերը: Այս զիւղի բնակիները մեծ մասամբ նաւաստիներ են. որը առագաստանաւ ունի, որը մակցիկ, և որը ձինորս է. մի մասըն էլ պարապում է բորակի պատրաստութեամբ: Բորակը մի տեսակ աղ է և գործ է ածվում զլիաւորապէս օճառ պատրաստելու համար: Ծովակի եղերքում ահագին տարածութեան վերայ փորուած են մարգեր, ուր ծովակից ջուր են թողնում, ջուրը երբ անցնում է զետնի մէջ մնում:


Է մի տեսակ աղ, որ և ժողովում են ու վաճառում բորակ անունով:—Ես գերադասեցի ծովային ձանապարհով գնալ Դատուան և ապա Բաղէշ: Մեր նաւապետը քուրդ էր. նա Վանից Դատուան իր առաջաստանաւով տանում էր զանազան մթերքներ. կային և ձանապարհորդներ: Սկզբում չողմը նպաստաւոր էր, և նաւը բոլոր առաջաստները պարզած, խաղաղ՝ առանց տարութերի՝ ծովակը ձղելով գնում էր առաջ: Բայց մի քանի ժամից յետոյ, երբ քամին հակառակ կողմից սկսեց փչել, նաւը տարութերվում էր, ալիքները խվվում էին նորա կողերին: Նաւի վերայ իրարանցում ընկաւ. առաջաստները իջեցրին. նաւաստիներն սկսան թիւվարել: Նաւի ընթացքը ծանր էր. ուստի մեր ձանապարհորդութիւնը փոխանակ հինգ ժամի, տեսեց երևունուչորս ժամ:

Առաջաստանաւը բիչ բիչ մօտենում էր Դատուանի նաւահանգստախն. Համարեա ամբողջ մի ժամ չորս հինգ նաւաստի առաջաստանաւը պարաններով քարշում էին ծովի եղերքից, որպէս զի յարմարաւոր կերպով իջեցնեն նորան նաւահանգիստը. ցուրտը սարսափելի էր. բայցի այդ՝ օրն էլ մթնանում էր: Վերջապէս մենք յաջողութեամբ հասանք Դատուան: Դիւղացիներից մինը շալակեց իմ ունեցածս և տարաւ զիւղե ռէսի բնակարանը. ես հետեւեցի նորան: Դատուանում հարիւր տուն հայ կը լինի: Տները թէե քարաշէն են, և հետեապէս զետնափոր չեն, բայց այնուամենայնիւ լուսամուտներ չընեն. լոյսն անցնում է հերթիքից և գռնից. կացարաններում միւնոյն ժամանակ պահվում են և անասունները: Դիւղացիներն ինձ սիրով ընդունեցին. անմիջապէս կրակ արին. ես տաքացայ. ճաշը բերին՝ մածուն, սեր, և այլն: Կերակուրից յետոյ մինչև կէս զիշեր գիւղացիները շուրջո հաւաքուած՝ իրանց աղէտների և դառն վիճակի վերայ տխուր պատմութիւններ էին անում; Հետաքրքրվում էին իրենց հարազատ օտարերկրացի եղբայրներով, Ռուսաստանի հայոց նիստ ու կացի մասին ինձնից զանազան տեղեկութիւններ էին Հարցնում:

Դիւղացիներից խմացայ, որ հետեւալ օրը Բաղէշ՝ և Բա-

ղէշից Մուշ գնացող քարվան կայ, ուստի անյապաղ ինձ համար վարձեցի այդ քարվանում ձի մինչև Մուշ։ Դատուանից մինչև Բաղէշ հինգ ժամուայ ճանապարհ է և գարձեալ լեռների միջով, որոնք ծածկուած են մացառներով։ Ճանապարհի կիսում՝ գտնվում է մի կիսաբանդ իջևան, որը ինչպէս պատմում են, մնացած է շատ հին ժամանակներից, որովհետեւ այս թզնունեաց լեռների մէջ ձմեռը լինում է սաստիկ և շատ անդամ մըրիկների ու բուքերի ժամանակ ամբողջ մթնոլորտը խառնաշփոթվում է և ահագին ձիւնոկյուները գոցում են ճանապարհները, — այստեղ է և Ռահվադաշտը, որտեղ քամիները անպակաս են, ձիւների կյաները այնքան ահագին են, որ ձիերը շատ անդամ խրվում են ձիւնի մէջ. այդ դէպքում ջորեպանները հարկադրուած են լինում բեռները վերցնել և դուրս հանել ձիերին, — ահա այդ իջևանները ճանապարհորդների համար ժամանակաւոր պարապարան են։

Բաղէշ քաղաքը (Քիթլիս) ընկած է լեռների բարձր կողերի վերայ, մէջ տեղից ձորի միջով վաղում է մի գետակ յորձանահոս, որի վերայ կան կամուրջներ։ Քաղաքի բոլոր փողոցները աստիճանաբար իջնում են ցած մինչև գետակի ափերը։ Տները բարաշեն են, մեծ մասամբ բակեր չունին. ներքեի տան տանիքը բարձրի տան համար բակի տեղ է ծառայում։ Լեռների մէջ պարփակուած և բարձր տեղ շինուած Բաղէշը օժտուած է զովարար և առողջարար օգով։ ամառը այստեղ զով է լինում։ սարերից հոսում են յորդառատ ջրեր, որոնք թափվում են Բաղէշու ղետը։ Բաղէշը ունի ընտիր պարտէզներ. շրջակայքում կան հանքային ջրեր, ուր քաղաքայիք սիրում են զքոսնել. բարձրադիր ժայռի գագաթի վերայ գտնվում է մի վիթխարի աւերակ բերդ, փառաւոր անցեալի տըլսուր մնացորդը։ Բաղէշի ազգաբնակութիւնը մեծամասնութեամբ քիւրդ է, տամն հազար տուն բնակիչներից երեք հազարը միայն հայ են։ Հայերը պարապում են վաճառականութեամբ և արհեստներով. արհեստներից մասնաւորապէս զարգացած է երկաթագործութիւնը և արծաթեղին գործուածքներ պատ-





ИЗД. ГОЛЛЕ

ԲԻԹԼԻՍ-ԲԱՆԵՐ ՔԱՂԱՔ.

Городъ Битлисъ въ Турецкой Армени.

Автотипія Ангерера въ Вѣнѣ.



բաստելը: Բաղէշի շուկան նեղ է և կեղտոտ: Բաղէշի հայր շատ ձնշուած է, դորա համար է որ դարերի ընթացքում նա ստացել է խորամանի և քսու բնաւորութիւն. նա վատ համբաւ ունի այդ կողմից վանեցոց և մշեցոց մէջ, որոնց հետ բաղէշին գտնվում է յաճախակի յարաբերութիւնների մէջ: Եւ զարմանալի չէ այդ. Բաղէշի շրջակայքում հայ գիւղեր շատ քիչ են. հայ տարրը ամփոփուել է քաղաքում: Քրդերի վայրագ և գաղանաբարոյ յատկութիւնները առաջացրել են նոցա հետ ապրող քրիստոնեայ հայի մէջ երկշուառութիւն և բսութիւն՝ իբրև ապրելու և գոյութիւն ունենալու միակ միջոց:— Բաղէշը իր շրջակայքով առանձին նահանգ է և առանձին առաջնորդութիւն: Բաղէշի մօտ նշանաւոր է Խընդրակատարի վանքը:

Բաղէշից Մուշ տանող ձանապարհը շեղվում է դէպի ձախ Դատուանի ձանապարհից: Այս տեղից բացվում է մի ընդարձակ դաշտավայրի հիանալի տեսարան. այդ դաշտավայրը Մշոյ լայնածաւալ դաշտն է, որի միջով օձապտցոտ անցնում է: Արածանի զմայլիչ գետը: Դաշտի մէջ ցրուած են բաղմաթիւ հայ գիւղեր: Մշոյ դաշտը շրջապատուած է շղթայակապ լեռներով: Հարաւային կողմը բռնած են Տորոսի լեռները, արևելքից Նիմրութ և Սիփան գեղածիծաղ լեռների գագաթներն են բարձրանում:— Բաղէշից Մուշ 12 ժամուայ ձանապարհ է: Քարվանը հասնում է երրորդ օրը. երթևեկութիւնները այդ քաղաքների մէջ յաճախակի են: Առաջին իջևանը Զիոնը ունութումն է: Զիոնը կան բաւական թուով հայաբնակ գիւղեր. զիլիսաւորներն են՝ Վարդէնիս և Արտօն. Զիոնը հայերը անօրինակ տառապանքներ են կրում վայրենի քրդերից:

Երկրորդ օրը մեր ձանապարհը շարունակվում էր Մշոյ դաշտի միջով: մենք պատահում էինք իւրաքանչիւր ժամ տարածութեան վերայ մի հայաբնակ գիւղի: Այդ ընդարձակ դաշտավայրում գտնուած գիւղերի թիւը հարիւրից աւելի է: Հայերը Թիւրքիայում՝ բնակվում են զիլիսաւորապէս հարթ և ասփարակ տեղերում, իսկ քրդերը բռնած ունեն լեռները

և երկրի ամուր դիրքերը։ Մշյ գաշտի դիւղերում տները գետնափոր են, այնպէս որ հեռուից գետնի մակերեսյթի վերայ միայն թուլմբեր են երևում։ գետնափոր տները մի քիչ յածր են դետնից։ ներս էք մտնում յածր դռնով։ գետնափորի պատերը քարէ են և ցեխած։ առաստաղը երկար գերաններից է։ շարուած հաստ փայտէ սիւները յատակից յենուած են առաստաղին, որը ծածկուած է հողի թմբաձետանիքով։ առաստաղի մէջտեղից բացուած է մի ծակ։ գաերդիկն է։ երդիկի տակ հողի յատակի վերայ թոնիրն է, որից վառած ժամանակ երդիկով բարձրանում է ծուխը։ լոյսն էլ այդ տեղից է անցնում։ Այս գետնափորներում պահվում են միւնչյն ժամանակ և անասունները, հաւանական է, ապահովութեան համար։ գետնափորի կէսը յատկացրած է անասուններին, ուրեմն գետնափորները համ կացարան են, համ էլ ախոռ։ ախոռը կացարանից բաժանուած է անջրպետով։ բակեր չըկան։ ձմեռը այդ ախոռներում անասունների արտաշնած գոլորշիից և արտաթորութիւններից տաք է լինում։ գիւղացիների համար մեծ բաւականութիւն է այդ տեղնատել ժամերով և զրոյց անել բայց անսովոր մարդը տասը բոսէ էլ չէ կարող զիմնանալ։ օդը խեղբուկ է։ Երկրորդ օրը քարվանը զիշերեց Խաս-զիւղում։ Ծառատունի պարտէզ, այգի, գաշտի զիւղերում չըկան։ լեռների ստորոտում գտնուող զիւղերում գարձեալ պատահումնեն ստուերախիտ ծառաստաններ, պարտէզներ և բանջարանոցներ, որպիսիքն են, օրինակի համար, Տէրկէվանքը, Դաւիթի անյաղթ փիւսովիսյի ծննդավայրը, որը գտնվում է Մշյ գաշտի հարաւ-արեւելեան կողմը, լեռան ստորոտում։ Առաքելոց վանքը տանող ճանապարհի մօտը, Գոսերք զիւղը գաշտի հարաւ-արեւմտեան կողմը։ Ս. Յովհաննէսի վանքը տանող ճանապարհի վերայ։ սա ընկած է մի ձորում խոխոջող ջրերի մէջ և ծառերի հովանիներով պատսպարուած։ նոյնպէս և Բաղլու զիւղը, որ Ս. Կարապետի նեքեն է, լաւ տպաւորութիւն է թողնում իր հիանալի ծառազարդ առատ ջրերի տեսքով։ Այն կացարանը, որտեղ մանք իջեանել էինք, շատ աղքատիկ էր։ թշուառ

Էին երեւում միջի բնակիչները մի զառամեալ ծերունի, հիւանդ կին, ջահել հարսեր և մանր երեխաներ, որոնք դրեթէ տկլոր, և կուչ էին եկել թոնրի մօտ խսրի վերայ ու տաքանում. ահա սորանք էին այդ զիւղական գերդաստանի երկրում մնացած անդամները, ծերունու հասակաւոր որդիքը պանդատութեան մէջ էին. զիւղական փոքր ի շատէ և բարեկեցիկ տան սարք ու կարգի նշոյլն էլ չէր երեւում. մինչ գեռ ծերունին ինձ հետ հիտաքրքրութեամբ խօսում էր, ներս մտաւ խրոխտ խրոխտ մի քուրդ աղա իր երկու ուղեկիցներով. նա նախ սկսաւ գոռալ և ապա հրամայեց իր մարզիկին քարշել հորժով կովը ախոռից. ծերունին ինչ որ հաշեւ ունէր քրախ հետ. հիւանդ կինը, հարսերը լաց էին լինում, ծերունին աղաջում էր որ փոքր էլ սպասէ մինչեւ որ կրստանայ իր պանդուխտ զաւակներից փող. քուրդը սկզբից անտարբեր էր, բայց յետոյ փոքր ինչ կակղեցաւ. և հրամայեց իր մարդկանց առնել պղնձէ, կաթսաները և ուրիշ անհրաժեշտ առօրինայ գործածութեան համար պարագաները. մի խուլ համաձայնութիւն կայացաւ. գարձեալ առանց այդ բաներին կարելի էր մի կերպ կառավարուել, եօլա գնալ բայց առանց կովի գժուար էր. Քրտի գնալուց յետոյ զիւղացին ծանր, խիստ ծանր, ախ էր քաշում և միշտ կը նում՝ Աստուած իմ կը խալսենք այս անօրէններից:

Խաս զիւղեց Մուշ վեց ժամուայ ճանապարհ է, որը անցնումէ զարձեալ գաշտով և հայտինակ զիւղերի միջով, վերջին զիւղերը որոնք Մուշքաքից մէկ ու կէս ժամուայ տարածութեան վերայ են՝ Ջրիկ և Մոկունքն են. Մուշը կարելի է բաժանել երկու մասի. առաջին մասը տաճկական թաղերն են, երկրորդը հայկական. Տաճիկները բռնած ունին բաղաքի ընտիր, ընդարձակ և, համեմատապէս, ցած տեղերը. Հայերը բնակվում են բարձր և նեղ տեղերում, ձորի մէջ. քաղաքը մանելուն պէս սկսվում են տաճկական թաղերը իրանց աղտոտ և գարուփոս փողոցներով, ապա դալիս է շուկան, որը զըեթէ քաղաքի կենցրոնումն է, շուկայից բարձր հայոց թաղերն են. ողորմելի բան է ներկայացնում Մշու շուկան՝

Հնցած փոքր փայտէ կրպակներ, տեղ տեղ դոցուած, չորս
հինգ խանութ հաղեւ հազ լինեն կանոնաւոր, որոնք 50—100
լիրայ գրամագլխի արժէքով ապրանք պարունակեն, միւս
ները, մեծ մասամբ, 5—7 լիրայի աւելի ապրանք չեն ու-
նենալ. մանուֆակտուրայով առուտուր անողների խանութ-
ները խաներումն են: Մշոյ մէջ կայ միայն երկու խան. շու-
կայի արտաքին տեսքը, մասամբ, ապացոյց է Մշոյ երկրի
տնտեսական վերջին ծայր անկեալ վիճակին, թէև երկիրը
օժտուած է բնական հարստութիւնով: Մշոյ արդիւնաւէտ
դաշտը կարող էր բարեյածող հանգամանքներում շտեմարան
լինել շրջակայ նահանդների համար, նորա վերայ զանուող
բազմաթիւ հայ զիւղերը բարեկեցիկ վիճակ կարող էին ունե-
նալ եթէ հայերի վերայ ըրծանրանացին տնտեսական աւերում-
ները: — Շուկայում գտնվում են, սովորաբար, և սրճարանները
(զայֆէները). սրճարանները գլխաւորապէս ծառայում են փո-
խադարձ յարաբերութիւնների և հազորգակցութիւնների հա-
մար. այստեղ շատ անգամ զանազան ձեռնարկութիւնների
ծրագիրներ են յղանում, պայմաններ կազմում, ամեն տեսակ
լուր և նորութիւն այստեղ է իմացվում. պարապ և անդործ
մարդիկը, մեծ մասամբ առաւտից մինչև իրիկուն սրճարա-
նումն են լինում թուղթ կամ թաւլու խաղում, նարդիլէ
ծխում, սուրճ վայելում: կան սրճարաններ, որտեղ օղի էլ
են ծախում. իւրաքանչիւր սրճարանում գտնվում է և սափ-
րիչ կան և լրագիր ստացող սրճարաններ: Շուկայում առան-
ձին կրպակներ վարձած ունին իրանց համար տեղային փաս-
տաբանները և խնդրագիր դրոզները. այդ փոքր կրպակնե-
րում մինդարների վերայ գրած կամ ուղղակի ձեռքում բռնած
թղթում: Շուկայի մէջ տեղաւորվում է ևս փաշայի սարայը
այսինքն կառավարութեան պալատը, որը մի հին և անձուռնի
շինութիւն է, զրան առջեւ կանդնած են պահակներ, զրան
բարձրում տախտակից շինուած է կիսալուսին ահաղին մե-

ծութեան, մէջն էլ աստղ նոյնպէս տախտակից. դաւառական վարչութեան զրեթէ բոլոր բաժինները սարացումն են զետեղը վում: ուստիկանատունը, տուրքերի ատեանը, գատարանը, ժամանակաւոր արգելանոցը, բալադիէն (բաղաքային վարչութիւնը), և կառավարիչ փաշայի ատեանը: Մուշը սանջակ է (գաւառ) ուստի և այդ բոլոր ատեանները մի տեղ են ամփոփուած: Պաշտօնեանները բոլորն էլ թիւրքեր են, պաշտօնատըներում: սեղան աթոռ բոլորովին չեն գործածվում, պաշտօնականները փաշայից սկսած մինչեւ վերջին քեատիբը (զրագիրը) նստած են սեղիրների վերայ (բազմոց) և մինդարների (բարձ), թեկ բնկած, յատակի վերայ փոռուած է խսիր, խսիրի վերան կապերտ. ծալապատիկ նստուած մի ձեռքով թուղթն ին ըռնում: միւսով խվեզում զանազան պաշտօնական զրութիւններ: հենց այդտեղ շատ անգամ և նարգիլէ են ծխում: սուրճ խմում: ծաշ և ձմերուկ ուտում:

Մշեցի հայերը, ընսայելով իրանց հիւրասիրութեանը, վերջերս օտարականներից խոյս են տալիս. կառավարութիւնը շատ խէթ և կասկածաւոր ազբով է նայում նորանց վերայ, որոնք որ և յարաբերութիւն են ունենում օտարականի հետ: Առաջին մարդը, որի հետ ծանօթացայ, մի կարնեցի արհեստաւոր էր. սա երկար ժամանակ Մշումն էր ապրում: կարնեցին, ընսայելով այլոց, եկաւ ինձ մօտ սիրալիք կերպով խօսակցեց հետա և ապա հրաւիրեց ինձ իր սենեակը. նա խոստանում էր իր սենեակը բոլորովին ինձ յանձնել, որովհետեւ ինքը մի երկու շաբաթից զնալու էր թաղէշ: ես ուրախութեամբ և շնորհակալութեամբ ընդունեցի կարնեցու առաջարկութիւնը. առհասարակ ճանապարհորդները, որոնք քաղաքում չունեն որ և է ծանօթ, որի մօտ կարող են հիւր մնալ, սահմանուած են խանում իջևանել. խանները բոլոր յարմարութիւններից զուրկ՝ կեղտոտ, ցուրտ ու յաձախ, մութն են. բայցի մի խսիրից ոչինչ չեն տալիս իջևանողին. այնպէս որ խանում մի երկու օր հաղիւ կարելի է մնալ, որքան շուտ մարդ իրան համար սենեակ ճարի, այնքան լաւ է. սենեակ գտնելն էլ ունի իր դժուարութիւնները,

միայն շուկայում սորանից նորանից հարցուփորձ անելով կարելի է իմանալ ով ունի պարապ և վարձու սենեակ, շատերը օտար և մանաւանդ ամուրի մարդուն յարմար չեն դտնում սենեակ վարձով տալը, ի նկատի առնելով ընտանեկան հանգամանքները: Կարնեցու հիւրասիրութեամբ ևս աղատուեցի սենեակ որոնելու գժուարութիւնից, կարնեցին բարի և վառ ձգտութիւների տէր էր. նա, ինչպէս ինքը պատմեց ինձ, նոր էր դուրս եկել բանտից արդարանալով Վանի նահանգական դատարանի առաջ. նորան Մշոյ ոստիկանութիւնը մեղագրում է եղել որպէս թէ մասնակից է Գ. էքմէքանի հետ կաթոլիկաց գերապայծառի սպանութեան գործի մէջ: Հայ թաղերի անուններն են Ս. Մարիանու թաղ, Զորու բրտի, Վերի թաղ և Զզրաշէն: Իւրաքանչեւր թաղ ունի իր եկեղեցին և մի ծաղկաց. Զորու թաղում գտնվում է Միացեալ ընկերութեանց կենդրոնական վարժարանը, Ս. Մարիանու թաղում նոյն ընկերութեան օրիորդաց զպրոցը. Զորու թաղը Ս. Մարիանու թաղեց բաժանվում է գետակով, որը կազմվում է լեռներից հոսող յորդառատ աղբեւրների ջրերից. Ջրերը շատ առատ են Մշոյ մէջ, գրեթէ իւրաքանչեւր փողոցի միջով անցնում է առու. առուները առունում են իրանց հոսանքով բոլոր անմաքրութիւնները և աղատառութիւնները. եթէ առուները ըլինէն, քաղաքի առողջապահական վիճակի շատ վատ կըլինէր, շնորհիւ թիւրքիսյում ընդհանրացած սովորութեան, որ առնեն զարշութիւն կարելի է փողոց թափել: Մշեցոց տունները, մեծ մասամբ, միյարկանի են, կան և երկյարկանի, քարաշէն, իրարու սեղմուած. պատուհանները վանդակապատ են, բակեր ըլւնին, սովորաբար փողոցները նեղ և ծուռումուռ են: Մշոյ ձորի գետակի ընթացքով իջնելով յած՝ տարածութիւնը ընդլայնանում է և բացվում է դաշտի տեսարանը. այդ յած և լաւ տեղերին տիրացել են թիւրքերը. նոյն գետակի ընթացքով բարձրանալով ձորը սեղմուած է, խորունկ լեռների մէջն անցնում: ձորի, համեմատապէս, սեղմուած տարածութիւնը հայերն են բռնել: Զորից բարձր լեռների լանջերի վերայ մի կողմը

այգիներ են, միւս կողմը պարարտ մարզագետիններ։ Մուշեղաց բերդը մէկ ժամ ու կէս Մուշեց հեռու է լեռան բարձրութեան վերայ, այդ աւերակ բերդը գնալու ձանապարհի վերայ կան բազմաթիւ պաղեա և ականակիտ աղքիւրներ։ Մուշեղաց բերդը Մշոյ հարաւային կողմն է. նորա հանդէա Վահանայ բերդը որը գտնվում է բաղաքի համեմատապէս, բարձր մասերում և թիւրքերի թաղերին մօտ. մշեցիք այդ բերդերին տալիս են Վահանայ անունները, ի հարկէ, աւանդութեամբ։ Մշեցի հայերը շատ կըսիրեն Մշոյ-Եսոնները. իւրաբանչիւր տօն օրին կերթան զքօսնելու այդ վայրերը գարնան սկզբներին պաղեա և առողջարար ջրերը, հոտաւէտ ծաղիկները և գալարազարդ բնութիւնը տալիս են այդ լեռներին մի գերբնական գեղանութիւն։ Գարունքից սկսում են և Մշոյ երկրում գտնուող նշանաւոր վանքերի հանդիսաւոր տօնախրմբութիւնները՝ Ս. Աղերերիկ, Ս. Սահակ, Ս.ո.աքելոց վանք, Ս. Յովհաննէսի վանք և Ս. Կարապետի վանքը զրավում են զրանց հանգիստաւոր օրերին աշաղին բազմութիւն. իւրաքանչիւր ընտանիք տանում է իր հետ ուտելեղէնի մեծաքանակ պաշար։ Ամենից առաջ կատարվում է Ս. Առաքելոց վանքի տօնախրութիւնը. քաղաքացիներից և գաշտեցիներից շատերը ներկայ են լինում գարնանային այդ ուրախ հանդիսին. գիւղացի երիտասարդներ և աղջիկներ, որոնք տօնին և հանդիսին վայելուչ մաքուր և նոր զգեստ չունին, փոխ են առնում իրանց ծանօթներից. ուխտաւորները բռնած ունին վանքի բոլոր սենեակները, վանքի բակը և շինութիւնների տանիքներն էլ լեցուն են, վանքի պարսպից դուրս էլ վրաններ կան զարկած. պատարազին եկեղեցին խոնուած է լինում աղօթողների բազմութեամբ։ Զուարձութիւնները սկսվում են ժամասացութիւնից յետոյ. Քաղաքի և գիւղերի պատուաւոր անձինքը գնում են պատարազից յետոյ վանահայրին շնորհաւորելու, խօսում գէսից զէնից, հետաքրքրովում ընթացիկ աղդսոյին խնդիրներով այդ հիւրերը ճաշի են հրաւիրվում վանահայրից. ուխտաւորների մեծ մասը բէֆ է անում դուրսը. կերուխումից յետոյ սկսվում են պարերը,

երիտասարդները և աղջիկները մի մեծ շքան են անում, իսկ երիտասարդները բռնում են իրանց հաւանած աղջկանց ձեռքից, սկզբեց շարվում հանդարտ և կամաց թփթփացնում են ուսներով, յետոյ մարմնի շարժուածքը և թփթփոցը սաստկանում է, պարը շարանակվում է ժամերով, յոգնածները թողնում են շքանը, հանգստանում են, նորանց աեղերը ուրիշներն են բռնում շղթայի մէջ մօնելով. այս պարը մեծ զուարձութիւն է տալիս երկու սեռին էլ շատ անգամ պարի հետ և երգում են: Այսպէս կատարվում են տօնախրմբութիւնները և միւս սրբավայրերում՝ Ս. Յովհաննէսի և Ս. Կարապետի վանքերում: Առաքելոց վանքը գրեթէ իւրաքանչիւր կիւրակէ դալիս են մի քանի ընտանիքներ, խմբով երիտասարդներ զուարձանալու, թիւրքերն էլ յետ չեն մնում հայերից. վանքի մօտիկութիւնը, նկարչագեղ գիրքը, սառնորակ աղքիւրները, հովասուն ծառատունիերը բաւականին զիւթական միջոցներ են մշեցիներին հրապուրելու համար: Ես մնացի Մշյ մէջ բաւականին ժամանակի *), իմ զիտաւորութիւնս էր շարունակել ճանապարհորդութիւնս վէպի Տիգրանակերտ, Եղեսեայ և ապա անցնել Կիլիկիա, որ ըլյաջողուեց արգելառիթ գէպքերի պատճառով. ինձ մնում էր վերդպանալ Կարնոյ (Երզում) վերայով Խուսիա: Քարվանը Մշուց Կարին դնում է իւրաքանչիւր երեք շաբաթուայ մէջ մէկ անգամ՝ միայն, ուստահում է և ամիսը մէկ՝ եօթ օր գնալը, եօթ օր գալը, մէկ շաբաթ էլ գործ են ածում մինչև որ բեռ, ճանապարհորդ գտնեն այդ երկու քաղաքներում: Մայիսից սկսած մինչև օգոստոսի վերջերը քարվանները վիխանակ եօթ օրի՝ ինն օրումն են հասնում Մուշից Կարին, այդ ժամանակ ջորեպանները ծախքերը քչացնելու համար գիւղերում չեն իջեանում; ուղղակի անցնում են լեռների, դաշտավայրերի, հովիաների միջով և հանդիսաւ են առնում խոսաւէտ արօտատեղերում: Զիերը տասն, տասներկու ժամ՝ հանգստանալով և արածելով պարարտ մարգագետիններում:

*) 1890 թ. «Երաքսի» և գրքում զետեղած եմ Մշյ մասին աեղաղբական մի ընդունակ գրութիւն:

առանց գարու էլ բաւականին կազմուրվում են և կարողանում են ճանապարհը շարունակել, որպէս վե արեկի տօթը չընեղէ զրաստներին. գերադասվում՝ է գիշերով անցնել ճանապարհը, երեկոյից սկսած մինչև առաւտեան ժամի վեցը, եօթը: Մուշեց Կարին զրաստը կարելի է վարձել 5—7 ռուբ. Ճանապարհը անցնում է գաշտի միջով: Արածանիի կամաւրջեց յետոյ շեղվում է դէպի աջ. գաշտի վերջին գիւղերը են Կարնոյ ճանապարհի վերայ Կուրավա և Ծիսավու, որոնք բաւականին զուարձալի տեսք ունին. գաշտից դուրս գալով մերթ բարձրանում էք գժուարակոխ լեռները, մերթ իջնում էք դետակների հովիտները, ձորերում ստէպ ստէպ հանդիպում էք քրդաբնակ գիւղերի. երրորդ օրը հասնում էք Վարդոի լեռնադաշտը. այս լեռնադաշտի մէջ բացի գիւղերից, կայ և մի գիւղաբաղաք Վարդօ անուանիք. Վարդօում խանութպանները հայեր են: Զորեպանները միշտ աշխատում են գագարք անել մի այնպիսի արօտի մօտ, ուր աղբիւր լինի կամ զետակ անցնի, որ և անմիջապէս զրաստներին արձակում են բեռներից և բաց թողնում արածելու. Չորեպաններից մի քանիսը պահապան են կանգնում, որովհետեւ յաճախ եթէ ձիերը մի քիչ հեռանան, բրդերը բշում են իրենց կողմը. այդպիսի մի յափշտակութեան դէպք պատահելիս՝ հերթապահները աւար են կանցնում, միւս Չորեպանները խսկոյն շտապում են օգնութեան և կարողանում են յափշտակինների ձեռքից կորդել որսը: Մեծ հաճոյք և զուարձութիւն է տալիս շայիրի ճանապարհորդութիւնը. (այսպէս կոչվում է ամառային ճանապարհորդութիւնը): Ճանապարհորդները և Չորեպանները առնում են իրանց հետ ամենը ինչ որ հարկաւոր է. պարագաներ և ուտեսու, կաթսայ, կասկարանք, վրան, ձողեր, բրինձ, իւղ, չոր մածուն, պանիր, օղե, գինի և այլն. իջեվայրը հասնելուն պէս սկսվում է վառ զործունէութիւն, որը վրանի քաթանն է յարմարեցնում, որը ձողերը զարկում, միւսները հովանի տեղ են պտուում ծառի կամ թփի մօտ, շատերը ցախ են ժողովում վառելիքի համար. երբէք ճանապարհորդները այնքան մօտ չեն ծանօթանում իրարու հետ,

ինչպէս չայիրի ժամանակ, երբ ուրախ ժամանակ են անցուցանում, որովհետեւ դիշերով սովորաբար, ձանապարհը շարունակում են, ուստի կերուխումից և զքօսանքից յետոյ ուղածին չափ քնում են: Վարդոյից դարձեալ ձանապարհը լեռների բարձրավանդակներով, լեռնադաշտերով ու հովիտների միջով է շատ տեղ ոչ մշակութիւն կայ, ոչ ծառ, ոչ գիւղ, մինչեւ որ հասնում էք Խնուս:

Խնուսը խիստ գեղանկար մի անկիւն է. լեռների լանջերի վերայ ստուերախիտ անտառներ, կաղնիի, եղենիի ծառերից, կարկաչող ջրեր, այդ անտառների միջով հոսող խաղաղ գետակ, հովիտների միջով անցնող, քամնի չափ հայաբնակ գիւղեր, որոնք կամ գետակի ափումն են, կամ ձորի մէջ, կամ զառիվայրի վերայ, ահա Խնուսի դարձարանքները: Խնուսի գիւղաբաղաքը նոյն անունը ունի: Այս գիւղաքաղաքի մօտ գտնվում է քարածութեան մինչեւ Փալան-թեօքէն ձանապարհը տեղ տեղ գժուարանում է և անցնում է դարուփոս տեղերով: Փալան-թեօքեանը լեռնանցը է. Կարինից մօտ մէկ ու կէս վերստ բարձրութեան վերայ է գտնվում: Լեռնացքի գագաթնակեառում ցուրաը զդալի է, ձմեռուան հազուստը անհրաժեշտ է գառնում, վերելքը ծանր է, ուղին քարքարոտ, որքան վերելքը գժուար է, այնքան էջքը գիւրին է. Փալան-թեօքէանի բարձրութիւնների վերայ թիւրքերը կառուցած են ամրութիւններ և մարտկոցներ: Փալան-թեօքէնի լեռնանցքից յետոյ շատ հեռու չէ Կարինը, երկու ժամուայ ձանապարհ է: Կարնոյ ընդարձակ լեռնադաշտը շըջապատուած է մերկ լեռներով. այս լեռնադաշտի հարաւարեւելեան կողմը շինուած է Կարին քաղաքը բարձրավանդակի վերայ, Կարինը մօտ երկը վերստ բարձր է ծովի մակերեւոյթից. բարձր լեռների մէջ կառուցած բերգերը, նոյն իսկ քաղաքի ամրութիւնները, երեք պարիսպներ իրանց պատնշներով բաւական ապահով գիրք են տուած Կարինին: Կարինը թիւրքիայի առաջնակարգ վաճառաշահ քաղաքներից մէկն է: Պարսկաստանից, Վանից, Բաղէշից, Մուշից, Տրավիզոնի նաւահանգիստը գնացող քարվանները անսպատճառ անցնում են Կա-


րինու վերայով. Կարինը յայտնի է ցորենի առասութեամբ,
որ և կտղմում է արտահանութեան զլիաւոր առարկան. կը
արտահանում է նշյնպէս բաւական մեծ քանակութեամբ մուշ-
տակ: Կարինում, ինչպէս և ամենուրեք Թիւրքիայում, հայոց
թաղերը, համեմատելով թիւրքաց թաղերի հետ, աւելի բա-
րեկարդ, կոկիկ և մաքուր են, փողոցները, մեծ մասամբ նեղ
ու մի քանի փողոց կան միայն լայն և ուղղագիծ, տուները
քարաշէն են և բարետիսիլ. թուրքերի թաղերում երբեմն հան-
գիպում էք ամսյի ու թափուր մնացած տեղերին, ընդարձակ
տեղ են բռնում թիւրքաց թաղերում և գերեղմանոցները:
Կարնոյ օդը չոր է. ձմեռը եօթ ութ ամիս կըշարունակուի
և շատ ցուրտ է, ամառուայ շողն էլ շատ խիստ է. այդ
տօժերին մեծ գիւրութիւն են տալիս լեռներից բերուած
խողովակների միջոցաւ պաղ ջրերը: Կարնոյ մէջ հաշվում են
երեք հաղար տուն հայ. Հայերը ունին մի մեծ եկեղեցի, որը
քաղաքի կենդրոնի ընտիր տեղումն է. եկեղեցու բակում գե-
տեղուած է և առաջնորդարանը. բակին մօտ է և զերեղմա-
նոցը, որը շատ ընդարձակ տեղ է բռնում. աօն օրերին զե-
րեղմանոցը կարնեցիների զբօստեղին է: Կարինում կան մի
քանի հայ վարժարաններ, որոնց մէջ առաջին տեղն է բռն-
ում «Սանասարեան» անուանի վարժարանը. կայ և մի հիւ-
րանոց իր ընթերցարանով որ հաղուտիւտ բան է Թիւր-
քիայի միջին քաղաքների համար: Կարինից դէպ ոռւսաց
սահմանը ճանապարհը տնյնում է Բասենոյ վերայով. այս
ճանապարհը կարելի է կառքով գնալ բայց շատ անկանոն է,
խճուղի չկայ շնորւած: Ճասանդալան և քարուքանդ վերջին
պատերազմից նշանաւոր Զիվինի բերդը, որը մի ժայռի վերաց
է կառուցուած, ստորոտումը նյյնանուն գիւղով, այս ուղիի
վերաց են գտնվում: Զիվինից մինչև Կարա-Ռուզան, որը ար-
դէն ոռւսաց հողն է, մի քանի վերստ է, Կարա-Ռուզանը յու-
նալի գիւղ է Կարսի նահանգում:

Ա. Հ. Ե. Յ.

ՍԱՐՈՒԵԾԵՆ ԳԻՒՂԸ

Արուշէն զիւղն ընկած է Շուշուայ արևելեան կողմը,
նրանից 25 վերստ հեռու մի լեռան կուրծքին: Հստ աւան-
դութեան՝ զիւղը շինել է հինգ դար առաջ Ատրպատակա-
նից զաղթած երեք հայ եղայրներից մէկը, որ իր անունը
(Սարու—պարսկերէն՝ զեղին զյն ունեցող) տալիս է զիւղին:
(Միւս երկու եղայրները, Սարգիսն ու Փերին, շինել են
Սարզսաշէն և Փիրումաշէն զիւղերը): Դեռ այդ ժամանակ-
ները զիւղի շրջակայքը խիտ անտառներով էր ծածկուած,
և զիւղի սակաւաթիւ բնակիները Լարաբաղի կրտծ տնընդ-
հատ ասպատակութիւնների երեսից պատսպարուել էին հիւ-
սիս-արելելեան կողմն եղած անտառախիտ ձորակում, որտեղ
բղիում է Մարզ-լէ առնչերը այժմ այդ անտառներից մնա-
ցել են միայն ցիր ու ցտն թփեր: Գիւղին ջուր տալիս են
Կէ-լ (գաւաթ) և Խառա (խաւար) կոչուած աղբիւրները. երկ-
րորդը երաշտ տարիներին ցամաքում է, իսկ առաջինը ունի
ջրի շահմարան՝ երաշտ տարիներում գիւղացոց առատու-
թեամբ ջուր մատակարելու համար: Այդպիսի տարիներում
զիւղը օգտուում է նաև Մարզուլի հովիտովն անցնող Սլան
գետակից, որ վաղում է Մարուշէնի և նորա զիմացն ընկած
Քիրս սարի միջոքն ընկած ձորովը և որի ջրերը՝ անտառների
վերջանալուց՝ սաստիկ նուաղել են այժմ: Գիւղի օդն էլ, ջուրն
էլ առողջարար են, իսկ շրջակայ տեսարանը շատ գեղեցիկ
է, մանաւանդ երբ նայում էք Շուշուայ և նորա հարաւային
կողմն ընկած Քիրս սարի լանջերին փոռուած զիւղերի և ձո-
րերի վերայ,—բոլորն էլ կարծես ձեր առաջն են դրուած:
Սակայն զիւղի հողերը սակաւ են և արգաւանդ չեն. այդ





тип. Ф. Д. Гоппе.

ՍՈՐՊԻԿԵՆ ԳԻՒՂԻ ԵԿԵՂԵՑԻՆ.

Церковь въ Сарушенѣ.

Автотипія Ангерера въ Вѣнѣ.



պատճառով թնակիներից (բոլորը 70 տուն զուտ հայ) շատերը վարուցանքն անում են այդտեղ մօտիկ Ամարասի վանքի և այլ տեղերի հողերում, մի մասն էլ անասնապահութեամբ է պարապում, բջերն էլ շրջակայ գիւղերից ցորեն կամ ալեւր գնելով տանում են Շուշի՝ ծախում, վերջապէս ոմանք էլ պանդխտել են Բագու և Անդրկասպեան երկիրը առուտուրով պարապելու։ Գիւղը թէե ունի փոքրիկ այգիներ, բայց նոցա բերքը չափազանց սակաւ է։ Սակայն մօտակայ անտառի մնացրդները տալիս են Սարուշնցի կանանց փայտ և վայրի պտուղներ (Հուն)։—Առշասարակ գիւղի փողոցները կեղտոտ են, մանաւանդ անձրեներին. իրենք գիւղացիք բարձրացածակ են և առողջակազմ, մանաւանդ հին սերունդը, սպիտակաղէմ և պարզամիա. կանայք գեղեցիկ են և տղամարդկանցից գործունեայ, բայց միշտ բորիկ։ Զընայելով գիւղը շրջապատող աննողաստ պայմաններին, գիւղացիք այնուամենայնիւ բաւական բարեկեցիկ կեանք են վարում, որի մասին ձանապարհորդին վկայում են երկայարկ պատշպամբաւոր տները կղմինտով ծածկուած տանիքներով, որոնք վայելուչ տեսք են տալիս գիւղին. իրենք գիւղացիք էլ բաւական անկարօտ վիճակ ունեն։

Սարուշէնցիք եկեղեցասէր են. ունին մի փոքրիկ եկեղեցի անթուական, ըստ տւանդութեան Փիրումաշէն գիւղի եկեղեցու հետ միաժամանակ շինուած (ՌԴՀ այսոց կամ 1554 փրկչական թուականին) և երկու գերեզմանատուն՝ հնագոյնը Քաշալ Խուրին հանգարաշան անունով միւսը եկեղեցուց արելք, — երկուսումն էլ հին գերեզմաններ կան (մէկի տապանաքարի վերայ կարգացուում է 1663 փրկչական թիւը), — նաև Խաւա աղբիւրի առաջ մի մեծ ծառի տակ գեղեցիկ քանդակներով զարդարուած մի խաչքար, — գիւղական ուխոգատեղի ս. Վանէս անունով։ Գիւղի եկեղեցումն է տեղական համբաւաւոր հրաշաղործ համարուող աւետարանը, ըստ տեղական ժողովրդական աւանդութեան Ռոտակէս հայրապետի գրած, որից իր թէ արտադրել է ոմն եպիսկոպոս Գետ Վարդան՝ գեղեցիկ ձեռագրով ԺԲ. գարում (1185 թուին,

ըստ յիշատակարանի): Աւետարանի առաջին երեսի վերայ նկարուած են Ռուտակէս և Վթթանէս Հայրապետների և ս. Ստեփաննոսի պատկերները. վերջում դրուած է. «Յամի Տեառն 1827 և թուականին հայոց Ռ Մ չ Զ ս. Աւետարանս, որ գերի էր ընկել պարսից ձեռն՝ և Ղարաբաղզու բնակիչների քաղաքի, Միրզայ Օհանիսեան Զարկեարեանցովս տեսի զուրբը աւետարանն ի ձեռս այլազգեաց՝ ի քաղաքն Թաւրէդը վասն որոյ ետու դրամն բաղում և գնեցի՝ ի արդար վաստակոց իմոց և բերեալ՝ ի ամսուրս Շուշի և յանձնեցի այն տեղն՝ ուր կար և այժմն 1833 ամի և յամնեանն մայիսի 12-ին բերանք տեղու (**Մարուշէն**)՝ վասն մեր ուխտագրութիւն նորոգելով Աւետարանս, ահա նորոգեցինք՝ ի յիշատակ մեր յամսյն կենդանեացն և ննջեցելոյն որ ենք Միրզայ Օհաննիսեանց...» և այլն։ Այս աւետարանը բազմաթիւ ուխտաւորներ է զրաւում գէպի Մարուշէն ոչ միսյն Շուշուց և շրջակայ զիւղերից, այլ և հեռաւոր տեղերից. ուստի եկեղեցին բաւական թանդադին նուերներ է ստացել ուխտաւորներից, —խաչեր, զարդեր, պատկերներ։ Սակայն եկեղեցին հինօրեայ լինելով քայբայուել էր և երկար ժամանակ իր խարխուլ վիճակով վշտացնում էր ջերմեռանդ ուխտաւորների զզայուն սիրտը։ Վերջապէս 1885 թ. շուշիցի մեծապատիւ պ. Գրիգոր Այվազեանը մեծ գումար ծախսելով մօտ 2000 ո.՝ բոլորովին նորոգում է եկեղեցին. շնորհիւ այդ նորոգութեան այժմ եկեղեցին վայելուչ վիճակի մէջ է, —տանիքը թիթեղով ծածկուած և եկեղեցու վերայ փոքրիկ կաթուղեկէ է կանգնած։

Եկեղեցուն կից կանգնած է զիւղական դպրոցի կոկիկ և սիրուն երկայարկ շէնքը, որը յիշեալ պարոնի դպայուն ու ցաւող սրտի ազնիւ թելադրութեամբ շինուել է 1889 թուականին և որի մէջ դասաւանդութիւնն սկսուեց յաջորդ տարին. դպրոցը ներկայում իւր հիմնադրի անունն է կրում։ Նորա դրան վերայ կարդում ենք. «Շինեցաւ ուսումնարանս արդեամբ և ի յիշատակ Գրիգոր Թոմասեան Այվազեանցին. 1890 գեկտեմբեր»։ Բայց դեռ դպրոցի շէնքը չըսկած՝ պ.

Այլազեանը հոգացել էր կայտառ ու սիրուն հորթարած ու տաւարած հայ մանուկներին մի վայելուչ տան մէջ ժողովել և այդ գանգրահեր ու արծուաքիթ տղաներին ու աղջիկներին մի բաժին հանել ուսման բարիքներից, որոնց նոքա այնքան ծարաւ էին, բայց որը չէին կարող ձեռք բերել իրենց ծնողների աղքատութեան և տղիտութեան պատճառով։ Վարձելով նոցա համար մի ուսուցիչ պ. Այլազեան սկսում է դպրոցի շենքը 1889։ Սակայն պէտք է ասել որ դպրոցի շինութիւնը արդէն աւարտուած էր, երբ մի մասը փուլ եկաւ՝ կանոնաւոր մատարդակով շինուած չը լինելու պատճառով։ Շուտով նորոգելուց յիտոյ աւելի ընախիր ճաշակով, 1892 թուի ուսումնական տարուայ սկզբին օծել է տալիս դպրոցը Նարաբաղի թեմական առաջնորդ Գեր. Հայր Կարապետ եպիսկոպոս Այլազեանի հանդիսադրութեամբ, որ այդ տութիւ առանձնապէս հրաւիրուել էր դպրոցի հիմնադրից՝ իւր ներկայութեամբ և օրհնութեամբ պատուելու հանդէսը *): Գեղեցիկ տարաւորութիւն է թողնում դպրոցը ընդհանուր առմամբ. սիրուն բնութեան ծոցում նստած, շուրջը մրգաբեր ծառեր տնկուած, առաջը լայն ու արձակ բակ սաների խաղալու համար, վերի յարկում ուսուցչի և վարժուհու համար յատուկ բնակարաններ, մատենադարան (այսօր երկու հարիւր օրինակից աւելի զիրք ունի, —արդիւնք ող. Այլազեանի բարեկամ Գրիգոր Ասլանեանի նուիրաբերութեան, —և ստանում է հայերէն պարբերական հրատարակութիւններ) և մեծ դաշլիճ հանդէսների համար, ներքեւի յարկում դասարաններ մեծ մեծ լուսումուտներով, վերակացուի սենեակ, խոհանոց, ախոռ, —այս բոլորը հաճելի բաւականութիւն են տալիս ուղեկոր այցելուին։ Եւ ճշմարիտ, այդ զիւղական դպրոցը Արցախի թեմում ամենազեղեցիկն է գիւղական դպրոցների մէջ, և շնորհիւ հիմնադրի լիաձեռն օժանդակութեան՝ նաև ամենաբարգաւածեալը։ Դպրոցի շինութիւնը, ինչպէս տեղեկանում ենք, մօտաւորապէս մի երկու տասնեակ հաղար ո. է նստել։

*) Մեր պատկերը ներկայացնում է այդ հանդիսի լուսանկարի պատճենը։

Ներկայումս այդ ուսումնաբանում սովորում են 51
տղայ և 15 աղջիկ, (մի մասը զիշերօթիկ): Սարուշէնցիք և
շնչակայ զիւղացիք ուղախութեամբ են ուղարկում իրենց
որդոցը այդ գպրոցը, որ այսօր ունի մի լաւ վարժուհի և
մի ուսուցիչ: Դպրոցը ասպահովուած է հիմնավրի գրամատանը
գրած մի խոշոր գումարի տոկոսներով: Առաջ զիւղացիք,
ինչպէս գրեթէ բոլոր հայաբնակ եկեղերում հին ժամանակ,
իրենց որդոցը քաղաք էին ուղարկում՝ վաճառականի մօտ
ծառայութեան տալիս, որի փոխարէն նա իւր սանիկին մի-
այն գրել ու կարդալ պէտք է սովորեցնէր: Բայց այժմ էլ
այդպէս չէ զիւղացի աղան էլ վայելում է ուսման բարիք-
ները իր մայրենի զիւղում, ծնողաց սիրասուն հավանաւո-
րութեան ներքյ, նա էլ այսօր սկսում է իրեն իբրև կատարեալ
մարդ և հայ Ճանաչել: Կար ժամանակ, երբ եկեղեցի շինելը
ամենամեծ «վարձք» էր համարուում, որ մէկը կարող էր
անել իր կեանքում: այժմ դորան հաւասար և գուցէ դրանից
էլ ոչ պակաս մեծ «վարձք» են համարում դպրոց շինել և ապա-
հովելը, տգէտներին լուսաւորելը, նոցա մարդկային պատիւր
բարձրացնելը: Այդպէս անողին լիաբերան օրհնում է ժողո-
վուրդը, կ'օրհնի և նորա որդին, երբ որ մեծանայ: Պ. Այ-
վազեանի դորձը ամենայն գովասանութեան արժանի է: նա
սիրում է իւր ձեռակերտը հօր ամենաքնքոյշ սիրով գէպի
իւր զաւակը: Երանի թէ նա շատ հետեւողներ ունենայ յետ ըն-
կած հայաբնակ զիւղերը լուսաւորելու դորձում: Ցանկանում
ենք նորան յարատեսութիւն իւր բարի զիտաւորութիւնների
մէջ դէպի խեղճ՝ հայ հասարակութեան կրթութեան դորձը:

Աշակերտ:





Արօւշենի գիւղականները և Շամազեան դպրոցի աշակերտները:

Сарушенские крестьяне и ученики местной школы.

Автотипія Алагорова въ Вѣнѣ.





ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅԻՇԱՏԱԿԱՑ ՃՐԱՐ ՄԸ

Տասն տարիներէ ի վեր հայրենի քաղցր յիշատակներով հաւած մաշած՝ վերջապէս կը յաջողիմ Ա ան վերագառնալ:

Տասնուվեց տարու պատանի էի երազուն, երբ հեռացայ հայրենի հողէն ու ջրէն, այլ պանդխուռթեան ամբողջ օրերումս երբէ՛ք չեր մոռացել այդ հողն ու ջուր, մինչև անդամ մեր տան փմիռուս կատուն ու գմիռան շուն, ամէնքն էլ սիրուն, փայլուն ու նիշուն, կեանքիս կեանք, երևակայութեանս արեակն են եղել: Գիշերն երազով Ախմամարայ ծովուն ու ծփծփանաց վերայ, ցորէկն Խիյալով^{**}) Խօռխօռի զըմզըմիռուն ական ու Շամիրամայ զըզզըզուն աղբիւրին մօտ, կամ անհոգ ու աղատ այծեամի նման Ահերի դռնէն Օռոտատայ քար, Ա արագայ սարէն Աստղկան բերդ շնչքելով^{**}) թուչելով մանկութեանս ոսկի ժամերն կը յիշէի, այն երազի օրեր, որ գոյնզգոյն վարագոյրներով ծածկուած անջատուած էին յինէն և որոյ տեսլեան ախ ու վախով կանցնէր օրերս: Ահա Աստուածը երազներս ի բարին կատարեց, այժմ կերթամ յիշատակաց կեանքի մէջ. թո՛ղ ամէն կարիս հայ մարդն էլ իւր սրտի մուրագին խասնի, ամէն:

Մնամ բարալ, Լոնտոն, քու մժովի ու ժխորով. Փարիզ, քու փարիսեցական փայտայանքներով. Հելուետիա, հայրենիքիս փոքրիկ ու խօրօտիկ քուրիկ, քեզնից ես չունիմ գանգատ, քու Ետոնկ-

*) Երևակայութիւնով **) ցատկելով

Փուայուեն ու Աօն-Աօվէն բարե կու տանեմ՝ Արարատին ու Ափ-
նայ սարին, բարեածաղիկ մ'ել մեր Արաքսին ու Եփրատին քու
Ուօն ու Ուէնի ծոցէն:

Ե՛հ, մարդ իւր ծնած տեղմիայն կը հանգչի, իւր ծնած տեղ
կուզէ մեռնել: Կեանքը յիշատակաց ծրար մի է: Բանանք ուրեմն
մեր ծրարի մէկ ծայր...:

* * *

1879 օգոստոսի 23-ին Տրապիզոն հասած՝ կառք մը վարձելով
կը մեկնինք. ընկերներս են Պետր Վարդապետ Փիրղալէմեան՝
Ճանապարհի զուարթուն հրեշտակ մը (աւաղ այժմ ընդ զուարթունս
բնակեալ) և տօքտէօր Ա արդաղարեան պօլսեցի բժիշկը, որ առաջ
ջին անգամն է Ա ոսկորէն գուրս կելնէ. մեղ հետ են նաև երես-
ունի մօտ վասպուրականցի և տարօնցի բեռնակիր կարխպներ, որ
իրենց վաթ ան կը վերադառնան. հինգ վեց հոգի միասին ձի մը
վարձած իրենց գրուց հանգերձներ, ինչպէս նաև իրենց եարոջ
ու ձիթ պժերու ընծայ՝ հատիաներ ծրարած կու քալեն. սա-
կայն ամենքն ալ զէնքի մը կտոր ունին՝ աժանկեկ հին հրացան մը
յունթ կախած կամ որվօլվէր մը մէջքին կապած. ի՞նչ երջանիկ
են: Աիսյն խօրօնցի Առաջէն հաղալըլ տրտքալով կընթանայ.
Խեղճ մշակ հազիւ քսան տարու՝ հիւծախտէն կմախը գարձեր, իր
համշարիք ճամբու գրած են զինքն. որ գայ իր սիրած հողին
մէջ թաղուելու. ի զուր կը ստիպէմ Առաջէն որ կառքիս մէջ գայ.
— չէ, աղա, հըմլա կը քալեմ, են որը կարապետն եմ կանչէ. Վ-
նատոլու հոտն առի թէ չէ, օղջնցայ:

Վեր կառքի ձիերը հաղիւ մինչև Օխլանայի ստորոտ տա-
րան մեղ և հոն կեցու տէր, ըսին, ալ չեն քալեր. ի զուր կառա-
պան Իպրահիմ աղան մտրակի ուժգնութեան հաւասար իշունցի
հայհոյանաց տարափներ կը տեղայ. ձիերը կամ յետս յեր-
թան, կամ յուսահատի պէս դէպի խրամատ ու գահավէժներու
եզերք կը դիմեն:

— Ե՞ս չեղաւ, ախրա՛ր, ի՞նչ պիտոր ընենք. կը սէ տօքտէօր
յուսահատած.

— Չու պինչդ, ի՞նչ պիտոր ընենք. կառք շալկելըւ կարգը
մերն է, կը պատասխանէ վարդապետ և կըսկսի իւր կապոտիկ ձիու
գոլասանքն երգել «ծըմ-ծըմ-ծըմ». բժիշկը կը պօռայ, Իպրահիմն

Կը հայհոյէ, իսկ վարդապետը աշուղ դարձեր երգն ու եղանակ կը փոխէ՝ «կեցցեն պաշտպանք մեր ազգին լարօն, Առուսէն, Վղասին»։ Իսկ ես զմայլման մէջ եմ։ անախորժ բան չկայ ինձ համար, կառքը Խպրահիմին և ստաւոր ուղեկցաց թողլով, երգելով ու խընտալով Օքղանայի կատար կը բարձրանամք։ Օքերունի շասան չաւուշ իւր փլած տօմիկի անկիւն հրամցուց մեղ և խնամով ու համով սուրճ պատրաստեց, բժիշկը Խպրահիմ աղայէն կը գանդատի չաւուշին—մի՛ վախնար հէքիմ պաշի, նա աղէկ մարդէ, ապահովութեամբ ձեզի կարին կը հասցնէ։

— Կարճ կապէ տօքտէօր, կըսեմ, եւ երթանք երազի աշխարհ ցոյց տամբքեզ։

— Օ՞ս ախաղար, աս ինչ...

Օքղանայի արտևանէն մեծութեան հրաշալեաց առաջին տեսարանն կը բացուի. այսաստանի արեմտեան ամպածրար լերինք անհուն կապոյտ տարածութեան մէջ կը բարձրանան սէդ հրամամանատարներու նման՝ իրևնց շուրջն ունենալով անթիւ լերանց բանակներ, սահմանափակ չէ տեսարանն, նայէ ու նայէ, տեսութիւնդ կըսպասի, տեսարանն անսպաս կը մնայ:

Ահա իունակապանը մեր հանդէպ. ահա Եղրիզայի լերինք, Աւազուհ լերան դրկեցներ, այս լեռներ Արևնծուրի Տէրսիմի սարերըն են շարան շարան, այն սարեր կարնոյ լերանց յառաջապահներն տիգաւորուն։

Խեղճ Արդազարեան ապշեր կեռիկ փակուեր է այս զարմանալեաց հանդէպ.

— Ապա ո՞ւր է Ա ան—

— Ե՛յ երանելի, տակաւին քանի քանի անսահման հորիզոներ պիտի անցնինք։

Այլս կառքին չենք սպասեր, կիջնամք ու կիջնամք զառիվայրն անվերջ, ուղիղ ճամբայէն կը շեղնք ստէպ, և դաշտակոտրիկ կընթանամք։ Արեն ի մուտս սկսած է խոնարհիլ և մենք չորս ժամէն վերջ խան՝ իջևան կը համնինք։

* * *

Խանձիէն առաջ վագրանման շներ մեղ ընդ առաջ կելնեն, տօքտէօրի լեղին կը պատոի, արդէն գամփուերն եւ պատառելու բան թէ կատակելու միտք ունին։

Վ'նչ հակապատկեր Հելուետիոյ լերանց հիւրանոցներու. խանը այս ամայութեան մէջ քանի մը ամայի սենեակներ ունի և ընդարձակ ախոռ մը: Խակ ուտելիք պաշար՝ տիկ մը ժաժիկ ու պանիր, քանի մը հաւկիթ ու հաւ, եղ ու մածուն, կերակուր եփելու աման Աստուած տայ: Գիշեր հոս պիտի մնանք. անօթի ալ ենք. պէտք է բան մ' ուտել. եթէ կառքի մէջ թողած մեր պաշարներուն սպասենք, բաներնիս բուրդ է:

Վայլ ո'րչափ համով-հոտով էր մեր ձեռքով պատրաստած գեղջկական կերակուրը, երբէք այնպէս ախորժակով կերած չէ:

Վ'նչէ կէս գիշերն արթուն կը հսկենք սրախօսութիւն ընելով ու երգելով. արգէն մեր սենեակը փոշիներու փողցներ ունի. իսկ ծակծկուած առիք սարգի սստայններ կոպլէններով ծածկեր են. երբեմն ալ սոված մուկեր փաթ կիյնան մեր վրայ, խայմով մըդղուկներ ու լուերու բանակներ զմեղ պաշարեր են. և այս ամէն ։ Փիրղալէմեանին նորանոր բանաստեղծութիւններ կը ներշնչեն: Բժիշկ յուսահատած է, ես առաւօտ Պօլիս կը դառնամ, կը:

Ոչ միայն ճանապարհի վրայ եղած խաները կիսաւեր են, այլ և երբեմն մեծամեծ գիւղեր հետզիետէ աւերակ կը դառնան զի անցորդներու մեծ մաս, զինուորներ, պաշտօնեայը և այլն բոնի և ձրի կառնեն ամեն ինչ: մինչդեռ Եւրոպիոյ մէջ ընդհակառակն է, ամենէն փայլուն իջևան, ամենէ հարուստ գիւղեր մեծ ուղիներու մօտ կը հաստատուին:

Վայս օրինակ խօսք ու խորհրդածութեանց մէջ, յանկարծ միտըս ինկաւ մշեցի կուպէն.—Վ'նչ կըսես, տօքտէօր, ապրելու յոյս կա՞յ, կը հարցներ.

—Վաստուած խելք տայ, թերես երկինքն է հիմայ. կը պատասխանէ անհոգութեամբ մը.

Հաղիւ մէկ ժամ անցեր էր. ահա մեր կուպէն. Տրապիզոնի կուպէն չէ. երես գոյն եկեր, ուրախ է, և որ զարմանալին է, իւր ընկերներէն առաջ հոս հասած է:

—Հրաշք, կաղաղակենք,

—Վ'ն սըս կարապետ վկայ, զմեր սարերու ջուր խմայ թէ չէ, օղջացայ, էլ չեմ մեռնի:

Կուպէն անօթի է, ձուազեղ, մածուն, ինչ որ գնենք առաջ, կը լափէ և ջուր կը խմէ ի վրան. քէֆն եկել է, և կը սկսի Ատամպօլի հէքիմներաց եօթ պուտը յիրար խառնել. —Տօ խէքիմն էն սըս

Կարապետն առ մեր հողն ու ջուր, կըսէ և կըսկսի անխռով քուն քաշել աստղալից վերմակն ի վրան և քարէ տօշակն ի տակ...

Այժմն ըսենք թէ՝ կուպէն մինչեւ որ խնուս հասաւ, իւր տարտն էլ անցաւ: Անցան և շատ տարիներ, այս գէպքն տակաւին անմոռանալի կը մնայ յիշողութեանս մէջ:

Արդարեւ հայրենիքի հողը հրաշագործող է:

* * *

Ինն օրէ վերջ Արաքսի եղերք հասած, գիշեր մեր երկնքի աստղերու տակ կանցունենք: Ա'եր խարոյկը, լուսնեակը, որ բիւրական լերանց արտեաններէն մեզ կը նայի պայծառ գէմքով: Արաքսի վէտ վէտ խաղացող ալեակներ և անոնց մէջ խայտացող մեծ ու փոքր ձուկեր հազարաւոր տարիներու յիշատակաց ովկիանի մէջ կը տանին կը ձգեն զմեզ...

Արաքսին հիւր լինել և «Ա'այր Արաքսի»ն չերգել ապերախտութիւն է առ Արաքս՝ մեր հայրենիքի սրտի այս երակն, և առ անմահ հեղինակն՝ որ յուզած անոր ալիքներ, յուղուած, յորդած և այն սուրբ ջրովն ու աւիւնով ոռոգած է մեր ցամքած զգացումներ:

Վմէնքս միասին «Ա'այր Արաքսի» կերգենք. բեռնակիր մըշակներն ալ կերգեն. իմ սիրոս կը փլի, արտասունքներ կը թափին ալեաց մէջ... երախայ եմ դարձել:

Յորչափ Արաքսի ափունք չեն ցամքել հիւրական լերինք հիմնայատակ չեն քանզուել պիտի յիշենք զքեզ, Պատկանեան. գու պիտի ապրես ինչպէս այն հրեղէն ձկնիկ, որ Ադամ Եւայի ժամանակէն մինչեւ մեր օրեր էդ սարի մեծ ական մէջ կայ ու կը մնայ: «Ես իմ արև, կասէ մուշեցին, համրառձման տօնի գիշերն ես իմ աչքով զշրեղէն ձուկն տեսեր եմ, շըմլա ձոչ ալմաստ քար մի կայ գիսի վըրէն որ արեկի պէս կու փէլկտայ, քանի որ ձուկը ողջա, հայու ազգին լէ զաւալ չկայ»:

* * *

Ոստ էր մեր կարաւանի մէկ մասն Առագալ գետին զոհ տայինք, զի գետեր ընդհանրապէս առանց կամուրջի լինելով, անցորդ պարտաւորեալ մէջ պիտի մտնէ. բազմաթիւ են իւրաքանչիւր տարի գետերուն տրուած զոհեր:

Խոնուսի հովտի ծայրէն կանցնինք. դարձեալ պանդխոտութեան դիմող կարաւան մը. բայց այս անդամ մրջման կարաւանի պէս վերջ չունի, հարիւրառոր են. Ա անայ, Բաղէշի և Մուշի գիւղերէն, տասն և չորս տարեկանէն վաթսուն տարուան հասակ: Վղեխարշ տեսարան: Մեղ հետ եղողներ սիլա՝ հայրենիք կը դառնան, ասոնք նոր զարիպ զուրպամի գաւաղան ի ձեռին զուլմէն ու պարտքէն կը փախչին Ատամպօլ կերթան բեռ շալկելու, բեռան տակ մնալու. այդ անիծեալ բեռը սակայն բաղդ մ'է, եթէ ամեն զարիպ յաջողի անոր տակ ծուել իւր գլուխին ու կոնակ: . . . Վայ ողորմելիներ հետզհետէ կու գան կը հաւաքուին մեր շուրջ, շատեր բորիկ, թափթափած, տխուր, գժգոյն ու գաղրած: Ինչ մեծ իրարանցում, անհամբերութիւն. յերկուստեք իրարու մէջ կը խառնուին ճանչուորներ գտնելու, հարցումներ ընելու: Մէկ ժամ գալար առնել կու տամ և ես մէկ խումբէն մէկալ կերթամ անոնց հարց ու պատասխաններ լսելու հետաքրքրութեամբ:

‘Եոր եկողներու մեծ մասը կուլայ:

— «Մէրս, խէրս, մեր Ճերը, Ճերաց մէր (իր կին), ախրէքը զըմէնն էլ ողջ առողջ են. հապա մեր արտերու ցանքն, մեր մարալը», և այլ անթիւ հարցումներ. որոց մերթ ուրախ և մերթ տխուր պատասխաններ առնելով, աւելի կը տխրի քան թէ կուրախանայ սիլէ Ճին:

— Հապա դու իմ հալ չես հարցու, Մառտո ջան, Ատամպօլայ քար քիսպն (առուտուրը) ի՞նչպէսի. պարտքը չում Ճիտս խասաւ, հանչ կօ կը խեղտուի թէ չէ Ճէօրով լուսնակ դրի ծոցս՝ փախայ, մեր տնեցիքն էլ չիմացան խոկի. դու իմացե՞ր ես, ախրէրս մեր արտին մէջ սպանեցին, տաւարներ տարան, դէղերն էլ կրակի տուին. էս ցաւի վէրէն սանամբրդ (իր կին) էլ արևն իտու քե. . . յէթիմ մնացին Ճերս. դու քոյ Վապած, աչքդ ինոնց վէրէն պախի. . . . և խեղճ ծերունւոյ աչք արիւն արցունքով լեցուաւ:

Խիստ երկար կը լինի նկարագրել աստ մէն մի խմբի ցաւն ու գարդը, որ միշտ կենդանի կը մնայ յիշողութեանս մէջ: Բաժանման ժամն կը հասնի, մենք դէպի կեանք, անոնք դէպի մահ կերթան:

Վայ, պանդխոտութիւն, գաղթականութիւն մահ է մեր աղդութեան, հայրենիքի համար:

Սիմանյ ստորոտ Մանծկերտ (Մանազկերտ) կը հասնիկը, աւերակներէ վերջ սակաւ ինչ շինութիւն ու կենդանութիւն կը տեսնենք աստ: Յորդառատ ջրեր յաջ ու ձախ կը վաղեն, դոմէշ ներ, եղներ, նախիրներ, ոչխարներ, լունած են չորս կողմ:

Կորահաս թէ յաւէրժամաս հայ աղջիկը ահագին ջրի կուժը թեթև փառչի մը պէս ուսին դրած՝ մեղ ընդ առաջ կելնէ: Այս ինչ հրաշակերտ կաղմուածք, պարզ պճղնաւոր շապիկ մը կը ծածկէ իւր չքնաղ իրան, կիսաբոլոր զոյդ նոռոնք շապիկի տակէն դուրս ցցուած են կուսական հպարտ ու հմայիչ կուրծքին վրայ, շագանակագոյն մաղերը արձակ ու առատ ալեծածան կիջնան կը ռնակն ի վար և երեկոյիւան հովիկն սիրահար եկերկու խաղայ ու կը փայիիայէ, կը քծնէ և կը համբուրէ զայնա, երանի՛ քեղ, հովիկ, որ չես ըլլար նետահար: Վղթիկ, Անահիտն ես դու թէ՛ Վատղիկ, Առջակու ծովու հրեղէն ծոցէն ելած ես, թէ՛ հողեղէն մայր բերած է զրեց:

Մեր պատմութեան մէջ երրեմն հոշակաւոր Մանծկերտ, այժմ կիսաւեր ու քարէ պարսպով պատած, դուրսէն քաղքի, ներսէն գիւղի շէնք ու կեանք ունի. բնակիշներ հայ և քիւրդ են, տակաւին իրարու քաւոր սանահէր, ինչպէս էին երլեմն ամբողջ շայաստանի հայ և քրդերու յարաբերութիւն, քրդերու տներն աւերակ են, հայերուն տակաւին շէն, այնչափ աւերմունքէն վերջ: Տեղացիք, հայ և քիւրդ, ճիշտ մի և նոյն տիպ, միւնոյն բարձրահասակ հսկայ կաղմուածք ունին և մեծ դանկեր, այսպէս են ամբողջ Քաջբերունեաց գաւառի հայեր. Վրձէշէն սկսեալ մինչև Անլաթ՝ հսկաներ են:

Աստ գիշերելով Մելիքի տուն, որոյ առատութիւն ու հիւրասիրութիւն սքանչացուցին զմեղ, առաւօտ ձամբայ կելնենք: Խորհուրդ կու տան մեղ, որ զգուշութեամբ և յամենայն դէպս պատրաստութեամբ անցնինք Քը ու այ էն՝ (քարուտ, աւազակաց յարմար վայր) զի հոշակաւոր շամլէն ամէն շաբաթ նորանոր շահատակութիւններ կընէր. արգէն մի շաբաթ առաջ մի և նոյն տեղ հարիւրապետ մը իւր ընտանեօք, զօրքով ու զապթիան երով կողոպտած և ամէն խայտառակութիւններ ըրած էր. գայմագամն ալ խոստացաւ գեռ վտանգաւոր տեղ չի հասած, մեղի երկու զապթիաններ հասցնել:

Մենք Քըսան հասնելու մօտ եղանք, ո՞չ ոք եկաւ դայմագա-

մէն. Վրուայ ըսածը Ոիմինա գարաւոր հրաբուխէն իջած լաւաներու կոյտերուն սահման է, ուր ձիեր գժուարաւ կընթանան:

Եւ ահա ուժ քրդեր նժոյգներու վերայ սպառազէն մեր քովէն կանցնին ըսելով մեղ թէ՝ ամզէն պաշարած էր զիրենք և հաղիւ ճոչոպրած էին:

Մենք իսկոյն հասկցանք թէ վտանգն վերահաս է, ամէն մարդիւր զէնք պատրաստ ի ձեռին, բեռնակիր ձիերն մէջ տեղ առինք և որչափ կարելի է արագ վտանգաւոր ձորէն անցնիլ կ'աճապարենք, քաջ ալրցոց և ոշտունցոց հետ առջեւն կերթանք՝ ամենին քաջալեր կարդալով. մեր ձիապան Ռուն ալ ոչ նուազ անվախ և փորձառու, պէտք եղած հրահանգներ կուտայ: Չորի կէսը հաղիւ անցանք, և ահա ետևէն աջ ու ձախ բլրակաց բարձունքէն՝ հրացաններ գուացին, վայրկեան մը վերջի հեռուստ մեր ճամբայի ուղղութեան հանդէալ՝ նախ նիզակի մը ծայր և ապա ձիաւոր քիւրդ մը երեցաւ, անմիջապէս մի ուրիշ անոր կշոին. մենք կարծեցինք որ միայն երկու անձ են, երկուքն աասներկու եղան, պյնպէս լաւ շարուած էին իրարու ետևէն: Խեղճ տօքտէօր տերեւի պէս կը գողայ. — Տօ մի վախնար, բան չկայ, ուրվոլվէրդ ուր է. «Չանթայի մէջն է...» կըսէ գողալով: «Քրդեր երկու ճիւղի բաժնուելով սկսան յիսուն քայլ մեր կողերէն հեռու արշաւելով առ մեղ գալ նիզակներ ճօճելով. «Լօ, լօ, ով էք գուք», կը պօւան հեռուանց, և Ռուն կը պօւայ. «Փի մօտենաք, մօսկո փի է լչին մեղ հետ է, ամէնքդ էլ կը սպաննենք:» Կինաց և մահուան այս ճգնաժամին, քրդերը տեսնելով մեր զէնքի և գիմադրութեան պատրաստութիւն, ինչպէս եղաւ, սրարշաւ հեռացան աներեւոյթացան:

Վայս տագնապէն վերջ վեց ժամ անդադար շարունակեցինք ճամբան. հարկ էր քրդի գիւղ իջնալ Ռուն կը հակառակի' և կըսէ. «ոչ միայն ուտելիք չենք կարող գտնել այլ և ձիերս և զձեզ կը կողոպտեն:» Պէտք չէ մոռնալ թէ երբէք որևէ ճամբորդ քիւրդի գիւղ իջնալու սովորութիւն չունի, ոչ միայն անոր համար, զի կը գողնան, այլ զի աւերակ են ընդհանրապէս. ուստի նոյն օր տասն ժամէն աւելի անդադար կը շարունակենք մեր ուղին մինչեւ որ հայոց գիւղ կիջնամք, ուր կը զարմանան թէ՝ ինչպէս առանց վտանգի աղատուած ենք:

Վայլ ևս չ. Պ ևսնգը երբ տեսնէր բժիշկը, «ուրվոլվէր չանթան (պայուսակումն) է», կըսէր:

Պահ մի եւ՝ Ա անայ ծովն պիտի տեսնենք. ես էլ ծովացեր եմ։ Զիազան Վան յանկարծ մեղ թովզով կը վազե լեռան ուսն ի վեր, գլխի եազման կու հանէ և գետին կը փուէ. ծովը կերեայ այն բարձունքէն. «ա չք - Լոյսի» պարգև տալու է իրեն։ Կարշաւեմ։ ահա մեր ծովը, կարձանանամ հոն. երազ չէ ուրեմն. ես ծովին մէջ, ծովն իմ մէջ... տարբեր դոյութեան մը մէջ կը զգայ զինքս, միշտ վախնալով թէ գուցէ երեսյթ լինի։

Վասպէս երեք օր անբաժան ծովու եղերքէն կը շարունակենք. մէն մի ալեաց հետ խօսելով, արդէն բազմաթիւ ազգական բարեկամներ լնդ առաջ եկեր են, որոնց ուրախութեան նոյնագէս չափ չկայ. ձիանթրոց, կրակոց, երգ, խաղ, գինին ու արաղ, ամենքս աւ խենթացեր ենք. կարելի չէ ինձ այն ժամեր ճշտիւ նկարագրել մանաւանդ երբ Շեղայ դարէն վերջ քաղաքը տեսայ... վերջապէս կարօտամաշ պառաւ մէրկանո գիրկը կը հանդչիմ։



Ա անայ դիրք կամ տեսարանն նոր աչքով։

Ա անայ դիրք կամ տեսարանն նոր աչքով։

Ոչ միայն Հայաստանի մեծադոյն մասն անձամբ շըջելով գիտեմ, այլ և Եւրոպիոյ ամենէն նշանաւոր տեսարաններ. ուրեմն աչքս արդէն վարժ, և առանց որ և է նախապաշարմանց կարող եմ ըսել թէ Ա անայ դիրք ու տեսարան աշխարհիս ամենէն նշանաւոր տեսարաններէն մինն է։

Երեակայեցէք մօտ վաթսուն հինգ մղոն լայնութիւն և ութսուն մղոնի չափ երկարութիւն ծովակ մը 1600 մետր բարձրաւանդակի վրայ, և որոյ կապուտան վճիտ գոյն անբացատրելի դիւ-

Թիւ զօրութիւն մը ունի: Միշտ խաղաղ չէ ծովակը, յաւետ կը յուղուի և կը խոռվի. աղի և ծանր ալիքներ գոռալով փրփրա-
լով կուգան փշուել Աւանուց եղերք հարիւր մեդր տարածութիւն
րոնով մանրիկ աւազներու վերայ: Փրիբաղեղ կոհակաց գոռում
գոշումը կը դզդէ քաղաքն ողջոյն և գիշեր ատեն ձայն մին-
չե Այդեստանեաց ծայր կը հասնի: Բաղմաթիւ առագաստաւոր նա-
ւեր՝ Կոյայ ժամանակէն մնացած և հայոց միայն յատուկ կը նշմա-
րուին ի հեռուստ ծովու սրտին վերայ: Մեծ ծովերու նման ստէպ
ալեկոծութիւններ կը պատահին և նաւերը կը վշտուին կոհակներ-
ու մէջ: Քաջ նաւալարներ երբ ընդ երկար կը մաքառեն յան-
կարծական հողմերու փոփոխութեանց դէմ, կը սկսին աղօթքի դի-
մել խունկ մոմ խոստանալ Ախմամարայ սուրբ խաչին, Կարեկայ
վանքին, մանաւանդ Փութկայ ս. Գէորգին, երբ հողմը հարաւէն
կը փչէ, իսկ երբ հիւսիսէն կու գայ, կտուց անապատի սուրբ Կա-
րապետ, Լիմ անապատի ս. Գէորգին կը թախանձեն. այլ կը
տեսնան որ աղօթքով, խոստումով սուրբերը իրենց օդնութեան
չեն հասնիր, սարսափելի իշունցներ կըսկսին. սուրբերը հայ-
հոյանքէն վախնալով, այս անգամ հողմին չափ, ալիքին սանձ կը
դնեն. ծովու հրամանատար բաղմաթիւ սուրբերու ամենէն կտրուկ
ու արագահասը՝ Փութկին է, Կարեկայ վանից կոնակն ի վեր
բարձրացող Մոկաց սարի պահապանը, ուր կը գտնուի և հրաշա-
գործ ադլորն:

Վանայ քաղաքը ծովու արեելեան կիսաբոլոր հովտի մը մէջ
տարածուած է. և Վարագայ սար, Աստղկան բերդ և Գալիլեայ
երկճիւլ գագաթներով քաղաքի մշտնջենաւոր հսկայ պահապանն
կը բարձրանայ երկինքն ի վեր, և ոտքեր կերկարէ մինչև Այգես-
տանի մօտ, իսկ աջ բազուկը ս. Գրիբորի վանքէն դէպի Օքու-
անդանց Աղկայի բլուրներ, Օքուտատայ քար, ուր մէր նախա-
պատմական հնութեանց թանգարանն է, դէպի Մհերի գուռ, Ակրո-
փայ Հարսն ու փէսէն, Հաղպաղի և Լեսկայ բերդէն ծովու ե-
ղերք կը հասնի մատները. իսկ լեռան ձախ կողմէն կուսուպաշացյ,
սուրբ Խաչայ սարերը. Կենդանանցէն անցնելով Օվստան, Արտա-
միկու Օամքարի մօտ դէպի ծով կեզերի:

Շուն քաղաքը պարսպով և խրամատով շըշապատեալ աւելի
առետուրի կեդրոն շուկայի կը ծառայէ, քան թէ բնակութեան.
զի ամենամեծ մասը արդէն պարապէն գուրս հաստատուած են. իսկ

բերդը, հաղարաւոր տարիներու անցից այդ համբ վկան, միակտուր ճերմակ ապառաժէ ցցուած՝ կը բարձրանայ ամբողջ հարաւային կողմի բռնելով Խորհրդաւոր պալատ այրեր ու արձանագրերով զարդարուած։ Իսկ Վայետան որ ամբողջ Հովտի տարածութիւն կը բռնէ, իւր պարզ շէնքերով և բնական ծառաղարդ և առուաղարդ ճամբաներով, իւր դրախտի նման անթիւ այդիներով, արդարե զմայլելի է։

Այլ, եթէ կուղէք աւելին տեսնել, ելքը ինձ հետ երթանք բարձրանանք Շուշանից գեղ կամ Վարագայ Զըսիկ աղբիւրի մօտ, դարձէք միանդամ և տեսէք, ամբողջ քաղաքը, ծովը, մերձ ու հեռաւոր սարեր ձեր աչքին առաջ՝ մօտ կերեին։ Վհա՛ Ախիան յայն-կոյս ծովուն իւր ալեռոր գլխովն 3800 մետր բարձր, դիմացդ է Վէմրութը, ուղիղ դէպի արևմուտք, հարաւային կողմէն Եղերով լեռներն Ուշտանեանց երկրէն ի վեր կը բարձրանան և անոնց կը ունակ ու կողէն քեղի կը նային Մոկաց, Շատախու անթիւ վեղարաձե լերինք, ամենէն մօտ կերեի Վրտոսը՝ եռանկիւն ուղղաձիդ, կարծես երկնից հաստատութեան սիւն լինի, Մոն Սէրվէնի նման։ Վրտոսի ստորոտ կը թառի Վարարի պլատն Եղիշէն, աստ է Ոստան։



Վարագայ վանքի տաճարը։

Ամէն սար, ամէն քար, գետն ու առուակ, չէնն ու աւերակ,
վանքն ու գերեզմանք կարծես թէ հոգի ունին, լեզու ունին, կը
խօսին հետդ, իրենց խոր վէրքեր ու ցաւեր պատմել կուզեն: Ո՛վ
կրնայ տեսնել զայս ամէն և անտարբեր դիտել. փակենք այս տե-
սարանն, այլ բանակք մեր սիրու. . .

* * *

Կենաց ամէն երեսյթներու մէջ Վան մեծապէս փոփոխուած-
տեսայ: Առաջին օրեր ճաշի սեղանի շուրջ բոլորած էին բազմա-
թիւ հիւրեր. Երակոպոս, վարդապէտ, հիւպատոսներ, կամսարա-
կան, Գլէյթն, կուսակալի օգնական Ըղթօն Վակրտիչ, այս անձ-
նաւորութիւնք և պաշտօնէութիւնք ամէնքն էլ նորութիւններ էին:
Անը պատերազմի ժամանակ, մանաւանդ անմիջապէս վերջ, ուշա-
գրութեան և կարեորութեան առարկայ եղած էր: Ուակայն ինձ
համար նորութեանց ամենէն սրտագրաւը դուրս՝ մեր փողոցին մէջ
կը ներկայանար: Ծաղկեցւոց մանուկներ ի միասին հաւաքուած
«Եղնիւ ընկեր, մեռանում եմ», «Կամ հայրենիք զիս կը կանչէ»,
«Հիմի էլ լուենք» երգերով աններգաշնակ այլ հիասքանչ քօնս է րդ
կը ներկայացնեն, ձայն բոլոր քաղաք բռնած՝ բերդն ալ արձագան-
քով կը ձայնակցի իրենց, պատուհանէն դուրս կրնայեմ: ինչ տես-
նեմ, երեսունէն աւելի երկուքէն ութ տարեկան՝ ամէնքն էլ փոք-
րիկներ իրարու թաթիկներէն բռնած բովանդակ սրտանց կը պո-
ռան և կերթեեկեն անդադար: Պահ մը մոռացայ սեղանը, եղայ-
րը՝ Երեմիա սրբազն—Տօ Եւրոպայէն բերիր այդ քաղաքավա-
րութիւն, ուր ես, տնաշէն.—ներողութիւն խնդրելով կուգամ տեղս.
և առաջին բաժակ պյս մանուկներու կենաց կառաջարկեմ: «Երբ
փոքրիկ մանուկներ հայրենիքի աղատութեան երգեր կու կանչեն,
աղէկ նշան է,—այս ծիծեռնակներ գարուն կաւետեն. . .»

Միայն քաղաքի և Վայեստանեաց մէջ քսան-հինգ ընկերու-
թիւններ կազմուած էին մասամբ Վայեստան Գրիգորիս վարդա-
պէտի (սինոդական եպիսկոպոս այժմ) շնորհիւ, զորս հանգուցեալ
եղայրս մեծ խնամով կը պահպանէր և կը քաջալերէր: Վասպէս
կենաց ամէն խաւերու մէջ նորոգութեան յուսոյ ծաղիկներ արմատ
բռնած ծլել ծաղկելու վերայ էին: Ծակալէտ ժողովուրդը պատե-
րազմի միջնադարեան արհաւիրքներէն աչք նոր բացած, սովոր ալ

կուգար իւր բաժին աւերմունքներ սինել, բայց հայաստանցին մեծամեծ յոյսերով ողեռորուած յայնժամ; ամեն դժուարութեանց դէմ միակամ և միասիրտ մաքառելու քաջութիւն կունենար: Ի՞նչ հակասպատիեր ներկայ լքման օրերուն...: Զախորդութիւնը դժուաթիւն կը բերէ տուն:

Երկու ամիսէն վերջ կայսերական քննիչ գօմիսէ ըներ (Եռուսուֆ փաշան և Աղաբէկնեան Արգիս էֆէնտին) եկան, որոնց պաշտօն տրուած էր կեղրոնական Հայաստանի վիճակը քննել և դաշնագրութեանց համաձայն բարենորոգումներ գործադրել... Արդիւնքն ամենին ծանօթ է այժմ:

Յաջորդ տարին, 1880 ապրիլի սկիզբը Վեհ. Հայրիկն եկաւ. յետոյ Գարեգին վարդապետ Արուանձտեանց և այլք, որով մեր գործունէութեան ասպարէզն ընդարձակուելով, օգտակար արդիւնքներ ունեցան:

Հաղմատեսակ պարտաւորութիւններ կը ծանրանար յայնժամ մեր խղճի և պարտուց վերայ. ամենին ալ հասնելու էր. գոմիսէրներ, սովոր, համաձարակ հիւանդութիւն մը, Շէխ Խպէյտուլ-լահի շարժումը, ժողովրդեան բարոյական և նիւթական պէտքեր. սակայն անձնուէրներու խումբի բարոյական ոյժը այնչափ մեծ էր, որ միշտ յաղթական դուրս կուգար:

Վայ բարոյական յաղթանակի զօրաւիկներէն մինն էր նաև կետրոնական Վարժարանն, որոյ անձնուէր տեսուչը լուսաւորութեան առաքեալի մը պէս հաստատամիտ, հաւատարիմ իւր պաշտօնին, նահատակի մը շափ տոկուն, յԵւգոկիա, Անդրաստիա, Տիգրանակերտ և այլուր լուսոյ սերմեր ցանելով աստ եկած էր և մեծապէս կը յաջողէր այս մշակը. զի հողը պարարտ, մէկին տասն տալու յոյսեր կուտար: Այս տիպար վարժարանը հազիւթէ մի քանի տիպար երիտասարդներ հացուց. այն ջահն ալ մարեցաւ, երբ մենք մին զինի միւսին հեռանալ պարտաւորեցանք ժամանակի բերմամբն:

Արդարեւ կարժէր այս շրջանի՝ 1880 էն 1884, չորս տարուան Ասազուրականի կեանքն ու դէպքեր նշանակել մի առմի, որ ընդգարձակ հատոր մը կազմելու շափ առատ են նիւթերը և պատմութեան համար կարեւոր անոր մանրամասնութիւնք. բայց մեր այս տողեր յիշատակաց նմոյշներ են միայն. ժամանակ է որ մեր ծրարը հանգործենք, եթէ ոչ, ընդ երկար Վան պիտի մմանք, և դուրս չի պիտի կարենանք ելնել:

Վանէն մեկնելէն առաջ, կուզէի նկարագրել համառօտիւ
քանի մը ծանօթ անձանց շէնք ու շնորքներ, «Արաքսի» ընթեր-
ցողներ հետո առնել տանել Վարագ Ա. Գրիգոր, յԱխթամար,
կտուց և Լիմ անապատներ միշտ վեհ. Հայրիկի, Երեմիա և Գա-
րեգին եպիսկոպոսաց և բաղմաթիւ սրտակից ընկերներու հետ:
Օր մ'ալ Շատախ, Մոկս, Կորտուղ, անձեացեաց երկիր-
ներ կերթայինք, դիտել Վասպուրականի գաւառացւոց կեանքը, կազ-
մուածք, տիպարն ու տարազը, իրենց լեռներ, ձոր ու հովիաններ,
Տեղրիսի ակոնք, հրաշալի ջրվէժներ, Գուրգէնի լերդը և անոր



Վարագաց վանիքի միաբանութիւնը և Սենեքերիմ թագաւորեաց զահը:

2900 մեդր բարձրութեան լանջքի վերայ նոր գոյացած հրեզէն
լիճը. գնալ անտի Հոգոց վանքը, Տրդատայ գերեզմանն համբու-
րել. իջնալ Հայոց Ձոր՝ Շամիրամայ ական վերայ. գառնալ Աս-
տուածաշէն, ելնել անոր բերդ, որ Վանայ բերդի երեք անգամ
երկարութիւն ու մեծութիւն ունի և թերես անկէց շատ հին,
շատ խորհրդաւոր իւր գեռ անծանօթ արձանագրութեամբք, իւր
քարակոփ պալատ ու մեհենական այրերովն. օր մ'ալ հնագիտա-
կան խուզարկութեամբ զբաղէինք, մեր ազգային պատմութեան
անծանօթ մասն այս հնութեանց մասունքներով քննէինք, անսպառ

Են գանձեր հողակոյտներու տակն ու վրան, որոց դեռ հպած չեն
Շուլց, Լայարդ, Բասամ և այլք: Այլ մեր թէ նոր և թէ հին
կեանքն, ծանօթն ու անծանօթն տեսնելու, քննելու և գրելու հա-
մար յօդուածի մէջ զետեղելու չէ հնար:

* * *

Ա երադարձ, ոչ օրն կը յիշիմ, ոչ ամիսն վերադարձիս, տըր-
տում էր անձն իմ յայնժամ: Կուլայի և կուլային հարիւրաւոր բա-
րեկամներ, որ մինչև Անկիւմներաց սարի ետև՝ մինչև Առջակ ըն-
կերացան ինձ:

Բաղդէս Դ և ոնդ վարդապետ դարձեալ հետո է, խեղճ վար-
դապետ, տասնեակ տարիներէ ի վեր տքներ, չարչարուեր, ուր որ
վանք, մադաղաթ, գերեզման ու խաչքար կայ Հայաստանի մէկ
ծայրէն միւսն մի առ մի շրջելով՝ կրկտելով ստուար հատորներով
յիշատակագրեր հաւաքեր, միշտ շալկելով այդ քաղցր բեռը կը
տանէ ու կը բերէ այժմ այն յուսով թերես Աջմիածնայ մէջ տպա-
գրել յաջողի... ինքն տպագրեցաւ յերկինս, գործերն անտիպ մնացին:

Ուստաստանի ճանապարհաւ այս անդամ Պօլիս յլուսպա կը
դառնամ:

Վո՞ջակու ծովէն կանցնինք, ուր հրեղէն աղջիկ (էդ) ձիեր և
գոմեշներ կը լնակին. և մեր հիւրլնկալ ծերունի ուս կազարը եր-
դումով կը պնդէ թէ հաղար ու մէկ անգամ տեսած է զանոնք:

Տերկրի գայրագամին յանձնարարական տարած էի, զոր ըն-
դունելով մեզ կընկերակցի մինչև Հայտարանցւոց քիւրոդ աշերաթ
աղասիի վրան: Մահմուտ աղայի վրանի տակն ենք, ոչխարներ կը
մորթէ, սինիներով փիլաւ փիրամիթի չափ: Գիշեր հոն կանցու-
նենք, առաւօտ քսան ձիաւոր կուտայ մեզ մինչև Պայազիտ տանե-
լու. մոլա մը որպէս տան երեց միշտ աղայի մօտն է, անգիր գլ-
պիր մը, բայց առանց կրօնամոլութեան, ամէնքն ալ հայերէն գի-
տեն. մեր նախարարաց հին կեանքն ունին: Վրանի տակ զէնքերով
լի, բոլորտիք կազմ և պատրաստ ձիեր ցիցերու կապուած, Գելալ-
ցիներու յարձակումէն կը զգուշանան, անոնք ալ ասոնցմէ: «Այս
գիշեր Մուսա աղայի փոքրիկ տղան Ալին, հաղիւ 13 տարու, հօր-
եղօրն այցելութեան եկաւ. ի՞նչ նահապետական ակնածութիւն
դէպի աշխրաթի մեծ, ծերունի Մահմուտ աղան ոտքի կեցաւ, մին-

չե որ Ալին նստեցէք լսաւ: Փոքրիկ Ալին որ ամուսնացած է արդէն, ինձ հետ կը խօսի. յարգանաց համար ծունկ չոքելով, սիկար մը կուտամ, ինչպէս նաև իրեն յարմար ընծայ մը. շատ գոհ է:

Կիշեր մը կուռ-կուռ-Պապայի մօտ ամայի լեռան մը թէին վրայ թառած ենք, կուռ-կուռ-Պապան Ապաղայի հովտի ծայր ծծմբային հեղեղատ ջզվէժ մ'է որ գետնի տակէն կը հոսի դղբէինով, ծծումբի հոտը տարածուած է ամբողջ ըրջապատ, ծըծումբներու մէջէն կընթանամք, մեր ձիեր կը խրտնին դուրս ժայթքող պղպճակներէն: Դրկրորդ գիշեր Միրզա աղայի վրան կիշնամք, ի՞նչ ընդարձակ վրան, ճոխութիւն. մետաքսէ է մեր անկողին, իսկ վրան բարձր՝ յոյժ բարձր լեռան մը գագաթին վրայ՝ ձիշտ Հայաստանի լեռանց իշխան՝ Մասսի մօտ և հանդէպ:

Իկամիր կը հասնինք քողաքներով ըրջապատեալ, գաւառապետի հիւրասիրութիւն երախտագէտ կը թողու զմեղ: Տակաւին Եջմիածին չի հասած, Ճեմարանի ուսանողք սայլերով արձակուրդէն կը դառնային ուրախ երգերով, երգի ու եղանակի հեղինակն ինձ հետ էր, ինքն ալ սկսաւ նոյն «կարօն Մուսէն աղասին» կրկնել ուսանողք ըրջապատեցին զինքն: — 'Ի Ա. Եջմիածին տեսածս պատմել երկար կը լինի: Գեղամայ ծովակի ափանց վրայ իշխանիկ ձուկն համեղ էր քանց մեր տառեխ: Ի Ծափլիս Աերուէսեան վարժարան պյցելելէն վերջ, վանք գացի: Պ. Ե. Ճաշի հրաւիրած էր զիս. հոն էին Ծափլիզի հայոց կեանքի երակները, բացակայ էին միայն Բաֆֆին, պ. Աբգար և Արծրունին: Անմահ Բաֆֆիի հետ մանաւանդ տեսակցութիւնս յոյժ ոգեորիչ էր, պ. Աբգար ըրջահայեաց, պահպանողական դտայ:

Ծափլիզը մեծ կոչում, մեծ ապագայ ունի. յուսանք, աշխատինք և սպասենք:

24 գետրուարի, 1893 թ.
Լուղոն:

Ա. Խ. Վ. Վ.





ТИП ВД ГОЛЛЕ.

ՄՈՅԹԻԱ ԵՊ. ԻԶՄԻՐԼԱՆ.

Епископъ Маттеосъ Измирланъ,

Автотипія Ангерера въ Венѣ.



ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ

Տ. ՄԱՏԹԵՈՍ ԵԳԻՒՅԱԳՈՍ ԻԶՄԻՔԵԱՆ*

Մատթէոս եպիսկոպոս հզմիրլեան ծնած է 'ի Կ. Պոլս, Մայր Եկեղեցւոյ թաղը, 1845 փետրուար 12-ին, Տեառնընդառած տօնէն երկու օր առաջ և հետեւեալ օրն իսկ մլրդուած՝ Մայր Եկեղեցւոյ մէջ, կնքահայրութեամբ Սարգիս Մարտիրոսեանի. կրնանք մակարերել թէ աւուր պատշաճին յարգելով բարեմիտ կնքահայրը նորա անունը դրաւ Սիմէօն:

Սիմէօնի հայրը՝ Համբարձում և պատղը՝ Մարտիրոս՝ արհեստով գերձակ էին: Պատղ Զմիւռնիա քաղաքէն գաղթելով՝ Պոլս հաստատուած ու Պոլս ամուսնացած էր. այս պատճառաւ իրենց ընտանիքի մականունը եղաւ՝ հզմիրլեան:

Համբարձում ունեցած է ութն զաւակ, որոց մէջ Սիմէօն վեցերորդն է եղած առաջնութեան կարգով:

* Վ.չքի առաջ ունենալով՝ որ Իզմիրլեան Մատթէոս սրբազնի մասին մենք ոռւսահայերս շատ սակաւ տեղեկութիւններ ունենք, և որ եղածներն էլ լրագրական ցիր ու ցան տեղեկութիւններ են, մենք այս գլքում տպագրում ենք մեր մշտական աշխատակցի լրջօրէն ուսումնասիրած և պատրաստած յօդուածը, որ կարող է լրացնել վերայիշեալ պակասը մեր մամուլում:

Ծանօթ. Խմբ.:

Սոյն ուժն զաւակներէն միայն երկուքը հիմա կ'առպին. Միմէօնը՝ ապա Մատթէոս եպիսկոպոս—և Յակոբոսը, որ այժմ Պոլիս կը գտնուի և ներկարարութեամբ ու մեքենագործութեամբ կ'զբաղի. միւսները կանխաշաս մահուամբ մեռած են:

Պատանին Միմէօն իր նախնական ուսումն առած է Մայր Եկեղեցւոյ Պէղծեան վարժարանին մէջ մինչեւ 1859, որմէ յետոյ երեք տարի ալ զայն կատարելագործած է Գումագարուի Դուռսի Պօղոսեան և Վառվառինեան ազգային ուսումնարանին մէջ կառուցեալ ծախիւք Պէղծեան Յարութիւն ամիրայի, ՚ի յիշատակ և յանուն իւր ծնողաց. այն ուսումնարան այն ատեն փայլուն վիճակ մը ունէր ընդ տնօրէնութեամբ Մէզպուրեան Մկրտիչ Էֆէնտիի, որ այժմ հիմնադիրն ու վարիչն է աղջկանց համանուն բարձրագոյն նախակրթարանին Խւկիւտարի:

1862 թուին, վարժարանական ընթացքը աւարտելով՝ Միմէօն մանկավարժութեան պաշտօնին կը կոչուի Միջագիւղը Ս. Թարգմանչաց վարժարանին մէջ, զոր կը վարէ անընդհատաբար երկու տարի. 1864-ին, կուսակրօն Եկեղեցականութեան ասպարէզը ընդգրկելու առաջադրութեամբ, Թաքթաքեան Պօղոս պատրիարքի արտօնութիւնովը, Միջագիւղի Ս. Աստուածածնայ Եկեղեցւոյն մէջ սարկաւագ կը ձեռնադրուի՝ տեղւոյն քարողիչ Կապուտիկեան Յովկաննէս և պիտի պոպու ձեռքով:

Այն ատենուան եպիսկոպոսները կարծես մասնաւոր հաճոյք մը կ'զգային իրենց սարկաւագներուն վարդապետական ձեռնադրութիւնը յապաղելով. այս զասակարգէն էր նաև Կապուտիկեան. թէպէս պարզամիտ և բարի մարդ՝ այլ հին, աւանդական սովորոյթները երկիւղածութեամբ յարգող և իր՝ հոգեոր ծնողի իշխանութիւնը գործածելու հետամուռ՝ չը ներեր որ իր ձեռանդրած սարկաւագը այնպէս շուտով՝ մէկ երկու տարուան մէջ, վարդապետութեան աստիճանին բարձրանայ — Եկեղեցականութիւնը Պէմբէ լուսական (Երկարթեայ սիսեռ) է, կ'ըսէր, իր շուրջը զանուղներուն, ևս ին-

չեր՝ քաշեցի իմ մէծաւորէս՝ մինչև որ հաղիւ տասը տարէն
կրցայ վարդապետ ըլլալ, Սիմէօնն ալ թող սպասէ, գեռ
քանի՛ տարի եղաւ—և Սիմէօն սարկաւագ անտրտունջ կը
համակերպէր: Բայց բաղդը մարդուս ետեւէն կուզայ, ինչպէս
կըսեն. հաղիւ կիսով չափ բոլորած այն տասը անհատնում
տարիները՝ զօրս Յովհաննէս եպիսկոպոս պայման զրած էր
սարկաւագութենէ վարդապետութեան բարձրանալու համար,
և ահա օր մը աչքի լոյսի կը վազեն Սիմէօնին—Գործդ
եղաւ, կըսեն, Պօղոս պատրիարք փափագ յայտնեց Կապու-
տիկեանիդ՝ որ զքեղ շուտով վարդապետ ձեռնազրէ—ԱՌ
անկարելի է պատմել Սիմէօն սարկաւագի զգացած ուրախու-
թիւնը. և արդարեւ, 1869 յունիս 29 ին, Լուսաւորչի Գիւ-
տի Նշխարաց տօնին բարեկենդանի կիւրակէն, նոյն Սիջա-
գիւղի եկեղեցւոյն մէջ հանդիսաւորապէս վարդապետ ձեռ-
նազրուեցաւ, աւելորդ է ըսել թէ Կապուտիկեանի ձեռամբ,
և կոչուեցաւ Մատթէոս:

Յովհաննէս եպիսկոպոս գժգոհ էր, ոչ թէ իւր սիրեց-
եալ աշակերտը վարդապետ ձեռնազրելուն, այլ առաւելա-
պէս՝ այդ ձեռնազրութեան փութացումը պատրիարքին կող-
մանէ յանձնարարուած ըլլալուն համար.... Ուստի աճապա-
րեց. է՛հ, ով զիսէ, դուցէ նոյն այն պատրիարքը ելնէր քիչ
յետոյ ըսէր—Յովհաննէս եպիսկոպոս, մէկ մը չորս կողմէ
նայէ՛, Մատթէոսի պէս խոսացող վարդապետ կը տեսնե՞ս
կոր, ա՛լ ի՞նչ կը տնտնաս ուրեմն, օր առաջ գաւազանակիրի
իշխանութիւն չը տաս իրեն:—Զէ, այս խօսքերը չէր ուզեր
լսել: ինքը որ այնչափ տարուան փորձառու եպիսկոպոս կը
համարուէր՝ բաւական սեպեց առջի դասը, ուստի քաջու-
թիւն, և եթէ կուզէք, ճարպիկութիւն ունեցաւ զպատրի-
արքը կանխել ու նոյն տարւոյ Վարագայ Խաչի բարեկեն-
դանի կիրակին գաւազանի իշխանութիւն տալ Մատթէոս
վարդապետին, միշտ Ս. Աստուածածնայ եկեղեցւոյն մէջ:

Եյս միջոցներն էր որ լոյս ու խաւար աշեղ պատերազմ
մը կը մղէին իրարու գէմ Բիւղանդիոնի պարիսպներուն
մէջ. հասարակութիւնը երկու դիխաւոր հատուածներու բաժ-

նուած էր, մին՝ Պօղոս պատրիարքի կուսակից և խառնչալ-
յորջորջուելու գատապարառուած, իսկ միւս կուսակցութիւ-
նը՝ անոր ոգւով չափ հակառակորդ ու լուսաւով անունով
շողոքորթուած. և ինչ կոիւներ, Աստուած իմ. Մայր եկե-
ղեցւոյ կամարները ամեն կիրակի աշեղազգորդ կը թնդային
յիշ-էի ւը յիշ-էի աղաղակներով ու մին քան զմիւսն
Խլացուցիչ աղմուկներով. մեծ փոթորիկ մը անցուց աղզը
այն միջոցին, որուն, յիտոյ, անմիջապէս յաջորդեց լոի՛կ
հանդարառութիւն մը՝ երբ, Վասպուրականի Արծիւր, հաշ-
տութեան ոստն՝ ի բերան, եկաւ եղբայրութիւն ու սէր
յանցրնել համազզի հակառակորդ տարերաց մէջ: Ըստ տւան-
գական սովորութեան, և թերեւ անկէ ալ աւելի, փառա-
ւոր, շքե՞զ, ընդունելութիւն մը եղաւ Հայրիկին:

Այն օրը որ Հայրիկ ոսք կօխեց սուլթաններու յաղթա-
պանծ ոստանը՝ այն օրը տօնի օր մը եղաւ ամբողջ մայրա-
քաղաքին համար. Հայերը եռանդէ, օտարները հետաքրքրու-
թենէ մզուած, Արծուի Վասպուրականին՝ ի տես կը փու-
թային. մարդկային բիւրաւոր բաղմութեան մրրկայոյդ
այդ ծովուն մէջ՝ միահամուռ ովսաննաններու, սրտեռանդն
մաղթանքներու մոգական շունչն էր որ կը բարձրանար,
կը սաւառնէր օդին մէջ՝ հետղջետէ աւելի ուռանալով,
աւելի տարածուելով և արձադանդ տալով Կ. Պոլսի եօթը
բլուրներուն: Եւ Հայրիկ ելաւ քարոզել Մայր եկեղեցւոյ,
այդ պատճական տաճարին բեմէն. նոյն հետայն լուսարարը
եպիսկոպոսական շքեղազդյն զաւազանը կը մաստուցանէ,
իրէն և ամէնէն փառայեղ զահը կը զետեղէ իր մօտ. Հայրիկ
երկուքն ալ կը մերժէ.—Այս աթոռ ու այս զաւազան խա-
խուտ են, կըսէ ժապուելով դուք որ այսօր «ովսաննա»-ով
զիս հոս բերիք, ով զիտէ որչափ մօտ՝ ժամանակէն «'ի Խաչ
հան զդա»-ով պիտի տապալէք—նոյն պահուն իսկ, այս
քիչ մը յանդիմանական խօսքին վրայ, լուսաւովեներէն քա-
նիներ շատ դիւանազիւտական չէին գտներ այս վարմունքը
ու եկեղեցականաց երամին մէջ ոչ սակաւք կը մտածէին թէ
այս մարդուն նօֆո-զը իրենց զլիսէն պակաս չպիտի ըլլայ.

դասին մէկ հեռաւոր անկիւնը, սակայն, պարզունակ եկեղեցական մը կեցած, ուշի ուշով կ'ուսումնասիրէր Հայրիկի գիմաղծութիւնը, շարժուածքը, խօսուածքը և կը ջանար պատկերացած տեսնել անոր ամբողջ Հոգեկան էութիւնը՝ անոր գէմքին վրայ. ինքն իր մէջ ամփոփուած, չէր զդար անգամ այն աարօրինակ իրարանցումը որ իւր շուրջը կը տիրէր. իրեն համար միայն մէկ անձ գոյութիւն ունէր այն պահուն—Հայրիկը: Ամենքէն մոռցուած այս նորընծայ եկեղեցականը՝ իզմիրլեանն էր:

Հայրիկի գահակալութենէն զրեթէ անմիջապէս յետոյ, եկեղեցական կարգ մը խնկրոց համար Համագումար Փողով գումարուեցաւ. այս ժողովոյ նիստերը տեսեցին 1869 սեպտեմբերէն մինչեւ 1870—ի սկիզբները: Եյն ատեն Համագումար ժողովոց կը մասնակցէին միայն եպիսկոպոսունք և վարդապեաններէն ալ անոնք՝ որք թաղի մը քարողիչ էին. իսկ քահանայները ու քարողիչ չեղող վարդապեանները հոն մուտք չունէին բնաւ: Երեմիա եպիսկոպոս Տ. Սարգսեանի եղբայր, Արքստակիչս վարդապեաւ, ու Նաթանեան Պօղոս վարդապետ *, երկուքն ալ անպաշտօն, այս անիրաւութեան գէմ կը սրտմտին. զլուխ զլիսի կուտան և ասոր մէկ ճարը կը մտածեն. Խրիմեանի ռամկավարական ձգտումները իրենց զրգիւ կուտան համարձակ գաղափար մը յղանալու. որոշումը արուած է արդէն, և հետեւալ օրն իսկ շատ պերճախօս բողոքադիր մը կը մատուցուի պատրիարքին, յորում կը հարցուի թէ քանի որ Համագումար Եկեղեցական ժողովն իր անունովն իսկ կ'ենթադրէ գումարումն բոլոր եկեղեցականաց, առանց գասակարգի ու պաշտօնի խարութեան՝ ուրեմն ի՞նչ իրաւամք անպաշտօն վարդապետք և քահանայք կը զբկուին անկէ. խարողական այս ողին միթէ հակառակ չէ քրիստոնէական հաւասարութեան սկզբանց, և դեռ, որ մէկն ըսեմ,

*) Այս այն տարաբաշն վարդապետն է՝ որ «Նրտասուք Հայաստանի» անուն գիրք մը հեղինակած Ալալուն համար, տարիներով Պոլսոյ բանտերուն մէջ տառապելէ յետոյ, ուր ուրեմն յաքսոր Դրկուեցաւ և 1890—ին վախճանեցաւ անհնարինթ շուառութեան մէջ:

ուրիշ չեմ գիտեր ի՞նչ բաներ: Մինչև հոս աղէկ, սակայն բողքազրի մատուցման հետևեալ օրը չարածձիին մէկը վազն՝ իվաղը կուզայ Մատթէոս վարդապետին ու կը պարծենայ թէ նորա անունն ալ տեսած է պատրիարքին արուած բողքազրին ներքելը. Մատթէոս վարդապետ՝ ՚ի սկզբան չուզեր հաւտալ բայց կը հետաքրքրուի և հետզհետէ ուրիշ աղբիւրներէ ալ կը ստուգէ որ արդարե իր անունը տեսնուած է հոչակաւոր բողքազրին մէջ: Դիւրազրդիու. եւրոպացի գիւանազէտէ մը տւելի զայրացած, նոյն օրն իսկ մէկ շունչով կը վաղէ պատրիարքարան ու կը ներկայանայ Հայրիկի. Սրբազն Հայր, ուղղամոռութեան գատապարտելի գեղջում մը գործուած, իմ անձիս գէմ սոսկալի նախատինք մը եղած է անունս կեղծուելով այն բողքազրին մէջ՝ զոր վերջին անգամ մատուցած են Ձեր Ամենապատուութեան. կը յուսամ որ Ձեր Սրբազնութիւնը պիտի բարեհաճի իմ անուան եղած այս նախատինքին գոհացում տալ՝ յանցաւորները պատժելով.—Եյս խօսքերը արտասանուած էին գոռող, զօրեղ ու անկեղծ շեշտով: Հայրիկ, միամտութիւն կեղծող այն սրբամիտ ժպիտով որ իրեն միայն յատուկ է կը պատասխանէ, մեղմիւ.—Է՛հ, ի՞նչ է եղեր, անոնց բողոք արդարացի էր, ի՞նչ վնաս կայ քու անուն անոնց մէջ գտնուելով.—նոյն հպարտ ու դօրեղ ձայնը վերստին կը լսուի, այս անգամ աւելի ուժգին, առանց սակայն պատրիարքի մը վայել ակնածանքը կորսնցունելու.—Բողոքին արդարացի լինելը կամ ոչ տարբեր խնդիր է, Սրբազն Հայր, կարեորն այն է որ տռանց իմ կամքին իմ սաորազրութիւնս կեղծուած է, և կը պնդեմ թէ ինձմէ զատ ոչ ոք իրաւունք ունի զայն գործածելու: Հայրիկ որ բազմոցին ընկողմանսած էր, կը շտկուի, ծալլսալատիկ կը նստի. ձեռքը ձախ ծնօտին և արմուկը ծունդին կը թնցուցած՝ կ'ոկիսի ուշազրութեամբ ու շեշտակի գիտել այս համարձակ ու երիտասարդ վարդապետը և մէկն ՚ի մէկ—Տղայ, զուն ուր կը բնակիս—Փոքրաւորն եմ Կապուտիկեան Յովհաննես եպիսկոպոսին ՚ի Միջաղիւլ—Վաղուրնէ իսկ պէտք է գաս իմ քով, քեզ պաշտօն պիտի

տամ պատրիարքարանի մէջ—Ամենայն սիրով, Սրբազնին հայր, կը խնդրեմ միայն որ բարեհածիք այս մասին հոգեոր ծնողիս զրել և հրամայել որպէսղի հարկ եղած արտօնութիւնը տայ ինձ: Որոշուած էր, չայրիկ հետեւալ օրն իսկ կը գրէ Կապուտիկեանի, և 1870 յունուար 14 ին Մատթէոս վարդապետ կը տեղաւորուի՝ ի պատրիարքարան, իր մասնաւոր քարտուղար Խրիմեան հայրիկի:

Պատրիարքի քարտուղարութեան պաշտօնը՝ մանաւանդ այն ժամանակները, չնորհիւ պատրիարքարանի միջազգային սերտ յարաբերութեանց՝ տեսակ մը դիւանագիտական պաշտօն կը նշանակէր, և Խրիմեան գոհութեամբ տեսաւ թէ իր ընտրութեան մէջ խարուած չէր. զի արգարե այս երիտասարդ վարդապետը անօրինակ ճշգաւահութիւն, աշխատասիրութիւն և ուշիմութիւն՝ ի հանդէս կը բերէր իր պաշտաման մէջ, որով քիչ ատենէն ամենքին ուշադրութիւնը հրաւիրեց իր վրայ. իբր հետեւանք սոյն ընդհանրական զնահատման՝ 1871 յուլիս 23 ին՝ երեսփոխան ընտրուեցաւ Ազգային ժողովոյ:

Ասկէ վերջը, սոյն տիպար եկեղեցականին համար կ'սկսի դործունէութեան նոր և ընդարձակ ասսլարէլ մը՝ յորում ողջմտութեան, իմաստութեան և վարչական կարողութեան ու միանդամայն բացարձակ անկողմակալութեան այնպիսի ողի մը ցցց կուտայ՝ որ իւր ամենամեծ փառքն ու պարձանքը պիտի լինի յաւէտ. մենք որ կարելի եղածին չափ խնամով ուսումնասիրեցինք իւր երեսփոխանական կենցաղը՝ պիտի ջանանք՝ ի վեր հանել անոր այս նկարագրի վեհութիւնը որ պատկառանք աղղած է բոլոր զինքը մօտէն Ճանցողներուն:

Դեռ հազեւ երեսփոխան ընտրուած՝ և ահա կ'սկսի ջերմ մասնակցութիւն մը ունենալ ժողովոյ բոլոր կարեոր վիճաբանութեանց. իւր ոճը՝ կտրուկ է և յստակ. կը պատահէր որ, ինչպէս Ազգ. ժողովոյ արձանադրութիւնք կը վկայէն և որոց մէն մի հատորը համբերութեամբ թղթատած ենք, վիճաբանութեան սահմանը կ'ընդարձակուէր ու կ'ընդարձակուէր, անձնական կրքեր մէջ կը մօտէին և բուն

խնդիրը՝ որուն լուծումը առաջարուած էր՝ ի սկզբան՝ կը մըննար, կը ճապաղէր և ժողովն ամբողջ անստուգութեանց ստուերին մէջ կը տատանէր, և աշա նոյն հետայն յոտին կը կանգնի իզմիրլեան, երկու խօսքով խնդիրը կը պարզէ. նախ կը դատէ կը զաէ բոլոր այն անպէտ վիճաբանութիւնները որոնք միայն անձնական կրեերու կը պատիանին. խնդիրը կը բերէ կը հասցունէ հօն ուրիէ սկսած էր և որոշ կերպով ցոյց կուտայ թէ ի՞նչ ճամբայ բռնել պէտք է անոր բարւոք լուծմանն համար. իւր ճառը յաճախ կը վերջանայ առաջարկութեամբ մը որ իսկոյն կերկորդուի և հակիրճ վիճաբանութենէ մը յետոյ քուէի զրուելով մեծամասնութեամբ կ'ընդունուի. այս կերպով ահա, ամէնէն կինոռոտ նկատուած խնդիրը իսկոյն կը պարզուի և կը կարգադրուի, բաւ է որ իզմիրլեան մէկ մը ձեռք առնէ զայն:

Երբ 1872 ի սկիզբները կրօնական ժողովն հրաժարեցաւ՝ երեսփոխանական ժողովն իւր մարտ 17 ի նօտին մէջ, քուէից բացարձակ առաւելութեամբ նորրնտիր կրօնական ժողովոյ անդամ կարգեց Մատթէոս վարդապետ, որուն Ատենապիլիր ընտրուեցաւ անմիջապէս՝ պահելով հանդիրձ պատրիարքական քարտուղարի պաշտօնը և, աւելորդ է ըսել երեսփոխանական անդամակցութիւնը (զի Քաղաքական և կրօնական ժողովոյ անդամք կրնացին միանդամայն անդամակցիլ Ազգ. երեսփոխանական ժողովը):

Սոյն կրօնական ժողովը հռչակաւոր է իր անդամներով և այն գէպերով՝ որոնք պատահած են իր պաշտօնավարութեան միջոցին: Ատենապետն էր Ռոտոսթոցի հռչակաւոր Թաղէոս եպիսկոպոսն, որ մասնաւորաբար ծանօթ է Բերայի գերեզմանատան խնդրոյն առթիւ՝ զի ինքն էր որ ՚ի գլուխ բարձրաստիճան եկեղեցականութեան՝ ծանօթ աղերսագիրն մատուցած է Սէլամլըքի ուրբաթ օր մը Սուլթան Ալղիւլ Աղեղի: Միւս անդամներէն՝ ի մէջ այլոց պէտք է յիշել ծերունազարդ Տ. Գէորգ Արծրունի քահանան *, Տ. Յովհաննէս քահանայ

* Տ. Գէորգ մէր ամենէն սրբակրօն քահանայն է. ուսուցիչն եղած է յիշատակաց արժանի Ներսէս պատրիարքին. այս ալեզարդ ծերունին պահմ 106 տարեկան է

Մկրեան (այն ատեն պատրիարքական փոխանորդ) և Տ. Հմայեակ վարդապետ Դիմաքսեան (այժմ հպիսկոպոս, առաջնորդ Ռուսութօյի, որ կաթողիկոսական վերջին ընտրութեան ժամանակ Ս. Էջմիածին եկած է՝ իբր եկեղեցական պատգամաւոր իւր վիճակին):

Եյն ժամանակուան քաղաքական ժողովայ տաենապետն էր կեսարացի Մանուկեան Սենեքերիմ էֆէստին, իսկ ատենապիրը՝ աղքային երեսփոխանական ժողովայ ընդդիմադիր կուսակցութեան հոչակաւոր պետն, հանգուցեալ Ստեփան Փափաղեան:

Երկոքին ժողովներն վարչական մեծ տապնապներ անցուցած են, բայց՝ ի պատիւ իրենց՝ պէտք է ըսել թէ միշտ համերաշնուրթեամբ զործած են իրարու հետ և իրենց բոլոր ջանքն ՚ի զործ զրած են ազգին նուրիրական առանձնաւնորհումները պաշտպանելու համար օսմանեան կառավարութեան քով:

1872 տարւոյ օդոստոսը նշանակելի ամիս մը եղած է Թուրքիոյ հայոց համար. այս ատեն է որ ծանր անհամաձայնութիւններ ծագեցան Բ. Դրան և պատրիարքանի միջեւ և յարաբերութիւնք օր ըստ օրէ ձգտեցան սոյն երկու ուղաշանաաանց միջեւ. անհամաձայնութեան առարկայ եղող շատ մը խնդիրներէն հոս կը յիշենք միայն երկուքը—Պրուսյի առաջնորդական խնդիրը և Բերայի գերեզմանատան խնդիրը. պէտք է ըսել որ օսմ. կառավարութիւնը իւր ամբողջութեամբ պատասխանատու չէր տեղի ունեցած անհամաձայնութեան. այս մասին ամեն յանցանք կը ծանրանար այն ատենուան արտաքին զործոց նախարար Խալել փաշայի վըսյ՝ որ շատ մոլեուանդ և գիւանազիտական յարաբերութեանց տարրական կանոններուն իսկ անհմուտ պաշտօնեայ էր:

Բերայի գերեզմանատան խնդիրը, ինչպէս նաև այս առթիւ Կրօնական ժողովոյ բռնած ողջամիտ գիրքը ծանօթ է «Արաքս»ի ընթերցողաց *, ուստի մենք կ'զգուշանանք ա-

և կ'ապրի Խառնուղական իւր ընտանեաց ծոցին մէջ. իւր մոտաւոր կարողութիւնները դեռ անոցը կը մնան:

* Տեսնել «Արաքսի» 1887 թուականի և գիրքը 52—57 էր.: Ծ. Խմբ.

ւելորդ կրկնութիւն ընելէ: Ուրեմն կը ջանանք հոս որոշ կերպով բացատրել միայն Պրուսայի առաջնորդական խնդիրը: Պէտք է գիտնալ, որ Սահմանադրութեան դործադրութիւնը մեծամեծ գժուարութեանց կը հանդիպէր գաւառաց մէջ՝ թէ՛ անոր համար, որ ժողովուրդը, յետին տգիտութեան մէջ մասցած՝ չըր կարող անոր տրամադրութիւնները դիւրաւ ըմբռնել, և թէ՛ անոր համար որ Սահմանադրութեան գծած կանոնները կը հակառակէին տիրող ընդհանուր կացութեան. գուցէ առաջին գժուարութիւնը յարուցանողները նոյն իսկ առաջնորդներն էին՝ որոնք մինչեւ այն ատեն, իրենց իշխանութիւնը միապետորէն գործածելու վարժուած շատ կը գժկամակէին կեզրոնական իշխանութեան հնապանդիլ: Պրուսայի այն ատենուան առաջնորդն էր, ինչպէս և հիմա, Բարթուղիմէոս եպիսկոպոս Զամբչեան, որուն միապետական և իշխանութեանց գէմ ունեցած ըմբռստ վարմունքը արդէն շատոնց ծանօթ է թուրքահայոց. այն ատեն ալ, ինչպէս միշտ, չըր ուզած յարգել կեզրոնական իշխանութիւնը և գործադրել Ազգ. Սահմանադրութիւնը. Պրուսայի թրքախօս Հայերը *) իրենք ալ թէպէտ չին կարող ըմբռնել Սահմանադրութեան ողին, բայց անոնցմէ ոմանք անձնական հաշիւներ ունենալով առաջնորդին հետ՝ Սահմանադրութիւնը պատրուակ բռնելով առաջնորդին գէմ ելան. որով, հասարակութիւնը բաժնուեցաւ երկու կուսակցութեանց, Բարթուղիմէոսեան և հակաբարթուղիմէոսեան: Բուն եղելութիւնը առաջնորդին բերնէն լսելու համար պատրիարքարանը քանիցս հրաման ըրաւ որ անմիջապէս Պոլիս դայ և անձամբ տայ խնդրուած բացատրութիւնները. բայց Բարթուղիմէոս եպիսկոպոս անսաստեց և պատրիարքարանը վերջ՝ ի վերջոյ ստիպուեցաւ կառավարութեան աջակցու-

*) Յմբողջ քառորդ դար մը Բարթուղիմէոս եպիսկոպոս առաջնորդ եղած է Պրուսայու, և այս երկար ժամանակամիջոցին մէջ աշխատած չէ Պրուսայի Հայոց գոնէ նոր սերունդին հայերէն խօսիլ սորվեցունել վարժարանաց վիճակը արգահուածելի է. իր միակ դործը եղած է՝ հետզհետէ իրարու յաջորդող կուսականերուն հետ բաղադրական յարաբերութիւններ մշակելու:

թեամբ զինքը Պոլիս բերել տալ այն առեն միայն սրբազնը դղաց թէ աղքային իշխանութիւնը՝ լոկ բարոյական իշխանութիւն մը ըլլալէ աւելի էր, ուստի խոհեմութիւն համարեց զալ ներում խնդրել հազանդութիւն յայտնել և խոստանալ միանգամայն որ յետ այնորիկ աւելի պարտաճանաչ ըլլայ և պատրիարքական իշխանութեան հրահանգները կէտ առ կէտ դործաղրէ: Աղքային երեսփոխանական ժողովը այս չափով ըստ բաւականանալով՝ իւր կողմոնէ իւր լիազօր քննիչ Պրուսա ուղարկեց զՄատթէոս վարդապետ Իզմիրլեան և հանգուցեալ Քրիստոսութր Ղազարոսեան*: Իզմիրլեան Պրուսա հասնելով՝ իր ընկերոջ հետ սկսաւ Սահմանագրութիւնը գործադրել տեղւոյն վրայ. իւր համոզեց քարոզներով ամէն Ճիգ ՚ի գործ գրաւ Սահմանագրութեան սկզբունքները ժողովուրդին հասկանալի ընելու քիչ ատենուան մէջ յաջողեցաւ գաւառական երեսփոխանական ժողով կազմել, կրօնական ու քաղ. ժողովներ և ասոնց օժանդակ խորհուրդներ ընարել. կուսակցական կրքերը մարեցան և այլես ու ե վտանգ չէր սպառնար Բարթուղիմէոս եպիսկոպոսի վերադր. Իզմիրլեան և Ղազարոսեան իրենց գործը վերջացուցած համարելով կը վերադառնան Պոլիս. և պատրիարքարանը՝ հարկ եղած խորհուրդները տալէ յետոյ Պրուսայի առաջնորդին՝ կը ճամբէ զնա իւր վիճակը. ժողովուրդը խաղաղասիրական ցցցերով կրնդունի իւր հովիւր և ամէն ինզիր պահ մը վերջացած կը նկատուի. բայց Խալիլ անդին կը հօկէ և առաջնորդին վերագարձը լսուծին ոլէս խըստիւ հրահանգ կուտայ պատրիարքարանին որ անմիջապէս Պոլիս բերել տան զԲարթուղիմէոս եպիսկոպոս. պատրիարքարանը քանիցս պաշտօնապէս կը հազորդէ որ Պրուսայի

*) Ե.յս բազմաշխատ ծերունին ազգին ամենուն անվատ աշխատաւորներէն մին եղած է. ընդգիւմառիք կուսակցութեան կը պատկանէր. թէ այլէտ իր գաղափարաները միշտ ուղիղ ըւ լինէին՝ բայց անկետ համոզամի արդիւնք էին. օր չէ եղած որ ժողովը նիստերէն բացակայ գտնուի. ինքը երիտարդյն երեսփոխանն էր Ազգ. Ժադովոյ, իր մէծագոյն զործը պիտի մնայ գաւառացւոց համար հաստատած կիրակիօքեայ գասախօսութիւնները Ղալթթիոյ Ազգ. Ապրժարանին մէջ, դասախոսութիւններ՝ զորս անընդհատաբար շարունակած է երեսուն տարի:

մէջ կուսակցական ամէն ողի անհետացած է, թէ հոնկէ գեռ
նոր վերադարձող քննիչները դայս կը վկայեն և արդէն ժո-
ղովրդեան արդի հանդարառութիւնը մէծագոյն ապացոյցն է
այդմ, թէ վերջապէս Ազգ. իշխանութիւնը ինչպէս կրնաց
պատժել՝ նոյնպէս ալ գիտէ ներել իւր իրաւասութեան
տակ գտնուող եկեղեցականին են. Խալիլ այս տեսակ արա-
մաբանութիւն չէր հասկնար. ինքը չէր ուզեր, ել պրծաւ.
բայց անդին Կրօնական ու Քաղ. Ժողովները իրեն կը հա-
կառակէին, զի խնդիրը ոչ այնչափ Բարթուղիմէոս եպիսկո-
պոսի պէս եկեղեցական մը պաշտպանելուն՝ քան որչափ աղ-
դային առանձնաշնորհումները յարգել տալուն մէջ կը կայա-
նար: Խալիլ վերջին տնդամ մ'ալ կ'ազդարարէ որ, եթէ
մինչեւ 24 ժամ պատրիարքարանը իւր որոշումը չը տայ՝
ինքը զինու զօրութեամբ առաջնորդը Պոլիս բերել պիտի
տայ. այն ատեն Խառն Ժողովոյ (Կրօնական ու Քաղաքական)՝
կողմանէ պատրիարքարանի գործակատարը կը յզուի Խա-
լիլ փաշային որպէսզի մի երկու օր ևս սպասէ մինչեւ որ
պատրիարքը իր տկարութենէն ապաքինելով անձամբ զայ
տեսակցել այս մասին. բայց Խալիլ՝ գործակատարին ներկայ-
ութեանն խսկ կրչեռազրէ Պրուսայի կուսակալին, որպէսզի
առաջնորդը ոստիկան զինուորներու ուզեկցութեամբ Պոլիս
զրկին: Ահա համառօտիւ Պրուսայի խնդիրը. Կրօնական և
Քաղաքական Ժողովները անմիջապէս խառն նիստ կը կաղ-
մէն և անդ հրապարակաւ իրենց խորին գժգոհութիւնը
կը յայտնեն Խալիլի գէմ և զայդ կ'արձանագրեն Ժողովոյ
ատենագրութեանց մէջ. յետոյ՝ ի գիմաց աղդին՝ պատրիար-
քը կ'երթայ գանդաս բառնալ մէծ—եպարքոսին. քիչ ա-
տենէն Խալիլի և Պրուսայի կուսակալին պաշտօնանկու-
թեամբը Բարթուղիմէոս կը վերադառնայ իւր վիճակ:

Ասկէ վերջը կու գայ կաթուղիկոսական յարաբերու-
թեանց խնդիրը, որ ինքնին պատմական նշանակութիւն
ունի:

Տ. Մկրտիչ եպիսկոպոս, Ա. Էջմիածնայ ուխտէն, Կիլի-
կիոյ կաթողիկոս կ'ընտրուի և Ազգ. Ժողովը կը վաւերացնէ

նորա ընտրութիւնը, ասոր վրայ Տ. Գէորգ Դ. Հանգուցեալ կաթողիկոսը սաստիկ զայրանալով յանդիմանութեան զիր կը զրէ թէ պատրիարքին և թէ Երեսփոխանական ժողովին, յօ- րում կը յայտարարէ թէ Էջմիածնայ Ընդհանրական Աթոռէն օծուած Եկեղեցականի մը ինք չը կրնար ներել որ Կիլիկիոյ զահը բարձրանայ առանց իւր արտօնութեան և ասկէ զատ, Աղդ. Երեսփոխանական ժողովը իրաւունք և ձեռնհասու- թիւն չունէր այդպիսի ուխտագրուժ եպիսկոպոսի մը կա- թողիկոսական ընտարութիւնը վաւերացնելու։ Ինչպէս կը տեսնուի՝ ինդիրը ծանր կերպարանք մը առած էր, որուն զարման տանելու համար՝ Երեսփոխանական ժողովը իւր 1872 դեկտ 29 ի նստին մէջ՝ հարկ կը տեսնէ 12 հոգիէ բաղկացեալ յանձնախումբ մը ընտրել, որպէս զի ինդիրը լաւ մը ուսումնասիրելով ընդարձակ տեղեկադիր մը բերէ ժո- ղովին. Այն յանձնախումբին քուէից բացարձակ առաւելու- թեամբ անդամ՝ կ'ընտրուի նաև Մատթէոս վարդապետ Իղ- միրլեան։

Սոյն յանձնախումբ՝ իրարու յաջորդող վարչական ու պատրիարքական տաղնապներու պատճառաւ՝ կարող չըլսար կանոնաւոր նստեր կազմելով ժամանակին բերել իր տեղե- կադիրը և միայն 1874 ի վերջերը կ'աւարտէ իւր գործը. մէնք յետոյ այս տեղեկագրի մասին իւր տեղը կըխօսինք։

1872 ի վերջերը Մատթէոս վարդապետի հոգևոր ծնողը, Կապուտիկեան Յովհաննէս եպիսկոպոս, կը վախճանի և իրեն յաջորդ կը կարգուի Աղասեան Նիկողոս եպիսկոպոս, իբր քարողիչ Ա. Աստուածածնայ Եկեղեցւոյն Միջադիւղի։

1873 յունուար 29 ին, սոյն Միջագիւղի Եկեղեցւոյն մէջ՝ Իղմիրլեան Մատթէոս վարդապետ ծայրագոյն վարդա- պետութեան աստիճան կ'ստանայ Աղասեան սրբադանի ձե- ռամբ և քարողիչ կը կարգուի Ա. Կարապետ Եկեղեցւոյն իւսկիւտարի։

Իբր պերձաբան քարողիչ՝ մեծ համբաւ հանած է Իղ- միրլեան. Իւսկիւտարի Ա. Կարապետ թաղի ժողովուրդը շուտով համակրեցաւ իրեն. և կիրակի ու տօն օրերը եկե-

զեցին բաղմութեամբ կը խոնէր՝ պարզապէս լսելու համար համակրելի եկեղեցականին ներհուն քարոզութիւնները, որոնք իրենց աստուածաբանական բարձրութեան մէջ՝ ժողովրդական լեզուաւ արուած ըլլալու առաւելութեամբ կը փայլէին. միւնոյն համբաւը գեռ անաղարտ կը մնայ այսօր և Պոլսոյ զանազան թաղերը իրարու ձեռքէ կը խեն քաջաշմուա քարոզիչը՝ եթէ սակայն, Աշուեան պատրիարք բարեհածի ամեն ատեն շնորհել պէտք եղած արտօնութիւնը*...:

Այս ժամանակներ Սով. Երեսփոխանական ժողովոյ զլսաւոր զբաղումներէն մին ալ եղաւ Սահմանադրութեան վերաքննութիւնը՝ որուն առաջին ցանկացողը նոյն ինքն Խրիմեան հայրիկն էր: Նորին Սրբազնութիւնը՝ Սահմանադրութեան գծած սահմանը շատ անձուկ կը գտնէր պատրիարքական իշխանութեան համար: «Ուսքս ձեռքս կապած էք, կ'ըսէր, ես չեմ կարող այսպէս գործել. եթէ այս վիճակ շարունակէ՝ ես կը հեռանամ, իմ խիզճ զիս կը տանջէ այս անդործութեանս համար»:— Ուստի նոյն իսկ Սրբազն հայրիկի յաձախակի ստիպմանց վրայ՝ Երեսփոխանական ժողովը իւր 1873 մարտ 2 ի նստին մէջ՝ Սահմանադրութեան Վերաքննիչ Յանձնաժողով մը կը կազմէ՝ որուն անդամ՝ կ'ընտրուի նաև, միշտ քուէից բացարձակ առաւելութեամբ, Մատթէոս ծ. վ. Իղմիրլեան: Սոյն Յանձնաժողովին ևս, Կաթողիկոսական Քննիչ Յանձնաժողովով պէս, հազիւ կարող կ'ըլլայ իւր տեղեկադիրը 1874 ի վերջերը ներկայացնել. և այս՝ Ճիշտ նոյն արդելիչ պատճառներով:

Ասկէ ետքն է որ, Իղմիրլեան՝ Պալլըէսէրի գաւառական ժողովոյ կողմէ վիճակին առաջնորդ կ'ընտրուի և արդիւնքը կը տեղեկազրուի Աղդ. Վարչութեան որ գոհութեամբ կը վաւերացնէ զայն. միւնոյն ատեն կրօնական ժողովը կ'որոշէ Եպիսկոպոսական վկայագիր տալ Մատթէոս վարդապետին՝

*.) Հոս միջանկեալ կերպով ըստնք թէ: Եղիքը լեան սրբազն Աշուակի աշքին փուշն է. մինչև լսկ, Խւսկիւտարէն դուրս, ուրիշ մեկ թաղի մը համար խնդրուած քարոզի պարզ արտօնութիւնը կը մերժէ: Կոմա յաձախ՝ Ճիշտելի պատրուակներով:

Հետեւալ արձանագրութիւնը անցունելով իւր ատենագրութեանց մէջ — «Կրօնական ժողովս Պալքէսէրի վիճակին նորընտիր առաջնորդ Իզմիրլեան ծ. Մատթէոս ծ. վարդապետի՝ եկեղեցական և ազգային պաշտօններով՝ եկեղեցւոյ և ազգին մատուցած անձնուէր ծառայութեանցն՝ի վարձատրութիւն՝ որոշեց եպիսկոպոսական վկայական տալ իրեն, որոյ վարքն և արժանիքն իսկ կը պահանջէին»:

Պատրիարքական տագնապը, սակայն, վրայ հասաւ. և եթէ պալքէսէրցիք չը մոռւցան իրենց առաջնորդը՝ Իզմիրլեան ինքը հարկադրուեցաւ պահ մը զանոնք մոռնալ:

Ինչպէս բիչ մը առաջիշեցինք՝ պատրիարքը յաճախ կը զանգատէր թէ տիրող Սահմանագրութիւնը իւր գործելու աղատութիւնը կը կաշիանդէր. այս տեսութեամբ, երբեմն առանձին, առանց վարչական ժողովոց խորհուրդ հարցունելու, անօրինութիւններ կ'ընէր, որոնք այն ատենի սահմանագրական դրամագրութեանց կը բաղկին. ասկէ ծագեցաւ սկրզբունքի անհամաձայնութիւն մը վարչական ժողովոց ու պատրիարքին միջև. Հայրիկ կ'ըսէ — սահմանագրութեան ողին կը յարգեմ, բայց տառը՝ ոչ — իսկ ժողովները կը պատասխանէին — իրաւ է թէ արդի (այն ատենուան) Սահմանագրութիւնը իւր թերութիւններն ունի՝ բայց վարչական մեքենայն չը խանգարելու համար՝ պէտք է առ այժմ իւր առ իւր զործադրել տիրող օրէնքը՝ մինչև որ բարեփոխուելով աւելի կատարելագործուի. — ինչպէս կը տեսնուի՝ երկու կողմերն այնձնապէս բարեկամ էին իրարու և զիրար կը յարգէին. անհամաձայնութիւնը լոկ սկզբունքի անհամաձայնութիւն մ'էր. արդէն երկու կողմէն բաւական լեցուած էին՝ երբ Վանայ Պօղոս վարդապետի (այժմ եպիսկոպոս) խնդիրը եկաւ պայթեցնել զանոնք: Պատմենք զայն:

Պատրիարքական կրամանաւ, Վանայ առաջնորդ Պօղոս վարդապետ պաշտօնանկ կ'ըլլայ և Պայտապիտ կ'աքսորուի՝ առանց քննութեան և դատաստանի և առանց գիտութեան Կրօնական ու Քաղաքական ժողովոց: Յիշեալ վարդապետը Աղք. Վարչութեան կը դիմէ՝ խնդիրը եկաւ պայթեցնել զանոնք:

և իւր յանցանքը հաստատուելէ յետոյ իր պատիմը կրէ *:
Ազգային վարչութիւնը բանաւոր կը նկատէ սոյն խնդիրքը՝
սա հիման վրայ թէ աշխարհի ամենէն սոսկալի ոճրազործ-
ութերուն անգամ միջոց կը տրուի ինքզինքնին պաշտպանելու
և միայն օրինաւոր քննութեան մը բովէն անցնելէ յետոյ
կը գատապարտուին. իսկ հայրիկ՝ այնքան անկեղծօրէն հա-
մոզուած է Պողոս վարդապետի յանցապարտութեան և գար-
ձեալ, այնքան մօտէն կը ճանչնայ զանի՝ որ չուղեր հանդուր-
ժել անոր քննութեան ենթարկուելուն. մինչեւ իսկ այսպիսի
վարմունք մը՝ իւր հեղինակութիւնը և յայտարարութիւնը
կասկածի ենթարկել կը նկատէ և իր անձին նախատինք
կը համարի. այսպէս, անէւղջ հանողը-չը, որ թերեւս ամբողջ
Ճշմարտութիւնն իր մէջ ունի, մէկ կողմէն՝ և պէսական ար-
դարանը-նի-նը, որ սուրբ սկզբունքի մը կը ձգտի, միւս կող-
մէն՝ կ'ակսին խուլ պայքար մը մղել միմեանց դէմ. վարչու-
թեան ժողովոց մէջ, տարօրինակ զուդադիպութեամբ մը,
զիսւորաբար կրօնականին ու Քաղաքականին առնեադպիշնէն
են որ կը զինութին հայրիկի դէմ. եղմիրլեան և Ստեփան Փա-
փաղեան թէպէտ նկարազրի տեսակէտով իրարմէ շատ տար-
բեր՝ (զի Ս. Փափաղեան պմէն տաեն գաղափարի ախոյեանը
չէ եղած) Պողոս վարդապետի այս խնդրոյն մէջ իրարու հա-
մակարծիք կը գտնուին. երկուքն ալ խորապէս համոզուած
են Պողոս վարդապետի յանցապարտութեանն, երկուքն ալ
գուցէ կ'ատեն զնա, միւս կողմանէ երկուքին ալ պաշտելէ է
հայրիկին անձնաւորութիւնը. բայց սիրտերնին խոցուած,
այս մարզիկը կը կռուին համոզուամի, պարտանակութեան
համար և կ'աշխատեն խեղպէլ տարբեր ձայն մը, սիրազեղ
բարեկամութեան ձայնը՝ զոր ունին այնքան անձնուէր հո-
վուի մը, ժողովրդեան Ճշմարիտ հայրիկին նկատմամբ....:

Բարոյական այս կռիւը հայրիկին ալ կը յուղէ և հուսկ
ուրեմն 1873 օդոստոսի 31 Երեսփ. Ժողովոյ նստին մէջ՝ իւր
հրաժեշտի սրտաղեղ ողջոյնը կուտայ հաղուազիւտ ճառով

*) Ընթերցողը պէտք չէ մոռնայ թէ լուր այս տեղեկութիւնները պաշտօ-
նական հանգամանք կը կրեն:

մը որ ամբողջ խառնուրդ մ'է խանդաղատանքի, գորովի, պարագականութեան, Հայաստանի դառն վիճակի նկարագրութեան, և բողոքի. բողոք մը սակայն ոչ թէ վարչային ժողովոց դէմ որք իրեն հակառակեցան, այլ Սահմանադրութեան տրամադրութեանց գէմ՝ որ պարզութեանց վրայ՝ իրեն հակառակել. այս աննման ձառէն յետոյ՝ Հայրիկ ժողովատեղէն մեկնեցաւ՝ խորին սրտայուղութեան մէջ թողլով երեսփոխանութիւնը և ունինդիր ժողովուրդը. դիւցաղնական բան մը կար երկուքին վրայ ալ (Պատրիարքին ու Վարչութեան) որ շատ ատենէ ՚ի վեր մեր պաշտօնէութենէն հրաժեշտ առած է և հիմա լոկ՝ հին բարի ժամանակները կը յիշեցնէ մեզ Միեւնայն նստին հրաժարական տուաւ նաև Սենեքերիմ էֆէնտի Մանուկեանի ատենապետութեան տակ գտնուող Քաղաքական ժողովը. իսկ Կրօնական ժողովը հարկը տեսաւ հրաժարելու և անվտանգ շարունակեց իւր պաշտօնը. Ասոր վրայ, երեսփոխանական ժողովը խնդիրը նար-Պէյ սրբազնի նախագահութեամբ յանձնախումբի մը քննութեան յանձնելէ և անոր անաշառ տեղեկագիրը լսելէ յետոյ փորձեց թէ՛ Քաղ. ժողովոց և թէ՛ Սրբազն Հայրիկի հրաժարականները ընդունել. Քաղ. ժողովը պնդեց, իսկ Հայրիկ միայն այն պայմանաւ հաճեցաւ ընդունել որ Սահմանադրութեան՝ Պատրիարքի իրաւասութեանց վերաբերեալ մասը ըստ կարելոյն շուտով բարեփոխուի. Երեսփոխանական ժողովը հաւանութիւն յայտնեց. սակայն յետոյ Հայրիկ, չգիտենք ի՞նչ զօրաւոր պատճառներով հարկազրուեցաւ իւր հրաժարականը անդառնալի կերպով կրկնել Բարձրագոյն Դրան մօտ և 1873 հոկտեմբեր 2-ին Խրիմեան ոչ ևս պատրիարք էր:

1874 ապրիլ 26-ին, Ներսէս եպիսկոպոս Վարժապետեան պատրիարք կընտրուի Թուրքիոյ Հայոց՝ Երեսփոխանական ժողովոց միահանուր քուէովը: Ժողովոյ այն ատենուան Ատենապետն էր Տատեան Յարութիւն էֆէնտին*:

*.) Տատեան Յարութիւն էֆէնտին՝ այժմ վէզ իրութեան (ամենաբարձր) աստիճանաւ փաշա է և կը վարէ Երապետն Դործոց Նախարարութեան Խորհրդականի դժուարին պաշտօնը՝ մեծ իմաստութեամբ և վարչական փայլուն ձեռնհասութեամբ:

Մինչև նոյն տարւոյ նշյեմբերի ամիսը՝ Երեսփոխանական ժողովը զբաղեցաւ ընթացիկ գործերով ինչպէս օրինակ, թէ՛ Պոլսի և թէ՛ գաւառաց սահմանադրական ժողովներու վերակազմութեամբ, դիւանաց ընտրութեամբ և այլն*:

1874 նոյեմբեր 8-ի նստին՝ թէ՛ սահմանադրական վերաքննիչ յանձնաժողովը և թէ՛ կաթողիկոսական քննիչ յանձնախումբը իրենց տեղեկագիրները բերին. ժողովը սակայն զանոնք նկատողութեան առնելէ յառաջ՝ կը յդէ նախաքննիչ դիւաններուն՝ որոց միջն տտենապետն էր նոյն իսկ Մատթէոս ծ. վ. Իզմիրլեան՝ որպէս զի խնդիրը հոն լաւ սր ուսումնասիրելէ յետոյ՝ վերստին ներկայացուի ժողովին:

Մասնաւոր շահեկանութիւն ունի, սակայն, նոյն տարւոյ գեկտ. 6-ի նիստը՝ յորում նախաքննիչ գիւանաց կողմանէ ընդհանուր տեղեկաբեր Մատթէոս ծ. վ. Իզմիրլեան՝ Աղթամարայ կաթողիկոսական խնդրոյն առթիւ եկեղեցական համագումար ժողովոյ տուած վճիռներուն քննութեան ամփոփ մանրամասնութիւնը կը ներկայացնէ ժողովոյն:

Սյս մասին ընթերցողները լուսաւորելու համար՝ երկու բառով պատմենք Աղթամարայ կաթողիկոսական խնդիրը՝ որ շատ տարիներ մոքերը զբաղեցուցած է:

Հանգուցեալ Պետրոս կաթողիկոսի կենդանութեան ժամանակ՝ նորա պաշտօնանկութենէն յետոյ՝ Խաչատուր եպիս-

* Նորին վսեմութիւն ազգասէք և չափազանց ջերմեռանդ անձնաւորութիւն մ'է. հակառակ իւր պաշտօնական բարձր դիրքին՝ խոնարհութեան և հեղահամբոյր բնաւորութեան տիպար կը հանդիսանայ. իւր բնակութիւնը Պէշիքթաշ հաստատած ըլլալով ամէն առաւաօտ անվրէպ կը հանդիպի անդւոյն Ա. Աստուածածնայ եկեղեցին՝ ուր ժամերով կ'աղօթէ՛ հաւատքի ներքին համոզմամբ. անձնուէր ծառայող մ'է իւր Աստուածոյն, իւր հասարակութեան և իւր պաշտօնին: Դժբաղդաբար շատ տարիներէ ՚իվիր նորին վսեմութիւն, անպատեհ կասկածներու տեղի չտալու համար՝ խոհմութիւն համարած է ազգային ամէն պաշտօններէ մեկուսանալ, թէպէտ միշտ՝ քրիստոնէական նոյն բարձր ու աղնիւ ոգիէն կ'առաջնորդուի:

*) Հոս պէտք է յիշել թէ երջանակայիշատակ պատրիարքը իւր աժոռու բարձրացածին պէտ՝ իրեն առաջին պարտականութիւն համարեց գաւառաց բոլոր կուսակալներուն իւր ընտրութիւնը շրջաբերականաւ մը ծանուցանել՝ յանձնարարելով նոցա, ինչպէս իրենց պարտքն էր, խեղճ՝ հայ ժողովուրդի արդար իրաւունքները պաշոպանել և կարեւոր խնդրոց առթիւ ուղղակի թղթակցիւ իրեն հետ. բան մը՝ որ իւր տեսակին մէջ եղական է և զոր իչ մէկ պատրիարք խորհած ու գործադրած է:

կոպոս՝ Աղթամարի եկեղեցականաց և թեմականաց կողմանէ կաթողիկոս կ'ընտրուի և կ'օծուի նոյն վիճակին. Պոլսի եկեղեցական համագումար ժողովը՝ հիմուելով կաթողիկոսին (Խաչատրուրին) վրայօք շրջած այլ ընդ այլոյ լրացներուն վրայ՝ որոնք սակայն ստուգութեան կը կարօտէին՝ և նկատելով միանգամայն թէ Խաչատրուր եպիսկոպոս՝ Պետրոս կաթողիկոսի կենդանութեանը կաթողիկոսական գահը բարձրացած է չեղեալ կը համարի անոր ընտրութիւնը և ըստ այնմ վճիռ կ'արձակէ, որուն դէմ թէ վիճակայինք և թէ Խաչատրուր կաթողիկոս խստիւ կը բողոքեն ու արդար քննութիւն կը պահանջեն, ասոր վրայ համագումար ժողովը վերըստին՝ ի նիստ գումարելով խնդիրը աւելի լրջօրէն նկատողութեան կ'առնէ, անոր յարակից պարագայները մանրամասնորէն կը քննէ և չը կարենալով Խաչատրուր կաթողիկոսի վրայ յանցանք մը վաւերացնել՝ ետ կ'առնէ իւր հապճեպով տուած վճիռը և նոր վճուով մը՝ կը հաստատէ զկաթողիկոսն իւր պաշտօնին մէջ: Աշա եկեղեցական համագումար ժողովը սոյն երկու տարբեր վճիռներն էին որ նախաքննիչ գիւանաց յղուած էին՝ ուսումնասիրուելու համար, և որոց տեղեկագիրը կը բերէր իզմիրլեան: Տեղեկաղիրը՝ համագումար ժողովյ՝ ձեակերպութեանց տեսակէտով թերութիւններ զործած ըլլալը ընդունելով հանդերձ՝ կը յայտարարէր թէ երկրորդ վճիռը արդարացի և օրինաւոր էր և առաջնոյն սխալը պատշաճապէս կը դարմանէր:

Ասոր վրայ խնդիրը վիճաբանութեան կը դրուի և առաջին խօսքը կ'առնէ Համբարձում իփէքճիւն*:

*) Այս անունին պէտք է որ ռուսահայք ծանօթանան, զ ի թուրքահայոց միակ կարող մանկավարժը եղած է ԽիեքՃեան. Եթէ կանխահաս մահը զ ինքը մեզմէ չը խլէր՝ մեր գործոցներ շատ պիտի օգտուեին իրմէ: Երեսփոխանական ժողովը մէջ՝ կրնաց ըսուիւ թէ ինք որոշապէս ոչ մէկ կուսակցութեան կը պատկանէր, եթէ երբէք ռամկավարութիւնը իբր—ուրիշն կուսակցութիւն գոյութիւն ունենար մեր մէջ՝ ինքը ապահովագես անոր պիտը պիտի նկատուէր, իր առենաբանութեանց մէջ՝ այնպէս մը գիտէր ժողովրդին տկար կողմերը գգուել որ գրեթէ միշտ ունկնդրաց հասարակաց կարծիքը իր կողմը կը դարձնէր. գրեթէ միակ երեսփոխան է՝ որուն ճառափօսութիւնը ունկնդիր ժողովրդեան կողմէ յաճախ կ'ընդիշուէին ծափահարութեամբ:

Իփէքձեան՝ իւր քննադատելու սովորական ռճովը՝ հակասութիւներ կը գտնէ համագումար եկեղեցական ժողովոյ առած երկու ներշակ վճիռներուն մէջ։ Աթոռոյ մը կաթողիկոսին կենդանութեանը ուրիշ եկեղեցականի մը նոյն Աթոռին վրայ բազմիլը ապօրինաւոր, վերջապէս եկեղեցական ժողովոյ կողմէն այս մասին որոշում մը տրուելէն յետոյ՝ նոյն ժողովոյն իւր նախորդ որոշում վոխելը՝ կարի տարօրինակ կը թուի իրեն։

Ասոր պատասխանելու համար անմիջապէս խօսք կ'առնէ իզմիրեան և կ'սկսի երկար ատենաբանութիւն մը՝ որ իւր դլուխ գործոցը պիտի մնայ Ազգ. Ժողովոյ տարեգրութեանց մէջ. կը ցաւինք որ տեղւոյն անձկութեան պատճառով չենք կարող զայն ներկայացնել «Արաքսի» ընթերցողաց. կը բաւէ ըսել թէ այս ձառ մէկէն 'ի մէկ 'ի վեր կը հանէ Մատթէոս վարդապետի՝ եկեղեցական պատմութեան մէջ ունեցած խորին հմտութիւնը՝ որ ցայն վայր դուցէ բազմաց անծանօթ էր. նախ պատմական փաստերով կը ջրէ այն կարծիքը թէ երբ կաթողիկոս մը կենդանի է՝ ուրիշ մը չէ կարող անոր տեղը բազմիլ. և այս փաստերը կը համեմուին դարեր առաջ տեղի ունեցած դէպքերու մանրամասնութեամբ՝ որոց տեղուանքը, թուականները Մատթէոս վարդապետ կը ձշտէ այնպիսի մաթեմաթիքական դասակարգութեամբ՝ որ սուր յիշողութեան և կորովի մտքի զօրաւոր նշաններ 'ի յայտ կը բերէր. յետոյ ընդդիմախօսին քննադատութեան երկրորդ կէտին պատասխանելով՝ կը բացատրէ թէ ինչու երկու տարբեր որոշումները ոչ հակասական և ոչ ալ տարօրինակ են. այս երկրորդ մասին պատասխանելու համար՝ իզմիրեան իւր ամբողջ տրամաբանական ձարտարութիւնները օգնութեան կը կանչէ և իրը վերջին ջախջախիչ փաստ՝ միառմի կը թուէ՝ դէպքերու ու թուականներու մանրամասնութեամբ՝ բոլոր այն պարագաները՝ որոց մէջ նոյն ինքն այն երեսփոխանական ժողովը որուն իփէքձեան կ'անդամակցէր՝ հարկ տեսած է վոխել իր նախկին որոշումները՝ առանց սակայն հակասութեան մէջ իյնալու. «Մեր

Ժողովները անսխալ չեն, կ' բաէ, միայն հռովմայ պատն է որ այդ յաւահնութիւնը ունի. երբ մարդ կը տեսնէ թէ իր նախորդ մէկ կարծիքը սխալ հիման վրայ հաստատուած է՝ յանցաւոր կըլլայ միթէ զայն ուղղելով։—Երբ ճառը կ' աւարտի՝ Խուսինեան * սրտայոյզ կ' աղաղակէ—Ապրի՛ Մատթէոս վարդապետ.—շատ մը երեսփոխանք իրեն կը ձայնակցին և Ատենապետ Տատեան Յարութիւն էֆէնտին իր անկեղծ գոհ հունակութիւնը կը յայտնէ նմա։ Այս ատենաբանութենէն յետոյ այլևս հարկ չը տեսնուիր վիճաբանութեան շարունակուելուն և նախաքննիչ դիւնաց տեղեկագիրը նոյնութեամբ ընդունուելով՝ խնդիրը լուծուած կը նկատուի։

Չը մոռանանք յիշել թէ այն կրօնական ժողովը, որուատենադպիրն էր Իզմիրեան, իր երկամեայ պաշտօնավարութեան շրջանը աւարտած ըլլալով 1874 յունիս 17 ին իւր հրաժարականը մատոյց և նոյն տարուց նշյեմբեր 25-ին, երեսփոխանական ժողովին ներկայեց իւր գործառնութեանց ընդարձակ տեղեկագիրը. բան մը զոր, սահմանադրութեան հտստատուելէն ՚ի վեր, ոչ մէկ կրօնական ժողով ըրած էր։

Սոյն կրօնական ժողովը, հակառակ իւր պաշտօնավարութեան միջոցին կրած վարչական ծանր առաջնապներուն՝ ժամանակ գտած է մինչեւ այն ատեն չը խորհուած նորութիւններով զբաղուելու. ՚ի մէջ այլոց հոս յիշենք 1) Քրիստոնէական վարդապետութեան գասաւանդութեան համար պատշաճաւոր դասագրքեր յօրինելու և այդ ուսումը կարող դա-

* Հանդացեալ Տօքթօռ Խուսինեան հռչակաւոր գործիչ մը եղած է մեր աղքանիկ Կեսարացի՝ իւր ուսումը կատարելագործած է Բարիգի քժշկական համալսարանին մէջ ու թէ վերադարձին փոխանակ իւր արհեստը շահագործելու. ինքը զինքը անձնուարցութեամբ կը նուիրէ ազգին գործերուն; Օտեանի, Աղաթօնի և ուսուրիշներու հետ՝ հիմնադիրներէն մին է Ազգ. Սահմանադրութեան. ՚ի Պրանսա, իւր ըստացած բժշկական հմտութեան հետ զուգընթացարար ուսումնասիրեց այն երկրն բարոյական, անտեսական և ընկերական պատմութիւնը. իւր ամբողջ կեանքը անցուց ազգային գործերով; Ուսումնեան գրագէտ ալ էր, ունի բազմաթիւ ձեռագրեր որոնց մեծագոյն մասը դժբաղդաբար կորսուած է, աշխարհաբարի քերականութիւն մ'ալ ունի, իրեն յասուկ մէթոսով, որ սակայն ընդունելութիւն չը կատա. Բժիշկ ըլլալուն հակառակ Խուսինեան աղքատութեան մէջ մեռաւ և նորա այրին ստիպուեցաւ անոր ճոի գրադարանը ծախել ապրուատի միջոց ընելու համար։

սատուաց յանձնելու խնդիրը. 2) Եկեղեցեաց բարեկարգութեան և եկեղեցականաց ապօրինաւոր վարմանց քննութեան համար երկու անգամ մասնաժողով կազմած է, սակայն վարչական տագնասակներ՝ իւր բարի կամեցողութիւնը անհետեանք թողած են. 3) Նկատողութեան առած է արժանաւոր եկեղեցականներ պատրաստելու աւագ խնդիրը և որովհետեւ միջոցները չեն ներեր եկեղեցական բարձրագոյն ուսութեարան մը հաստատել՝ որոշած է վանքերու մեջ ըստ կարելւոյն լաւ կրթութիւն մը տալ ընծայացուներուն համար. այս նպատակաւ վանօրէից նոր ծրագիր մը յօրինած և գործադրութեան դրած է, ասոնցմէ զատ զբաղուած է եկեղեցականաց հանգստեան թոշակի և այլ ասոնց նման կարեւոր խնդիրներով:

Ազգային ժողովը 1874 գեկտ. 20-ի նստին՝ նախաքննիչ Դիւանք իրենց աեղեկագիրը կը բերեն՝ 'ի մասին կաթողիկոսական յարաբերութեանց քննիչ յանձնաժողովը տեղեկագրին: Սյն յանձնաժողովը աեղեկագրած էր ասկէ առաջ թէ, Վեհափառ Հայրապետը սխալ ըմբռնած էր՝ Սայ կաթողիկոսի վաւերացման մեջ Ազգ. ժողովը ոգին. թէ սոյն ժողովը ընտրութիւնը վաւերացնելով՝ նորին Վեհափառութեան Հայրապետական անժխտաելի իրաւունքները բռնաբարելու բնաւ միտում ունեցած չէ. բայց քանի որ Վեհափառ Հայրապետը այս խնդրոյ մասին կասկածներով պաշարուած է՝ բանաւոր էր, ինչպէս և ի՞նքը կ'առաջարկէր իւր կօնդակաւ՝ երկու պատգամաւոր զբկել՝ 'ի Ս. Էջմիածին՝ որպէսզի պէտք եղած բերանացի բացատրութիւնները հաղորդեն նորին Վեհափառութեան:— Նախաքննիչ Դիւանք սոյն տեղեկագիրը քննութեան առնելով՝ իրենք ևս կատարելապէս համակարծիք էին անոր առաջին մասին. իսկ պատգամաւոր զբկելու խնդրոյն գալով՝ իրենք աւելի կ'առաջարկէին թէ, քանի որ ծանօթ կոնդակէն՝ 'ի վեր բաւական ժամանակ անցած էր, ժողովը առ այժմ պատգամաւոր չը զբկէ, այլ Հայրապետական կօնդակին պատասխանը տալով՝ իւր բռնած ընթացքին բացատրութիւնները հաղորդէ. յետ որոյ՝ եթէ Վեհ. Հայրապետը

դարձեալ պնդէ պատկամաւոր ընտրելու խնդրոյն վրայ՝ այն
ատեն ժողովը պէտք եղածը խորհի:

Նախաքննիչ զիւանաց սոյն տեղեկագիրը վեճաբանու-
թեան կ'ենթարկուի, որուն երկրորդ մասին գէմ կը խօսի
իփէքչեան՝ սոյն առթիւ խստիւ քննադատելով Գէորգ Դ-ի
ընթացքը:

Իսկ Մատթէոս վարդապետ կը պատասխանէ նորէն Հըռ-
չակաւոր ատենաբանութեամբ մը, յորում կաթողիկոսի և
Աղք. Փողովոյ բոնած ընթացքը կատարելապէս կ'արդարացը-
նէ՝ զործին ամէն պատասխանատութիւնը այն ատենուան
Քաղ. Փողովին բեռցնելով այդ Քաղ. Փողովոյ անդամներէն
ներկայներ կային հօն այն պահուն, բայց անոնցմէ և ոչ մին
պատասխան մը կը գանէ Մատթէոս վարդապետին. զի ինչ-
պէս Խզմիրլեան կ'ըսէր՝ Աղք. Փողովը Ճանաչելով Ընդհանրա-
կան Հայրապետի իրաւունքները՝ Սոյց կաթողիկոսին ընտ-
րութիւնը վաւերացնելէն տարի մը առաջ յատուկ յանձնա-
խումբ մը կաղմած էր՝ կախեալ աժոռոց՝ ընդհանրական ա-
թոռին հետ ունեցած յարաբերութիւններն ճշգելու համար.
բայց սա՝ ամբողջ տարի մը անգործ անցուցած էր. և Քաղ.
Փողովը՝ որ միակ գործադիր իշխանութիւնն էր (զի այն ա-
տեն կրօն. Փողով ընտրուած չէր) բնաւ չէր հետամտած այդ
յանձնախումբը՝ ի գործ հրաւիրելու. այլ միայն, Սոյց ընտ-
րութիւնը կատարուելէն յետոյ, վատահացնելով զԱղք. Փո-
ղովն թէ Սոյց կաթողիկոսը խոստմնագիր տուած է Ընդհ.
կաթողիկոսի հետ իւր ունենալիք յարաբերութեանց մասին
Աղք. Փողովոյ բոլոր որոշումներն յարգելու, միանդամյն
ծանրանալով ազգային այն մեծ աղէաներուն վրայ որոնք
շատ մօտիկ կը տեսնուեին, եթէ Մկրտիչ Եպիսկոպոսի ընտ-
րութիւնը չը վաւերացուեր՝ ծանրանալով, կ'ըսէնք, բոլոր
այս պարագաներուն վրայ՝ Քաղ. Փողովը ստիպողաբար խընդ-
րած էր Աղք. Փողովէն որ անյապաղ վաւերացումը կատա-
րուի. և այս վերջինը վատահացնելով Քաղ. Փողովոյ յայտարա-
բութեանց՝ վաւերացուցած էր կատարուած ընտրութիւնը.
բայց յետոյ, ի՞նչ կը տեսնուի. խոստմնագիր ըսուածը՝ յաւակ-

նութեանց շարք մ' էր լոկ և կ' ուզէր իրեն սեպհականել ընդհանրական հայրապետին իրաւունքները. Մատթէոս վարդապետ այսպէս փաստաբանելով ուղղակի պատասխանատուութիւնը այն ատենի Քաղ. Ժողովին (որու տահնապետն էր Եռասութեան Տիգրան Էֆէնտի*) վրայ Տանրացնելէ յետոյ, կ' առաջարկէր նախաքննիչ դիւանաց տեղեկագիրը ընդունիլ:

Հոս յիշենք թէ, երբ իիկէքեան, իւր ճառին մէջ ակնարկութիւններ կ' ընէ Գէորգ Դ-ի յանդիմանական կոնդակին՝ Նար-Պէյ սրբազնն չուզելով հանդուրժել կաթողիկոսին ուղղութեան դէմ եղած քննադատութեան՝ կը փորձէ ժողովատեղիէն մեկնել կարգ մը եկեղեցականաց հետ, բայց յետոյ՝ Ներսէս պատրիարքի հրամանաւ իւր աթոռը կը բազմի. Նոյն պահուն Իզմիրլեան յոտին կանգնած կը զոչք—իսկ մենք փոխանակ ժողովատեղիէն մեկնելու՝ հոս կը հանեն և մեր իրա-ու-նունելը իը պաշտպանենու: Ասկէ ետքն է, որ իւր վերոյիշեալ ատենախօսութիւնը կընէ:

Իզմիրլեանի ատենախօսութենէն յետոյ՝ ժողովը չուզեր այլևս ուրիշ խօսող մտիկ ընել և նորա առաջարկը կ' ընդունի երկուքի դէմ միաձայնութեամբ:

Ասկէ ետքը նախաքննիչ դիւանաք իրենց զրաւոր կարծիքը կը հաղորդեն ժողովին՝ 'ի մասին Սահմանադրութեան Վերաբննիչ Յանձնաժողովոյ տեղեկագրին, որուն գործոն անդամներէն մին էր ինչպէս կը յիշուի, Իզմիրլեան: Յանձնաժողովոյ աշխատութիւնը խղճմտաւոր գործ մ' էր՝ ամիսներու մանրակրկիտ քննութեան արգիւնք, որ Ազգ. ժողովոյ զանազան կուսակցութեանց մէջ մեծ աղմուկ հանեց. այս տեսակ աշխատութիւն մը, որ Սահմանադրութեան ինչ ինչ կէտերուն վրայ կենսափան բարեփոխումներ կ' առաջարկէր՝ 'ի հարկէ չէր կարող հարեանցի քննութեամբ ընդունուիլ.

*) Եռասութեան Տիգրան Էֆէնտին յանախ վարած է ազդային կարևոր պաշտօնաներ. Ազգ. ժողովոյ մէջ՝ իրաւամբ առաջնակարգ ատենախօսի համբաւ կը վայելէր. բայց ինքը որոշ սկզբունքի մարդ չէր և իւր դիրքն ալ մինչև մէկ աստիճան այսպէս կը պահանջէր. Կառավարական պաշտօնեաց է Եռասութեան. և ամենէն աւելի իրեն կը յարմարի Աւետարանի սա խօսքը թէ «Ո՛չ կարեք երկուց տերանց ծառայիլ»:

ուստի անընդհատաբար զրեթէ երկու տարի ժողովոյ օրակարգին մէջ մնաց՝ տեղի տալով բուռն և կրքոտ վիճաբանութեանց և յօդուած առ յօդուած քննուելով ուսումնասիրուելով, լուսաբանուելով՝ երբեմն նոյնութեամբ, երբեմն ինչ ինչ փոփոխմամբք և յաւելմամբք վերջապէս ընդունուեցաւ:—

Իզմիրեան երբ մէկ կողմանէ հոգով մարմնով երեսփոխանական ծանր աշխատութեանց մէջ մղուած էր՝ միւս կողմանէ պալըքէսէրցիք նամակ նամակի վրայ կը տեղացնէին՝ ի պատրիարքարան՝ ստիպողաբար խնդրելով իրենց առաջնորդին փութացումը. բայց ըստ որում մինչեւ այն ժամանակ Պալըքէսէրի առաջնորդները եպիսկոպոսներ էին՝ պալըքէսէրցիք կը խնդրէին, թէ քանի որ արդէն իրենց նորընտիր առաջնորդը եպիսկոպոսական վկայագիր ունի նախորդ Խառն Ժողովէն թող արդի կրօնական և Քաղաքական ժողովներն ևս զայդ հաստատեն ու վաւերացնեն և Մատթէոս վարդապետ՝ նախ եպիսկոպոս ձեռնադրուելէ յետոյ՝ գայ անցնիլ իւր նոր պաշտօնին վլուկար¹⁾: Ներսէս պատրիարք հարկ կը տեսնէ պալըքէսէրցոց այս խնդիրը վարչական ժողովոց սեղանին վրայ գնել. խնդիրը բաւական կ'երկարի և խառն ժողովոյ մէկ նիստին՝ Վարչութեան այս ատենի (ինչպէս հիմակու) ատենապետ Սիմօն-պէյ²⁾՝ ի նիստ կը հրա-

1) Այս օրինակ ինդիր մ'ալ ծագեցաւ ասկէ քանի մը տարի առաջ Կարնոյ մէջ, երբ նախկին պատր փոխանորդ Գէորգ Տ. վ. Խեթուանեան (այժմ առաջնորդ Եղիպատրի) առաջնորդ ընտրուեցաւ Կարնոյ՝ կարնեցիք պահանջնեցին որ իրենց առաջնորդը նախ եպիսկոպոսանոյ և յետոյ գայ. այս բանիս համար բաւական յուզում տեղի ունեցաւ. նոյն կարծիքին ջատագով էին նաև, եթէ չեմ սիսալիր, Եղիպատրի ազգայինը:

2) Մաքսուս Սիմօն Պէյ սերած է ակնցի ամբայական հին գերդաստանէ: Բոռ լոր ակնեցի մեծահարսւսս ամբայներուն մէջ միայն այս ազգատոհմն է, որ կրցած է իւր հարսուութիւնը պահպանիլ այժմ իւր եղեօր՝ Սեպուհ պէյի հետ՝ սեղանաւորական կարեւոր տան մը պետն է: Սիմօն Պէյ պ ա լ ա յ ի (աւագ վեզիրութենէն միայն մէկ աստիճան վար) աստիճան ունի: Գրեթէ միշտ մասնակցած է ազգային գործոց. շատ անգամներ վարած է Քաղը ժողովոց Ասենապետի պաշտօնը, ինչպէս հիմա ալ կը վարէ. որոշ սկզբունքի տէր մարդ չէ. իւր վրայ աղէկ բան մը չէ լոււած. ընդհանուրապէս կը կարծիք որ կցը գործիք մ'է Բ. Դրան ձեռքը. այս կարծիք ստուգութեան փոխուեցաւ մասնաւանդ վերջին տարիներս, երբ, իւր պաշտօնավարութեան օրով ազգային սյնքան կարեւոր առանձնաշնորհմանց լոնաբարումը անտարբեր առօք դիտեց:

ւիրէ զՄատթէոս վլ Էզմիրլեան և պաշտօնապէս կը յայտարարէ նմա. «Հայր սուրբ, մենք ամենքս ալ զիտենք որ ՚Թուք արժանաւութիւն ունիք, զիտենք որ պալքէսէցիք՝ դաւառացիք իրենց ծանօթ յամառութեամբ՝ չպիտի ուղեն զՁեղ ընդունիլ առանց Ձեր եպիսկոպոսանալուն, զիտենք որ նախորդ Կրօնական ժողովն արգէն եպիսկոպոսական վկայագիր տուած է Ձեղ և մենք ամենքս կը փափագինք Ձեր բարձրանալուն, բայց զիտէք որ մեզի դէմ հակառակորդներ ունինք, որոնք կը ընդդիմանան Ձեր եպիսկոպոսութեան և Հետեւաբար կը զւանան Ձեղ շնորհուելիք յանձնարարագիրը և ահա գործին արգելք եղողները» ըսելով մի առ մի ցոյց կուտայ Կրօնական ժողովոյ բոլոր ներկայ անդամները: — Իշմիրլեան զիտէր զայդ, արդարև այն ատեն, ինչպէս հիմա, եկեղեցականաց մեծագոյն մասը իրեն դէմ էր, զի չէր ուղած իրենց գործիք ըլլալ, զերենք շոյել, շողոքորթել, ուղղութենէ շեղել. միւնցն ատեն իւր իմաստութեամբ, ձեռնհասութեամբ և անաշառութեամբ ընդհանուրին յարդանքը՝ և ազգային ամէն գործոց մէջ մէծ հեղինակութիւն կը վայելէր. այս բան՝ կը կատղեցնէր միւս եկեղեցականները և ահա թէ ինչու հիմա արգելք կը ըլլային իւր եպիսկոպոսանալուն. առիթը իրենց ձեռքն էր, պէտք էր զայն շահագործել: ինչպէս ըսինք, իշմիրլեան զիտէր զայդ, բայց Վարչութեան ատենապետին պաշտօնական յայտարարութիւնը եկաւ շեշտակի իւր սիրտն յուղել և արգահատալից պժգանք զգաց այդ պահուն այն մարդոց դէմ՝ որոնք Քրիստոսի իբր Ճշմարիտ հետեւող՝ փոխանակ չար զգացումները արմատախիլ ընելու իրենց սրտէն՝ ինչպէս նուիրական պարտքերնին էր՝ նախանձու թոյնով կայրէին իրեն անձին նկատմամբ — Պէջ, գոռաց իշմիրլեան, երկու վայրկեան շնորհ ըրէք համբերել որ պատասխանն բերեմ Ձեղ — Եւ գուրս ել նելով ժողովատեղիէն անմիջապէս կը պատրաստէ իւր հրաժարագիրը յառաջնորդութենէ Պալքէսէրի և նախորդ Կրօնական ժողովոյ տուած եպիսկոպոսական վկայագրին հետ միասին՝ կը յանձնէ Սիմօն պէջին: Խառն ժողովն իրար կը-

անցնի և նախագահն, Ներսէս սրբազնն, շատ կ'աշխատի համողել զնա որ հրաժարականն ետ առնէ, ապահովնելով որ յարուցուած ամէն դժուարութիւն՝ ինքը, պատրիարքը պիտի հարթէր. և սակայն Մատթէոս վարդապետ անդրդուելի կը մնայ:

Թէպէտ Նար-Պէյ սրբազնի ատենապետութեամբ Կրօնական Ժողովը ըռւղեր իւր նախորդին տուած եպիսկոպոսական վկայագիրը հաստատել՝ սակայն 1876-ի սկիզբները հանդուցեալ Գէորգ Դ. կաթողիկոս՝ Մատթէոս վարդապետն ինքնաբերաբար իրեն կը կոչէ՝ զանի եպիսկոպոսացնելու։ Հայրապետական հրաւերին հնազանդելով Եղմիշեան ապրիլ 9-ին Պոլսէն ձանբայ կ'ելնէ Ս. Էջմիածին ուղևորելու։ Մինչև իւր մեկնման պահուն՝ Կրօնական Ժողովը չէր հաճած մինչև իսկ պարզ յանձնարարագիր մը տալ նմա. բայց յետոյ, երջանկայիշատակ պատրիարքը՝ իւր կողմանէ Մատթէոս վարդապետին համար յոյժ պատուարեր յանձնարարագիր մը կը պատրաստէ՝ զոր հեւ 'ի հեւ շողենաւ կը հասցնէ Մկրտիչ Մելիքեան *

Մատթէոս վարդապետ ս. Էջմիածին հասնելով, 1876 մայիս 13-ին, Համբարձման տօնին օրը եպիսկոպոս ձեռնադրուեցաւ՝ իբր միաբան ս. Էջմիածնի և նշյն ամսոյ 28-ին Պոլիս վերագրածաւ։ Արդէն, 1875-ի հոկտեմբերին՝ հանդուցեալ կաթողիկոսը խաչ մը շնորհած էր իրեն. իւր ձեռնադրութեան առթիւ ալ եպիսկոպոսական պնակէ տուաւ նմա։ Մատթէոս սրբազնն այնքան կարծ միջոցի մը համար Պոլսէն բացակայ եղած էր որ հարկ չէր տեսնուած իւր քարոզչական և երեսփոխանական բազմաթիւ պաշտօններն իրմէ առնուլ ուստի Պոլիս վերագրածածին պէս՝ անմիջապէս իւր գործոյ գլուխը անցաւ վերստին։

1876-ի վերջերը թուրքօ-ռուս պատերազմը կը ծագի և այս ժամանակէս կ'սկսի Ազգ. Երեսփոխանական Ժողովոյ ա-

* Մկրտիչ Մելիքեան այն ատեն ատենապետին էր Ազգ. Ժողովոյ. պաշտօն մը զոր յաճախ վարած է Հռու. Տնօրէն-խմբագիրն էր ժամանակաւ «Հայրենիք» լրագրի. այժմ՝ Գում-Գարուի Մայր Վարժարանին տնօրէնն է։

մենէն շահեկան, ամենէն տենդոտ, ամենէն եռանդուն շրջանը: Թողլ չը կարծուի թէ Պոլսի Երեսփոխանական ժողովը միմիցյն թեթևոլիկներու և շաղակրատներու խումբէ մը կը բաղկանար ու Թուրքիոյ հայ ժողովրդին համար օգտակար ձեռնարկներ և տնօրինութիւններ չչ ըրած. ընդհակառակը անոնք որ մեր Երեսփոխանական կեանքը մօտէն սերտած են՝ շատ լաւ զիտեն թէ այդ ժողովը գաւառաց և Պոլսի աղքային շահերուն միտկ պաշտպանն էր, ինչպէս որ անոր փճանալովը մեր առանձնաշնորհութներն ալ տակաւ առ տակաւ սկսան փճանալ *: Ներսէս պատրիարքի օրով մանաւանդ՝ նորա իմաստուն և աղքանուէր ջանքերովն ու նորա վարչական տաղտնիքն առաջնորդութեամբը՝ այս ժողովը հրաշքներ գործած է: Հարստահարութեանց խնդիրը՝ որ այնչափ հին է որչափ հայաստանի մէջ կէս բարբարոս աղքերու ծագումը, որչափ թրքական յոռի մատակարարութիւնը և մոլեռանդութիւնը քանի քանի անդամներ ժողովը բովէն անցած և այս մասին ի՞նչ մանրակրկիտ, ստիպողական յիշատակագրեր մատուցուած են յաճախ Բ. Դրան: Գաւառներու մէջ ի՞նչ կարեոր խնդիր որ պատահած է՝ Երեսփոխանական ժողովը անմիջապէս նկատողսւթեան առած է զայն, դարմանը խորհած և անմիջապէս պէտք եղած զիմումն ըրած է առ որ անկ է. սակայն այդ դիմութներ մեծ մասամբ անհետեանք մնացած են եղեր. մեղաւորը՝ Երեսփոխանական ժողովը չչ ինքը, Երեսփոխանա-

* Դեռ վերջին օրերս, չնորհիւ Աշոգեան պատրիարքին՝ Թրքահայոց բոլոր դըպորցները պատրիարքարանի իրաւասութենէն հանուելով ուղղակի կառավարական հլակողութեան ևնթարկուեցան. մինչ կայտն իւր չնորհած պատրիարքական պէտրաթին (Հրովարտակին) մէջ բացորոշապէս կը յիշէ թէ հայոց վարժարանք պէտք է պատրիարքարանի իրաւասութեան տակ ըլլան և այս մասին ո և է հարցում, դիտողութիւն կամ բացարութիւն Բ. Դրան կողմանէ պէտք է պատրիարքարանին ուղղուի և այս վերջինը միայն պատասխանառու ըլլայ Բ. Դրան՝ ՚ի դիմաց բոլոր հայ վարժարանց հակառակ իւր պէտրաթի սոյն բացորոշ տրամադրութեան՝ Աշոգեան ամենայն պատրաստութեամբ՝ հայ վարժարանները կառավարութեան ուղղակի հսկողութեանը ենթարկեց: Նոյն բանը թէպէտ Յունաց պատրիարքին ալ առաջարկուած էր՝ բայց նա բացարձակ մերժեց: Միւս կողմանէ՝ Աշոգեան՝ իւր այս հաւատարմութեան (??) համար՝ սուլթանէն նմթիազ ոսկի և արծաթ շքադրամ ստացաւ..... ահա պատրիարք մը՝ որ սկասուանշանի համար իւր ազգը կը ծախէ:

կան ժողովը բաւ է որ կատարած է իւր պարտականութիւնը:

1876-ի վերջերը Ազգ. երեսի. ժողովը զբաղեցաւ հարստահարութեանց յշխ շահեկան տեղեկագիր մը խմբագրելով՝ զոր Բ. Դրան մատոյց եկեղեցական պատգամաւորութեան մը ձեռամբ. աւելորդ է ըսել թէ այս տեղեկագիր անհետևանք մնայ.

Պատերազմը հետղէտէ կը տաքնար և կառավարութիւնը՝ երկիրը պաշարման վեճակի մէջ գրած էր ու ղենուորական ատեան հաստատած. այս ատեններ Ներսէս պատրիարք ինքնին կը խորհրդածէր հռչակաւոր ծրագրի մը վրայ՝ որ յետոյ Տայկական Խնդիր կոչուեցաւ

1877-ի հոկտեմբերին՝ Պոլսի ու գաւառաց ժողովուրդը ընդհանուր սարսափի մէջ էր. պատերազմը տարօրինակ կերպով ահարկու հանգամանք մը առած էր. թուրքերը իրենց անյաջողութեանցը մէջ մոլեգին՝ ահ ու երկիւղ կ'աղդէին բոլոր իրենց շուրջը գտնուող հպատակ քրիստոնէից. ահա այս ընդհանուր խառնաշփոթութեան ու երկիւղին մէջ՝ օրին մէկը մէք ազգային երեսփոխաններէն երեքը—Քրիստոսուր Ղազարոսեան, Ստեփան Փափաղեան և Օգոէն Խօճասարեան¹⁾ կը ձերբակալուին և աքսորի կը դատապարտուին. Ներսէս պատրիարք նոյն հետայն Բ. Դրան միջնորդելով զանոնք աքսորէ կ'աղատէ, բայց Բարձրագոյն հրամանի մը համաձայն իրենց խրատ կուտայ որ ժամանակ մը Ազգ. ժողովոյ նստերուն չը մասնակցին:

Սոյն երեք երեսփոխանները կառավարական ու և է յանցանք չունէին, այլ դաւաճանութիւն մը նիւթուած էր իրենց դէմ ինչպէս քիչ յետոյ պիտի տեսնենք:

1) Օգուէն Խօճասարեան Աամաթիոյ թաղէն երեսփոխան էր և ընդդիմադիր կուսակցութեան ամենէն նշանաւոր ատենարաններէն մին. հանդուցեալը՝ անօրէնս խմբագրապետն էր «Օրագիր» լրադրին և իւր գրչով այն ատեն մէծ ազդեցութիւն ունէր հանրային կարծեաց վրայ. իր մոլութիւնն այն էր որ ուրիշ սամաթիացիներու պէս՝ ինքն աւ բագոսը քիչ մը շատկեկ կը պաշտէր:

1877 Հոկտեմբեր 28-ի նստին՝ 46 Երեսփոխանք՝ առաջնորդութեամբ Մատթէոս եպիսկոպոսի իզմիրլեան՝ կ' առաջարկեն ս. պատրիարքին, որ իրենց երեք պաշտօնակիցները արդարացնելու համար հաճի ՚ի դիմաց Երեսփ. Ժողովին թաքրից գրել առ Բ. Դուռըն՝ և միանգամայն կը ինգրեն որ անոնց ժողովին գալու արգելքը վերնայ: Այս առթիւ Մատթէոս սրբաղան խօսած է սքանչելի պաշտպանողական ձառ մը՝ զորպարտաւոր եմ աստ իրը նմոյշ տուաջ բերել նոյնութեամբ:

Տ. Մատթէոս Եպիսկոպոս—(Օսմանեան Կառավարութիւնը մեր հայոց ազգը հպատակ ունենալէն ՚ի վեր արտօնութիւններ տուած է մեղ՝ մեր ազգային ներքին գործերը մեղէն տնօրինելու. մինչեայն աստիճան ընդարձակած է այս ս բոտննութիւններն՝ որ քուեարկութեան սկզբունքը ինք չընդունած՝ շնորհած է մեղ նոյնը գործադրել՝ Ասհմանադրութեամբ լուծելու և կարգադրելու կերպով: Շնորհ մ'է այս զոր ըրած է մեղ՝ (Օսմանեան Կառավարութիւնը և զոր յետս չոկոչեր՝ եթէ յետս կոչուելու վտանգին մէջ դնել չուզենք մեր Վզգային Ասհմանադրութիւնը:

«Այսօր կամ կը վայելենք այս արտօնութիւնը և կամ ո՛չ կամ սահմանադրութիւն ունինք և կամ չունինք. եթէ ունինք՝ մեր ներքին գործերն անով տնօրինելու ենք և ո՛չ ոք պէտք չէ միջամտէ մեր ներքին գործոց. իսկ եթէ չունինք՝ ինչո՞ւ գումարուեր ենք այս տեղ իբրև սահմանադրապէս ընտրեալ ժողով մը և իբրև թառը իոյ մէջ գոնուող ձայոց ներկայացուցիչ մարմին մը:

«Տեալը Երեսփոխանք, շնորհիւ (Օմ). Կառավարութեան՝ այսօր կատարելապէս կը վայելենք մեր Վզգ. Ասհմանադրութիւնը. ըսել է՝ մեր ներքին գործոց տէրն ենք և չենք զոկուած մեր ներքին գործերն մեղ շնորհուած Վզգային Ասհմանադրութեան համաձայն տնօրինելէ. ինչո՞ւ ուրեմն մեր երեք պաշտօնակիցներն իրենց պազային պաշտօնավարութեան համար աքսորանաց դատապարտուեցան և ինչո՞ւ, կըսեմ, այսօր ալ կ' ազգարարուի անոնց որ դադրեն Երեսփոխանական պաշտօնէն. ի՞նչ է ասոնց ազգային պաշտօնավարութեան մէջ ունեցած յանցանքը. ժողովոյս ներկայացեալ իննդրոց վրայ ազատորէն իրենց կարծիքն յայտնե՞լն է, կամ այս ու այն իննդրոյն վրայ երբեմն յուղմամբ և բարձրաձայն խօսի՞լն է. եթէ արդարեւ յանցանք ձանչուած են անոնք՝ ո՞ւր կը մնայ

մեր սահմանադրութիւն ունենալու արտօնութիւնը, և ուր կը մնայ մանաւանդ սահմանադրական խորհրդարանի մը ազատ վիճաբանութեան սկզբունքը և մեր ներքին գործերը մեղէն տնօրինելու ազատութիւնը: Կարելի՞ արդեօք մտածել, Տեալք, որ (Օսմ. կառավարութիւնը) այս օրինակ պատճառներով իրաւունք ունենայ երեսփոխան մը աքսորանաց դատապարտելու կամ նոյն պաշտօնէն դադրեցնելու՝ քանի որ ինք տուած է արտօնութիւն սահմանադրապէս տնօրինելու մեր ազգային գործերը և աղատօրէն վիճաբանելու մեր Ազգ. Ժողովոյ ներկայացած խնդրոց վրայ. ոչ այնչափ հաստատ է այս՝ որ վսեմ. “Եռլեան էֆենտին իսկ՝ ի դիւանէ պաշտօնապէս յայաբարեց թէ Մեծ Խպարքոսն անդամ իրաւունք չունի *): Շնորհակալ եմ որ կը կրկնէք թէ Մեծ Խպարքոսը անգամ մեր ներքին գործոց չը կրնար միջամտել:

«Մեր Ազգ. Ժողովոյ մէջ տեալք երեսփոխանք, չէ եղած ժամանակ մը որ երեսփոխաններէն մէկը բառ մը արտասանէ տէրութեան դէմ՝ մինչև իսկ հարստահարութեանց կենաց և մահու խնդրոց վիճաբանութեան մէջ, յորում հարստահարչաց՝ հակառակ Ա Եհափառ. Լայսեր կամաց՝ գործած նողկալի արարքը խստիւ քննադատուեցաւ և դարմանը խնդրուեցաւ կառավարութենէն: Ոչ միայն ընդդէմ կառավարութեան բան մը խօսուած չէ՝ այլ ընդհա-

*) Այս պահուստ նուրեան էֆենտի կ'աղաղակէ—Անժ, կը պնդեմ: Ցովշաննէո էֆենտի նուրեան Պետական ժողովոց անդամ է և անի իտլ էվլէլիք աստիճան (Ալոզի կիրութենէն երկու աստիճան վար): Նուրեան էֆենտի պետական բոլոր պաշտօնատարաց մէջ ինքն և որ ամենն աւելի ազգային գործերով զբաղուած է. եռանդուն և անդուն գործիչ մէկ. երբ ո և է պաշտօնի գլուխ անցնի՝ խոշմորէն կը տանի զայն և անոր յաջողութենը գրեթէ միշտ կապահովէ. սակայն իւր զալափարներ՝ հոսանքին համեմատ կը փոխուին. Հայկական խնդրոց ժամանակի երբ յաջողութեան պայմանները մեզի նպաստաւոր կ'երեային՝ նուրեան էֆենտի ջերմ սահմանադրական և մինչև իսկ ռամկավարական ցոյց կուտար ինքզինքն. իսկ երբ գործը անցալողութեան մատնուեցաւ՝ նուրեան ալ ամենէն լուրջ պահպանողականը եղաւ վերստին. աւելի պարզ խօսելով՝ երբ ներկայանան այնպիսի խնդիրներ որոնք իրենց զուտ կրօնական կամ բարեկապաշտական հանդամանքով և և կերպիւ չը վուանգեն տէրութեան առջեւ իւր վայելած համարումը՝ նուրեան էֆենտի անկեղծութեամբ կ'աշխատի, իսկ երբ դարաւոր առանձնաշնորհում մը նոր կարգադրութեամբ կառավարութեան յանձնելու կամ չը յանձնելու խնդիր ներկայանայ՝ հռն մի՛ փնտուէք նուրեան էֆենտին և քիչ մ'ալ գդուշացէք իրմէ Քանիցս վարած է Ազգ. Ժողովոյ և Քաղ. Ժողովոյ Առենապետի պաշտօնները. վերջին անդամ իւր ատենապետութեան օրովն էր որ Ազգային ժողովը հոգին աւանդեց. շատ տարիներ Բերայի թաղ. խնամակալութեան ատենապետըն էր և ինքն հիմած է Բերայի աղջկանց արուեստանոցն որ ճշմարտիւ պատիւ կը բերէ իրեն:

կառակն միշտ մեր առ (Օսմ. գահն ունեցած հաւատարմութիւնը անեղծ պահելու հզօր ցոյցերը տուած են, ինչպէս և մինչև ցարդ ալ նոյնը կը շարունակուի. սակայն այս օրերս՝ երեք երեսփոխանաց վրայ՝ իրենց ազգային պաշտօնին մէջ ընդդէմ կառավարութեան խօսած ըլլալու խնդիր մը երեան կ'ելնէ, կարծուածէն շատ մեծ և անմիջապէս դարմանուելու կարօտ ինդիր մը: Եթէ այսօր Փափազեան մը, (Օգսէն մը և Վրիստոսատուր մը այսօրինակ զրպարտութեան կ'ենթարկուին՝ և մինչև իսկ աքսորանաց կը դատապարտուին՝ յորմէ թէկ ա. Պատրիարք Հօր միջնորդութեամբ աղատած են՝ սակայն և այսպէս քանի մը օր վերջը նոյն իսկ ա. Պատրիարքէն ազգարարութիւն կ'ընդունին որ դադրին իրենց երեսփոխանական պաշտօնէն և Ժողովոյն նստերուն չը գան, ինչպէս այսօր չեն եկած, ո՞վ կ'երաշխաւորէ ուրեմն որ ես և ուրիշ երեսփոխանաներ ալ վաղիւ այսպէս չպիտի զրպարտուինք: Կը տեսնէք ահա, երեսփոխան տեալրք, խնդրոյն ծանրակշութիւնը և անմիջապէս դարմանուելու պէտք ունենալը:

«Ճ'նշում մ'է այս որ մեր երեք պաշտօնակցաց վրայ գործադրել կ'ուզուի՝ անոնց ազգային խնդրոց վրայ այս ժողովին մէջ խօսելու աղատութիւնը բոնաբարելու և չը թողելու համար որ իրենց կարծիքը յայտնեն: Պէտք է գիտնանք, Տեալրք, թէ յումմէ՝ և ի՞նչ պատճառէ յառաջ եկած է երեք երեսփոխանաց վրայ գործադրել ուզուած ճ'նշումը, և ո՞վ է որ այս մարդոց ետևէն ինկեր է և զասոնք մինչև տարագիր ընելու չափ յառաջ նկրտիլ կուզէ. Եթէ զասոնք առանց իմանալու նստինք այստեղ մեր նշանակութիւնը մեռած է, Ամահմանադրութիւն չկայ ըսել է *):

«Պատճառներ կան այս երեք երեսփոխանաց աքսորման դատապարտուելուն և՝ ՚ի վերջոյ պաշտօնէ քաշուեցէք ըսուելուն, զորս գիտեմ, և եթէ ներէք ինձ՝ պատրաստ եմ զանոնք երեան հանել:

«Ենձ մը՝ որ նշանակութիւն ալ չունի, և որ թաղական խորհրդոյ անդամ գտնուած է, աստ և անդ համարձակ կը խօսի թէ ես զանոնք աքսորել պիտի տամ. սորա պատճառն է՝ իրեն համար Ժողովիս մէջ առ Եղային Արշութիւնն եղած սա հարցումը թէ՝ վարժապետ չը ծեծեց է, ի՞նչ պերընունին ը բան է վարչ-նի-նը. մինչ գեռ մեր ս. Պատրիարք Հայրն ապտակ մը անդամ զարկած չունի ո՛ և է մէկու մը, և եթէ յանդիմանութիւն ալ ընէ՝ մեղմով կ'ընէ.

*.) Ականջը խօսի Աշբդեան պատրիարքին:

իսկ այս անձը վարժապետ կը ծեծէ և չենք գիտեր թէ ուրիշ
կ'առնու այդ համարձակութիւնը:

«Այս հարցումը աշա, տեսաք, զոր ժողովս ամբողջապէս ըն-
դունեց և յղեց Ա արշութեան որ քննէ և եթէ արդարե վարժա-
պետ ծեծէր է այս անձ՝ պաշտօնանակ ընէ և տեղեկագրէ Ժողովիս՝
այս հարցումը, կ'ըսեմ, տեղի տուած է որ յիշեալ անձը յաւակնի
զրպարտել մեր երեք պաշտօնակիցները և այնչափ յառաջ երթալ
որ ս. պատրիարքը իւր միջնորդութեամբը այն երեք երեսփոխան-
ները աքսոր զրկուելէ աղատելէն ետքը կը պարտաւորի հայրաբար
կոչել մեր երեք պաշտօնակիցներն և ըսել անոնց որ դադրին իրենց
պաշտօնէն, զի տակաւին չը դադրիր գործելէ, և որ զարմանալին է
չը դադարիր թաղականութեան պաշտօնը վարելէ. ըսել է զօրաւոր
մէկն է կամ զօրաւոր մէկու մը կրթնած կը գործէ, այս վերջինն է
ճշմարիտը, վասն զի կը ճանաչենք այս մարդը և գիտենք իւր զօ-
րութիւնը, որ ոչ մէ միայն Խուռարիոյ հայոց պատրիարքին զօրու-
թիւնը չը կրնար կշռել այլ և պարզ քաղաքացիի մը ալ զօրութիւնը
չը կրնար կշռել սակայն և այնպէս, ցաւալի է ըսել որ պատրիար-
քական իշխանութեան միջնորդութիւնը կամ զօրութիւնը նոյն իսկ
պատրիարքին ձեռք տկարացնելու և ջլատելու կը յանդգնի: Աը
խնդրեմ, երեսփոխան տեա՞րք, որ այսպիսի դաւաճանութեան և
մատնութեան զօրութիւն տուող և մեր ներքին գործոց տնօրէնու-
թեան մասին մեր ունեցած աղատութիւնը վտանգող, և մեր պատ-
րիարքական իշխանութեան զօրութիւնը տկարացնելու թեկնածող
անձին կամ անձանց ով կամ որո՞նք ըլլալը գիտնանք և անմիջա-
պէս հարկ եղածը տնօրինենք. թերեւս այն անձը զինք զօրացնող-
ներէն և իրեն օգնողներէն քաջալերեալ վաղն ալ քահանայ մը կը
ծեծէ. և եթէ ժողովին մէջ հարցնող մը ըլլայ՝ ինդիր ելլէ վե-
րըստին և ըսուի հարցնողին—պաշտօնէդ դադրէ, զի ժամանա-
կը գէշ է:

«Ասոր հետ մէկտեղ յիշեալ երեք երեսփոխանաց համար հրա-
պարակաւ պաշտօնական վկայութիւն մը տրուած է և այդ վկայու-
թիւնը մինչև ցայսօր ետ չէ կոչուած. բացատրեմ: օգոստոս 24
չորեքշաբթի օրն սստիկանութեան գոնէն յատուկ գրով կը կան-
չուի մեր քարուքէ հետափ (պատրիարքարանի գործակատար) է ֆէն-
տին. գիրը բերող պաշտօնեայն հետը կը տանի քաբուքէ հետափն.
սստիկանութեան պաշտօնեայն հարցումներ կընէ այն երեք երես-

փոխանաց ազգային՝ պաշտօնավարութեան նկատմամբ և պատասխաններ կ'ընդունի, (թերեւս ու պատրիարքին պէս զանոնք պաշտպանող պատասխաններ)։ Քարուքէհեասին օգոստ 25 հինգշաբթի օր վէքիլարան (փոխանորդարան) կուգայ և եղածը կը պատմէ փոխանորդին։ (Գոստոս 26 ուրբաթ օրը՝ սա՛ բողոքագիրը (փոխանորդին՝ լրագրաց մէջ հրատարակած բողոքագիրը ցուցնելով) կը մատուցուի Խառն Ճաղովին, ստորագրութեամբ պատրիարքական փոխանորդ Մկրեան Տ. Յովհաննէս քահանայի, որ իւր բողոքագրոյն վերջերը կ'ըսէ «Գամ կը պահանջեմ ո՛չ թէ միայն իմ իրաւոնքս և արդարութիւնն յերեան ածելու համար, այլ ազգը աղատելու համար այս սահմանադրական քօղի ներքեւ բռնակալ մարդոց խաղալիք ըլլալէ, որոց գործն եղած է միշտ պատրիարքներ և ժողովներ տապալել և հանդարս ու խաղաղ ազգն երկպառակութեան և խովութեան մէջ ալեկոծել»։

«Եզրային Ա արջութեան Խառն Ճաղովը կարեսորութիւն չտար այս բողոքին և կը մերժէ, բայց Մատիս և Մանուշ-Ալ լրադըբերն հետեւեալ օգոստ 27 շաբաթ օրը կը հրատարակեն նոյն բողոքագիրը, և նոյն շաբաթ օրը ժամը տասնին, այս երեք երեսփոխանները կը փնտուին ստորիկանութեան դռնէն. ահա կատարուած զբարտութեան մը կամ լաւ ևս է ըսել մատնութեան մը հաստատութեան համար հրապարակաւ տրուած պաշտօնական վէլայութէն ճը։ Այս վկայութիւնն ալ ունի իւր պատճառն, և գիտէք ի՞նչ է, տեարք. նոյն իսկ վարժապետ մը ծեծող թաղ. խորհրդոյ ատենապետի մը համար Ժաղովոյս մէջ եղած հարցումը, և փոխանորդը զայն պաշտանէն ուղղուած համար՝ նոյն եցեւ եցեսնիաննելուն միոյն կողմանէ աճբանադանուիլը: Ճաղովնք զայս և գնանք որոնել թէ ստորիկանութեան պաշտօնեայն ինչու կը կոչէ մեր Պարուքէհեասի էֆէնտին։ Խնդիր գիտեմ նոյն իսկ Պարուքէհեասի էֆէնտիի յայտարարութենէն՝ անոր համար որ տեղեկութիւն ստանայ պաշտօնապէս այն երեք երեսփոխանաց ազգային պաշտօնավարութեան մէջ ունեցած հանդամանաց վրայ. երբ զայս կ'իմանայ պատրիարքական փոխանորդը՝ հրապարակաւ և պաշտօնապէս վկայութիւն կուտայ թէ այդ անջնիւը պատրիարք և ժողովնէն պատառալուն և այլն, որ ո՛չ նուազ զօրաւոր պատճառ մ'է մեր պաշտօնակից երեք երեսփոխանաց ստորիկանութեան պաշտօնէութենէն խովարկուելուն և աքսորանաց դատապարտուելուն։

՚ի նշան իւր գոհունակութեանը (Սամանիէ Ա.) կարգի նշանը «Առ-
բին Արբազնութեան կուրծքը կախեց յանուն հինգ հարիւր տարիէ
՚ի վեր միշտ հաւատարիմ մնացած հայ ազգին:

Գալով դաւաճանութեան և մատնութեան կէտին՝ իւր երես-
փոխան կ'առաջարկեմ որ (Ա.) քննութիւն լինի և ձանչցուին ազ-
գին դաւաճանն ու մատնիչներն և հարկ եղած գործադրուի, որ-
պէսզի մենք ապահով լինինք ազգին մեզի տուած այս երեսփոխա-
նական աթոռոց վրայ. նոյնպէս կառաջարկեմ (Բ.) որ պատր. փո-
խանորդին բողոքագիրը մերժուի իւր ոչ—պաշտօնական, զի քանի
որ այն բողոքոյ գիրը կեցած է հրապարակի վրայ, յորում ըսուած
է թէ Պատրիարք և Ճողով տապալող են, միշտ պիտի փնտուուին
այդ երեք երեսփոխանները, ուստի և ինչպէս առաջարկեցի, պէտք
է մերժուի այդ գիրը. (Գ.) վերջապէս կ'առաջարկեմ որ Վաղ-
ժառովը՝ Գարթալի թաղ. խորհրդոյ ատենապետ Պաղտիկը անմի-
ջապէս պաշտօնանկ ընէ և զայդ պաշտօնական ծանուցմամբ ազգին
յայտարարէ լրագրաց միջոցաւ»:

Ուշադիր ընթերցողը ՚ի հարկէ դիտեց թէ ասիկա
պաշտպանութեան ձառ մ'էր որ կրնար շատ մը փայլուն
փաստաբաններու նախանձը շարժել. ամբողջ ատենախօսու-
թեան մէջ կ'զգացուի կառավարութեան հանդէպ զգուշա-
ւոր և քաղաքագիտական լեզու մը, զրապարտիչներուն և
դաւաճաններուն նկատմամբ հին հոռվմայեցւոց պարկեշտ
դատաւորներուն վայել կծու և ուղղախոհ քննադատութիւն.
Աղդ. Սահմանադրութեան բոնաբարման դէմ բարձրագոչ
բողոք մը, և այս ամենուն մէջ, դէսլերու յստակ և տրա-
մաբանական շարադասութիւն մը:

Ժողովը վեճաբաննելով այս խնդրոյն վրայ՝ նախ է ըն-
տառնէ որ պատրիարքը՝ ամբաստաննեալ երեք երեսփոխանները
վերջնապէս արդարացնելու համար յանուն Աղդ. Ժողովը
թաքրիր զըէ առ Բ. Դուռն:

Յեաոյ կարգու Մատթէոս սրբազնի երեք առաջարկներն
քուէի զրուելով՝ երեքն ալ կ'ընդունուին Ժողովէն, որով կ'ո-
րոշուի քննութիւն բանալ մատնիչները քննելու համար.
կ'որոշուի պատր. փոխանորդի բողոքը խսպառ մերժել կ'որո-

շուի թաղական Պաղտիկի պաշտօնանկութիւնը լրագրաց մի-
ջոցաւ հրատարակել ժողովուրդին:

1877 նոյեմբեր 25-ի նստին, կարեոր խնդիր մը կը
յուղուէր ժողովոյն մէջ—Զինուորազրութեան խնդիրը—
Ասիական բանակին հրամանատար Մուխթար փաշան ստի-
պողաբար զօրք և ռազմամթերք կը խնդրէր կեղրոնական
կառավարութենէն. բայց կառավարութեան աղքեւրները տ-
մենամեծ մասամբ յամքած ըլլալով՝ ամէն կարելի և անկա-
րելի միջոյներու կը դիմէր՝ ստիպողական պահանջմանց գո-
հացում տալու համար. արդէն՝ ի սկզբան հայոցմէ զօրք
խնդրած էր՝ հայրենիքը պաշտպանելու համար, բայց ներ-
սէս պատրիարք պատասխանած էր թէ հայերը թէպէտ
զէնք կրելէ չեն փախչեր՝ բայց քանի որ մինչեւ այն ատեն զէն-
քի ընաւ վարժ չէին՝ բնականաբար շատ անճարակ զինուոր-
ներ և ողբալի նահատակներ պիտի լինէին պատերազմի
զաշտին մէջ, ուստի պատերազմի ամբողջ տեսողութեան մի-
ջոցին ինքը չէր կարող զինուոր տալ: Եյնուհետեւ կառա-
վարութիւնը հրաման կուտար որ հայերը զէնք կրեն և միան-
գամայն զինուոր գրուելով՝ քաղաքային պահապան զօրաց
մէջ մարզանը կատարին, առանց պատեշազն երնաւու: Այս
առթիւ ժողովոյ մէջ, սկսեալ ներսէս պատրիարքէն՝ բո-
լոր ներկայ եղող երեսփոխաններն ալ զինուորազրութեան
սկզբունքը ջատագովեցին, սակայն զինուոր տալու համակար-
ծիք չէին, զի կը վախնային որ պատերազմի զրկուին՝ առանց
հարցուելու ժամանակ դրուելու: Իզմիրեան սրբազան՝ ի մաս-
նաւորի զեղեցիկ ձառով մը, որուն մէջ նշանաւոր է սա
խօսքն «Զինուորա-նենէ խուսափողն առ գոյց ցանէին մէջէն է ը-
նըր-է», զինուորազրութեան սկզբունքը ջատագովելով հան-
գերձ՝ տարբեր խնդիր մ'ալ մէջ տեղ նետեց՝ Քրիստոնէից
հաւասարութեան խնդիրը

‘ի վերջոյ, կարծեաց հասուն փոխանակութենէ մը յետոյ,
կ’որոշուի խնդիրը կրօնական համագումար ժողովոյ յանձ-
նել որուն պատասխանը կը լինի ժխտական և այսպէս հա-

Ժերը պատերազմին Փիղիքաղէս մասնակցելու հոդէն կազմախն:

1877 գեկտ. 20-ին Ներսէս պատրիարք Հրաժարական կը մատուցանէ թէ՛ Բ. Դրան և թէ՛ Աղքային Ժողովին. սակայն Աղքային Ժողովը իսպառ կը մերժէ ն. սրբաշնութեան Հրաժարականը և Ներսէս զեջանելով Ժողովին կամաց. ետ կ'առնէ իւր Հրաժարականը:

Պատերազմը հետղջետէ սասականալով և երկիրը կատարեալ ահ ու դողի մէջ իյնալով ազգային ներքին մատուկարարութեան բոլոր գործերը պատրիարքին և իւր օգնական Ժողովներուն ձգուած էին և Ազդ. Երեսփ. Ժողովը հարկադրուեր էր իւր նստերը առժամապէս դադրեցնել. բայց 1878 մայիսին արգէն պատերազմը դադրած էր և Պերլինի վեհաժողովը սկսած էր զումարուիլ. ուստի Ներսէս պատրիարք յարմար գատեց Ազդ. Ժողովը նստաշրջանը բանալ 1878 յունիս 2-ին:

Սոյն Ժողովյ մէջ՝ Թիւննին առաջին առենսապետ Կ'ընարուի Ստեփան փաշա Ասլանեան ¹⁾):

1878-ի յուլիս 21-ին անդի կունենաց Ազդ. Ժողովի նիստը, ուր Ներսէս պատրիարք կարառանէ մի Հոյակապ և յոյժ հետաքրքրական ճառ.

Այս ատենններ նախորդ Կրօնական Ժողովյ պաշտօնագորութեան շրջանն աւարտած ըլլալով նոր ընտրութիւն

1) Տօրթ. Ստեփան փաշա Ասլանեան հոչակաւոր դէմք մ'էր հանգուցեալ և բեսփոխանական ժողովուն մէջ. Ընդդիմադիր կուսակցութեան ամենէն փայլուն զարդը կը համարուեր. իր կուսակիցը զինք կը պաշտուին, իսկ հակառակորդը՝ կը յարգէին. բուշից ստուար մեծամասնութեամբ քանից Ա. ատենսապետ ընտրուած է Նզդ. Ժողովոյ: Տօրթ. Ստեփան փաշա՝ ատենաբանի պահպի հանաւլի ձիքեր ունի՞ որ ստուգիւ եւրոպեան խորհրդարանի մը իսկ պատիւ կրնայ ըւրեւ իւր պց արտակարդ կարողութիւն գնահատուած է ամենէն. Վերջին անգամ, Միմօն ալ.է.ի գարզութեան անդամ էր, բայց գաղափարի մեծկալ անհամաձայնութիւններ ունենալով ստիպուեցաւ քաշուել Ստեփան փաշա իւր նախնական ուսումն առած է Եւսկիւտարի Ելմի Մահաւելի (նոր թաղ) և Կարապետ Եկեղեցւոյն կից, Հրկիվեալ ճեմարանին մէջ. Կարապետ Խւթիւն Ճեան, «Մասիսի» նախորդ Խմբագրապետն իւր դասընկերն էր. յեայց, Կ. Պոլսայ բժբշ կական վարժարանին մէջ շրջանը աւարտելով՝ կառավարութեան ծախրավ Եւրոպա դ րկուած է ուսումն կատարելու պարագաներու Ճարաւրութիւն հոդաւու կը գայիւէ Յյժմ ամեն պաշտօնէ մէկուսացած կ'ապրի Խւսկիւտարի մէջ.

կը կատարուի և 1878 օդոսառոսի 4-ին Իզմիրեան սրբազնն
Բ. ատենապետ կ'ընտրուի Կրօնական ժողովոյ, Ա. ատենա-
պետն լինելով Խրիմեան Հայրիկ:

Սյնուշհետեւ Ներսէս պատրիարք գէպքերի բերմամբ հար-
կադրուած էր հրաժարիլ ։ ։ ։ ։ ։ ։ ։ ։ ։ ։ ։ ։ ։ ։

Վարչութեան ժողովները առանց պատրիարքի մնալով
անդործութեան գատապարսուած էին, զի իրանց բոլոր ո-
րոշումներուն գործազրութիւնը պատրիարքին ձեռքն էր.
այս մասին հակառակ իրեն եղած թախանձազին գիմունե-
րուն՝ անդրդուելի կը թնայ և խորհուրդ կուտայ մինչև ցնոր
տնօրինութիւն առժամկայ փոխանորդ մը կարգել (թէպէտ
պատր փոխանորդ կար արդէն՝ սակայն անոր պաշտօնը շատ
սահմանափակ էր, զի աւելի ընտանիկան և գտատաստանական
ու ժառանդական խնդիրներով կ'զբաղէր քան թէ վարչուական
ծանր հարցերով), նոր փոխանորդը՝ իսկապէս զպատրիարքն
պիտի ներկայացնէր հառավարութեան և ազգին առջեւ և
ընթացիկ բոլոր կարեւոր գործերը գրեթէ ինքը պիտի վա-
րէր. Աղջին համար միշտ ներսէոր պիտի մնար պատրիարք,
իր փոխանորդը այնչափ ատեն միայն իւր այս բացառիկ
պաշտօնը պիտի վարէր՝ որչափ ատեն որ Բ. Դուռը առկախ
ձգէր հայոց պատրիարքին խնդիրքները. վէճը կարգադրուա-
ծին պէս ներսէս դարձեալ գործոց զէկը ձեռքը պիտի առ-
նէր և փոխանորդը տեղի պիտի տար անմիջապէս. բազում
վիճաբանութենէ վերջը ժողովը կ'ընդունի ներսէս պատ-
րիարքի սոյն առաջարկը և 1879 մարտ 9-ի նոտին՝ քուէից
ամենատառապ մեծամասնութեամբ պատրիարքական բացա-
ռիկ փոխանորդ կ'ընտրէ զջ. Մատթէոս եպիսկոպոս Իզմիրեան:
Ներսէս պատրիարքը յատուկ նամակաւ շնորհաւորելով զինքն՝
կը հրաւիրէ իւր նոր պաշտօնին զլուխը. Տ. Մատթէոս եպիս.
թէպէտ քանիցս կը հրաժարի, սակայն 'ի վերջոյ Աղջին կա-
մաց համազելով կը համակերպի եղած կոչումին*:

*) Սպառնական անանուն նամակներ որկուած էին Տ. Մատթէոս եպիսկոպո-
սին որպէսզի շընդունի պաշտօնը. ասոր շաբաթիթին էր Պէկեան թագէոս անուն
հրեսփոխանն, որ հայկական խնդրայն մէջ ներսէսի կողմանէ չը գործածուելուն հա-

Որբան որ ալ Մատթէոս եպիսկոպոս պատր. փոխանորդ կընտրուի՝ Բ. Դուռը սկզբամբ չընդունիր երկու պատր. փոխանորդ ունենալ և չուզեր վաւերացնել կատարուած ընտրութիւնը. ըսինք արդէն թէ հասարակ պատր. փոխանորդներու պաշտօնը շատ ստհմանափակ էր և զայն ո՛ և է կերպով նորքնատիր պատր. փոխանորդի պաշտօնին հետ չը շփոթելու համար՝ Աղջ. Ժողովը որոշեց հին փոխանորդին տիտղոսը փոխել և կոչել զնա «Նախագահ դատաստանական խորհրդագյ», այս մտօք քանիցս բացատրութիւններ ալ հաղորդուեցան Բ. Դրան, բայց սա անդրդուելի մնաց և սկիզբէն մինչև վերջը չուզեց ճանչնալ զՄատթէոս սրբազն իբր պատր. փոխանորդ:

Եյս վիճակին մէջ, իզմիրլեան չէր կարող կառավարութեան հետ զրաւոր թէ բերանացի ո՛ և է յարաբերութիւն հաստատել և կերպով մը անգործութեան դատապարտուած էր. խղճի խայթը իրեն չէր ներեր որ այդ կերպ ամուլ պաշտօնավարութիւն մը ունենայ, բայց միւս կողմանէ ժողովը կը բռնանար իւր վրայ և չէր ուզեր որ հրաժարի. այսպէս մէկ կողմէն Բ. Դրան ընդդիմութիւնը՝ միւս կողմէն Աղջ. Ժողովը յամառութիւնը զինքը նեղ կացութեան մէջ զրին, և այն հինգ ամիսները, յորում ինք փոխանորդ էր, «զերութեան և սարկութեան» ամիսներ եղան իրեն համար, ինչպէս ինք կ'ըսէր. այս փափուկ կացութեան մէջ իսկ փորձառութեան և իմաստութեան հզօր ապացոյցներ տուաւ իր

մար (մինչ Ստեփան Փափական վերջին պահուն Պերլին դրկուած էր) ոխ կը պահէ պատրիարքին դէմ ու երե Ներսէս Եղ. Ժողովը մէջ Պերլինի վէհաժողովին արդինքը նկարագրող ճառը կը կարդաց՝ Պէկեան դէմ կ'ելնէ սոսկալի նախատինքներով և յուղիչ ամբաստանութիւններով. ու երե կը հրաւիրուի պատրիարքին դէմ ըրած զրպարտութիւնները հաստատել կը կարկամի կը մնայ. ասոր վրայ ժողովէն պարսաւանաց քուենվ կ'արտաքսուի. այս պարսաւանաց քուենին համար Պէկեան ոխ ունէր ժողովին գէմ ոփ ունէր նաև Նզմիրլեանի գէմ զի սա՝ պատրիարքին նկատմամբ իւր ըրած ամբաստանութեանց համար՝ «իմանդարեալ երեակայութեանց աէր» կոչած էր զինքն. ուստի երբ Նզմիրլեան կ'ընտրուի՝ Ներսէսի մասին պաշտպանի գերստանձնելով կ'երթաց պարզաբան ժողովուրդը խարել որ ժողովը ձեմի մը տակ Ներսէսը հրաժարեցնել ուզելով անոր յաջորդ կարգած և Նզմիրլեանը. ահա ինչո՞ւ պարզաբաներն ալ յուզուելով անանուն սովորնական նամակներ կը ունղացնեին Նզմիրլեանի:

պաշտօնին մէջ. ցաւալի է որ Նորին Գերապատութեան սյս անտանելի պաշտօնը աւելի ևս դառնայաւ տիսուր գէպ-քով մը ու անվայել ցոյցով մը: Անտուակ կին մը պատրիարքարանի բարապաններէն միոյն հսկողութեամբ Եկատիգուլէի Ս. Փրկչեան Աղք. հիւանդանոցի զգաստարանը կը փոխա-դրուէր. կինը, ինչպէս կ'երևայ, շատ տղեղ արարած մը չէ եղեր և մշեցի բարապանը անպատշաճ չը նկատեր անոր հետ սիրային կատակներ ընել. կինը կը բողոքէ և իւր ձայնը կը հասցնէ մինչև 8. Մատթէոս եպիսկոպոսի ականջը: Իղմիր-լեանի պէս մէկը չէր կրնար ներել որ իւր պաշտօնավարու-թեան օրով Աղք. պատրիարքարանի պաշտօնեայ մը այսպի-սի անվայել ընթացքով մը պատրիարքարանի պատւոյն ա-րատ բերէ, ուստի անմիջապէս պաշտօնանի կ'ընէ կատակա-սէր բարապանը: Բայց մշեցին յուսահատող մարդ չէր, կ'եր-թայ բոլոր պանդուխա մշեցիները կը զրգուէ և աշա սոքա արբեալ վիճակի մէջ օր մը ժողովարանը կը կոխեն՝ երբ Իղ-միրլեան սրբազն Խառը ժողովոյ նիստին կը նախագահէր: Գրգռուած և արբած սյս զաւառացիները քիչ մնաց որ բզիտէին Նորին Գերապատութիւնը՝ զոր ներկայը գժուա-ըաւ կը յաջողին կողմնակի գոնէ մը փախցնէր:

Աղք. Ժողովոյ 1879 օգոստոս 10-ի նիստին՝ Ներսէս պատրիարք ներկայ կը զանուի՝ իբր պարզ երեսփոխան երեսփո-խանական աթոռի մը վրայ բազմելով և երբէք չընկունիր նախագահական աթոռը քանի որ ինք հրաժարեալ կը մնար. կը յայտարարէ թէ ինքն այն օրը ժողովին եկած էր պար-զապէս արգելելու համար կրկնութիւնն այն անվայել ցոյցին՝ որ նախապէս եղած էր Իղմիրլեան սրբազնի անձին գէմ, և Ներսէս ինքը խորին ցաւ կը յայտնէր այդ ցոյցին համար: Նոյն պահուն ժողովը գրեան կողմէ բազմաստորագիր հանրա-գրութիւն մը կը ներկայացուի, յորում զանդատ կը յայտ-նուէր թէ ազգին գործերը շատ կաղ կ'երթային, թէ մեր իրաւունքները կառավարութեան հզօր պաշտպանութիւնը չէին վայելը և ասոր յանցանքը երեսփոխանաց վրայ կը ծանրանար, ուստի և անմիջական դարման կը ինպրէին:

Սյուն հանրադիրը անմիջապէս նկատողութեան կ'առնուի իրաւացի կէտեր կը պարունակէր իւր մէջ ստուգիւ գործերը երեսի վրայ մնացած էին՝ քանի որ Բ. Դուռը պատրիարքէն զատ ուրիշ մարդ չէր ուղած ձանչնալ պատրիարքը հրաժարած էր սա տեսութեամբ որ Բ. Դուռը պիտի փութար իր առաջարկները նկատողութեան առնել Բ. Դուռը սակայն իր աեղէն շարժած չունէր և գործոց վեճակը վատթարազգյն եղած էր. այս աեսութիւններով ժողովը թախանձեց ներսէսին որ գործոց զէկը վերստանձնէ: Ներսէս պատրիարք կոչում բնելով երեսփոխան Տօքթ. Սէրվէլնի և Տօքթ. Ստեփան Փաշայի հմտութիւն՝ հարցուց թէ; ինքը իրօք հիւանդ չէր և իւր անձնական տկարութիւնը պատրուակելով Ազգը խարած էր. երկու բժիշկները կը յայտարեն թէ ստուգիւ ինքը հիւանդ է, բայց պէտք է որ իւր անձը Ազգին զոհէ, ժողովն ունին կամքը կը յայտնէ. այն ատեն ներսէս՝ իրեն յատուկ վսեմ շեշտով «Շատ լաւ, կ'ըսէ, քանի որ այդպէս կուղէք՝ անձո Ազգիս կը զոհեմ» և կը բաղմի նախագահական աթոռը՝ ժողովրդեան բուռն կեցցէներուն և երկարատեւ ծափահարութեանց մէջտեղ:

Սաոր վրայ ժողովը յոտնկայս շնորհակալութեան քուէ կուտայ նորին սրբազնութեան:

Իզմիրլեան Տ. Մատթէսս եպիսկոպոս անմիջապէս խօսք առնելով՝ շնորհակալութիւն կը յայտնէ ս. պատրիարքին՝ որ զինքը իւր անտանելի կացուեմինէն ազտաց և ըստ որում ս. պատրիարքը գործոց զէկը ձեռք կ'առնէր՝ իզմիրլեան, ըստ կանխազգյն որոշման անմիջապէս կը հրաժարի իւր պատր. փոխանորդի պաշտօնէն և ս. պատրիարքին աջը համբուրելով՝ կրկն անզամ կը յայտնէ իւր գոհունակութիւնը:

Երեսփոխան Գրիգոր էֆէնտի Օտեան¹⁾ խօսք առնե-

1) Այս հյուկապ անունը մեր ազգին ու գրականութեան պարձանքներէն մին է: Թուսինեանի մտերիմ ու գործակից՝ Սահմանադրութեան հաստատողներէն մին եղած է: Տաճկահայ գրականութեան մեջ մեծ աեղ մ'անի իւր ինքնատիգ ոճով ու գաղափարներով. վերջնը երկու ուսուցիչ ձեռնարկած էին իւր ցիրուցան գործոց

լով և Մատթէոս եպիսկոպոսին ուղղելով՝ «Սրբազն Հայր,
կրսէ, շատ տարիներ յառաջ ճանչցայ զջեղ դարձեալ այս
ժողովին մէջ, այն ատեն աւելի եռանգ ունէիք, իսկ երբ
անկէ ետե կրիին հանդիպեցայ Զեղե աղքային զործոց մէջ՝
տեսայ որ Զեր եռանկեան հետ լծորդած էք նաև փորձա-
ռութիւնն լի հայրենասիրութեամբ. բայց գժբաղգաբար Զեր
այս պաշտօնավարութեան մէջ հինգ տմիս շարունակ ունա-
կասկեալ մնացիք, որովհետեւ Բ. Դուռը չէր ճանչցած զջեղ
և Դուք ժողովրդեան վշտերը լսելու գատապարտեալ՝ չէիք
կրնար ոչ Բ. Դրան Աստվծութեան զրել ոչ անոնց ցաւոց դարման
մատուցանել և այսպէս կատարեալ զոհի մը վիճակին մէջ
դրուեցաք. արդ երախտապարտ մնալով ս. պատրիարք Հօր,
որ անձնութիւնաբար հաճեցաւ. բազմիլ իւր աթոռը, կարծեմ
մեր պարտըն է նաև Տ. Մատթէոս եպիսկոպոսին շնորհո-
կալութեան քուէ մը տալ»:

Բազմաթիւ երեսփոխաններ կը ձայնակցին. ասոր վրայ
Ժողովը միահամաւու յոտին կանգնելով՝ հանդիսաւորապէս
շնորհակալութեան քուէ կուտայ Տ. Մատթէոս եպիսկո-
պոսին:

1879 մարտի մէջ, երբ Ներսէս պատրիարք աղդային գոր-
ծերէն մէկուսացաւ՝ Երեսփ. Ժողովը «Բարեկարդութեանց
Խորհրդարանական Յանձնախութեամբ» մը կազմած էր՝ Հայկա-
կան ինդրի զործագրութեան հսկելու համար. սցն Յանձ-
նախոմբին ատենապետ կ'ընտրուի. Տ. Մատթէոս եպիսկոպոս
Խորհրդեան. իւր այս պաշտօնին նկատմամբ յետոյ պիտի խօ-
սինք: Երբ օգոստ. 10-ի նիստին Ներսէս պատրիարք զոր-

Հաստարակութեան, բայց կառավարութիւնը չը թոյլաւորեց: Բայցի բազմաթիւ աղ-
դային պաշտօններէն օսմ. կառավարութեան մօս դիւնագիտական շատ քարձը պաշ-
տօններ գարած է, յաճախ Եւրոպա գոնուած է դիսպանական պաշտօննէ: Փրանսայի
մէջ շատ բարեկամներ ունեցած է և ամենքը գ ինքը կը յարդէին. կը պատմուի թէ
օր մը Գրանսայի Երևան. Ժողովը՝ ամէնէն աղմացոյդ նիստերէն միոյն ներկայ էր.
Նախագահը՝ Պ. Թիէս. ՚ի զուր Հանալով բարեկարդութիւնը պահպանէլ հաւաք ուրեմն
«Պարմաներ, կ'աղաղակէ, Արեւելքին զմէկ կը դիմէն» և Օտեանը մատնամիշ կ'ընէ.
Կայ հետայն Ժողովը կը հանդարտի: Օտեան Լամատմինի անձնական բարեկամն էր և
ահօք «Բայիսյելը» հայերէնի թարգմանած է:

ծոյց զէկը ձեռք առաւ՝ սոյն Յանձնախումբի իւր պաշտօնը վերջացած համարելով իւր հրաժարականը մատոյց, որ ընդունուեցաւ շնորհակալը՝ Անգլիային:

Ներսէս պատրիարքի հիւանդութիւնը արդարեւ մոացածին չէր և և յաճախ ծանր անհանգստութեանց պատճառաւ բայցակայ կը դանուէր ժողովոց նստերէն, մանաւանդ 1880-էն յետոյ, երբ իւր հիւանդութիւնը այլևս սպառնական հանգամանք մը առած էր: Քոլոր իւր բայցակայութեանց միջոցին Տ. Մատթէոս եպիսկոպոսն էր որ նախագահական աթոռը կը բազմէր և արժանապէս կը փոխանորդէր իրեն:

1881-ին Իզմիրլեան սրբազնն հրաժարակեց ընդարձակ աշխատասիրութիւն մը— «Հայրապետութիւն Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ և Աղթամար ու Սիս»: Սոյն գործ 1288 փոքրադիր երեսներէ բաղկացեալ հատոր մ'է և խորին հմտութեամբ կը ճառէ Ընդհանրական Հայրապետի իրաւանց ու անոր Ենթարկեալ երկու կաթողիկոսական աթոռոց յարաբերութեանց վրայ. Մատթէոս եպիսկոպոսի սոյն գործը խուլ բողոք մ'է Աղթամարայ ու Սիսի կաթողիկոսներուն Ս. Էջմիածնայ Աթոռին Նկատմամբ բոնած ըմբոսա ընթացքին գէմ և պատմական ու օրինական փաստերով մի առ մի կը դժէ այն պարտականութիւնները զորս յիշեալ կաթողիկոսք ունեն հանդէս Ընդհանրական Հայրապետին՝ և Նորին Օծութեան փոխանորդ՝ Կ. Պոլսոյ պատրիարքին:

1881-էն մինչեւ 1886 տարին՝ Իզմիրլեան սրբազնն անընդհատաբար հետեած է Պոլսի ազգային գործոց: Երեսփոխանական ժողովոյ հոգին ըլլալէ զատ՝ շարունակ անդամակցած է ինչ ինչ խնդրոց համար կաղմուած բոլոր մասնաժողովներուն, յանձնախումբերուն և այլն, և այլն:

1886 յունուար 3-ին առաջնորդ կ'ընտրուի Եգիպտասի վիճակին և մարտի 12-ին Պոլսէն ճամբայ ելնելով 17-ին կը հասնի իւր պաշտօնատեղին:

Եգիպտասի գործունէութեան ընդարձակ դաշտ մը կը պարզէր Իզմիրլեան սրբազնի համար: Նորին Գերապատու-

ութիւնը անդ հասնելով՝ մէկ անգամէն տեսաւ որ արմատական բարենորոգմանց պէտքը կարի զգալի էր վիճակային գործոց մէջ։ Իրը Օսմանեան Կայսրութեան մէկ մասը^(*) կաղմաղ երկիր՝ Եզիստոս ենթարկուած էր աղջ պատրիարքարանի իրաւասութեան, Հետեւրար տեղւոյն ազգային գործերը պէտք էր կառավարուէին Ազգ։ Սահմանադրութեան արամադրութեանց համաձայն, բայց փարաւոններու այս հինաւուրց երկրին մէջ տեղւոյն ազգաբնակութեան փոքրամասնութիւնը կազմող ափ մը հայեր, ազնուապետական այնպիսի բարձր դիրքեր գրաւած էին որ, անզլիական թեարկութենէն առաջ երկրին տէրն էին գրեթէ, և հիմա իսկ ոչ նուազ ազգեցութիւն ունին վարչային գործոց մէջ՝ յաճախ նախարարութեան կարեռագոյն պաշտօններն իրենք վարելով արդարե, հոն, Նեղոսի ափանց շուրջը, գրեթէ ամեն հայ՝ փաշա է, պէջ է, էֆէնտի է, և խնդիրը՝ այս ազնուապետական ջոջերուն՝ Ազգ։ Սահմանադրութեան ծայրայեղօրէն ռամկավարական սկզբունքները ընդունել տալուն վրայ էր։

Իրաւ է թէ Սահմանադրութեան արտաքին ձեերն քանի մը տարիէ ՚ի վեր հոն մուտ գտած էին՝ բայց բուն հոգին գրեթէ կը պակսէր։ Երբ այն ջոջերէն մին կամ միւսը սահմանադրական ո և է ժողովոյ ատենապետութեան կոչուէր՝ իրեն ստորագաս անգամակիցը հլու գործիքներ էին անոր ձեռքը. մէկ անձի կամքը կ՚իշխէր ամենուն. իշխող անձին բարութիւնը երաշխաւորուած ըլլալով հանդերձ ակներե է թէ այս կէս մը միապետական գրութիւնը իւր միասներն ունէր։ Իղմիրլեանի առաջին գործն եղաւ նախ այս գրութիւնը ջնջել ո և է անհատի գերակշիռ ազգեցութիւն չառ ուրիշին վրայ. փաշան ու պէյր, էֆէնտին ու հասարակ մարդք՝ ազգային օրինաց առջե ամենքն ալ հաւասար էին. մարդք օրէնքին պէտք էր հպատակել և ոչ թէ ուրիշ մարդու մը կամքին. աստիճանուոր ազնուապետականն ալ պէտք էր իր ոյժը օրէնքէն ստանալ և ոչ իւր բարձր դիրքէն։

Գործերը այս վիճակին բերել հասցնելու համար լոկ

Խոսքը բաւական չէր. պէտք էր առաջին օրինակը իր անձը
ընծայել և իղմիրլեան այդպիս ըրաւ. շատ մը պէյեր, շատ
մը փաշաներ յօժարակամ ամեն նիւթական վայելքներ շռայ-
լորէն պիտի ապահովէին իրեն, իրենց հզօր գիրքով ամեն
պաշտպանութիւն պիտի նուիրէին նմա՞ եթէ միայն հաճէր
իրենց խօսքէն գուրս չելնել իւր կարծիքները անոնց կար-
ծիքներուն, իւր սկզբունքները անոնց սկզբունքներուն հա-
մաձայնեցնէր. բայց Իզմիրլեան մերժեց այդ բոլորը. ըլենէ,
ըստ նա, և անոր միայն կառչեցաւ. իւր այս ընթացքով
շատ մը թշնամիներ հանեց իրեն գէմ. բայց ինքը արհամար-
հեց և իւր արհամարհութեամբը ընկճեց զանոնք. և չուշա-
ցաւ օրը, երբ այդ գոռող զլուխները, սիսեալ խորիմներու նա-
խարարներէն մինչեւ յետին աղնուապետականը՝ եկան մի առ-
մի իրեն աջը առնել և իրենց յարգանքի, մեծարանքի և ակ-
նածութեան արտայայտութիւններն ընծայել. ալ այնուհետեւ
պատրիառէնչ եղաւ ամենուն. ալ այնուհետեւ թշնամի չունեցաւ:
Իղմիրլեան ամենամեծ գժուարութիւնը հարթած էր.
յետ այնորիկ զործը զիւրինցաւ. նոյն իսկ ամենէն աղնուա-
պետական տարերը իրենց աջակցութիւնը նուիրեցին Սահ-
մանագրութեան կէտ առ կէտ գործադրութեան. աղդային
սնտուկը որ ծանր պարառուց տակ կը հեծէր՝ շունչ առաւ իր
պարաքերէն. գպրացներու վիճակը օր աւուր բարուոքեցաւ:
Աղդային և անհատական ամէն խնդիրներ կառավարութեան
հզօր պաշտպանութիւնը վայելցին:

Իւր պաշտօնավարութեան միջոցին Իզմիրլեան սրբազն
կարեսը խնդիր մ'ալ ստեղծած է — Աշըզեան կատկը:

Աշըզեան Յակոբ էֆէնդի, եգիպտաբնակ մեծահարուստ
աղդայինը 1889-ին իւր հիւանդութիւնը գարմանելու հա-
մար Պոլիս եկած ու Դատըգիւղ վախճանած է, և մարմինը,
ըստ կատկի, Երուսաղէմ փոխագրուած ու հոն ամփո-
փուած է:

Իզմիրլեան սրբազն նոյն տարին իւր անձնական տկա-
րութեան պատճառաւ Պոլիս կը գտնուէր, և ինք խօսեցաւ
հանդուցելոյն դամբանականը, յորում ՚ի մոսնաւորի յիշեց

թէ իւր առած սեղեկութեանց համեմատ հանգուցեալը կարեոր կտակ մը ըրած էր ազգին:

Իզմիրլեան սրբազն երբ եղիսպոս վերադարձաւ՝ փութեաց այս կտակին գրայ մանրամասնութիւններ ստանալ. հանգուցեալը ոժւսական հպատակ էր և հիւպատոսարանը պաշտօնական ազգով կը յայտարարէր թէ ժառանգորդք պարախն մինչեւ վեց տմիս գիմել հիւպատոսարանին և իրենց իրառունքներուն տէր ըլլալ, 'ի լրանալ պայմանաժամանակամուն' և է բողոք կամ գիտողութիւն նկատողութեան չպիտի առնուէր. ասոր վրայ Իզմիրլեան սրբազն պաշտօնապէս հիւպատոսին կը ծանուցանէ թէ Աշքեան կարեոր կտակ մը ըրած էր ազգին և անոր պատճէնը կը խնդրէ հիւպատոսարանէն. այս պաշտօնագրին պատասխան ըլ արուիր. սրբազնը երկրորդ գիր մ՝ ալ կը գրէ, որուն հիւպատոսը կը սկատասխանէ թէ կտակը քննուած է՝ բայց հայոց սեպհական ու է տրամագրութիւն չկայ անոր մէջ: Ասոր վրայ Իզմիրլեան կը գիմել տեղական դատարանին, զի ամբողջ կտակին մէկ պատճէն ալ ըստ օրինի տեղական կառավարութեան պէտք էր համզրդուած ըլլալ: Դատաւորը արգարե կը հաւասարէ թէ պատճէն մը կայ իւր քով, բայց զայն ձեռք բերելու համար 140 եղիսպատկան ոսկրյ ծախը մը եղած է, ուստի եթէ սրբազնը կուղէր անողատճառ հայոց վերաբերեալ մասը ձեռք բերել՝ պարտ էր այդ գումարին կէսը, 70 եղիսպատկան ոսկին վճարել դատարանին. սրբազնը այն տաեն կը գիմել նախարարապետ Նուպար փաշային և անոր շնորհիւ ձրի ձեռք կանցունէ Աշքեանի կտակին պատճէնը, որու համառօտութիւնը 'ի ստորե կ' ամփոփենք:

Հանգուցեալը եօթը կտոր կալուած չափչ ըրած է հարիւր մասի վրայ՝ հետեւեալ կերպով:

36½ մասը կը յատկացնէ իւր թոռներուն:

40 մասը՝ չայսատանի մէջ գիշերօթիկ վարժարանի մը կառուցման:

5 մասը՝ Ա. Երուսաղէմի հայոց վանքին:

5 մասը՝ Կ. Պոլսի Ազգ. Հիւանդանոցին:

3½ մասը՝ Կեսարիոյ Ս. Կարապետի վանքին:

10 մասը՝ իւր մնացած ազգականներուն, իսկ Երբ
անոնք ալ մեռնին դարձեալ ազգին:

Սոյն եօթը կտոր կալուածներուն տարեկան հասոյթն
էր մօտաւորապէս 3000 եղիպտական ոսկի:

Ահա այս պատճէնն ՚ի ձեռին իզմիրլեան սրբազան
վերստին կը դիմէ ոռուսական հիւպատոսարանը. Հիւպատոսը
կը խոստովանի թէ արգարե յեպոյ տեսնուած է կտուկին
մէջ այդպիսի տրամադրութիւն մը, ուստի հիւպատոսը այս
առթիւ կը պատասխան է թէ պէտք էր խնդիրը դատա-
րանի ձեռնհասութեան ենթարկել, և եթէ հայոց օրինական
հանդամանքները հաստատուէին՝ կտակի գործադրութիւնը
կարելե պիտի ըլլար. սրբազանը ուզեց որ այս պատասխանը
դրաւորապէս հազորդուի իրեն, առ որ հիւպատոսը դիտել
կուտայ թէ կառավարութենէն այս մասին իրեն զրաւոր
հարցում ուղղելու են, որ զրաւոր պատասխան տայ. Իզմիր-
լեան այդ հարցումը ուղղել կուտայ հիւպատոսին և անոր
զրաւոր պատասխանը կ'ստանայ:

Ընթերցողը գուշակած է անշուշտ որ գործի այս
ընթացքին մէջ ուրիշի մը մատը կ'զգացուէր. այդ ու-
րիշը նոյն իսկ հանգուցելոյն որդին Պողոս պէջն էր որ
կը գժկամակէր հօրը կտակը գործադրել և ամէն գժուարու-
թիւն կը յարուցանէր անոր դէմ: Յիշեալը բանիցս Մատ-
թէոս սրբազանին ալ դիմեց և ապօրինի միջոցներով ուզեց
համերաշխութիւն մը գոյացնել. իզմիրլեան ամէն անզամ
միշտ միւնոյն բանը պահանջեց—հօրը կտակին գործադրու-
թիւնը:

Այս միջոցին սրբազանը տեղւոյն ամենէն ձեռնհաս փաս-
տարանները ՚ի ժաղով գումարած, կտակին վերաբերեալ ամէն
պաշտօնական զրութիւններն անոնց յանձնած և խնդրած էր
որ գործին մանրամասնութիւններն լաւ մը ուսումնասիրե-
լով իրեն տեղեկտգիր մը մատուցանեն թէ դատը, օլինական
ունաուիւրով կրնայ պաշտպանուիլ և ՚ի նպաստ ազգին յաջո-
ղութիւնը ապահովուած է: Փաստաբանաց յանձնախումբը,

Հետ մանրակրկիտ քննութեան, իւր տեղեկադիրը մատոյց,
յորում կը յայտարարէր թէ դադր պաշտպանէլն է, 'է նպաստ
հայոց յաջողաբնիւն՝ տպահութեած:

Իզմիրլեան սրբազնն այս դատին վերաբերեալ ամէն
պաշտօնական գրութիւն, իւր գործառնութեանց մանրա-
մասն համարը, ինչպէս նաև փաստաբանաց յանձնախումբի
տեղեկազիրը օրը օրին ազգ. պատրիարքարանի հաղորդած է.
և երբ կը պատրաստուէր դատի ձեռնարկել՝ Երուսաղեմայ
ամեն. սրբազն պատրիարքը միջնորդեց և չուզելով որ ազ-
գին կարեոր մէկ գերդաստանին հետ ազգը խռովի ու դատի
մէջ մնայ՝ փափազեցաւ համերաշխութեամբ գործը կարգա-
դրել բայց հակառակ իւր անխոնջ ջանից՝ ցաւալի է որ գործ
մը ըս կրցաւ տեսնել. և այս կարեոր դատն ալ ահա այս-
պէս, գործը համերաշխութեամբ վերջացնելու, կամ ըստ
պաշտօնական բացատրութեան, անոյշ ուշաւ հապելու դրու-
թեան մէկ զրչն եղաւ: Համերաշխութեանց բանակցութիւն-
ներ կը կատարուէին՝ երբ իզմիրլեան սրբազնի հիւանդու-
թիւնը սաստկանալով հարկադրուեցաւ Պոլիս գալ և վերջ-
նապէս հրաժարել իւր պաշտօնէն: Աշըզեան կտակը, ինչպէս
ըսինք, մեռեալ տառ մը կրթնայ այժմ: թերեւս եթէ նորէն
գործը ձեռք առնուի՝ կարելի ըլլայ բան մը ընել. բայց գոր-
ծող մարդ պէտք է:

Իզմիրլեան սրբազնն Եղիպատոս գանուած ժամանակ
միջադէպ մը ունեցած է Աշըզեան պատրիարքին հետ *), զոր
կ'արժէ 'ի մէջ բերել ցոյց աւլու համար թէ եկեղեցական
պաշտօնի իրաւասութեան օրէնքներուն որչափ հմառութիւն
ունի մեր պատրիարքը և ինչպէս շուտով ամէն հովէ կը տա-
րուքերի:

Եզիպատոսի քահանայներէն մին ծանր յանցանք մը գոր-
ծած ըլլալով՝ իզմիրլեան սրբազնն, իբր եկեղեցւոյ եպիսկո-
պոս և իբր առաջնորդ վիճակին՝ փիլոնազուրկ կընէ յան-

*) Զը կարծուի թէ Աշըզեան պատրիարք՝ Աշըզեան հանգուցեալ Յակու Էֆէն-
տիի հետ և է ազգակցութիւն ունի. պատրիարքը ինչպէս յայտնի է, Նիկոմիդիոյ
Քէրամէթ գիւղէն է....

յաւոր քահանայն, բայց սա՝ Պոլիս իւր ազդեցիկ բարեկամներուն շնորհիւ պատրիարքին գիմում կ'ընէ և անոր աջակցութիւնը կը խնդրէ: Պատրիարք սրբազննը՝ Պոլսի մի երեւելի ճնշ առաջին խնդիրքը չուզելով մերժել պատրիարքական փոխանորդը (Տ. Գէօրգ ծ. վ. Խթիւնեան, այժմ առաջնորդ Եղիպտոսի) իրեն կը կոչէ և կը հրամայէ անմիջապէս Հեռազրել Խղմիրլեանի որպէս զի յանցաւոր քահանային դարձեալ՝ ի պաշտօն կոչէ: Խուք Խղմիրլեանը չէք ճանչնար, Սրբազն Հայր, կը պատասխանէ Խթիւնեան, նա Զեր զիտցածներէն չէ, այդպիսի նախատինքի մը չը համբերեր. Թէ որ զու կը վախնաս Հեռազրելու ուղղակի ես կը Հեռազրեմ, կը գոչէ պատրիարքը և Հեռազիրը կուտայ: Երեկոյեան գէմ կը հասնի պատասխանը, կարի լակոնական— «Ստացայ Ձեր Հեռազիրը, պաշտօնէս հրաժարած եմ— Խղմիրլեան»:— Ա. Պատրիարք Հայրերնիս ասոր վրայ իրար կ'անցնի. փոխանորդ, վարչութիւն, ամէնքը՝ ի ժողով կը կոչէ— «Ի՞նչ պիտոր ընենք»— փոխանորդը իւր վրէժը լուծածի պէս՝ «Ես Զեզի չըսի՞ սրբա...»— Ճանըմ, ուժ, հասկրցանք, հիմա սա նայինք, ի՞նչ պիտոր ընենք...— Ի՞նչ պիտոր ընէք, պէտք է հիմա Հեռազրէք որ քահանայի գործը բոլորովին իւր անօրինութեան կը ժողովէ— Եւ Ճիշտ այս իմաստով Հեռազիր մը կը յղուի Խղմիրլեան սրբազնի, որով նորին զերապատուութիւնն ալ հրաժարականը ետ կ'առնէ:

Եղիպտոսի կլիմայն աղետաբեր եղաւ առաջնորդ ս. Հօր առողջութեան. իւր պաշտօնավարութեան միջոցին երկիցս սահմուեցաւ Պոլիս զալ մէկ անդամ 87-ին և անդամ մ'ալ 89-ին, իւր տկարութիւնը դարմանալու, իւրաքանչեւր անգամուն չորս ամսոյ չափ հոն մնալով: Հուսկ ուրեմն բժիշկները խորհուրդ տուին իրեն վերջնապէս Պոլիս հաստատուիլ ուստի վերստին հարկադրուեցաւ Պոլիս զալ և իւր վեճակին գործերը Պոլսէն կը վարէր մինչև 1891 նոյեմբեր, որ ատեն վերջնապէս հրաժարացաւ իւր պաշտօնէն: Եղիպտոսի աղդացինք թախանձազին խնդրեցին նորին սրբազնութիւնէն բնաւ չը հրաժարել այլ իրեն փոխանորդ մը կարգելով Պո-

լիս մնալ և 'ի հեռուստ վերին հսկողութիւնն ստանձնել եղիպատոսի ազգային գործերուն. բայց նորին գերապատութիւնն պատասխանեց թէ պաշտօնին պատասխանատութիւնը կը պահանջէր եղիպատոս դտնուիլ և քանի որ այդ բանն անկարելի էր՝ հարկ էր հրաժարել:

Իզմիրեան սրբազն եղիպատոս գտնուած պահուն, օսմ: կառավարութիւնը մէջիտէյէի երրորդ կարդի պատուանշան շնորհեց նմա. մենք սակայն բնաւ հանդիպած չենք որ Իզմիրեան սրբազն այդ պատուանշանով կուրծքը զարդարած ըլլայ:

1890 թուականին, մինչ Իզմիրեան սրբազն իւր պաշտօնատեղին կը դտնուէր՝ օրհնութեան գիր մը զրած էր հապէշաց Մենելիք Բ. թաւաւորին 1): Յաջորդ տարին՝ Մենելիք թագաւոր ոսկիէ խաչ մը զրիեց նորին գերապատութեանն *): Հանդերձ արքայական հրովարտակով: Սրբազնին օրհնութեան զիրը հայերէն էր. իսկ արքայական հրովարտակը՝ հապեշերէն 2):

1) Եգիպտոսի այզապինք Հապէշիստանի հետ առևտրական յարաբերութեան մէջ են. Եգիպտոսին մինչև Հապէշիստան առ նուազն երկու ամփս կը տեէ, զի ճամբառնիրը շատ անգիտան, աւագուտ, քարուտ, 'ի մի բան զժնդակ են: Հապտակ այս դժուարութեան առևտուրը շահաւոր է. բայց այս կես վայրենի երկրին քմահաճոյից զահ չընելու համար մեր ազգայինները՝ հարկ է անոնց հնար բարեկամութեան կազ մը հաստատել այս տեսակետով Եգիրլեան սրբազն օրհնութեան գիր գրեց իրենց թագաւորին. յայտնի է թէ Հապէշը քրիստոնեաց են և իրենց եկեղեցին չը հնանար մեր եկեղեցւոյ գաւանութիւններէն:

*) Մենելիք թագաւորի այս խաչը՝ կարելի է տեսնել՝ նորին Գերապատութեան պատկերում:

Ծան. լսմք.

2) Մենելիք թագաւորի թագմանը Հապէշ մ'է որ սրանչելի կերպով կը գրէ ու կը խօսի ոչ միայն հայերէն՝ այլ մէկ երկու եւրոպական լիգուններ: Գահիրեցի Պետրոս Կարապատեան անոնց աղպայինը այս մարդը տղայ հասակէն իր խնամոց տակ առանելով. Երուսաղեմոյ վանքը դրկած էր որ ուսումն առնէ. Երուսաղեմոյ ժառանգաւորաց վարժարանին մէջ իւր շրջանը աւարտելով՝ Գահիրէ վերադարձաւ իւր պաշտպանին քովը միւսն ոյն առեն Պետրոս Կարապետեան փոքրիկ Հապէշուհի մ'ալ որդեպահ և Գահիրէի հայոց վարժարանին մէջ կրթած էր զանի. երբ Հապէշ և Հապէշուհի շափահաս եղանակ Կարապետեան զանոնք իրարու հետ ամուսնացուց հայ եկեղեցւոյ ծէսով պայմանաւ որ միշտ Գահիրէ մնան. յետոյ Հապէշը «Հայրենիքս մէջ մը տեսնեմ գամ» լսելով ելաւ Հապէշիստան գնաց. հնի, Հապէշաց թագաւորը իւր ազգակիցներէն ասանկ ուսեալ մարդ մը գամնելուն վրայ ուրախ՝ զանի իւր քովը պահեց իրը թագման. իսկ խեղճ Հապէշուհին տակաւին Գահիրէ կը մնայ, ամուսնոյն վերադարձին պատսելով.....

Իղմիրլեան Սրբազնն Պոլիս գալէն վերջը հանդիստ ըլ
մաց. քաղաքական զրպարտութիւններ եղած էին իրեն վրայ,
որոց համար յաճախակի Բ. Դուռը կը կոչուէր հարցարըն-
նուելու:

Եղած զրպարտութիւնք առնչութիւն ունէին 1879-ի
Բարենորոգմանց Խորհրդարանական Յանձնախմբի գործառ-
նութեանց հետ. ինչպէս իւր տեղը ըսած ենք, ոյն Յանձ-
նախմբի Ատենապետն եղած էր Իղմիրլեան սրբազն: Այն
ատեն յանձնախմբի կողմանէ իր գաւառական հարստահա-
րութեանց քննիչ Տիկրանակերտ զրկուած էին Գարեգին
վարդապետ Սրուանձտեանց և Յակոբ Էֆէնտի Պօյաձեան.
իսկ նոյն պաշտօնով Կարին ուղերուած էր պարտիզակցի Վա-
հան Վարդապետ Տ. Մինասեան: Այն թուականէն 'ի վեր
11—12 տարի անցած էր և աշա յանկարծ Յանձնախումբի
Ատենապետին ստորագրութեամբ Կարնոյ քննիչին, ուղեալ
պաշտօնազրեր Բ. Դրան ձեռքը անցած էին, ըլ դիտցուիր
ինչ հրաշալի միջոցներով...: Իղմիրլեան սրբազն այդ թըլ-
թերուն նկատմամբ պէտք եղած բացատրութիւնները տուաւ
և կառավարութիւնը գոհ եղաւ տրուած բացատրութենէն:

Նոյն միջոցին Իղմիրլեան սրբազն վերստին անդամ
կընտրուի Կրօնական ժողովի. բայց վերջին զրպարտութեան
դէպքէն յայտնապէս վերաւորուած՝ կուզէ աղդ. ամեն պաշ-
տօններէ հրաժարիլ. Աշըդեան պատրիարք դէմ կը կենայ և
զրեթէ բռնի ընդունել կուտայ Կրօնական ժողովի անդամակ-
ցութիւնը. և սակայն Բ. Դուռը ըլ վաւերացնէր Իղմիրլեանի
և Ալէաթձեան Գրիգորիս եպիսկոպոսի (որ նոյնպէս Կրօն.
ժողովոյ անդամ ընտրուած էր) ընտրութիւնը. պատրիարքը
ամենայն լոռութեամբ կը համակերպի Բ. Դրան, և շատ զար-
մանալի կը թոււի իւր այս լոռութիւնը՝ մանաւանդ երբ նկա-
տողութեան առնենք ընտրելոց յանձնառութիւնը ստանալու
համար իւր ըրած ստիպումները: Պատրիարքին լոռութիւնը
պարզապէս պաշտօնական վկայութիւն մը կը նշանակէր այս
մարդիկը յաջ կառավարութեան կասկածելի ցոյց տալու,
մինչ նոքա իրենց ազգային պաշտօնավարութեան միջոցին

միշտ աղքին բարիքը կամեցած էին: Ժողովուրդը այս ատեն պատրիարքի սոյն վարժունքը շատ քննադատեց, բայց ի՞նչ օգուտ, չոր ու ցամաք խօսք.....:

1891-ի վերջերը ազգ. Սահմանադրութիւնը Աշըգեան պատրիարքի ձեռամբ խափանուեցաւ և անցեալ տարի մայիս 24-ին, նոյն Սահմանադրութեան տարեդարձը արգելուելով՝ անոր մահը պաշտօնապէս նուիրագործուեցաւ....:

Ալ անկէ յետոյ, քանի որ ուխտադրուժ պատրիարքը ազգին օրէնքը ոտնակոխ ըրած էր՝ ուղիղ մարդիկ հետզետէ ասպարիզէն քաշուեցան: Իզմիրլեան ևս ամէն պաշտօնէ մեկուսանալով գնաց ամփոփուիլ Խւսկիւտարի ս. Կարապետ եկեղեցին, որուն քարոզիչը մնաց միշտ՝ թաղեցիներու համակրանքն ու երախտադիտութիւնը վայելելով:

Վերջերս Բերայի հարուստ թաղէն զինքն մնայուն բարոզութեան հրաւելեցին՝ նիւթական գոհացուցիչ պայմաններով: Ս. Կարապետի թաղեցիք ահ ու դողի մէջ կինան որ իրենց սիրելի հովիտը պիտի կորցնեն. բայց վեհանձն եկեղեցականը կր մերժէ բերացիներուն առաջարկը—Ես իմ աղքատիկներուն հետ պիտի ապրիմ, կըսէ, Զեր ոսկիները Զեղի....:

Պոլսի կլիմային և իրեն տրուած դարմաններուն շնորհիւ Իզմիրլեան սրբազն իւր առողջութիւնը գտաւ և հիմա իւր Փիզիքական վիճակը կատարելապէս գոհացուցիչ է:

Անցեալ տարի մայիս 5-ի ընտրութեան՝ կաթողիկոսական երկրորդ քանտիտատ անուանուեցաւ:

Երբ Վեհ. Զարը Վեհափառ Տայրիկի կաթողիկոսական ընտրութիւնը վաւերացուց՝ Իզմիրլեան սրբազն առաջին և միակ եկեղեցականը եղաւ որ Պոլսէն հերադրաւ շնորհաւորեց Նորին Վեհափառութեան վաւերացումը. ու երբ Վեհ.

*) Պէտք է յիշել որ Կ. Պոլսի թաղական քարոզիչ եպիսկոպոսներն ու վարչապետները իրենց թաղի ժողովրդի նուիրարերութիւններով են ապրում:

Հայրիկի բարեբաստիկ գալուստը կը յապաղէր՝ ինքը, իզմիր-
լեան սրբաղան, այս մասին ամէնէն աւելի մտահոգութեան
մէջ մնաց:

* * *

Իւսկիւտարի բարձանց վրայ, եկեղեցիին մօտիկ, կո-
կիկ խուցի մը մէջ պիտի գտնէք զինքը, գլուխը սև դդակ
մը, երկայն համրիչ մը մէկ ձեռքին և սիկարնիկ մը միւսին
մէջ՝ խոր ընթերցանութեամբ զբաղուած: Ալեխառն թաւ
մօրուքով մը շըջանակուած արեակէզ դէմքը՝ որուն վրայ
ծաղկախտի փոսիկներ իրենց յամառ գրոշմը կը պահէն գեռ՝
զսդ մը հուր աչերը որ այդ դէմքին անկեղծութիւնը և ի-
մայականութիւնը կը յատկանիշեն՝ լայն ու վճիտ ճակատը,
որ պարզութիւն և զօրութիւն կը ցոլացնէ, և բամբային ու
հրամայական ձայնը որ իբր ելեքտրական ազդակ մը, ներքին
մեծութենէն գողցես բան մը գուրս կը հաղորդէ՝ այս ամէ-
նը երկիւղած տապաւորութիւն մը կը գործեն այցելուին
վրայ. և կը մեկնի՛ս գաղափարական վերացումի մը մէջ, խան-
դակաթ տաքցնելով սրտիդ քովիկը սա խորին համոզումը թէ
հոն, այն անշուք խցիկին մէջ կ'ապրի խղճմաւոր եկեղեցակա-
նը, հայրենասէր հայր և... նշանաւոր հայ եպիսկոպոսը.....:
Ա.Հ. իզմիրլեան.....:

Ա. Հ. Ե.

ԱՏԵՓԱՆՆՈՍ ԵՊԻՍԿՈՊԱՄ ՄԽԻԹԱՐԵԱՆ *

Փափազեան Մեսրոպ վարդապետի սպանութեան յանցանքը հաւթուանցոց վերայ ձգելու այս անյաջող փորձից յետոյ խոսրովայի ասորի-կաթոլիկ քահանաները թ. էկնէ պատերից առաջնորդուելով ուրիշ միջոցի դիմեցին. նրանք մի քիւրդ կաշուեցին և երկու արիւնոտ ցնցոտիներ տալով նրան՝ խրատեցին, որ վկայի, թէ հաւթուանցիք սպանել են վարդապետին և նորա ծառային, միևնոյն գիշերը եկել են բրդի տուն և այդ արիւնոտ ցնցոտիները նրա տանը թողնելով միւս գիշերը հեռացել են, և սպառնացել են, որ եթէ քիւրդը դադանիքը յայտնի, կը վնասուի: Կաթոլիկ պատերը տեղական կառավարութեանը 300 թուման խոստանալուց յետոյ՝ պատրաստել տուեց նաև մի հանրագիր, որ տեղական վստահելի պարսիկներին ստորագրել տայ, և որի մէջ սպանութեան մեղքը դարձեալ հաւթուանցոց վրայ էր բարդուած. բայց ճշադաբան և լուսոյ առաժեալք առաջարկած այդ անխղճութիւնը անել խսպառ մերժեցին թէ ճահճառական կառավարութիւնը և թէ ճահճառ պարսիկները: Սակայն սպանիչներից մէկին, որ մի կաթոլիկ հայ էր և հաւթուանում բողոքականների դպրոցի ուսուցիչ արդէն գիւղացիք գտել էին, և գիւղական կառավարութիւնը ուղարկել էր նրան Տիլման այնտեղ հարցուփորձի ենթարկելու. նորա ցուցումների հիման վերայ և էմիր-նիզամի հեռագրած հրամանի համաձայն Տիլմանի կառավարութիւնը 23 ձիաւոր օստիկաններ է ուղարկում Խոսրովա մատնանիշ արուած ասորիներին բռնելու. բայց սոքա չեն յանձնում սպանիչներին: Սաստիկ զայրացած էմիր-նիզամը իսկոյն հեռագրում է Շահին և ուղարկում է իւր երկու օստիկաններին իրանց ծառաներով ոճրագործներին բռնելու, որոնք և կատարելով իրենց վերայ դրուած պարտքը՝ տանում են երեք

(*) Ակեգը տես 1892 թ. Բ. Գրքում: Խմ.

Խոսրովացի ասորիներին Թաւրիզ: 4-րդ սպանիչը, որ վերոյիշեալ սպանուած Սրապիոն վարդապետի ծառան էր, փախել էր՝ Թաւրիզի Փրանսիսկան հիւպատոսի (Բեռնէ) մօան էր ապաստան գտել. Փրանսիսկի ուղղամիտ քաղաքական գործակալը, լուր հասկացած լինելով բանի էութիւնը, իսկոյն էմիր-Նիզամին յանձնեց իւր մօտ ապաստանածին. խիստ և անտչառ քննութիւնը Արեգակնախափայլ Շահի հրամանի համացյն՝ վեր հանեց Ճշմարտութիւնը և յանցաւորները խստիւ պատժուեցան: Եյս երկարատե մաքառմանը սալմաստցի հայերի և կաթոլիկ կղերի մէջ Միսիթարեանը իւր բարձր վերահսկողութեամբ ուղղութիւն և շարժում էր տալիս:

Կաթոլիկ պատերների այս ամեն կատաղի արարքները սրբազանի դէմ աւելի հասկանալի կը լինեն, եթէ յիշենք որ Միսիթարեանի շնորհիւ միայն նոցա բարոզչութիւնը ըսյածողուեց Թաւրիզում կեղրոն ունենալ: 1888 թուի վերջերում կաթոլիկները գնեցին Ներսի թաղումմի հայ վաճառականի տուն, որ արքեպիսկոպոսարան էր լինելու հրովմէտականների համար: Բայց պարսկական օրէնքով զնուած տունը չէր կարող անվիճելի սեփականութիւն գառնալ, մինչև որ կալուածագիրը ըստառագրէր նախ հայ առաջնորդը և ապա պարսիկ կառավարութիւնը: Ինչ ասել կուզի, որ Միսիթարեանը ըսվաւերացրեց թուղթը, և այսպիսով կաթոլիկների մուտքը հայոց թաղում և Թաւրիզում արգելուեց: Էլ չենք ուղում ասել, որ սրբազանը իր շրջագայութիւնների ժամանակ թեմում՝ առիթ չէր փախցնում հայ զիւղերից գուրս վանելու անկոչ առաքեալներին և նոցա փոխարէն հայ քահանաներ ձեռնադրելու կարօտ զիւղերի վերայ:

Բայց սրբազանի արժէքը իւր բըիստոննեայ հօտի համար բարձր էր մանաւանդ այն պատճառով, որ այդ կամսայականութիւնների երկրում որտեղ մարդուս ինչքն ու կայքը անուոճիկ, ընչափաղց պաշտօնեանների համար հրապուրիչ պատառ է, իսկ կեանքը՝ խաղալիք, Միսիթարեանը շարունակ պաշտպանել է իր հօար աւազակ խաներից ու նոցա դաշնակից պարսիկ մէծամեծներից, կոտրել է նոցա ոյժը, հայ զիւղացուն հանել է նոցա հպատակութիւնից և իւր հսկողու-

թեանը ենթարկել ու այսպիսով ջէնն էքի և ալի Փայից
(Հայոց առաջնորդից) ստիպել է ակնածել և հայի պատիւր
բարձրացրել է թուրք ժողովրդի աչքում: Արդէն Նարագաղի
հայոց աղաղակը վազուց երկինք էր հասել. որքան աղիո-
ղորմ տեսարաններ նկարագրուեցան ոռուսահայոց պարբերա-
կան հրատարակութիւններում այդ տանջուած զիւղացոյց
անտանելի կեանքից, տեսարաններ, որոնք օտար լրագրու-
թեան մէջ էլ արձագանք գտան և զարադաղցու քստմնելի
կացութիւնը մարդկանց յայտնեցին: Լայնատարած Պարսկաս-
տանը՝ բաժանուած լինելով գրեթէ անկախ փոխարքայու-
թիւնների և խանութիւնների, որոնք իրենց հերթին նոյն-
պէս ստորաբաժանվում են մանր և դարձեալ անկախ խանու-
թիւնների ու բէկութիւնների,—ներկայացնում է կամայա-
կանութիւնների ու հարստաշարութիւնների մի լայնարձակ
ասպարէզ որտեղ պետութեան գանձարանից ոռօճիկ ըստա-
ցող կառավարիչ խաններն ու բէկերը անխնայ կողոպտում
են իրենց ստորագրեալ ժողովուրգը՝ հայ թէ թուրք անխր-
տիր, բայց հեռու և խուլ անկիւններում ամենից աւելի
քրիստոնեայ հայն է զոհ գնում մանր պաշտօնեանների աղա-
հութեան: Յետ ընկած, «աչքից հեռացած, մոքից մոռացուած»
զարադաղցոց համբերութիւնը հատաւ վերջապէս քէյ-
վանցիք էլ չպարողացան դիմանալ Զէկրիանլի Մահմուդ-
խանի անդադար ծեծին, բանտարկութիւններին ու անյագ
պահանջողութիւններին և չչէրիանցի թուրքերի յափշտա-
կութիւններին. իրանց միջից ընտրելով քաջասիրտ և խելա-
ցի Սարգիս-բէկին և երեք էլ ուրիշ զիւղականներ՝ նրանք
ճանապարհ դրին դէպի Պարսկաստանի մայրաքաղաքը իբրև
պատգամաւորների՝ իրենց գանգատները տարածելու յոտս
ն. Մ. Նասր-էղդին Շահին: Շահը հրամայեց չարագործնե-
րին Թէկրան բէրել և դատել հայերը հաստատում են իրենց
գանգատը պետական երկու բարձրագոյն ատեաններում և
լի հրձուանքով յետ են դառնում: Շահը մի առանձին ֆէր-
մանով յանուն թագաժառանգ իշխանի՝ որոշում է քէյվանցոց
կողմից տալիք արքունի դրամական հարկի և բերքերից տա-

սանորդական տուրքի ճիշտ քանակը և հրամայում է իւր «անհամեմատ և գերերջանիկ» որդուն քէյվանցի հայոց վերայ կարդել մի վատաշելի մարդ, որ վերահսկէր զիւղացոց իրաւունքների պաշտպանութեանը, արքունի բարձրագոյն հրամանները գործադրէր, Ղարագաղի կառավարիչ խանին չքանաշելով՝ նոյայարաբերութեան մէջ գնէր ուղղակի Թաւրիդի կառավարչապետի հետ և պատուէր ստանար՝ որ նրանց այսուհետեւ մի նշին զրկողութիւն չըլինի: Իսկ Սարդիս-բէկը իւր արդարամտութեան համար ստանում է Քէյվանի 9 հայ զիւղերում նախազահութեան պատիւ և ժառանգական մելիքութեան տիտղոս (ինքը արդէն մելիք Զահանի որդին էր):

Այս ամենը կատարուել էին 1885 թուականին, երբ դեռ Ստեփաննոս և պիտօնոսը Թաւրիդ չէր դնացել և թեմը առաջնորդ չունէր գեռ ևս: Բայց գեռ էլի կոյին խաներ, որոնք Ղարագաղի մնացեալ հայ զիւղացոց հանգիստ չէին տալիս և որոնց հետ վիճակուած էր սրբազանին հաշիւ տեսնել: Յիշենք նոյանից Սահմատ-խանին, որի ձեռքի տակ էին 7 հայ զիւղեր, և Մահմադ-Վալի-խանին: Չընայելով որ յիշեալ խաների բարեկամ և պաշտպան էր արտաքին դործոյ պաշտօնեայ սէյիդ-իլմիւլքը, որ ամեն կերպ աշխատեց չեղոքացնել սրբազանի միջամտութիւնը իւր ժողովրդի շահերի պաշտպանութեան գործում, բայց սրբազանը առանց վհատելու շարունակեց դատ պահանջել Թեհրանում իւր հօտի համար և կարողացաւ դատը տանել: զրկուած զիւղացոց հատուցում եղաւ Սահմադ-խանից, իսկ էմիր-Նիզամի հրամանով Թաւրիդում բանտարկուեցին Մահմադ-Վալին և նորա զիւանսատնից ուղարկուեցին Ղարագաղ յատուկ պաշտօնեաներ, որոնք յետ ստանալով ժողովուրդը կողոպտող ֆերրաշներից (ոստիկաններ) բոլոր աւարը՝ յանձնեցին անթերի իրանց տէրերին: Սահմադ-խանի ստորագրեալ հայ զիւղերը խրախուսուած այս յաջողութիւնից և իրենց հարեան քէյվանցոց օրինակը աչքի առաջ ունենալով՝ դէպքից օգուտ քաղեցին և խընդիրքով զիմեցին սրբազանին, որ Սահմադ-խանի իրաւասութիւնից բոլորովին գուրս գան և բոլոր տուրքերը վճարեն

Թաւրիղի նահանգական վարչութիւնից նշանակուած յատուկ պաշտօնեային, և ոչ թէ Ահմադ-խանին: Էմիր-Նիզամը լսելով առաջնորդի դիմումներին, հրամայեց ամեն բան հայոց ցանկութեան համաձայն կարգադրել: Ահմադ-խանի ձեռքից հայ գիւղերը խլուեցան և ինքը խանը առ ժամանակ Թաւրիղ տարուեց ու այնտեղ պահուում էր հսկողութեան ներքոյ: Պէտք է ասել որ Միսիթարեան սրբազնին այս գործում աջակցում էին Թաւրիղի յայտնի հայ վաճառականները—պ. պ. վաճառականնապետ Սասիկ Յունանեանց, մահտեսի Սիմէօն Թումանեանց, Խաչատուր Տէր-Զաքարեանց:

Սակայն երկու խաները սէյիդ-իլ-մուլքի խորամանկութեամբ և մի երկու հարուստ հայերի ցանկութեամբ ու յորդորմամբ արձակուում են կառավարութեան ձեռքով իբրև անպարտ նորա դառնում են իրենց կալուածները և աւելի սասափիկ են հարստահարում հայերին:—Ճշմարտութիւնը հարկադրում է մեղ չը թաքցնել որ այստեղ սրբազնը լուռ կացաւ: Դժբախտաբար մեզ շատ պարզ յայտնի չեն այս և այսպիսի գործերի մանրամասնութիւնները, ուստի զգուշանում ենք որոշ դատավճիռ յայտնելուց հօգելոյս եպիսկոպոսի մասին:—Խորամանկ Ահմադ-խանը ազատուելուց յետոյ՝ մի քանի ամիս լուռ պահեց իրան և հանգիստ էր. բայց յետոյ աւելի դաժանութեամբ սկսեց կողոպտել հայոց գիւղերը, ըստ հաճյից ամեն մի հայի ենթարկել բանտարկութեան և մեծ մեծ տուգանքների, փակեց Ղարաթոփրաղ հայ գիւղի եկեղեցին և գերեզմանատունը՝ որ քրիստոնէութիւնն անարգած լինի: Գիւղացոյց բողոքը կրկին առաջնորդին հասաւ, որ կրկին դատ սկսեց խանի գէմ: Եյս անգամ Էմիր-Նիզամը չը թողեց, որ առաջնորդը եկար ժամանակ ի զուր բողոքի, իսկըն մի առանձին պաշտօնեայ ուղարկեց Ղարադաղ, խանը բռնուեց և Թաւրիղ բերուելով բանտարկուեց (1888 թ.): Իսկ հայ գիւղերը վերջնականապէս հանուեցան խանի իրաւասութիւնից և ընտրական դատաւորներից կազմուած դատարաններին ու ընտրական գիւղական վարչութիւններին ենթարկուեցան: Ղարադաղի ամեն մի գիւղ ունեցաւ այնուշետե

իւր սեփական դատարանն ու վարչութիւնը (ինչպէս յիշել ենք, Ղարադաղում միայն զուտ հայաբնակ գիւղեր կան), ոռոց վերայ իրեւ բարձրագոյն առեան և վերահսկող եղաւ Թաւրիզի հայոց առաջնորդարանը։ Տէրութեան սահմանեալ տուրքերը իրանք զիւղացիք էին հաւաքում և ուղարկում հայոց առաջնորդին, իսկ սա յանձնում էր կառավարութեանը։ Մինչև իւր կեանքի վերջին տարին առաջնորդը հարկադրուած էր մինը միւսի եաւեից Ղարադաղի բոլոր հայ զիւղերում զիւղատէր աղաների իշխանութիւնն ու իրաւունքները ոչնչացնել։ Հէնց 1891 թ. Տղմար գաւառակի Ղշլաղ՝ զիւղի տէր աղան՝ կամենալով այդ զիւղումն անցկացնել ամառը՝ հարկադրում էր զիւղացոց (60 տուն հայեր) իւր տան և ապրուստի բոլոր պէտքերը հոգալ ինչպէս որ միշտ արել էին նախորդ տարիներում։ բայց նախընթաց տարին մորելս փչացրել էր զիւղացոց արտերը, և զիւղացիք խնդրեցին, որ այդ ամառ աղան չը գիւղը աղան չը լսեց զիւղացոց աղաւանքին, գնաց նստեց իւր ամարանոցում և ըսկսեց հրամաններ արձակել. «Եթէ չունեք գնացէք քաղաքից (Թաւրիզից) առէք, բերէք»։ Գիւղացիք համարձակ զիմում են առաջնորդին։ Խսկոյն սրբազնը էմիր-Նիզամից հրաման է առնում, որ այնուհետև զիւղատէր խանը ամառը այլ ևս զիւղը չը գնայ։ Էմիր-Նիզամի հրամանը կատարուում է. Պշաղիք խանին վռնտում են զիւղեց և նորա ամարանոցը քարուքանդ անում։ Բայց շատ զիւղացիք այս ամենից յետոյ՝ վախինալով որ սրբազնը գուցէ մինչև վերջը չը կարողանայ յաղթանակել թողին փախան զիւղից ոմանը Թաւրիզ ոմոնք էլ ուրիշ զիւղեր. մնացեալ սակաւաթիւ (28 տուն) Պշաղիք նցնապէս տարակուսանքի մէջ էին իրենց անորոշ ապագայի մասին և սպասում էին թէ ի՞նչ ընթացք կըստանան զործերը, ուստի վարուցանք չէին անում։ Խեղծերը երեկի նախազդում էին, որ իրանց պաշտպանին շուտով եթէ ոչ նենզաւոր խաները, գէթ հնդախտի սնկիկները կը ջախջախեն...

Ղարադաղի հայ զիւղացին միշտ օրհնում էր իւր սիրելի առաջնորդի կեանքը։ Բայց միայն Ղարադաղը չէր, այլ

և Ատրպատականի մնացած գաւառներն էլ կարօտ էին Մխիթարեանի արագահաս օգնութեան, և ամենից աւելի Քիւրդիստանի Դէրէլէք զիւղի մի հայի զլուխ է ճղում քրդի մէկը. Հայը գանդատ է անում զիւղատէր խանին, որ սակայն անուշադիր է թողնում նորա գանգաար: Գիւղի զրեթէ բոլոր հայ բնակիչները (35 տուն) արդէն զջուած իրենց ազայից, թողնում են դադթում հարեան Սուլ-Դուղ գաւառի Գեօլ զիւղը և այնտեղց բողոքում են առաջնորդին և Էմիր-Նիզամին, պահանջելով որ կամ իրենց յետ դարձնեն իրենց զիւղը և ապահովեն իրենց կեռնքը, և կամ հատուցանեն իրենց մնասը (մօտ 1500 թուման), որովհետեւ Դէրէլէքում թողել էին այդիներ, պարտէղներ, տներ, ջրաղացներ և այլն): Անտանելի էր դադթած հայերի վիճակը իրենց նոր պայմանների մէջ: Նոքաերեք տարի սպասում են այդ յետ ընկած հեռաւոր դաշտում, որ իրենց արդար պահանջներին բաւականութիւն արուի: Սրբազնի շարունակ ու թափանձագին զիմումներին զիջանելով վերջապէս 1891 թ. թագաժառանգ իշխանը մի պաշտօնեայ ուղարկեց հրամանաթղթով զիւղատէր ազայի վերայ, որ հայերի երկու պահանջներից մինն իրագործուի: Գիւղատէրը ստիպուեց յետ դարձնել հայերին և Սովուղ-Բուղալիի կառավարչի ձեռքով զրաւոր կերպով պահով կեանք խոստացաւ նոցա: Իսկ Սուլ-Դուղ դաշտի 7 հայ զիւղերի վերայ սրբազնը վերակացու և կառավարիչ է նշանակում՝ կառավարութեան համաձայնութիւնն առնելով հայագի մէլիք Սէյադին իբրև սէր հէն գ (գնդապեա): — Երկար կը լինէր մի առ մի յիշել այն բոլոր զէպքերը, երբ հեռաւոր խուլ գտաւառներում պատահած սպանութիւնների համար Մխիթարեանը ամեն Ճիգ գործ է զրել հեռագիր հեռաղիր վրայ է ուղարկել ն. Մ. Շահին, որ անպատճառ յանցաւորները Թաւրիղ բերուեն և զլիսատուեն, մինչդեռ պարսիկ կառավարութիւնը այդպիսի զէպքերում միշտ աշխատել է եպիսկոպոսին գոհայնել սպանուած հայի արեան զինը հատուցանելով (ըստ շէրիաթի, քրիստոնէի արեան զի-

նը 100 ռուբլի է, իսկ մաշմեատկանինը՝ 3000 ռ.) և զրա-
նով բանը վերջացնել: Ամենայն դէսլքում, երբ իւր սիրած
հօտի անոլամեներից մինին որ և է վտանգ էր սպառնում, Միսի-
թարեանը իսկոյն միջամտում էր և իւր աշազին աղդեցու-
թիւնը գործ գնում: Արեաց Արքայից-Արքան գնահատեց այս
եպիսկոպոսի անհանգիստ ու գործունեայ եռանդը և «Արե-
գական ու Առիւծի» երկու շքանշաններով յայտնեց նրան
իւր բարձր գոհունակութիւնն ու համակրութիւնը: Պարսից
աւագանին ու հոգեորական բարձր գասը հասկացան թէ՝
ի՞նչպիսի մարդու հետ գործ ունին. նոքա հայոց խալիֆայի
հետ լաւ յարաբերութիւններ մշակեցին և նորա առաջնոր-
դարանից գուրս եկող ամեն մի պահանջ ու գործ, հակա-
ռակ արեւելեան գանդաղկոտութեան, անյապաղ կարգադրում
էին: Ստեփաննոս սրբազնն ինքը ոչ մի առիթ չէր փախցը-
նում գեղեցիկ և շլոցուցիչ փայլով երեւեցնել թէ՝ իրան և
թէ՝ իւր հօտը յիշեալ աւագանու և հոգեորականութեան
աշքում: իւր նրբամիս խելքով նա ըմբռնում էր թէ ի՞նչ
եղանակով պէտք է ներզործութիւն ունենալ նոցա վերայ:
Յիշեցինք արդէն՝ որբան շքով էր կատարել ատալիս եպիս-
կոպոսը թատրոնական ներկայացումները հայոց գպրոցի բե-
մի վերայ. եթէ յիշեցնենք որ պարսիկները երեսայի պէս
հրճուում են ներկայացումների ժամանակ՝ նոյն իսկ բարձր
գիրքի վերայ եղողները, այն ժամանակ պարզ կը լինին սրբ-
բազանի կարգադրութիւնները՝ թուրքերէնի թարգմանելը
հայոց թատերգները և զրեթէ ամբողջ ներկայացումները
թուրքերէն լեզուով կատարել: Խօսք չըկայ, որ օտարամոլու-
թիւն չէ այդ, այլ ճարատար միջոց նպատակին համանելու:
Յիշենք նաև թէ այդ աւագանին որքան հետոքքքութեամբ
և գոհունակութեամբ այցելութիւններ էր անում հայոց
գպրոցներին և արդէն գործել սկսած սպարանին, որտեղ
եւրոպական և արեւելեան լեզուների տառեր կան, և թէ
ի՞նչպէս խրախուսուում էր Ատրպատականում այդ ամենից յե-
տոյ հայի յառաջադիմութիւնը: Բոյց մենք կարենոր ենք հա-
մարում թագաժառանդ իշխանի առաջին անդամ՝ հայոց զբու-

բոցին արած այցելութիւնը նկարագրել այսաեղ որովհետեւ
բաւական բնանիշ գծեր կարելի է նկատել այդտեղ տեղական
հայոց կեանքից և մեր եպիսկոպոսի մատնանիշ արուած յատ-
կութիւնից:

1891 փետերուարի 6-ին Նորին Բարձրութիւն Մուզա-
ֆար-Էլզին Միրզան՝ Էմիր-Նիզամի և այլ բարձրաստիճան
պաշտօնատարների հետ՝ մոտաւ հայոց թաղը այցելու Արա-
մեան գպրոցին, ինչպէս որ մի քանի ամիս առաջ փափագ
էր յայտնել: Հայերը փակել էին իրանց խանութները և պատ-
րաստուել էին ընդունելու ն. Բարձրութիւնը: Առաջնորդը
վաճառականապես Յունանեանցի հետ նախօրօք պատրաս-
տել էր տուել երկու բարձր յաղթական կամարներ զոյնզոյն
զրօշներով և կտորներով միմեանցից 50 քայլ հեռու. զրօշ-
ների մէջտեղում ծածանում էր պարսկական զրօշը: Երբ մօ-
տեցաւ ն. Բարձրութիւնը առաջին կամարին, որտեղ կանգ-
նած էին Արամեան գպրոցի աշակերտները՝ բոլորն էլ միտձեւ
հազած և ծածկած (Թաւրիզի երկու աղայոց գպրոցներում
առաջին անգամ Միսիթարեանը մտցրեց համազգեստ և զբւ-
խարկների վերայ հայատառ աղնձապրոշը), սոքա երգե-
ցին խմբով մի պարսկերէն երգ. այդտեղ գիմաւորեցին Ժա-
ռանգին սրբազնը և հայոց վաճառականապեաը: Ակսուեցաւ
գնացըր. աշակերտները երգելով գնում էին իրենց ուսուցիչ-
ների հետ: Նախ մոտան օրիորդաց գպրոցը. այնտեղ էին ռու-
սաց հիւպատոսն (Պետրով) ու իւր կինը և տաճկաց հիւ-
պատոսը (Յաջի-Ռէսիմ էֆէնտի). աշակերտուհիների ձեռա-
գործները տեսան. ն. Բարձրութիւնը մի քանիսը վեր առաւ.
այնտեղց մոտան տպարան, որտեղ շարել պատրաստել էին
մի ծառ. Իշխանի համար. իսկըն տպեցին և յանձնեցին նո-
րան: Տղայոց գպրոցում աշակերտներին քննեց պարսկերէ-
նից. ապա մոտաւ թատրոնական գալիճը, որտեղ կախած
էն նորին Մեծութեան Շահի և իրեն Թաղաժառանդի մե-
ծագիր պատկերները. մի ընտիր շրջանակի մէջ գրուած էին
նաև իւր և իւր հօր լուսանկարները, որ նուիրեցին իրան. ապա
մոտաւ ընթերցարանը, տեսաւ ոեղանի վրայ դրած լրագիր-

ները, և առաջնորդին յայտնելով, որ աղքի կողմից ի՞նչ խընդիր որ ունենայ՝ պատրաստ է կատարել, հեռացաւ։ Մոռացանք յիշել որ թատրոնական դաշլիճում կախած է լինում միշտ նաև Աղէքսանդր Գի մեծալիր պատկերը։

Բայց սրբազնը աւելի շքեղ ընդունելութիւն արեց իրանի Վեհապետին երկու անգամ, նորին Մեծութեան վերջին ձանապարհորդութեան ժամանակի։ Աւելորդ է նկարագրել այդ. միայն յիշենք, որ Ստեփաննոս սրբազնը երկու անգամ էլ բախտ ունեցաւ ներկայանալ Շահն-Շահին և նորան յայտնել իւր հօտի կարիքները. սրբազնը թուրքերէն էր խօսում նորին Մեծութեան հետ, որը թուրքերէն էլ պատասխանում էր: Սրբազնը ծրարի մէջ դրած մի խնդիրք է ներկայացրել որի բովանդակութիւնը մեղ յայտնի չէ. ասում են, որ Արտմեան դպրոցի համար նպաստ է խնդրել: Խօսակցութեան ժամանակ միայն Մատուր-Խան Սեթխանեանն է եղել նորին Մեծութեան առաջ։ Շահը յայտնելով թէ Մակար Ա. կաթողիկոսը և ընդհանրապէս ամեն տեղի հայերը իրան շատ լաւ ընդունելութիւն են արել՝ աւելացրեց. «ուխտել եմ որ այսուհետեւ առաջուանից աւելի պէտք է սիրեմ հայ աղքը և չը պէտք է խնայեմ» ոչ մի օգնութիւն նրանց համար. ուրեմն յայտնեցէք իմ բարես և շնորհակառութիւնս հայոց կաթողիկոսին» (1889 թուի սեպտ. 6):

Բոլոր այս իրողութիւնները ցոյց են տալիս, որ Մխիթարեան սրբազնը շնորք ունէր, կարողանում էր նպատակայարմար միջոցներ ձեռք առնել իւր դիտաւորութիւնների համար։ Գործի մէջ եղող մարդուն այդ էլ հարկաւոր է։ Բայց դորա հետ միասին մենք տեսնում ենք այս եպիսկոպոսի մէջ խիստ համարձակութիւն, աներկիւղ արիութիւն և մինչև իսկ յանդգնութիւն։ Հետեւեալ իրողութիւնը շատ լաւ է լուսաբանում նորա հոգու այդ կողմը։ Մինչև Մխիթարեանի զալը թաւրիզի առաջնորդարանի եկեղեցին զուրկ էր խաչեց. մահմետականների սովորութիւնների համեմատ՝ այդ բանը անկարելի է թոյլատրել մեծ աշխատանքով յաջողուեց սրբազնին թոյլատութիւն ստանալ բարձր իշխանութիւնից խա-

ըլ կանգնելու: Մահմետական խուժանը իսկոյն աղմուկ արեց դորա դէմ: աեղացի հայերին երկիւղը պաշարեց, վախեցան որ կատաղած ամբոխը կտոր կտոր կ'անի այդ յանդուզն քայլը անել համարձակողին և մեծ ընդհարումն պէտք է ունենան նորա հետ: Ոչ ոք չը համաձայնեց բարձրանալ կաթուղիկն: Այն ժամանակ Մխիթարեանը ինքը կատարեց արհեստաւորի դերը, անխռով բարձրացաւ զմբէթը և իր ձեռքով նորա ծայրին կանգնեց քրիստոնէութեան նշանը:

Մխիթարեանից առևջ ո՞ր հայը անձրե օրին կը համարձակուէր Թաւրիզի փողոցներում երևալ. այդպիսի սրբապրղծութիւն էժան չէր նստի նորան: Մեղ չի ներում տեղն ուժամնակը այսպիսի շատ մանրամասնութիւնների վերայ կանգ առնել այդ պատճառով անցնում ենք մի քանի խօսք ասելու այս եպիսկոպոսի բռնած դիրքի մասին դէպի իր շրջապատող հայ հասարակութիւնը և զլիսաւորապէս դէպի Թաւրիզի հայ մեծատունները: Բայց սոցացիքը և նշանակութիւնը պարզելու համար մեզ անհրաժեշտ հարկաւոր է ծանօթանալ հայ վաճառականութեան վիճակի հետ Պարսկաստանում: մենք կը բաւականանանք ընդհանուր նկատողութիւններով:

* * *

Այն օրից՝ որ Ռուսիան առևտրական յարաբերութիւններ սկսեց Պարսկաստանի հետ Վոլգայով և Կասպից ծովով, սկիզբն առաւ Պարսկաստանի որոշ զոյն ունեցող հայ վաճառականութիւնը. ԺԶ-րդ դարից, — երբ հայերը այնքան փայլուն կերպով միջնորդ եղան ռուսաց և պարսից առևտրական յարաբերութիւններին, — մինչեւ մեր օրերը նոքա շարունակում են իրենց այդ դերը՝ թէե այժմ աւելի նուազած փայլով: Առանց հայերի՝ նոյն իսկ այս ըոպէիս, երբ հաղորդութիւնն այնքան դիւրացել է, անկարող էին ռուսական ապրանքները Պարսկաստանի խորքերը մտնել: Այդ կողմից հայոց Ռուսաստանին մատուցած ծառայութիւնները շշափելի են, որը իրանք ռուսներն էլ են խոստովանում;

և ի զուր չէ ռուս կառավարութիւնը պաշտպանութիւն
ցոյց տալիս պարսկահպատակ հայերին և նոցա ամեն
դիւրութիւններ տալիս Ռուսաստան մտնելու համար: Այս
պատճառով հասկանալիք է Պարսկաստանի հայ առևտրա-
կանների ջերմ համակրութիւնը գէպի Ռուսիան և խիստ
ձգտումն գէպի այդ պիտութիւնը, նորա ապրում են մի-
միայն այդ առևտութիւնի վաստակով: Նոցանից խոշոր վաճա-
ռականները արտահանում են դէպի Ռուսիա չոր մրգեր, գոր-
գեր, բուրդ, բրինձ, ծխախոտ, մասամբ շալեր, մետաքսեղէն:
Թաւրիղում մեծ առևտրական հայ տներ կան, որոնք ահա-
գին շըջանադարձութիւն և հարստութիւն ունեն: Փոքր
առևտրականները ստանում են ռուս մեծ արդիւնաբերող-
ներից ճոխեղէն ու շաքար և մանր առևտուր են անում
այդ իրերով:

Բայց Պարսկաստանի հայ վաճառականութեան դերը
միայն դրանով չի վերջանում: Ռուսիայի առևտուրը
Պարսկաստանի հետ առհասարակ թօյլ է: Դեռ այժմ
էլ երբ շինուած է Անդրկաստեան երկաթուղին, ռուսական
առուտուրը զգալի յառաջադիմութիւն չի արել: Երկրի ա-
ռուտուրի ահագին մասը գտնուում է Անգլիայի և Հնդկաս-
տանի ու Բրիտանական գաղութների, իսկ վերջին ժամա-
նակներից նաև մի քանի սյլ եւրոպական պետութիւնների
ձեռքին (Աւստրիա և Գրեմանիա, մասամբ Հոլանդիա և
Ֆրանսիա): Այդ հոսանքը դալիս է Պարսից ծոցի նաւահան-
գիստներից (մեծ մասը Քարուն գետով), Միջերկրականից
(Հալէպով ու Բաղդադով) և Սև ծովից (Տրապիզոնով և Երզ-
րումով): Բոլոր այդ աղքերի, գլխաւորագէս Անգլիայի ոյժը
դարձած է Ռուսաստանի առևտութիւն, հետեւաբար այդ առու-
տուրով պարագող հայերի գէմ, որոնք իրնց յարաբերու-
թիւնները կատարում են Կասպից ծովի նաւահանգիստներով,
Զուլֆայով և վերջերս նաև Ասխաբադով: Եւրոպացոց այս մրցու-
մը հայ վաճառականների հետ առուտուրի ասպարէզում հաս-
կանալիք է գարձնում պարսկահայ վաճառականների ձգտումը
գէպի Ռուսաստանը, որ աւելի ևս կը պարզուի՝ եթէ ի նկա-

տի առնենք, որ անզլիացիք հայ վաճառականին երբէք չեն
թղյլ տայ՝ որ իրենց ապրանքով անկախ առուտուր անի.
նոքա միայն իրեւ գործիք կը ծառայեցնեն նորան՝ օգտուե-
լով նորա հմտութիւններից տեղական սովորութիւններին և
լեզուին. եւրոպացոց մօտ հայերը գործակալների գերեր են
ստանձնում միայն, իսկ բարձրանալ մինչև իրենց քաղաքա-
կրթուած տէրերի տնտեսական անկախ վիրքին՝ չեն կարո-
ղանում: ըլւնենալով նոյա ձեռներէց և գործնական ողին:
Հակառակ տիպար է ներկայացնում հայ առևարականը հիւ-
սիսային Պարսկաստանում: մինչդեռ ոռուս գործարանատէ-
րը Պարսկաստանի այլ և այլ քաղաքներում եւրոպացոց սաս-
տիկ մրցութեանը ըզդիմանանով ստիպուած է լինում փա-
կել իր՝ նոր բացած՝ ապրանքների մթերանոցները, հայը մի
որ և է յետ ընկած անկիւնում նրանից գնած ապրանքնե-
րով մանր առուտուր է անում և տարիներ շարունակելով
ընդարձակում է իւր գործունէութիւնը և այսպիսով ոռու-
սական առուտուրը Պարսկաստանի հետ, որով և նորա քա-
ղաքական աղբեցութեանը, —որսվհետև յայտնի է, որ ներ-
կայում ամենայն տնտեսական աղբեցութեանը և աշխարհա-
կալութեանը յաջորդում է իրողապէս քաղաքական աղբեցու-
թիւնը և աշխարհակալութիւնը: Այս պատճառով Պարսկաս-
տանում ոռուս հիւսպատոսները, որոնց պաշտօնը զիսաւորա-
պէս ոռուսական առուտուրի զարգացմանը օժանդակելն է, ամեն
կերպ աջակցում և հովանաւորում են Ռուսաստանի հետ
առուտուր անող հային. իսկ իրանք այդ գասակարգի հայերը
եւրոպացոց մրցութեան և շահերի սերտ նոյնութեան շնորհիւ
ստիպուած են եղել միանալ, համախմբուել և մի կազմակեր-
պուած ոյժ ձեւացնել, որն ի հաշիւ չառնել անկարող է
Պարսկաստանի հայ գործողը: Իրեւ արթուն հսկող իր շա-
հերի՝ այդ գասակարգը խիստ զգացուն է դէպի ամենայն
շարժումն, որ վերաբերում է Պարսկաստանում երկու հա-
կակշռող զօրութիւններին, որովհետև նորա հաշիւների

մէջ բնաւ չի կարող մտնել այդ երկրի տնտեսական հպատակութիւնը Անզլիային. ուստի նոքա չեն համակրում այլապէս մտածողներին. «Անզլիան հեռու է», ասում են նոքա, «անախորժութիւններ անել ուսւ կառավարութեան վերաբերմամբ՝ անմտութիւն է»: Այդ դասակարգի դէպի Բուսիան տայած համակրութեան մի խիստ աչքի ընկնող փաստն էլ այն է, որ Թաւրիզի Արամեան դպրոցի թատրոնական մեծ դաշլիճում Նասր-Էդդին Շահի և Մուզէֆէր-Էդդին Թաղաժառանդի մեծադիր պատկերների հետ կախած է նաև ուսւաց Աղէքսանդր Գ Կայսեր նոյնապէս մեծադիր պատկերը, որ բաւական աչքի ընկնող և բնանիշ երևոյթ է Ադրբէջանի համար: Ինչպէս յիշեցինք, ուսւ կառավարութիւնը տարեկան 150 թուման նպաստ է տալիս Արամեան դպրոցին, այնտեղ ուսւաց լեզու աւանդելու համար. այժմ այս լեզուն բաւական տորածուած է Ասրապատականում և կրթութեան ու յառաջադիմութեան նշան է համարուում ուսւերէն գիտենալը. իսկ ուսւահպատակ ձեւանալը և ուսւաց քաղաքական գործակալների մօտ պաշտպանութիւն գտնելը հալածանքներից՝ խիստ սովորական բան է պարսկահպատակ մի քանի հայերի մէջ, մանաւանդ քաղաքաբնակ հայերի: Քալով քաղաքացի արհեստաւոր գասակարգի վերաբերութեանը դէպի առեստրականները, պէտք է ասել որ շատ էլ համակրական չէ այդ վերաբերութիւնը. երկու դասակարգերի շահերը շատ չեն շշափում իրար, և յաճախ ուղղակի իրար հակառակ են. նոքա իրարից շատ են խորթացել այժմ: Ասկայն պէտք է ասել, որ հին սերունդը շատ չէ շեղուած արհեստաւորներից իւր ձգումներով ու կեանքով: Պէտք է ասել և այն, որ այդ դասակարգը աշխատում է զանազան բարենպատակ գործերով յօդուա ընդհանուր հասարակութեան իրան սերտ կարուած պահել հասարակ դասի հետ (դպրոցներ ու եկեղեցիներ շինելով, նոյտ եկամուտները հոգալով և այլն): Այդ կողմից նորա ցոյց տուած օգուտար բաւական շշափելի է: Ահա այդ դասակարգն է պլիաւորապէս, որ կազմում է Թաւրիզի «աղաների» խումբը, մի զօրեղ խումբ, որի

Հետ պէտք է անշուշտ գործ ունենար Սահմաննոս եպիսկո-
պոս Միթմարեանը:

* * *

Թաւրիզի մեծատունները վերցիշեալ հանդամանքների
շնորհիւ ահաղին աղքեցութիւն ունէին հայոց թեմական
բոլոր գործերի և նոյն իսկ պարսիկ տեղական կառավարու-
թեան վերայ: Արամեան դպրոցի և եկեղեցու կառավարու-
թիւնը լիովին կախուած էր նրանցից. իսկ թոյլ առաջնորդ-
ներին իրանց աղքեցութեանը ենթարկելով՝ ղեկավարել են և
ամբողջ թեմը: Մի որ և իցէ խան կամ բէկ մի հայ հարուս-
տից դիցուք տոկոսով մի խոշոր գումար պարտք է վերցրել.
իսկ այդ խանը կամ բէկը յանցաւոր է գտնուել մի գործում
և զրկուել է իւր պաշտօնից. հարուստ հայը յաջողեցնում է
Թաւրիզի կառավարութեան մի պաշտօնատարի միջոցով խա-
նին կամ բէկին աղատել և իւր պաշտօնի մէջ վերահաստա-
տել. կամ դիցուք մի աղքեցիկ հայ մեծատուն մի դեղեցիկ
ձի կամ մի ուրիշ թանգարին նուէր է ստանում որ և է
խանից. հէնց որ այդ խանը մեղագրուում է ղեղծումներ ա-
նելում իւր պաշտօնի մէջ, իսկոյն հայը միջամտում է և գո-
րանով էլ շատ անդամ ի գերեւ է հանում առաջնորդի կամ
ժողովրդի բողըները. կամ դիցուք մի որ և է քաղաքի խեղձ
հայ արհեստաւորների աշխատանքն ու վաստակը արկղներ
շինելն է, որի համար փայտը կտրում են մերձակայ անտա-
ռից. հայ մեծատունը շահաւէտ պայմանով խանից կամ բէ-
կից գնում է այդ անտառը և այնուշետե. ինքն է արկղներ
պատրաստում: Սյսպիսի շատ օրինակներ կարելի էր յիշել
որ այդ գասակարգը՝ միակողմանի կերպով միայն իւր օ-
գուտն աչքի առաջ ունենալով՝ հասարակ դասին է մեասում:

Միթմարեան սրբազներ այդ անենը տանել չեր կարող.
նա անկախ մոտածել և անկախ գործելու սովորած մարդ էր,
ենթարկուել ապօրինի աղքեցութեանը անտանելի էր նորա
վեհանձն ինքնասիրութեան համար. եթէ այդ հարուստներն

իրաւունքներ էին բանեցնում ապօրինի կերպով՝ ինըը՝ իրը և օրինաւոր առաջնորդ՝ նոյնպէս կարող էր իրաւունքներ բանեցնել, և մեծ իրաւունքներ։ Եւ Մխիթարեան սրբազնը ուղեց իւր հակառակորդ դասակարգի ոյժը կոտրել որ այնուշետե անկախ կերպով իր ծրագիրներն առաջ տանի թիմական վարչութեան գործերում։ Նա, հէնց իւր առաջնորդութեան առաջնին գպրոցների հոգաբարձութեան թիւը վեցից իջեցրեց երեքի. այնուշետե եպիսկոպոսը այն երեքին էլ իւր ձեռքն առաւ և այլպիսով գպրոցական գործում նոցա ոյժը թուլացաւ. այդ ոյժը բոլորովին չեղոքացնելու համար գպրոցից արձակեց մի քանի նոցանից հոգանաւորուած ուսուցիչներ և տեղը նորերը կանչեց կովկասից։ Բայց սրբազնի նոցա տուած ամենամեծ հարուածը գպրոցի ծրագրի փոփոխութիւնն է. ծրագիրը կազմուած էր, ինչպէս ասել էինք, չըս լեզուներից և մի քանի վայրիվերոյ աւանդուող առարկաներից. գլխաւոր ուշագրութիւնը գարձրած էր լեզուների վերայ (ի հարկէ առևստուրի նպատակներն աչքի առաջ ունենալով): Աշակերտների սրտին ու մաքին առողջ մնունդ տալու նպատակով Մխիթարեանը լեզուների ժամերը կրծատեց և ծրագրի մէջ մացրեց նոր առարկաներ, — բնագիտութիւն, բնալուծութիւն, բնական պատմութիւն, երկրաչափութիւն և հանրահաշիւ, որոնց համար նոր ուսուցիչներ հրաւիրեց և մի քանի գասեր էլ, նաև գպրոցի տեսչութիւնը, ինըը յանձն առաւ։ Պարզ երեսում էր որ սրբազնը ձեռք է զարկել Արամեան գպրոցի արմատական կերպարանափոխութեան, որ վերջ ի վերջոյ պէտք է դարձնէր այդ գպրոցը Աարպատականի թեմական գպրոց։ Հէնց առաջնին տարուանից արդէն Մխիթարեանը, այսպիսով իր դէմ զինեց հակառակորդներին, որոնք խիստ գժգոհ էին նորա «բռնապետական» ձգտութերից և իրանց մարդկանց միջոցով աշխատում էին ժողովուրդը առաջնորդի դէմ բարձրացնել։ Բայց եպիսկոպոսը այստեղ էլ արագ, համարձակ ու կտրուկ ընթացք բռնեց. օգտուելով իւր իրաւունքներից՝ մի քանի այդպիսի երիտասարդներ պարսիկ կառավարութեան

ձեռքով քաղաքից արտաքսել տուեց՝ իբրև «խառնակիշներ»։ Այնուհետև բոլորը լոեցին առ ժամանակ առաջնորդի դէմ խօսելուց. սակայն ծրագրի փոփոխութեան հետեանքները մեծ խօսակցութիւնների ու դժգոհութիւնների առիթ զարձան. աշակերտներն արդէն ցոյց էին տալիս նոր առարկաների աւանդման արդիւնք եղող «ապատական մտքերը» և իբր թէ ազատութեան մասին ցնորդները, որոնք խիստ զիւրչին գալիս նոցա զգոյշ և իրենց շահերին արթուն կերպով հետամուտ եղող վաճառական ծնողներին. նոքա անպատճառ ուղում էին իրենց արժանաւոր յաջորդները պատրատել իրենց զաւակներից։ Նոքա խիստ ցաւում էին որ լեզուների, և մանաւանդ ուղարց լեզուի, յառաջադիմութիւնը թուլացել է գպրոցում, և յարմար առթի էին սպասում բացարձակ գուրս գալու առաջնորդի դէմ և զորելու այդ յամառ եպիսկոպոսին իւր աթոռից։ — Առիթը ներկայացաւ 1889 թուին. ուսուցչական խումբը (Յ հոգու ստորագրութեամբ) խնդիր տուեց Հոգաբարձութեանը արձակել մի յանցաւոր աշակերտի. այլպէս էլ եղաւ. բայց սրբազնը ընդգիւմանում է. հետեանքն այն է լինում, որ ուսուցիչներից 4 հոգի և Հոգաբարձութիւնը հրապարակաւ հրաժարուում են իրենց պաշտօններից. իսկ չորս ուսուցիչները յայտարարութեամբ զիմում են Հասարակութանը և նորա ուշագրութիւնը հրաւիրում եպիսկոպոսի բռնութիւնների վերայ գպրոցական գործում՝ խոսանալով, որ եթէ Հասարակային ժողով գումարուի՝ իրենք բացատրութիւններ կրտան. սակայն չը յաջողուեց բաղմութիւնը վեր կացնել ընդդէմ առաջնորդի և դժգոհ ուսուցիչներից երկու հոգի ստիպուեցան բոլորովին թողնել գպրոցը (Ֆացեալները ստիպուեցան ֆալ)։ Այս վէճի մանրամասնութիւնները, որոնք դժբախտաբար մեզ Համար պարզ չեն կարեոր ազբիւրները մեր ձեռքում չունենալու պատճառով, տպուեցաւ Թաւրիզում Գորշեանց եղքարց վիմագրատանը «Մի խումբի բողոքողների կողմից Բողոք» վերնագրով և ձրի ամեն տեղ ցրուեցին։ Բացի զրանից այդ դէպքից առաջ էլ յետոյ էլ Հակառակորդները

թղթեր էին ման ածում ժողովրդի մէջ և ստորագրութիւններ հաւաքում, որ կաթողիկոսին բողոքեն եպիսկոպոսի գէմ և նոր առաջնորդ խնդրեն. մի այցպիսի բողոք նոցա յաջողուեց նոյն տարին ուղարկել սինողին: Սակայն Միհիթարեանին միայն մահը տապալեց. և մի երկու տարուց յետոյ խիստ հակառակորդներն անգում նորա զովարանողների կողմն անցան: Վերջապէս ինքը Միհիթարեանը իւր ճարտար ու նուրբ իւլքով կարողացաւ հաւասարակշռութիւնը վերականգնել հասարակութեան ոյժերի մէջ: Գուցէ զգալով, որ չափազանց ծայրայեղութեամբ է վարուել հակառակորդների հետ, նոյն տարուայ մարտի 26-ին, երբ հրաժարուածների տեղ նոր հոհաբարձուներ պէտք է ընտրուէին, եպիսկոպոսը առաջարկեց ընտրել առաջուայ նման 6 հոգի հոգաբարձու և 6 էլ անձնափոխանորդ Յ տարով. իսկ այս միջոցներումն էլ զպրոցի ծրագրից դուրս ձգուեցան բոլոր նորամոյժ առարկաները՝ բացի հանրահաշուտից, և այդպիսով, ըստ երեսյթին, յաղթող հանդիսացաւ հակառակորդ խումբը: Այնուամենայնիւ գոլրոցի վերին հսկողութիւնը սրբազննը իւր ձեռքում պահեց, և երբեմն բացակայ ուսուցիչների դասերը ինքն էր աւանդում: այս պատճառով նա ամենայն օր ստիպուած էր ներկայ գտնուել դպրոցում դասերի ժամանակ և զեկավարել ուսուցչական խումբը իւր ծրագիրներով: իսկ դուրս ձգուած առարկաների աւանդումը վերահաստատելու յոյսը երբէք չէր կորցնում Միհիթարեանը, և միայն յաջող հանգամաների էր սպասում:

Ստեփաննոս եպիսկոպոսի գործունէութեան մի ուրիշ կողմը, որի շնորհիւ նա հայոց մէջ այնքան մեծ ժողովրդականութիւն ստացաւ, մենք չենք կարող զժբախտաբար, երկարօրէն պատմել այստեղ և ստիպուած ենք թողնել աւելի յաջող ժամանակների. միայն կը յիշենք այդ առթիւ Թաւրիզում տեղի ունեցած մի դէպքի մասին, որի ժամանակ առաջնորդի բռնած արիական ընթացքը ստիպեց նոյն իսկ հակառակորդներին խոնարհել սրբազնի առաջ: Ատրպատականին սահմանակից Վանի վելայէթում Միհիթարեանի առաջ-

Նորդութեան ժամանակ նահանգապետ էր Խալիլ-փաշան, որ սաստիկ չէր սիրում իւր հարեան հայ առաջնորդին Ահա այս ժամանակ Թաւրիզի հայ երիտասարդութիւնը մի ներկայացում տուեց և վերջը և փոփոխութիւններով կենդանի պատկեր, ժամանակակից կեանքից վերցրած։ Ներկայ էին Փրանսիական և օսմանեան (Բէհջէթ էֆէնդի) հիւպատոսները իրենց փոխանորդներով և քաղաքի եւրոպական դաղթականութիւնը իրենց ընտանիքներով։ Ներկայացման հետևանքը մի երկու ամիս յետոյ երեան եկաւ։ 1889 մարտի երկուսին, մի անսպասելի հրաման տեղի ունեցաւ զալարէկի (քաղաքապետի) կողմից, որի տունը հրաւիրուեցան միայն Թաւրիզի պարսկահպատակ հայերը՝ փոխարքայի հրամանը լսելու։ Հրամանադիրը գրուած էր պարսկերէն լեզուով միայն հայոց համար և բաղկացած էր և յօդուածներից։

1. Ներկայացումների համառօտ բավանդակութիւնը զալարէկին յայտնել իմանալու համար՝ կարելի է ներկայացնել թէ ոչ։

2. Մի օտարական հայ կամ այլազդի եթէ Թաւրիլ զայ և հայի տուն իջնի, տան տէրը իսկոյն պէտք է զալարէկին յայտնէ, թէ նա ի՞նչ գործով է պարապում։

3. Եթէ մի հայ իր տունը ծախի, պէտք է յայտնի զալարէկին վաւերացնելու, որ յետոյ խարդախութիւններ չը ծովեն։ և վերջապէս ամենադլխաւորը՝

4. Երբ հայերը կամենում են որ և է աղղային ժողով անել, պէտք է նախօրօք յայտնեն թաղապետին, որ սա նշանակէ ժողովում տէրութեան կողմից մի ներկայացուցիչ որ իմանայ թէ հայերն ինչ են խօսում և վիճում։

Այս առաջարկութիւնից երեսում էր, որ Թաւրիզի հայերը իրենց վերայ են հրաւիրել պարսկական կառավարութեան ուշադրութիւնը և կասկածները, կամ պէտք էր ենթադրել որ պարսիկ տեղական կառավարութիւնը ուրիշի ազգեցութեան ներքոյ է գործում։ վերջին ենթադրութիւնը զարմանալի չի երեայ, եթէ աչքի առաջ ունենանք, որ անզական կառավարութիւնները առհասարակ շատ թոյլ կերպով են կապուած կեդ-

բոնի հետ. մանաւանդ եթէ մտածենք, որ Շահի առանձին վստա-
հութիւնը վայելով Ասրապատականի հայերը ոչ մի կերպով
չին կարող պարսից պետութեան դէմ թշնամական դիրք
բռնել և մնասել նորան: Այլապէս բայցարել մանաւանդ
վերջին առաջարկը՝ անկարելի է: Հրաւիրուած հայ մեծա-
մեծները ոչինչ չեն կարողացան խօսել առաջարկների գէմ և
միարեան շնորհակալութիւններ անելով և թագաժառանդ
փոխարքային էլ երկար օրեր մաղթելով խոնարհութեամբ
գուրս եկան: Յաջորդ օրը զալաբէկի եղբայրը անձամբ
նոյն հրամանագիրը տարաւ Միսիթարեանին, որ նա էլ ըն-
դունի և վաւերացնի: Բայց առաջնորդը կանդ առաւ հէնց
4-րդ յօդուածի վերայ և մերժեց ընդունել այն, յայտնելով
որ իրան է վերաբերում ժողով անել թէ չսնելը և քանի որ
ինքը տէրութեան վատահութեանն արժանացած և նորանից
հաստատուած հայոց առաջնորդ է, այդ պատճառով կարեռ-
րութիւն չկայ, որ ժողովում տէրութեան կողմից մարդ
ներկայ լինի: Բայց յետապայ բանակցութիւնների ժամանակ
տեղական կառավարութեան հետ՝ եպիսկոպոսը բոլորովին
մերժում էր ընդունել չորս առաջարկներն էլ յայտնելով որ
եթէ դա տէրութեան օրէնք էր, ինչու միայն հայերին էր
վերաբերում և ոչ մնացեալ ազգութիւններին էլ, որոնք զո-
յութիւն ունին Ասրապատականում. իսկ ինչ վերաբերում է
իւր հայ աղջութեանը, ինքը պետութեան առաջ պատաս-
խանատու է նորա կողմից: Առաջնորդի այս արիական ըն-
թացքը ստիպեց պարսիկ իշխանին, զալաբէկին, տեղի տալ
և խնդիրը վերջացնել: Ընդհանուր գոհունակութիւն տիրեց
Թաւրիզի հայերին, երբ վերցիշեալ հոգաբարձական ընտրու-
թեան ժողովում հաւաքուածների հարցերին սրբազնը պա-
տասխանեց, որ ժողովներում տէրութեան ներկայացուցչի և
օտարահպատակների (լսուքը ռուսահայոց վրայ է) այդ ժո-
ղովներին ներկայ լինելու խնդիրներում ամենայն պատաս-
խանատութիւն իւր վրայ է առել որ և կառավարու-
թիւնն ընդունել է: Մի քանի ժամանակից դէսը սրբազնի
գէմ զրգուած դժկոհներն անդամ բոլոր ժողովի հետ ոտքի

կանգնելով՝ ընդհանուր գոհունակութիւն յայտնեցին եպիսկոպոսին, որը նաև հրապարակաւ, լրագրութեան մէջ, կատարուեցաւ։ Հայերը վերջը իմացան, որ այդ ամենը և ուրիշ այդպիսի մեքենայութիւնները Թաւրիզի օսմանեան հիւպատոսի լարածներն են։

Բացի այդ, Ստեփաննոս եպիսկոպոսը մի բողքագիր է ուղարկում Պոլիս օմանեան արդարադատութեան նախարար Զէլտէթ-փաշացին, որի մէջ պաշտպանելով ո. Էջմիածնի Մայր-Նժոռի և Գէորգեան ձեմարանի անարատ պատիւր, Հերքում է այն սխալ լուրը, որ իբր թէ այդ ձեմարանի սաներից մինը սպանուել է ոստիկաններից և իբր թէ Ճեմարանը «խռովարար» աշակերտներ է պատրաստում։ Մի առժամանակ գորա հետ կամ գորանից փոքր ինչ առաջ հանգուցեալ հայրապետը Մակար Ա. մի ազգարարութիւն ուղարկեց Պոլսի հայոց պատրիարքարանը նշյն բովանդակութեամբ, հրամայելով որ ներկայացուի օմանեան արդարադատութեան նախարարին և արդարութիւնը հրապարակաւ վերահաստատուի ու սուտը հերքուի։ Հակառակ զէպքում, կաթողիկոսը իրեն էր վերապահում հարկ եղած տնօրինութիւններն անել։ Մենք հաստատ ըսդիտենք թէ ի՞նչ հետեւանք ունեցաւ այդ գործը։ Յիշատակելով այս ամենը, որոնք վերաբերում են Միիթարեան սրբազնի գործունէութեանը ընդհանուր-հայկական կեանքում, պէտք է յիշենք նաև նորա շնորհիւ վերականգնած Դէրիկայ վանքը և նորա կալուածները ու վանքի ամուր պարիսպները, որի մէջ մի փոքր էլ միաբանութիւն կար ապաստանած և որը հայ գիւղացիների համար պատրապարան էր լինում Դուշման գէրէի ձորով երթեեկող աւազակ քրդերից։ Իսկ քրդերի այդպիսի երկիւղալի երթեեկութիւններն տաճկաց և պարսից սահմանագլխում առանձնապէս սասակայել էին վերջին ժամանակներս։

Մնում էր Միիթարեանի աղնիւ անձնուիրութիւնը զէպի հայ ժողովուրդը փորձել մի աւելի ծանր գիսպուածում, որը և նրա կեանքն արժեցաւ։ գա խոլերայի ժամանակ նորա անձնաղիր նուիրուածութիւնն էր իւր թշուառ ժո-

զովրդին։ Մինչդեռ համաձարակը Մեշեղից անցել էր Անդրկովկաս և Վօլգայի ափերից հեղեղել էր ամբողջ Խուսաստանում, նոյնպիսի արագութեամբ տարածուում էր մինչև Աստրատական և այստեղից անցնում էր սահմանակից Վանի վելայէթը, ամեն տեղ սարսափելի կոտորածու աւեր թողնելով իւր ետեից։ Պարսկաստանի մայրաքաղաքը վաղուց դատարկուել էր մեծամեծներից, սկսեալ Շահից մինչև փոքր ի շատէ ունեոր մագիկը բոլորն էլ ասպաւինել էին հիւսիսային լեռները դեռ համաձարակը քաղաքին չըհասած, մնացել էին միայն պատերազմի և ներքին գործոց նախարարները։ Երկրին սպառնում էր կատարեալ անիշխանութիւն։ Յուսահատուած ու կատաղած պարսիկ խուժանը, մանաւանդ հոգեորականութիւնից զրգուելով քրիստոնեաների գէմ, անձնատուր էր եղել իւր մոլեռանդ բնազդումներին։ մուշտէյիգները հաւատացնում էին ամբոխին, որ խոլերան եկել է միայն «պիղծ» հայերի պատճառով՝ որոնք բարկացրել են իբր թէ մարզարէին, որովհետեւ օղի և զինի են ծախում (պէտք է ասած, որ պարսիկների մէջ այժմ մոդա է հարբելը և հայերը մեծ շահ ունեն օղի ծախելուց)։ Աստրաբաղում ամբոխը զրգուելով ռուսաց գէմ, իբրև թէ նոքտ են խոլերայի պատճառը, յարձակուեցաւ ռուսաց հպատակ հայ զինեվաճառների խանութների վերայ և աւար տռաւ, իսկ քաղաքի կառավարչի տունը քանդեց։ ինքը կառավարիչը հաղիւ տղատուեց։ թնդանօթակիր Յ ռուսական շոգենաւ հասան Աստրաբաղի Գեաղ նաւահանդիսուր հետեւակ և ձիաւոր զօրքերով ռուսահպատակ հայերին պաշտպանելու։ Նոյն տեսակ կատաղութիւններ էր անում ամբոխը նաև Խաչտում և միւս անպաշտպան քաղաքներում։ Երբ համաձարակը Թեհրան մոտաւ և սկսեց իւր կոտորածը, քաղաքից փախաւ և պարսկական զօրքը։ յուսահատուած ամբոխը թողեց հայ թիսելը, Փրանսիական դեսպանը սեփական փուռ ստիպուած եղաւ շինել տալ և հայ թիսել իւր և իւրայինների համար։ Համաձարակը հասաւ Թագաժառանդը և բոլոր պաշտօնեաները ա-

պաւինեցին մերձակայ Սոհունդ լեառը գիւղերը քաշուեցին
և բոլոր ունեսոր մարդիկ: Քաղաքում մնաց միայն խեղճ՝ զա-
սակարգը. Հայերից մնացին միայն 60—70 տուն, որոնք յանձն
տոնելով փախած հարուստների տների պահպանութիւնը,
օրական 2 զռան և ուտելիք իրրե վարձ էին ստանում դորա
համար: Թաւրիզումն էլ շուտով սաստկացաւ կոտորածը.
այստեղից էլ զօրքը փախաւ, և քաղաքի հայերը ահուդողի
մէջ ընկան, անպաշտպան մնալով մոլեռանդ ամբոխից. ար-
դէն հաց թիսելուց այստեղ էլ էին դադարել. շաքարը և այլ
Ռուսաստանից եկող իրերը՝ հաղորդակցութեանց ընդհա-
տուելու պատճառով անսանելի թանգացան: Սարսափելի էր
քաղաքում մնացած խեղճ՝ դասի վեճակը:— Աւետարանի ան-
ձընուրաց ու անվեհեր աշակերտը, քաջ հովեւը, իր անձը
դրած իւր ոչիարների համար, իւր հոգու ամենաազնիւ
ձայնին հետեւելով մերժեց հարուստ հայերի խնդիրներն ու
հրաւերները— հետեւել իրենց, խոյս տալ գիւղերը,— մերժեց
սալմաստցոց ուղարկած ձիերը, որոնք քաղաք էին բերուել
թանդազին առաջնորդի կեանքն աղատելու, իջաւ իւր շըեղ
առաջնորդարանից, գնաց մտաւ Լիլավայի ժողովրդի տնակ-
ները՝ անձամբ միիթարելու, վհատեալ սրտերը քաջալերելու
և յօյս ու հաւատ ներշնչելու: «Ես ում համար եմ ապրում»,
պատասխանեց սրբազնը իրեն աղաջողներից մէկին՝ որ հե-
ռանայ քաղաքից. «Ի՞նչպէս թողնեմ այս խեղճ՝ ժողովուրդը
կրակի ու վտանգի բերանում», և հումկու տղամարդի սիր-
տը փղձում է այդ քաղցը սիրուց, արտասունքները գլորու-
ում են թուլս այտերի և սև մօրուքի վերայ... Ահա հասաւ
վճռական օրը: Պարսիկներից օրական 500 մարդ է մեռնում;
Հայերից 10—16 մարդ. գիակներն օրերով մնում են քաղա-
քի ծուռ ու նեղ փողոցներում ընկած և շները կրծոտում
են. ոչ մի խանութ բայց չէ. սովամահ է սպառնում. հայոց
թաղում ահից ոչ ոք դուրսը չէ ման գալիս. սրբազնի ստի-
պելով քաղաքում մնացած հայ քահանաները (չորս հոգի)
շտապ-շտապ այս ու այն տունն են մտնում ու դուրս դա-
լիս: Անհանգիստ եպիսկոպոսը մի տեղից միւսն է վաղում,

Խոլերայի մասին գրքոյկներ է ցրուում, խորհուրդներ է տալիս, յուսագրում, հրամաններ՝ է հանում, որ հայոց տները անվտանգ պահպանուեն խուժանի բարբարոսութիւններից: Բայց քաղաքում օդն անտանելի է գտանում: ամենքը փակել են գոներն ու լուսամուտները սարսափելի դարշահոտը ներս ըլթողնելու համար. երեխն այդպիսի փակած տները բաց էին անում և ոչ մի կենդանի էակ չէին գտնում մեջը, —բոլորը մեռել են և դետնին են վեր թափուած: Դիակները սայլերով ու սանդուղներով են կրում՝ իրար վրայ ածելով 20—30 հատ. մի ուրիշ տեղ ձիերի վրայ են բարձում: Երկու օր շարունակ քաղաքի մէջ մեռելահոտը իւր զագաթնակէտին է հասնում: օդը վարակուած էր մահաբեր թոյնով. ծծել այդ օդը՝ նշանակում էր անվրէայ մահուան զատապարտել իւր անձը: Այդ սարսափելի օրերը սրբազնի առողջ մարմինն էլ չէ զիմնում նա հիւանդանում է: շփոթուած ծառաները դէս ու դէն են վաղում: կորովի եպիսկոպոսը անվրդով է վստահ իւր ուժեղ կաղմուածքի վերայ՝ նա քաջալերում է իր շքջապատողներին. «մի վախենաք, խօլերը ինձ մեռյնել չե կարող»: բժիշկը զալիս է, դարձեալ մի ուրիշ բժիշկ... զուր ջանքեր... Ստեփաննոս եպիսկոպոսը հոգին տալիս է պրկուած մլանների սաստիկ տանջանքներում օգոստոսի 1-ին 1892 թուին շաբաթ օրը: Թաղման կարգը խիստ անշուք էր. ներկայ էին 500 հոգի երկսեռ բաղմութիւն. «Ճուրն եկաւ մեղ տարաւ», ասում էին խեղճերը լաց լինելով: Հայ զիւղացու վիզը ճկուեց. «Սստուած մեր զլիսին բարկացել է», ասում է նա երկինք նայելով ու վայտալիս. «մեր տէրը մեռաւ», ասում են Ղարաղազի զիւղացիք իրենց հարեւան հայ զիւղացիներին, որոնք հարսանիք էին անում և դեռ չը զիտէին սրբազնի մահը: «իսկ զուք զուռնայ էք փշում», և առնում ու զուռնէն կոտրում են: Լուրը հեռազրով ամեն տեղ զնաց, ամեն տեղերի հայերին անկեղծ վիշտ պատճառեց: Հայերի և Միսիթարեանի թշնամիները ուրախացան. «մեր զօրաւոր թշնամին մեռաւ», գրում են բողոքական քարոզիչները Ամերիկայի մի լրադրի.

նոքա արդէն եռանգուն այցելութիւններ սկսեցին անել թաւրիղեցի հայերին, որոնք սիրով ընդունում են նոցա. Սալմաստի հայ կաթոլիկները ուրախութիւն են անում. իսկ կաթոլիկ քարողիչները շտապում են Թաւրիզում կեզրոնանալու միտքը իրավործել և այնտեղ մի կաթոլիկ դպրոց հաստատել: Երկու գաւանութեանց քարողիչներն էլ հայոց եկեղեցիների կալուածների գէմ արշաւանքներ են սկսել:

Սալմաստի Դէրիկայ վանքի հոգերը, որոնք զնուել և հաստատուել էին վանքի վերայ, կաթոլիկ պատերների մեքենայութիւնների շնորհիւ վեճելի դարձան կրկին. յանկանալով սյդ նշանաւոր վանքը իրենց ձեռքը ձգել նոքա ամեն հնար գործ գրեցին և յաջողեցրին վանքի պարիսպները քանդել տալ պարսիկ կառավարութեան միջոցով, կասկածելի և վտանգաւոր ցոյց տալով այդ վանքը հարեան տաճիկ կառավարութեան համար: Սալմաստի Հաջի-խանը և Խոս-խանը իրենց ստացած հրամանի համեմատ կտարեցին քանդելու գործողութիւնը. ներկայ եղող հայերը հառաջում էին սյդ աղիողորմ տեսարանին ականատես գոլով և յիշում էին իրենց արի առաջնորդին. իսկ ներկայ եղող այլագաւան ասորիներն ու կաթոլիկ հայերը հրաժուանքով էին դիտում իրենց դրացիների վեշտը. քարերը խիստ գեռու էին շպրտել, որ կրկին շինելը գժուարացրած լինեն: Արդէն զալաբէկի և պարսիկ մեծամեծների մէջ խօսում էին, որ այսուհետեւ հայոց առաջնորդը բացի հոգեւոր գործերից՝ ուրիշ գործի ըռպէտք է խառնուի: Պարսկահնդկաստանի թեմի առաջնորդական փոխանորդ հայր Խաչատուր ծ. վ. Կարապետեանը, որ էջմիածնի սինողի սեպա. 4 օրագրութեամբ Աստրապատականի թեմի ժամանակաւոր կառավարիչ նշանակուեց՝ մնալով իւր նախկին պաշտօնում և իւր նոր պաշտօնավայրը ժամանեց 1892 թուի հոկտեմբերի 9-ին, արդէն չե վայելում իւր անմոռաց նախորդի իրաւունքներից մի քանիսը. լսում ենք, որ նրան մերժուած է հայոց քաղաքայիսկան դատերը պաշտպանել միւս կողմից, ժողովով զասակարգերի և յիշեալ վարդապետի մէջ երեւան են եկել սովորական տարածայնութիւնները: Բարե-

սիրտ ծայրագոյն վարդապետին պակասում են իւր նախորդի աներկիւղ վճռականութիւնն ու աշագին եռանդը:

Սակայն այս տիսուր պատկերը լուսաւորում է այն բարեգութ և սիրալիր պաշտպանութեամբ, որ Արեգակնախափայլ Շահն-Շահը մանաւանդ այս անաէրութեան օրերում ցցից է տալիս հայերին: Արդէն պարսից կառավարութիւնը լաւ է ձանաչել հայոց թշնամիների ով և ի՞նչ լինելը. նա տեսնում է, որ այդ «բարեպաշտ» եղուիաներն ու «խաղաղութեան առաքեալ» միսիոնարները, ուր որ բոյն են գրել, յառաջացրել են միշտ խռովութիւններ և սպանութիւններ: Նա այժմ էլ երես չէ տալիս նոյն. փակուել են Թաւրիզի բողոքականների եկեղեցին ու դպրոցները կառավարութեան հրամանով. Դէրիկայ վանքի վանահայրը (Բագարատ վ. Թաւաքալեան) երկու երեք ամիսներ զիմումներ անելուց յետոյ Թաւրիզում՝ յաջողեցրեց վանքի պարսպների վերաշինութեան հրամանը ստանալ կրկին, և այժմ վանքը առաջուայ նման սկսում է ծաղկել: Նորին Միծութիւն Շահը իւր վերջին շրջադայութիւններից մինի ժամանակ իւր սիրալիր տեսութեանն արժանացնելով Քաղազ գաւառի Աղնայ զիւղի ժողովրդին, որ քահանաներով դուրս էր եկել զիմաւորելու նորան, ընդունում է նորա խնդիրը—նպաստ նշանակել զիւղում դպրոց շինելու և պատուիրում է որ այլաղաւան ուսուցիչ երբէք ընշանակուի հայոց դպրոցում: Լուսամիտ Շահի այդ նոյն քաղաքականութիւնը զործ է զրուում այժմ զրեթէ ամեն տեղու ինքը ասորի և հայ այլաղաւան ժողովուրդը այժմ շատ լաւ է ըմբռնում խարդախ պատերների և նենդաւոր միսիոնարների իրեն հասցրած մնաները. նա կորցրել է իւր նախկին խաղաղ կեանքը. նա ստանալով իւր «Չերմեռանդ» ուսուցիչներից խիստ թշնամական ողի դէպի ամենայն այլ կրօն ու ազգութիւն, ստանալով աստուածաբանութեան դիպլոմ Սալմասուռմ և Ռւրմիում եղած մի քանի ուսումնարաններից, դուրս է զալի՛ հասարակութեան մէջ մտնում իբրև մի աւելորդ բեռն նորա ուսերին, ընդունակ չէ ոչ հող մշակելու, ոչ մշակութիւն անե-

լու և ոչ էլ որ և է արհեստով պարապելու և միակ ելքը
դանում է պանդխատութեան և խաչագողութեան զիմելում։
Նահագործելով օտարների կրօնական զգացմունքը, այդ մար-
դիկ բոլորովին փչացել են բարոյապէս, էլ չնք ասում, որ
խաչագողութեան հետեանքը լինում է շատ անգամ խոնաւ-
բանտերում փթել տարիներով։ Հաւատափոխ հայը կամ ասո-
րին դուրս դալով գպրոցից «փրկութեան միակ ձանապար-
հի» մասին անդադար նորա ականջում լցրած անմիտ բար-
բաջանքներով՝ սկսում է դատարկ վէճեր իր արիւնակից
եղբայրների և հարեւանների հետ, որոնք վերջանում են ամե-
նասոսկալի եղեռնագործութիւններով։ Ահա թէ ի՞նչ են տա-
լիս մեղ լուսաւոր եւրոպան և քաղաքակիրթ Ամերիկան...։
Ժողովուրդը արդէն զզուել է այդ անկոչու անբարոյականացնող
մարդկանցից։ Խոսրովայ զիւղը բարքերի ապականութեան
կողմից կարող է մրցել Փարիզի Է՞ն խուլ անկիւնների հետ։
Կաթոլիկ կղերը իւր գաղտնի բոլոր ախտերը համարձակ պաշ-
տելով այդ յետ ընկած աշխարհում՝ թունաւորել է մեր
կուսական հասարակութեան և մեր դարաւոր հարեւանների
ամենազութիւնը, և օր աւուր դէպի անդարձ կորուստն է
շարժում նոցա։ Սալմասացիք ապականուել են արդէն վենե-
րական ամեն տեսակ ախտերով... և մենք՝ այդ ամեն զրհո-
ղութիւններն անելուց յետոյ՝ դարձեալ չենք տեսնում հայ և
ասորի զիւղացու վիճակի մէջ ոչ մի բարելաւութիւն, այլ
ընդհակառակը, երկու ազգութիւններն էլ միակ ելքը իրենց
անտանելի վիճակի՝ տեսնում են պանդխատութիւնը, իսկ ա-
մենահամարձակները վճռական բոպէններում՝ նաև բացար-
ձակ ընդդիմութիւնը այլադաւան քարոզեներին։ Մինչդեռ
վերջին համաձարակը իւր սարսափելի կոտորածը շարունա-
կում էր Խոյ, Սալմաստ, Ուրմի, Մարազայ գաւառներում
և նոցա քաղաքներում և ժողովուրդը ապաւինել էր մի-
միայն դալլագների նշարներին, մէկ էլ իւր կրօնական
ծէսերին, Սալմաստի հայ զիւղերում հաֆթուանի և Բար-
դուղիմոսի աջով թափօրներ էին կատարուում, որ յաւը
փարատուի։ Երբ ս. աջը Սաւրա զիւղից վերադարձնում էին

Հաֆթուան, Խոսրովայի ասորի-կաթոլիկները իրանց հոգեօրականներով դուրս եկան ո. աջի առաջը և տարան իրանց դիւղը թափօր անելու։ Գիւղումն ապրող պատերները արգելեցին ո. աջը եկեղեցի մուշնել. ամբոխը սաստիկ զրգուում է ասելով. «Մենք հայերի հետ բարեկամ էինք միշտ և լաւ էինք ապրում նրանց հետ բաւական է ինչ որ մեր մէջ խոռովութիւններ ու թշնամութիւններ զցեցիք. եթէ կը շարունակէք այդպէս, դուրս գնացէք մեր միջից, մեղ հարկաւոր չէք»։ Խելքը զլիին ու հասկացող հաւատափոխները՝ հայ թէ ասորի, վայ են տալիս իրանց զլիին և ամեն հնար գործ գնում ազատուելու այդ անտանելի «առաքեալներից»։ բայց նոքա վախենում են, նիւթապէս էլ աղքատ են, իսկ այդ մեծ նշանակութիւն ունի. մի քանի թումաններ փէ շը եաշ անելով այս կամ այն տեղական պաշտօնեացի, և աւելի խոշոր զրամով կաշառելով ազգեցիկ մարդիկներին, նենդաւոր կաթոլիկ կղերը և ամերիկացի միստրները կարողանում են տեղն ու տեղը խեղտել այդպիսի համարձակների ձայնը։ Քարոզիչները հասկանում են, որ իրենք արուեստական հողի վրայ են կանգնած այս երկրում, որ սա իրենց տեղը չէ։ Բայց ովկ կ ստանայ այն ժամանակ «Պորտ» ընկերութեան նշանակած տարեկան 200,000 ռ. չափ գումարը և կաթոլիկներին յատկացրած տարեկան 50,000 ֆրանկը, որոնց շնորհիւ այսօր այդ մարդիկ հիմնալի կեանք են վարում Պարսկաստանում և միենոյն ժամանակ իրենց դիւանագիտական գործակալների հզօր պաշտպանութեան ներքյա ազատ են որ և է հարստահարութիւնից կամ նեղութիւնից. չէ որ խոստովանելով իրանց տէրերին զործերի իսկական դրութիւնը՝ հենց դրանով նոքա իրանց դատավճիռը կարգացած կը լինեն. իսկ Եւրոպայից արտաքսած ծիզուիթներին ու Ամերիկայում գործ ու պաշտօն չըդտած միսիոնարներին միթէ ցանկալի է այդ բանը։ Այս պատճառով քարոզիչները միշտ իրենց հրատարակութիւններով և տարեկան հաշիւններով, իրենց նուիրակներով ու իրենց մարդկանցով, որոնք շըջում են լուսաւոր երկրներում, խարում են ամենաժպիրհ դէմքով

ժողովուրդներին և ցոյց տալիս իրենց երեակայեալ յաջո-
ղութիւնները և իրենց գոյութեան անհրաժեշտութիւնը
«մոլորուած», «Հերձուածող» հայերի և ասորիների մէջ:
Մեր այս ցաւը միայն Առողատականի ցաւը չէ. Տաճկահա-
ռաստանը այսօր ամբողջապէս խոցուած է այդ ցաւով. ցաւը
ընդհանուր ազգինն է:

Բայց ահա՝ Զիկագոյում օդոստոսին կրօնական աշխարհա-
ժողով է լինելու. Հրաւիրուած են բոլոր ազգերի և կրօն-
ների ներկայացուցիչները, և հայերը, ինչպէս երեսում է, չեն
ունենալու իրենց ներկայացուցիչը, թէև երեք Հրաւիրա-
թուղթ է ստացուել մեր ազգի անունով: Հայերը մի գեղե-
ցիկ առիթ են ձեռքից բաց թողնում, որով ցոյց կրտային
հենց նոյն խոկ մեղ մօտ «առաքեալներ» ուղարկող Ամերի-
կային՝ թէ Քրիստոնեան և Հրեոնեան անունով ինչ անօրէնու-
թիւններ են կատարուում այդ «առաքեալների» ձեռքով:
Վերջապէս... Հայի Համբերութիւնը Հատաւ այս Հալածանք-
ներից. Ժթ դարը մեր դառնութեան բաժակը մինչև վերջը
լցրեց... Խղճի և կրօնի աղատութիւնը մենք զեռ չենք ստա-
ցել... և օտարները իրենց առատ փողով և քաղաքական հզօր
զօրութեամբ խեղակել են մեր ձայնը. խոկ Համարձակ և ու-
ժեղ մարդիկ վերացել են մեր միջեց:

ԱՏՐՊԱՏԱԿԱՆԻ ՀԱՅՈՅ ԱՊԱԳԱՆ

Միսիթարեան եպիսկոպոսը և իւր թեմի շատ կարեւոր
էին մեր աչքում, այդ պատճառով էլ մենք այսքան երկար
կանգ առանք. այժմ վերջացնում ենք, բայց և դիտենք, որ՝
Հակառակ մեր բուռն ցանկութեան՝ շատ անխուսափելի պա-
հաններ և զուցէ սիսալներ կան մեր տեսութեան մէջ, որոնց միակ
պատճառն ի Հարկէ Հարկաւոր նիւթերի պակասութիւնն էր:
Բայց ինչ և իցէ. ինդիրը կարեւոր է, և անշուշտ շուտով դէպի
մել թռած տեսնելով խաղաղութեան հրեշտակին, մեր վե-
հափառ հայրապետին, կրտեսնենք շուտով նաև այժմեան

«Հովել զարկուած» Ասրապատականի հայերին իրենց զարդացման մի նոր շրջանում առաջ ընթանալիս: Խօսք չըկայ, որ դժուարութիւններն այժմ էլ խիստ շատ են և նշանաւոր, որոնց պատճառով Միսիթարեան սրբաղանը երեք-չորս անգամ հրաժարական է ուղարկել հանգուցեալ հայրապետին, որն ի հարկէ չէ ընդունուել: Բայց այդ երկիրը խսկը գործելու ծարաւ մարդու համար է ստեղծուած կարծես, ուստի և անկարելի է Ասրապատականում անգործ մնալ: անելու բան շատ, իսկ արգելքները կառավարութեան կողմից չեն, ընդհակառակը՝ ամենայն բարի և յառաջադիմական գործ քաջալերուում է նրանից: Ապագայ առաջնորդի ձանապարհը բաւական հարթուած է այժմ: Ժողովուրդը փոքր ի շատ է գուրս է եկել իւր մոռացութիւնից շնորհիւ Միսիթարեանի ժամանակ տեղի ունեցող գործունելութեան: նոյն իսկ քրդաբնակ գիւղերում մենք գտնում ենք այժմ ուսումնարաններ, թէ ողորմելի գրութեամբ. բաղմացել են ուսուցիչներն ու քահանաներն էլ թէ և ոչ այնքան արժանաւորները: Արամեան գպրոցը փոքր ի շատէ այժմ կարողանում է օգնութեան հասնել ժողովրդի վերածնութեան գործին՝ տալով թեմի խորքերում եղած գիւղերին ուսուցիչներ և քահանաներ: Բայց և այնպէս այդ գպրոցը գեռ հեռու է իւր նպատակից՝ չունենալով նպատակայարմար ծրագիր և գպրոցը զեկավարող մի լաւ մանկավարժ: Արամեան գպրոցը փոխանակ անտէր ժողովրդի մէջ ժողովրդական հոգով, աղնիւ, մաքուր իգէալներով զենուած առաքեալներ ուղարկելու, պատրաստում է միայն առետուրի ընդունակ և «լեզուագէտ» անպէտքներ, որոնք ոչ մի շահով կապուած չեն հասարակ ժողովրդի հետ: Այնաեղից զարադաղցի հայր, այստեղից ուրմիացին կամ սալմաստցին, տանում են իրանց որդիքը այդ գպրոցը որ ուսում առնեն և վերջը իրենց հայրենի գիւղին: ու ծնողներին օգտաւէտ լինեն: Բերուելով քաղաք՝ գիւղացի տղան մանում է մի հայ վաճառականի տունը և խանութը ծառայութիւն անելու, և միենոյն ժամանակ յաճախում է գպրոց. այդպիսի վիճակում մի երկու տարի զուր գեղերելուց յետոյ թողնում

Է գոլրոցը և ինքն էլ հետեւում է իւր «աղայի» օրինակին, բաց է անուում թաւրիզուում մի խանութ և իր ծնողներին էլ իւր մօտքերելով սկսուում է վաճառականութիւն անել նա բոլորովին մոռանուում է իւր համագիւղացիներին, նորա իդեալը դառնուում է ծովու ցամաք ընկնել և առետուրն ընդարձակել։ Դոլրոցը չէ ներշնչում նոցա մէջ ժողովրդական ոգի, իսկ շրջապատող հասարակութեան մժնոլորտը գրեթէ ամբողջապէս առեւտրական մժնոլորտ է։—Սակայն անկարելի է առանց դպրոցի այս ընկած ժողովուրդը ոտքի կանգնացնել, նորու մեռած մարմնին շունչ փշել. այստեղ շատ էլ չեն օգնի եկամուտ երիտասարդները, ինչքան էլ նրանք աղնիւ, անկեղծ ու աննկուն եռանդ ունենան ժողովրդին վեր բարձրացնելու. էլ չենք ասում, որ շատ անզամ գործերից անտեղեակ, զլիսապատառ մէջ ընկած երիտասարդը խիստ ողբալի յիշատակ է թողնուում ժողովրդի մէջ՝ իւր կարծատե անշնորհք «գործունէութեան» շնորհիւ գիւղերում. բանիմաց և գործը սիրող երիտասարդութեան արածը եղել է և կարող է լինել առաջնորդող գեր կատարել, հեռուելց ուղղութիւն տալ (և այդ ուղղութեամբ մինչեւ այժմ արածը արժանի է խորին յարգանքի և այսուհետեւ էլ եռանդուն խրախուսանքի), բայց բուն ժողովրդական գործը ժողովրդի մարդկանցով պէտք է կատարուի։ Գիտակցութիւնը պէտք է մարմնանայ ժողովրդի իւրաքանչուր տնհատի մէջ. իսկ այդ բանը Ատրպատականում կարող է առ այժմ մայն դպրոցը կատարել. այնուհետեւ հոգեւոր նորոգութիւնը զարմանալի արագութեամբ առաջ է ընթանալու ֆորձիչների միջոցաւ, որոնք դպրոցից դուրս գալով տալիս են գաղափարը իրենց համագիւղացիներին։ Ի հարկէ, այդ վերածնութեանը մօտիկ ապագայում անշուշտ օժանդակելու է իւր կողմից և տպագրական խօսքը, զլիսաւորապէս պարբերական հրատարակութիւնը, ոչ դարձեալ եկամուտը՝ այլ տեղականը, որ կարողանայ որոշ ուղղութեամբ առաջ խաղացնել զարթած դիտակցութիւնը դէպի աղգային անհատական հոգեւոր կեանքը. բայց այս բոպէիս բոլոր ոյժերը պէտք է դպրոցական գոր-

ծին նուիրել. իսկ գորա համար առաջ հարկաւոր է ո՞յն
ուղղութեանք կրթուած ուսուցիչներ ընծայել թեմին. գորա
հետևանքը կը լինի գիւղացու առատաձեռն նուիրաբերու-
թիւնը յօդուտ իւր զաւակի ողջամիտ դաստիարակութեան.
նա չի խնայի ոչ մի զոհողութիւն, երբ տեսնի որ յիրաւի իւր
որդիք ճշմարիա կրթութիւն են ստանում ընտիր վարժապետից.
միայն չըպէտք է մառանալ որ ինչպէս ամենայն անկեալ ժողո-
վուրդ, այնպէս էլ Ատրպատականի հայերին բոլորովին վեր
կացնելու համար անհրաժեշտ է սկզբներում իշխանաւորի, մե-
ծի հրանտնը. ամբոխը ծոյլ է, դիւրաշարժ չէ, նորան գործունէ-
ութեան գրդելու համար պէտք է ուժեղ ձայն հնչեցնել, պէտք
իշխանական հրաման հանել. մանաւանդ մեր ժողովուրդը, որ
այս քանի դարեր հրամաններ լսելու է միայն վարժուել
երբէք չի նախաձեռնի մի գործ առանց իւր մեծի կարգա-
դրութեան: Բաւական է, որ ուսուցիչ և լաւ ուսուցիչ ու-
նենայ ժողովուրդը. այնուշեաւ առաջնորդի կամ (եթէ կայ)
թեմական տեսչի մի հասարակ հրաման բաւական է որ և է
զիւղում ուսումնարան բանալու և նորան ապահովելու. ի
հարկէ երկար չի տեի այս վիճակը, բայց առ այժմ իրողու-
թիւնն այսպէս է: Եթէ մենք զարադազը կամ քրդիստան-
ցու կամքին թողնենք ամեն բան, նա տեղից չի շարժուի.
ահա այսաեղ օգնութեան պէտք է հասնել ժողովրդին, խթել
նորան դէպի գործ, փոքր ինչ տանել մեծահոգութեամբ նո-
րա դժգոհութիւններն ու նոյն իսկ յայտնի թշնամութիւնը
որ շատով երկրպագութեան կը փոխուի ձեր վեհանձն հոգու-
առաջ, և այնուշեաւ դուք կը քաղէք ձեր ջանքերի պառզը.
դուք արդէն գրաւել էք ժողովրդի սիրաը, նա արդէն ձեզ
նուիրուած սիրում է, ինչ որ ցանկանում էք՝ նա ձեզ կը տայ
ամենայն ուրախութեամբ. ոչինչ չի խնայի ձեզանից, նոյն իսկ
կեանքը: Այս բոլորից յետոյ էլ ուրիշ ի՞նչ վարձատրութիւն
էք ուղում դուք ձեր քաշած բոլոր նեղութիւնների փոխա-
րէն. նա որ ձեզ իր կեանքը տալու պատրաստ է, փող էլ
կը տայ, մարդիկ էլ կը տայ: Աչքի առաջ ունենալով այս ա-
մենը, մենք աշագին նշանակութիւն ենք տալիս Ատրպատա-

կանում գործողների բարոյական արժէքին, նոյս հոգու մեծ յատկութիւններին. իսկ այդպիսի բարոյական արժանաւորութիւններ առանձնապէս պէտք է փայլեն թեմական առաջնորդի անձի մէջ. ուստի թող զգուշանան գործի վերայ թեթև նայողները. ժողովրդին պէտք է առաջնորդեն մեծ ոյժի տէր մարդիկ, մեծ տոկունութեամբ և, որ գլխաւորն է, իրենց անհատական շահերը անխղելի կերպով միաւորելով ժողովրդի ճշմարիտ շահերին: Ով որ ժողովրդի հետ միասին իւր կաշուի վերայ փորձել է նորա դառն կեանքը գէթ մասմբ, նա միայն կարող է լինել ճշմարիտ ժողովրդական գործիչ: Ի՞նչ հոգ՝ դիցուք՝ պաշտօններով ժառանդական կամ ստացական հարստութեամբ և կալուածներով ընդ միշտ ապահովուած մի հայի և նորա որդոց, եթէ, դիցուք, Ատրպատականի հայերը խաւար կը լինին ու թշուառ. ինչքան էլ նոքա ազնիւ ու անկեղծ երեան իրենց զգացմունքների արտայացառութեան ժամանակ, այնուամենայնիւ նոցանից յոյսը պէտք է կտրել: Նոյն բանը հասկանալի է և այն, թէև ազնիւ ու անկեղծ, հայերի մասին, որոնք հանդամանքների բերմամբ շահերով կապուած չեն եղել իրենց կեանքում հասարակ դասի հետ. այդպիսիներից շատերը ազնիւ և բուռն ցանկութիւններով մաել են Ատրպատական ժողովրդին օգնելու և բարձրացնելու իւր անկումից. սակայն նորա «գլխին պատուհաս են գարձել», ինչպէս զանգատուում է ինքը գիւղացին: Զը հասկանալով գիւղացու իսկական պէտքերն ու շահերը, նոքա «կոյր առաջնորդներ» են եղել միայն, և ի վերջոյ իրենք էլ ժողովուրդն էլ հիամթափուել են մէկմէկուց:

Սակայն իրողութիւնը մնումէ իրբե իրողութիւն: Ատրպատականի հայերը մեղ համար կարեոր են, կարող ենք ասել խիստ կարեոր են. նոքա ապագայում մեղ համար շատ բան ունեն անելու, նոցա վերայ մեծ յոյսեր են զրուած, և մենք խիստ թանգ ու սրտներիս մօտիկ պէտք է համարենք նոցա հասարակական նպատակայարմար դաստիարակութիւնը որոշ ուղղութեամբ: Երկրի առասպելական արգաւանդութիւնը և բերքերի սաստիկ առաստութիւնը շնորհիւ ոռոգե-

լու ջրի մեծ քանակութեան, որի սովը այնքան մեծ է Արևելքի ամեն տեղերում,—հասցնելու են այս գեղեցիկ երկիրը մի ծաղկեալ ու փարթամ վեճակի մօտիկ ապագայում, երբ առետրական յարաբերութիւնները կ'ընդարձակուին ապահով և յարմար ճանապարհների շնորհիւ: Երկրի և բնակիչների ապահովութեանը սպառնում են միայն քրդերի պարբերաբար տեղի ունեցող փոխազրութիւնները տաճկաց սահմանից դէպի պարսից երկիրը, որոնք միշտ դիւանազիտական անախորժ դիմումների առիթ են դառնում երկու մաշմետական պետութիւնների մէջ՝ լարելով առանց այն էլ կրօնական ատելութեան շնորհիւ լարուած յարաբերութիւնները: Այդ պատճառների շնորհիւ յառաջացած «Քիւրդիստանի հարցը», որ Արևելեան մեծ և խճառւած հարցի մի փոքրիկ մասն է կազմում, անշուշտ մօտիկ ապագայում իւր լուծումը կըստանայ, մանաւանդ եթէ ազքի առաջ ունենանք, որ Բերլինի գաշնազրով այժմեան Վանի վիլայէթի Քոթուր գաւառը, նաև Բաղդադ քաղաքը իրեն շնչականներով, պէտք է Պարսկաստանին անցնէին, —մինչեւ այժմ չիրագործուած յօդուածներից մինը հռչակաւոր գաշնազրի, —և որոնց զրաւելու յցոյը Պարսկաստանը դեռ չէ կորցրել: Անշուշտ երկիրը իւր ղարդացման նոր շրջանն է մտնում շնորհիւ Եւրոպական տէրութիւնների և գլխաւորապէս Հնդկաստանի յարաբերութիւններին. այս պատճառով վաղ թէ ուշ Ասրպատականը սերտ կը կապուի համաշխարհային առետուրի և հաղորդակցութիւնների ընդհանուր ցանցի հետ բայց խնդիրը նրանումն է, որ մենք պատրաստ լինենք օդուտ քաղելու Ասրպատականի և նորա հայ բնակիչների այդ վեճակից, որը անշուշտ մեղ մեծամեծ բարիքներ կարող է շնորհել: Լուրջ ուսումնասիրելով երկիրը և նորա բնակիչները և մանաւանդ սահմանակից երկիրների վեճակը՝ որոշ տեսակէտով, մենք պէտք է գործի մտնենք. փյութ չէ, եթէ սկզբներում թշյլ կը լինեն մեր ոյժերը. թող մեր շահերը և պէտքերը միացած լինեն ժողովրդի իսկական շահերին և պէտքերին, և մենք որ աւուր կը զօրանանք նորա առատ ոյժերով: Զը յուսահա-

տուենք սխալներից. նա միայն չէ սխալուում, ով ոչինչ չէ շենուում. կատարելութեան ձանապարհը խոչընդուտներով և սայթաքումներով լի է. լաւ է սխալներով մի բան շինել քան ոչինչ ըջինել. սխալներն առաջնորդում են գէպի ճշմարտութիւն, և մարդկութիւնը միշտ իւր անցեալ սխալները քննելով է կազմում յառաջադիմութեան լայն ձանապարհը; Ով զգում է թէ ինքը իւր ողջ հոգեոր էութեամբ անխզելի կապուած է մեր հասարակ դասի հետ, թող ուրեմն անվախ մէջ անցնի. անելիք շատ կայ, և ով կրփորձի, նա առատորէն կը վարձատրուի իւր թափած ջանքերի փոխարէն: Իրենք տեղացի հայերը հրաւէր են կարդում ձեզ և ձեր օգնութիւնը խնդրում: «Մեր միակ յոյսը — մեր հոգեոր դրադրոյներում աւարտող խոհեմ և անձնանուէր երիտասարդների վրայ է, որոնք դալով Սալմաստ, կարող են ունենալ մեծ և լայն ասպարէզ»:

Մեր անելիքը ամենից առաջ պէտք է լինի այդ երկրում դպրոցական դործը առաջ տանել. օդտուենք հանգամանքներից և այն ավատութիւնից, որ մել տալիս է լուսամիտ պարսիկ թագաւորը, ապա թէ ոչ ամեն բան վաղը միւս օրը կրկորչե. ուրիշ ոչ միտեղ հայերը այնպիսի ազատութիւն չեն վայելում դպրոյներում, ինչպէս այսօր Պարսկաստանում: Սակայն մինչև օրս օդտուող ըրկայ. ազքաթող չանենք, չըկորցնենք մեր տակից հաստատ հողը և խարուսիկ փայլով չըհրապուրուենք. մեր յոյսն ու ապադան այնտեղ է. քանի որ աղքերը և նոյցա կրօնական առաքեալները դեռ բոլորովին չեն դրաւել մեր կուսական երկիրները, դեռ բոլորովին չեն կաշկանդել մեր ձեռքն ու ոտքը, օգուտ քաղենք հանգամանքներից: Այսօր մեր առաջ դրուած է Աստրպատականի դպրոցական հարցը. այդ հարցի լուծումը միմիայն կախուած է վարժապետների հարցից. բայց դորա համար այնքան էլ մեծ ծառայութիւն անել չեն կարող կովկասի դպրոյներն աւարտած երիտասարդները, — թէ և մինչև այժմ նոքա են եղել և են այդ տեղերի ուսուցիչները: Մենք մեծ նշանակութիւն ենք տալիս տեղական տարրին, ուստի և

այդ տարրի համար յատուկ հիմնուելի վարժապետանոցին.
Ամեն մի դպրոց տեղական հետաճառնութեան պէտքերին պիտի
ծառայէ. ամեն մի դպրոց իրեն յատուկ ծրագիրն ունի և
պէտք է ազատ կերպով դաստիարակէ հասարակութիւնը
որոշ ուղղութեամբ. նա ըստէտք է զեկավարուի միայն արե-
տրականներով, միայն հարուստների պէտքերը իրազործի.
Նա պէտք է աշազին բազմութեանը, որ հողի ու ջրի հետ
գործ ունի, որ ապրում է առանց դուրս գալու իր երկրից
և պահպանում է այդ երկիրը, պէտք է այդ բազմութեանը
հոգեւոր սնունդ տայ՝ նորան բահանաներ և ուսուցիչներ
ընծայելով. ըստ այսմ կըկազմուի և դպրոցի ծրագիրը, որի
համար կըհրաւիրուեն և համապատասխան դպրոցական զե-
ավարներ: Բայց արդեօք ո՞րտեղ պէտք է լինի այդ վարժա-
պետանոցը: Արտասահմանեան հայ լրագրութիւնը առաջարկեց
հանգուցեալ առաջնորդի յիշատակը յաւերժացնել՝ նորա ա-
նունով մի դպրոց հիմնելով Ատրապատականում, և դորա հա-
մար հանգանակութիւն բացեց. մտածում են այդ «Միսիթա-
րեան» կոչուելի ասպազոյ դպրոցը վարժապետանոց դարձնել
եթէ դրամական միջոցները ներեն: Բայց Արամեան դպրոց
էլ ունենք մենք այժմ և հիմնական դասարաններով. նրա
նպատակն է բարձրագոյն դպրոցների համար աշակերտներ
պատրաստել նա ստանում է նպաստներ որոշեալ առեւտրա-
կան նպատակի համար և իւր ծրագիրը կազմելէ դորա հա-
մաձայն: Մեր նպատակի համար այդ դպրոցը օգտաւէտ չէ
կարող լինել ինչպէս եկել է, այնպէս էլ կըգնայ այսուհետեւ,
իսկ թշուլառ դիւզացիներին միսիթարիներ տալ նա չի կարո-
զացել և չի կարողանայ: Ուրեմն մի ուրիշ դպրոց պէտք է
հիմնել այդ նպատակով. ահա «Միսիթարեան» դպրոցը
հիմնելու համար հանգանակութիւն է բացուել նոյն իսկ
եպիսկոպոսի մահից յետոյ: Բայց զիտէք որքան է հաւա-
քուել մինչև այժմ—300 ֆրանկ էլ չըկայ, այսինքն 140 մա-
նէթի չափ. և ովքեր են նուիրատուները—ժենեփ հայ ու-
սանող օրիորդներ և ազաներ, Ամերիկայի և Մարսէյլի բա-
նուոր հայեր, մի քանի ուրիշ անդերից դարձեալ ուսանող-

ներ և անյայտ հայեր. գեռ չենք տեսնում խոշոր նուիրաբերութիւններ, իսկ Ռուսաստանի հայերից գեռ ոչ ոքի ըզդիտենք: Բայց դործը ստիպողական է և որքան հնար է շուտ պէտք է լուծուի: Միսիթարեան եպիսկոպոսի անունով և նորա յիշատակը նուիրականացնելու համար ամբողջ հայ աղքի վերայ պարտք է դրուած կանգնեցնել Ատրպատականի գիւղերից մինում «Միսիթարեան» վարժապետանոցը. հայ մեծատունների ուշադրութիւն ենք դարձնում այս կարևոր խնդրի վերայ. մի բարերար կտակ կարող է յաւերժացնել հիմնադրի անունը՝ համահաւասար անմոռաց եպիսկոպոսի անուան հետ: Մեր վիրե բերած կշռադատութիւնները պարզ են կացուցանում այն մեծ գերը, որ այդ գպրոցը կարող է խաղալ՝ պարսկաթրքական այդ սահմանագլխում: Մենք ունենք այժմ գպրոցական լաւ ցժեր, վաղը միւս օրը Ռուսաստանում դործ չեն ունենայ շատերը նոցանից. նոքա կըզբաւեն գպրոցի զեկավարութիւնը. նոյն իսկ այժմ Ատրպատականի գիւղերում զգացուում է կովկասի թեմականներն աւարտածների կարիքը. առ այժմ եկամուտ երիտասարդութիւնը մեծ գեր ունի կատարելու գպրոցներում, մինչև որ տեղական տարրը զօրանայ և ինը կատարի ուսուցիչների և քահանաների գերերը: Կրկին և կրկին հրաւիրում ենք ուսուահայոց հարուստների ուշադրութիւնը այդ «մոռացուած» հայերի համար կառուցանելի «Միսիթարեան» վարժապետանոցի վիրայ: Հարցը ընդհանուր աղզային հարց է, և ոչ տեղական:

Երանեան.

Տ. ԽՈՐԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՆԱՐ-ՊԵՏ^{*)}

ԲԱՐՈՅՑԱԿԱՆ ՄԱՐԴՈՒ

Ա.

Բարոյականը այն բառն է որ ամենէն առաձգական նշանակութիւնն ունի մեր մէջ. ժողովուրդի ամենաստօւար մեծամասնութիւնը շատ սեղմուած իմաստով մը կ'ըմբռնէ զայն. Հասարակութեան համար «բարոյական»ը կը նշանակէ սեռային յարաբերութիւններ. երբ այդ վարմունքը կրօնքի սկզբունքներուն և ողջամիտ դատողութեան համաձայն կ'ընթանայ, վարմունքին հեղինակը կը կոչուի բարոյական մարդ. իսկ երբ հակառակ ուղղութեան մը հետեւելու ըլլայ՝ անբարոյական: Ինչպէս ըսի՝ տախիա բառին իմաստը շատ անձուկ կերպով կը սահմանէ և զլխովին կը տարբերի, բարոյական բառի իմաստասիրական սահմանէն. փիլիսոփայօրէն նկատելով՝ բարոյականը իր մէջ կը պարունակէ շատ Ճոխ, շատ ընդարձակ և շատ վաեմ նշանակութիւն մը. այս տեսակէտով՝ բարոյականը կը նշանակէ մարդկային նկարագրէ (caractère) բարւոք կազմութեան աւագ ինդիբն. անհատի


*) Հանգուցեալ Խորէն «Աար-Պէյ» արքեպիսկոպոսի մեծ պատմական և հասարակական արժէքն աչքի առաջ ունենալով, մենք մտադիր ենք տալ Խորա մանրամասն կենսադրութիւնը: Այժմ կատարում ենք մեր մտադրութիւնը. բայց այս անգամ միայն մասամբ, և տալիս ենք մեր աշխատակցի կազմած «Աար-Պէյի բնաւորագրութիւնը: Միւս գրքում, որ կը հաստարակուի գեկտեմբերի սկզբին, տալու ենք մեր նոյն աշխատակցի հանրականիք ուսումնասիրած ընդարձակ տեսութիւնը յաւերժական յիշատակաց արժանի եպիսկոպոսի հասարակական և դրական գործունէութեան մասին: Ծանօթ. իսրա:



ТАБ. XXI. № 175.

ԽՈՐԵՆ ԱՐՁԵՊ. ԿԱՐ-ՊԵՅ.
Архиепископъ Хоренъ Наръ-Бей.

Автотипія Ангерера въ Вѣнѣ.



նեղ էուը այնպէս մը կառավարել՝ որ հանրութեան էաին
ու և է կերպով չը վնասէ. մտքի կարողութիւնները այնպիսի
ուղղութեան մը մէջ գնել՝ որ մարդուս բնական եղող կա-
տարելութեան ձգումը փոխանակ հետզհետէ տկարանալու՝
օրէ օր աւելի վարդանայ և արմատանայ. ահա թէ ի՞նչ է
իմաստասիրական բարոյականը:

Արդ մենք պիտի ջանանք Նար-Պէյի բարոյականը այս
երկու տեսակէտներով քննել:

Բարոյականի անձուկ նշանակութիւնով հանդուցեալ
սրբազնը գուցէ չափազանց անխիղք քննադատութեանց և
բամբասանքի առարկայ հանդիսացած ըլլայ. բայց պէտք է
ամեն բանի մէջ անաշառութիւնը սիրենք և մտադրած ենք
այս պարագային մէջ ալ անաշառ ըլլալ:

Եյս տողերը զբողը որքան որ ալ այս կարգի խնդիրնե-
րու մէջ չափազանց ազատամիտ ու լայն գաղափարներ ու-
նեցած ըլլայ՝ բայց և այնպէս չէ կարող մեծ խտիր մը չը
դնել աշխարհականին ու եկեղեցականին միջնե:

Կուսակրօն եկեղեցականին համար չայաստանեայց Եկե-
ղեցին կ'արգիլէ ընդհանրապէս աշխարհային և մասնաւորա-
պէս սեռային ամէն վայելքներ: Եկեղեցական մը՝ կարգ ստա-
ցած պահուն՝ Աստուծոյ առջեւ նուիրական խոստում կու-
տայ աշխարհային այդ ամէն վայելքներէն հրաժարիլ. այն
օրը որ եկեղեցականը իր տուած հանդիսաւոր խօսքը գրժէ
ոչ միայն նշան բարոյականին դէմ կը մեղանչէ այլ նաև մա-
սնաւանդ թէ առաւելապէս՝ ինաստանիչական բարոյականին
դէմ քանի որ իր պարտականութենէն իը շնորհ. այս, երբ մարդ,
ամէն հասուն մտածութիւնէ և խորհրդածութիւնէ յետոյ
հանդիսաւոր խօսք մը կուտայ՝ պէտք է գործադրէ զայն,
ապա թէ ոչ փիլխոփայօրէն անբարոյական է այդպիսին.
ուստի ամէն եկեղեցական որ կանացի ապօրէն յարաբերու-
թեան մէջ կը գտնուի՝ կը մնանչէ հաւասարապէս սեռային
և իմաստասիրական բարոյականին դէմ:

Մենք, ձեռուրնիս խղճերնուս վրայ դնելով չենք կարող
Նար-Պէյի մասին շրջած ամէն զրոյցի ստուգութիւնն ապա-

Հովել. կը կարծեն իսկ թէ չարախօսութիւնը մեծ բաժին մը ունեցած ըլլայ անոնց մէջ. բայց սա ալ ստոյգ է որ բամբասանը մը երբ տեսկան է և ընդհանուր՝ անպատճառ գոնէ քիչ մը ճշմարտութիւն կ'ունենայ իր մէջ: Արդ Նար-Պէյի գալով՝ երեղիթներ կան որոնք իրեն ամէն ատեն նպաստաւոր չեն. Նար-Պէյ գեղանի ծնած էր. այդ իր յանցանքը չէր. բայց իր գեղեցկութիւնը շեշտելու մշտական ջանքերը և ատարիքն սքօղելու ձիգեր, ահա ինչ որ մեծ ազմուկ պատճառեցին իր շուրջը և ստեղծեցին իրեն նկատմամբ այնպիսի պատմութիւններ՝ որոց կարեոր մէկ մասին մէջ զուցէ անիրաւութիւն էր զինքը իբր գիւցազն ներկայացնել:

Նար-Պէյի նեղ բարոյականին համար այսչափը բաւ հասարելով անցնինք աւելի կենսականին և աշխատենք ուսումնասիրել նորա բարոյական նկարագիրը:

Բարոյական նկարագրի խնդիրը շատ փափուկ բնութիւն ունի և բազմակողմանի հանգամանքներ ցոյց կուտայ որոնց իւրաքանչիւրին պէտք է ուրօյն կարևորութիւն ընծայել՝ երբ այսպիսի ուսումնասիրութեան մը կը ձեռնարկենք:

Պէտք է նախ և առաջ ընդունիլ թէ զըրտուր նկարագրը աւելի «բնական» է քան թէ «ստացական». Փիզիքական կազմութեան, ջղային խառնուածքի խնդիր մը կը ներկայանայ հոս. մարդիկ կան այնպիսի փափուկ, թոյլ ու մեղկ կտղմուածքով՝ որոնք անկարելի է որ շատ որոշ զօրաւոր բնաւորութեան տէր ըլլան. ուրիշներ ալ արդէն տղայ հասկէն ցոյց կուտան թէ կոչում ունին մեծ մարդիկ ըլլալու ու երբ մէջ հարդ կ'ըսինք՝ ոչ միայն իմացականութեամբ այլ նաև բարոյական նկարագրով նշանաւոր կը հասկնանք: Դաստիարակութիւնը թէպէտ կրնայ բարքերը բարեփոխել մարդուս նկարագրին որոշ գոյն տալ՝ բայց վերջնական յաղթանակը բնութեան կը մնայ. եթէ մարդը՝ ի ծնէ յեղյեղուկ ընաւորութեան տէր է՝ ինչ որ յանախ արդիւնք է Փիզիքական տկար կաղմուածքի՝ զաստիարակութիւնը թէպէտ անոր ուղիղ գաղատարներ կը ներշնչ. բայց և այնպէս այդ ուղիղ գաղափարները միօրինակ կերպով զործադրել տալու

մէջ կը թերանայ յաճախ։ միւս կողմանէ, երբ մարդը՝ ի բնէ
մէծ,՝ ի բնէ զօրաւո՞ր ծնած է՝ դաստիարակութիւնը զինքը
աւելի կը մեցունէ, աւելի կը զօրացնէ. դաստիարակեալ
մէծ մարդուն և տղէտ մէծ մարդուն տարբերութիւնը սա
է որ, առաջինը՝ իր մեծութեան խորը թափանցած է գի-
տակցաբար. իսկ երկրորդը՝ բնազգաբար, իր խառնուածքին
ոյժովը մեծութիւններ կը գործէ. իսկ զարգացած յեղյե-
զուկ մարդուն և տղէտ յեղյեղուկ մարդուն տարբերութիւնն
ալ անո՞ր մէջ կը կայանայ որ, զարգացեալը գիտէ թէ ի՞նչ
ընթացքի պէտք է հետեւել վճռական ծանր պարագայներու
մէջ, գիտէ՝ բայց Նշ էրար. իսկ տղէտը՝ ոչ զիտէ, ոչ ալ
կրնայ. Ասոր Հետ մեկտեղ չը կարծուի թէ մենք այս կեր-
պով մարդ արարածը ամէն բարոյական պատասխանառուու-
թենէ արձակել կուզենք. մեր միտքը պարզապէս սա է որ
Երբ հարդ իւ գործե ներսունիւն ճը որուն ներսունիւն ըւլոււը ինչն
աւ գիտէ, բայց բասականին զըրտո՞ր հած+ շունիւնիւն եր էլեալու-
այդպիսին իւ ծննդուկան հաղուստծովին զընը պէտք է նկատել:
՚Ի հարկէ այս դասակարգին չեն պատկաներ ամէն անոնք որ
անձնական շահերու համար հանրութեան կը մնասեն, այս
դասակարգին չեն ամէն անոնք որք իրենց հանրային պաշ-
տօններէն օդուուելով իրենց անձնական նկատումներու դո-
հացումը զեր՝ ՚Ի վեր կը գասեն ուրիշ ամէն նկատումներէ.
այս դասակարգին չեն ամեն անոնք որք պղտիկ առաւելու-
թիւններու համար անձնական արժանապատուութեան ամէն
զգացում իրենց ոտքին տակ կը ճղմէն. այդպիսիները պատաս-
խանացու անբարդոյականները են:

Նար-Պէյի նկարագրին գալով պիտի ըսկմ թէ ինքը վե-
րցիշեալ երկու մէծ դասակարգերէն և ոչ միցն բացարձա-
կապէս կը պատկանի. տարօրինակ նկարագիր մը ունի ինքը
որ կարծես յատկապէս իրեն համար կաղապարուած ըլլար.
Նար-Պէյ ունեցած է գործեր՝ որոնք իր մեծութիւնը կը
հաստատեն. ունեցած է զործեր՝ որոնք իր փոքրութիւնը
կը վկայեն. և այսպէս այս եղական դէմքին ամբողջ կեանքը
կարծես շաղապատում մը ըլլար ՁԵՒՆ ու ՔԱՐՑԵՆ, վսեմին

ու ռամկին. Ճշմարտութիւնը պարտք կը դնէ մեր վրայ խոս-
տովանել թէ Նար-Պէյ՝ նկատումներէ աղատ, նկատումներէ
բարձր մարդ չեղաւ. իր ամենէն մեծ թշնամին՝ փառասէր-
նի-նն էր. թշնամի մը՝ որ զինքը գգուեց, մեծցուց, փայլե-
ցուց, բայց որ միւնոյն ատեն ապտակեց, պղտիկցուց, նսե-
մացուց: Նար-Պէյի ամենէն մեծ փառասիրութիւնը պէտք
էր ըլլալ՝ փառասէր-նէնէ հրաժարուն. և այն ատեն փառքը
իր ետեւն պիտի վաղէր և թերեւ իր ուզածէն աւելի յա-
ջողութեամբ պսակել իր երազներն, ու յանդուգն երեւակա-
յութիւնները:

Նար-Պէյի կազմուածքն ալ նկարագրին կը համապա-
տասխանէր. Հոն, իր կլոր ու սպիտակ դէմքին վրայ չես գի-
տեր ի՞նչ մը կար մեղկ, փափուկ ու կանացի. ու նոյն այն
դէմքին վրայ փայլող աչքերը կարծես հակապտակերը կ'ըն-
ծայէին իր տկար կողմէն՝ զօրութեան և հանճարի ցոլքեր
արձակելով:

Այո, Նար-Պէյ կարծես իր անձին մէջ կը միացնէր կինը
ու երիկմարդը, և իր բարոյական նկարագիրը՝ հաւատարիմ
թարգմանը եղաւ իր ֆիզիքական խառնուածքին: Այս կազ-
մուածքին պատճառով Նար-Պէյ չը կրցաւ հասնել բարձրու-
թեան իտէալին:

Բայց վերջ՝ ի վերջոյ կանացի բնութիւնը հրաժեշտ
առաւ իրմէ. և վերջին տարիներու Նար-Պէյը բոլորովին
տարբեր մարդ մըն է երիտասարդ Նար-Պէյէն: Դէմքին վրայ
այլ ևս չէր կրնար կարդալ հին ատենուան մեղկ զգայնութիւն-
ները. ալ հիմա Հոն նկարուած է համակերպող լըջութիւն
մը և սկզբունքներու աւելի որոշ գիտակցութիւն:

Օգտակար ըլլալու բաղձանքը ապահովապէս ունեցաւ
Նար-Պէյ. և այս մասին իր զգացումները հայրենասէրի ան-
կեղծութիւն ու բանաստեղծի փափկութիւն ու գորով կ'ար-
տայայտեն. այս պարագայն շատ նպաստած է իր մեծու-
թեան:

Նար-Պէյի կեանքին վերջին մասը որչափ տխուր՝ այն-
քան մեծ գասեր կը պարունակէ ամենուս համար: Այս

մարդը որ իր կենաց ամբողջ ընթացքին մէջ յարատե ձգտում մը ունեցած էր վե՛ր, միշտ դէպի 'ի վե՛ր բարձրա նալու՝ յանկարծ անգութ ձեռք մը զինքը երկաթի մաղիլ ներով ճանկին մէջ առած՝ ահազին բարձրութենէն կը դահավիժէ վար, խորունկ անդունդին մէջ... եւ ջախջախումը այնքան ուժգին եղաւ՝ որքան մե՛ծ էր բարձրութիւնը. այս, այդ հէք մարդուն մարմինին հետ մէկտեղ բոլոր յօյսերը, բոլոր երաղները ջախջախուեցան և իր դադաղը կը յիշեցնէր աշխարհական Արտաշէսի հռչակաւոր խօսքը՝ «Աւաղ փառացս տնյաւորի...»

Բայց այս անկումը անկում չէր, այլ բարձրացում մը, և Նար-Պէյի հոգին պիտի օրհնէ այն ձեռքը որ զինքն այսպէս ջախջախեց. Նար-Պէյ իր վերջին ապաշխարանքը քաշեց զարմանալի տոկունութեամբ և համբերութեամբ. Նար-Պէյ շատ տառապեցաւ և իր տեղ ուրիշ մը գուցէ միջոցներու զիմեր այդ վեճակէն ապատելու. միջոցնե՞ր, որոնք պէտք է ըսել, զիւրապատրաստ էին. բայց նա մերժեց և արհամարհեց զանոնք ու լաւագոյն համարեց վիշտը սեղմել սրտին մէջ քան թէ ուղղութենէ շեղել. Նար-Պէյի մեծագոյն փառքը պիտի մնան իր վերջին օրերը:

Նար-Պէյ բարձրացած մեռաւ....

* * *

ԱԾ շարունակուի.

ԲԱՆԱՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԲԵԹԳԵՀԵՄԻ ԱՅՔԻ ՍՈՒԲԻ ՄԱՆԱԿԱՐ

Եռների լանջում—քարայրի խորքում
Շողում է կը ըակ երկնային սիրոյ
Կայծերով վառուած մի նորոգ կեանքի,
Շողում է կը ըակ—այնտեղ յաւիտեան
Լոյսը չի հանդչում;
Յոյսը չի խաբուում:

* * *

Ներս մաիր այրը—հովեւ ու գառներ,
Դառների մըսուր—անշուք խանձարուր,
Աշա Մանկիկը անմեղ ու ամբիծ
Ժպտում է պայծառ—սէր է մեզ շնչում:
Աշա լալիս է—այդ նըրա սիրտն է,
Որ կեանքի շէմքից, ծաղեկ օրերից
Մարդկանց վշտերի համար Շմիուում,
Մարդկանց մեղքերին ներուժն աղերսում:

* * *

Անկեղծ զղջումով, մաքուր արցունքով
Խոնարհուիր, ընկեր, համբուրիր նըրան,—
Նա քեզ կըներէ, նա քեզ յըս կըտայ.
Եւ գուշ զօրացած կըրիր քո խաչը,—
Էլ շղթայ չոկայ,
Էլ արիւն չոկայ:

Անդրադիմակացած.



ԹԱՓԱՅՑԵԼ ՊԱՏԿԱՆԵԱՆԻ
ՅԻՇԱՏԱԿԻՒՆ

Դարձեալ մի շերիմ փորուեցաւ հողում,
 Դարձեալ մի մեծ կեանք հողին յանձնեցինք:
 Փըշըրուեց քընար, ջախջախուեց գըրիւ
 Մարեց մեծ հանձնար՝ վշտերի երգիչ
 էլ ՞վ կըսրբէ արցունք տանջուողի,
 Ո՞վ կըթուլացնէ կապանք ըստրկի.
 Յոյսեր, ապազայ, խնկելի վաթան
 Ո՞վ կըխոստանայ գերի պանդխտին:
 Էլ ՞վ կըերլի արցունք Արաքսից
 Նորա դարգերը մեղի պատմելու.
 Ո՞վ Աւարայրի սգուոր բլբուլեց
 Կըգողնայ ողըը մեզ ոգի տալու:
 Դու ոսկի հորթին արիր խայտառակ,
 Զար բռնաւորին դէմ գըրիր արձակ.
 Աղջի ցաւերով ըստէպ տանջուեցիր,
 Վերածընութեան վեհ հերոս գարձար:
 Դու վըգովուեցիր, գու արտասուեցիր,
 Դու բողոքեցիր ամենի համար.
 Քեզ տանջող վեշար ամենիս վեշտն էր,
 Քո ցանկացածը ամենիս իղձն էր:
 Բայց գեռ ըստացած ըղձիդ կատարում՝
 Պառկեցիր մենակ սառ հողի զրկում:
 Սակայն չենք մոռնայ քեզ ու քո ըղձեր,
 Կերգենք շատ դարեր քո աղնիւ երգեր.
 Թէւ կորցրեց քեզ ընտանիդ տրտում,
 Բայց գու ապրում ես ամենիս սրտում:

Հ. յահ. շնչար ամէց:

ՀԱՅ

Ա Ղ Ե Ց Է *

Թէ՞ ո՞ սրբաց Շաբաշին է,
Սեր ամբողքերը Շիրավինը վեհ...
ԽՈՐԵՆԱՑԻ,

Յարայի երկիրը, այդ մեծ ամբարը
Հաղար աղզերի՝ փռած է իմ առաջ:
Բարձրից նայում եմ նորա գեղեցիկ
Ու լուռ պատկերին, բայց թախծութիւնը
Պատում է սիրաբս... ո, ի՞նչպէս լուռ ես,
Նախահայրերիս կաթնալի՛ երկիր...—
Հասել է հունձդ, —չկայ ժիր ձեռքը
Քո վառ մշակի, որ մեծ եռանդով
Հաւաքէ առոյգ ու ճոխ ցորենիդ
Կարմիր հասերը ամբարներիդ մէջ...
Սաստի՛կ աղէտը կաշկանդեց նորա
Հողին ու կեանքը, —նորա բերանը
Չոր չորացել է... լեզուն չի դառնում...
Ձեռք ու ստքերը թոյլ են ու տկար—
լալիս է, հեծում...
Հովն է սօսափում լեռան թիկունքին
Աղատ, ընդարձակ արշաւանք տալով...
Հողիս վառուսում է... ելնում է սիրտը...—
Եւ ես չեմ կարող չհասկանալ լեզուդ.
Ո՛, շնուռ կը հասնի քեզ մի փրկութիւն,
Շարայի երկիր, սիրուն հայրենիք,
Նախահայրերիս սուրբ բընակավայր,
Ի՞նչպէս լուռ ես գու, ի՞նչպէս զարկուած...


*) Ես գժբաղդ տարին Շիրակի ամբարներին էլ վասահց: Առանց այն էլ տարին չորացին եր և երկրի բերքը սակաւ, —խօվրի սարսափն էլ գիւղացիներից շատերին ստիպում էր թողնել իւր ոսկեգոյն ու գեղեցիկ արար ու փախչել... «Պէտք չեւ ասում է, են հացը, որ պիտի մի օրուայ մէջ մեռնեմ»:

ԱՅ ՈՒ Թ Ա Ղ *

Արջը սուզուել է գլխով խոր ծովում
ու ջուր է խրմում;
Քիտե՞ս, վաղըց է նա իր զբուխը
ջըրից չի հանում...
Սիրում եմ նայել նորա մութ մարմնուն,
որ կապօյա ջըրի
Տարածութեան մէջ փայլում է որոշ
և շատ կենդանի...—
Այդ Սյուդաղն է... հեռուից երեեց,
և իմ մաքերըս
Արջի զլիսի հետ ընկզմուեցին խոր
ծովի անդունդը...
«Ի՞նչ ես որոնում այլտեղ՝ յատակում,
սիրուն Սյուդաղ,
Որ ամբողջովին սուզուել ես անդորր
ու պարզ ջըրերում»...
Բայց վեր չի առնում իրան զբուխը
մութ Սյուդաղը.
Լուրջ ու առանց ձայն՝ նա որոնում է
կորցըրած մի բան...
Ես էլ եմ վիստուում քեզ հետ միասին
կենսական ծովի անհունութեան մէջ...
Ես որոնում եմ իմ հայրենիքըս,—
Իսկ քո կորուստըդ տուաւել թանգ է
Ու անդառնայի՞—սիրուն Սյուդաղ...»

 Յ. Կառավար

* Նշանակում է «Արջի լեռ», ոա մի փոքրիկ հրուանդան (ժերակողի) է, որ գտնուում է Խալտայից ոչ այնքան հեռու (արևելք). երեակցեցէ՛ք մի վեժիսարի արձ, որ գլուխը ընկլմել է ծովի մէջ և միշտ և յաւիտեան խմում է այդ մժագոյն ու խառնադիմութիւնը. Այս ապա տպաւորութիւնն է թուղնում այդ փոքրիկ ու գեղեցիկ ժերակութեանը շուրջութիւնը գիտելիս.

Ք Ա Խ Ա Ա Փ Ի Ե

ԵԼԻԱՍ ՃԱՒՃԱԽԱԶԵՒՑ

Հայրենի գետ, արթնած հաղեւ հաղ դարձեալ,
 Կսում եմ աշա խոխոջիւնըդ մոռացեալ.
 Ալիքներիդ խաղը սիրաս է կրտքատում,
 Ունկըն դընել քեզ կարող եմ լոկ արբատում:—

* * *

Ահա նորից բացուում է իմ հին վերքը,
 Ցաւն հեգ ազգիս, երբեմն հուժկու իւր ձեռքը:
 Կարծես թաղած են կոհակներդ այս ահեղ
 Մէգ լեռներիդ պերճութեան փայլն փառահեղ:

* * *

Այն օրուանից այդ քո շըքեղ անցեալի՝
 Հաղեւ մընաց նըշոյն անգամ անձկալի.
 Դէհ, խոխոջոց գետ հայրենի փառաւոր,
 Տար անցեալին իղձն իմ ցաւեր բիւրաւոր:

Հայ - ացուց.





ՄԱՏԵՆԱԽՈՍԱԿԱՆ

Du Caucase au golfe Persique à travers l'Arménie, le Kurdistan et la Mésopotamie par P. Müller-Simonis, suivie de notices sur la géographie et l'histoire ancienne de l'Arménie et les inscriptions cunéiformes du Bassin de Van par H. Hyvermat. Delhomme et Briguet, éditeurs, Paris, Rue de l'Abbaye, 13. 1892.

Առվելաց միջև Պարսկաց թուշ Հայուստանի, Քուրդականի և Մեծասէրուքի մերութէ^ւ
Արևմտա-Սէրանի, Հայաստանի Հին պարհագրութէան և պարհութէան և Առանի ստողանի
առաջանահրաժենների Տառին ուղղվածքիներով հանդերձ՝ Հիմերանարի, Փարեզ: 1892:

Անցեալ աարուայ Բ. դրբում «Արաքս»-ի մշտական աշ-
խատակից յարգելի ալ. Լ. Մ. սիրուն և ամիութ կերպով ծա-
նօթացրել էր հայ հասարակութեանը Եւրոպայի հայախօսա-
կան գրականութեան մէջ խիստ աչքի ընկնող այս խոշոր
հրատարակութեան հետ, առանձնապէս մատնանիշ լինելով
դրբում մեր հայրենիքի հին աշխարհագրութեանը և մեր
նախնեաց հնագոյն պատմութեանը նուիրուած էջերի վերայ,
որոնք Բաբիլոնի, Ասորեստանի և մանաւանդ Հայաստանի
սեպաձեւ արձանագրութիւնների վերայ հիմուած լինելով
բոլորովին նոր և Ճիշտ գաղափար են տալիս մեր երկրի ան-
ցեալի մասին: Այս անգամ կուզէինք ծանօթացնել ընթեր-
ցողներին դրբի այս մասի հետ աւելի մանրամասնօրէն:

Սյրարատեան աշխարհը իւր ամենահեռաւոր սահմաններում և Վանայ լծի շուրջը տարածուած երկիրները լիքն են մեր հին ու նոր նախահայրերի թողած յիշատակներով ույիշատակարաններով և հայկական կեանքի ծանրութեան կեդրոնը զրեթէ միշտ տատանուելէ մեր այդ երկու բնադրաւառ մեծ աշխարհների մէջ փոխադաբար մէկից անյնելով դէպի միւսը: Իրենց արգաւանդ ու ընդարձակ դաշտավայրներով երկու աշխարհներն էլ հնագոյն ժամանակներից բաղմամարդ երկրագործ մի ազգաբնակութեան կեդրոններ են եղած, որտեղ ծաղկել է միշտ մի յայտնի քաղաքակրթութիւն և ինքնուրոյն անկախ գյոււթիւն, որտեղ ամենահին ժամանակներից զյոււթիւն է ունեցել զիրը և դրականութիւնը: Եթէ մեր այդ երկու բնադրաւառները իրենց աշխարհագրական զիրքի շնորհիւ չարաբախտ վեճակի են դատապարտուել դարերի ընթացքում՝ ինչպէս մասսամբ նաև այսօր,—տանջուելով ազգերի մեծամեծ շարժումներից,—նոյն այդ զիրքը նպաստաւոր էլ եղել է նոցա, վկայ և մասնակից կանգնեցնելով նրանց հին Արևելքի ամբողջ քաղաքակրթութեան: Սյրարատն ու Վանի աւազանը մեր պատմութեան ամենահին ժամանակները աւելի հետաքրքրական են եղել և այսօր մենք մեր մտքի ազքերով աշխատելով թափանցել նոյն մերձաւորական ասպագան, չենք կարողանում մտաւոր մի թռիչք չանել դէպի խորհրդաւոր ու մութ անցեալը, երբ դարձեալ մեր արխւնակից և մեր հարազատ հայ մարզիկ ապրել են ու զործել և իւրեանց գործերը ամենայն խնամով աշխատել են մեզ հասցնել որ մենք իմանանք անցեալը, և այդ մէջոցն միայն պարզէն+ առաջանան: Մեր նախահայրերը թողել են յետնորդներիս բեեռազիր կամ սեպազիր տառերով արձանագրութիւններ, սիոռուած յիշեալ երկու աշխարհներում, մանաւանդ Վանայ լծի աւազանում:

Նատ ժամանակ չ' որ երախտազէա Արևելուաքը ճանաչելով զառամեալ Արևելքից ժառանգած իր քաղաքակրթական բարիքների մեծամեծ արժէքը, եռանդով անձնատուր է եղել այդ իր զառամեալ՝ կենազուրկ հօրը վերակենդանացնելու զործին: Եւ վերակենդանանում է Արևելքը. մինը միւսի

եաւելց բարձրանում են անշքացած ու գետնին հաւասարուած Թէրէն ու Մեմիփիսը, Նինուէն ու Բարիլոնը, Տիւրոսն ու Սիզոնը, Համազանն ու Փասարգաղը, Մերկի ու Սմրզանլը.... և ամբողջ Արևելքը կենդանի կանգնում է, լուսաւոր մարդկութեան առաջ, խօսում է իւր սեփական բազմազան լեզուներով և լուսում է նրանից լատավթիոր: Վերակենդանանում է Արևելքը, և այդ՝ բառի բուն նշանակութեամբ. ամբողջ մարդկութեան առաջ գրուած է «Արևելքի հարցը», և այսօր յիրաւի «աշխարհս Արևելք է թեքուում», ինչպէս առաց դարիս ամենամեծ բանաստեղծը: «Արևելքի հարցը» վճռելու համար, նորա այս կամ այն ձեռվ գոյութեան և մահուան վճիռը տալու համար, Արևեմուաքը շատ ու շատ միջոցների է ձեռնարկել: այդ միջոցների մեջ Արևելքի տեսական ամենակողմանի ուսումնասիրութիւնը առաջին տեղն է բռնում, և այդտեղից հանած եղրակացութիւնները զեկավարում են մամուլի գործիչն, իսկ դրա միջոցով հասարակաց կարծիքը և դիւանադէտին: «Մեծ-Բրիտանիոյ Արքայական Ասիական Ընկերութիւնը» իւր «Ասիական օրագրով» («Journal Asiatic») Լոնդոնում, «Գերմանական Արևելեան Ընկերութիւնը» իւր համանուն «Հանգիսով» («Zeitschrift der deutschen Morgenländischen Gesellschaft») Բեռլինում, «Աւստրիական ամսագիրը Արևելքի համար» («Oesterreichische Monatschriften für den Orient») և «Վէնայի ամսագիրը արևելագիտութեան համար» («Wiener Zeitschrift für die Kunde des Morgenlandes») Վէնայում, Եւրոպայի դրեթէ ամեն երկրներում եղած աշխարհագրական ընկերութիւնները իրենց աշխարհագրական պարբերական հրատարակութիւններով և այլ բազմաթիւ ընդհանուր գիտական նպատակներ ունեցող հրատարակութիւններ, էլ չենք խօսում Արևելքի անունը կրող բազմաթիւ եւրոպական լքագրների մասին,— բոլորն էլ արծարծում են միշտ խնդիրներ Արևելքում՝ գործերի զրութեան մասին. իսկ եւրոպական համալսարաններից շատ շատերը լսյն բաց անելով իրանց գոները այդ հոսանքի առաջ, որոշել են իրենց յարկի տակ «Արևելեան» առանձին

բաժիններ, կամ հաստատել են առանձին ամբիոններ եղիպտա-
բանութեան, ասորեստանազիտութեան և այլ նոր ծագող
արևելեան զիտութիւնների։ Մօտենում է աշխարհիս պատ-
մութեան մի նոր դարավլուխը....

Մենք էլ մի փոքրիկ տեղ ենք գրաւում ընդարձակ Ա-
րևելքում, և «Արևելեան Հարցի» մէջ մեր վեճակն էլ քուէի
է գրուած։ Հայազիտութիւնը Արևմուտքում զեռ երեք գար
առաջ սկսուեց և մինչև այսօր անընդհատ առաջ գնալով՝ օր
աւուր բաղմացել են Արևմտեան Եւրոպայում մեր լեզուի և
կեանքի սիրահար օտարները։ Խուսաստանն էլ այսօր միա-
ցել է այդ բանում լուսաւոր աշխարհին։ Հայերէնի ամբի-
ոններ գտնուում են Փարիզում (Արևելեան կենզանի լեզու-
ների Ճեմարան), Պետերբուրգում (Համալսարան) և Լոնդո-
նում (Կինգս Կոլլէժ)։ Մեր Հայրենիքն էլ Հարցափորձի է են-
թարկուում այսօր՝ կանգնած քաղաքակիրթ աշխարհի առաջ
իւր գատավճիռը լսելու համար։ Մեզ էլ գալիս են քրերուս,
որոնում, Հարցնում, վերահասու լինում մեզնից անցայտ
մնացած մեր Հարստութիւններին։ ձգտում են իմանալ թէ
ինչով ենք մենք օգտակար եղել մարդկութեանը, ի՞նչ աչքի
ընկնող գործ ենք կատարել։ Եւ մեզ մօտ էլ վերակենդանանտ-
նում է մեր հին, շատ հին աշխարհը. Վանայ բերդի ապա-
ռաժը լեզու առած խօսում է այդ յանդուգն Հարցափորձող-
ներին իւր շատ հին անցեալի մասին, երբ նորանց Հայրերի
ու պապերի անունն ու հոտն էլ չըկար աշխարհում։ Լեզու
առած խօսում են և Սյրարատեան աշխարհի սահմաններում
սփռուած բոլոր բևեռաղիրները։ Ի զուր էր Խորենացին «բամ-
բասում» և «կշտամբում» իւր նախնի թագաւորների և իշ-
խանների «անկմանստասէր բարքը» և «անկառարութիւն ոգ-
ւոյն բանականի»։ «Բաղում գործք արութեան գտանին գոր-
ծեալ և ի մերում աշխարհիս, և արժանի դրոց յիշատակի,
զբոց և ու մի ու է նոցած պէտք յանձնն իտլու արյանագնել»։
Սյսպէս է մեղադրում նա անզիտութեամբ իւրայիններին
և այս առթիւ գովութեամբ յիշում է այլ ազգերի, ի միջե
այլոց ասորեստանցոց թագաւորների ընթացքը, —իրենց ժա-

մանակն ու գործերը գրի անցկացնելը։ Ահա այդ նոյն ասորեստանցոյ մի առասպելական թագուհու՝ Շամփրամին է վերագրում և հայաստանում սփռուած ամենաշին գրաւոր պատմական յիշատակարանները՝ բևեռագիր արձանագրութիւնները, որոնց բարբառը անհասկանալի էր հայ պատմութեան հօր համար։ Բայց անցան տասնուշրս դարեր, և ինչ որ հայ պատմիչը չը կարողացաւ անել՝ իրեն ժամանակով աւելի մերձաւոր և հարազատ նախնեաց՝ Ճիշտ պատմութիւնը յետնորդներիս թողնելու համար, այն արեցին մեղ հետո ոչ մի արենակցական կապ կամ որեւ է ուրիշ շահեր չունեցող՝ անզլիացի, գերմանացի ու ֆրանսիացի գիտնականները, ճշմարտութեանը իրենց պարտքը հատուցանելու համար։

Այն օրից, որ Բոտտա, Լէյարդ, Ռոլբնսըն, Սմիտ, Օպերտ, Ֆրէնէ, Դը-Սոլսի և շատ շատերը պեղումներ անելով գետնի տակից հանեցին հին աշխարհի մեծ կեղրոնները, — Նինուէն, Բաբիլոնը, Երեխը, Համադանը, Պերսեպոլիսը, — իրենց բևեռագիր դրագարաններով ու ընդարձակ արձանագրութիւններով և կազմուեցան ասորեստանցոյ, բարելացոյ, պարսից ու մարաց լեզուների քերականութիւններն ու բառարանները, այդ օրից Եւրոպայի պատմագէտները այդ արձանակրութիւններից հանած Ասիայի հին պատմութեան պակասները լրացնելու նպատակով ուշգրութիւն գարձրին հայաստանի հողի վերայ սփռուած սեպագիրների վերայ։ Ներկայումս մի շարք եւրոպացի ասորեստանագէտներ, — Սէյս Անգլիայում, Մորգանան Գերմանիայում, Տ. Միւլեր Աւստրիայում, Ս. Գիարդ և Լ. դը-Ռոբերտ Ֆրանսիայում, — զբաղուած են այդ սեպագիրները հրատարակելով թարգմանելով և մեկնելով վերեւ յիշուած Արևելքի մասին հրատարակութիւններում, շատ սակաւ առանձին զրքերով։ Բայց գեռ դարիս սկզբներից հայաստանում ճանապարհորդող շատ եւրոպացիներ, — Շույլց և Լէյարդ անզլիացիք, Միւլբախ և Վունչ գերմանացիք, դը-Սոլսի ֆրանսիացին և մի քանի ուրիշները, — զբաղուած էին այդ արձանագրութիւնները ընդօրինակելով ու հրատարակելով, իսկ ուրիշները՝ թիթեղագրոշմ անելով

և ուղարկելով եւրոպական թանգարաններին։ Հայերի մէջ
էլ սկսաւ երեել հետաքրքրութիւն դէպի այդ բևեռագիրնե-
րը, որ այժմ ընդունել են կոչել Վանի կամ հայկական կամ
ալարդեան, (այս վերջի անունը ծագել է Ալարոդ անունով
մի ազգի անունից, որը՝ հերոկոսոսի տաելով՝ հին ժամանակ
հայաստանում ապրող ազգի անունն է), և որոնք բևեռագիր
համակարգութիւնների մէջ՝ կարծեօք՝ ըլրրորդ թէ հինգե-
րորդ տեղն են բռնում քաղցէականից, տորեստանականից,
պարսկականից (գուցէ նաև մարականից) յետոյ։ Մեր մէջ այս
դործում շշափելի ծառայութիւն է մատուցել դիտութեանն
ու հայ հնախօսութեանը նախ՝ Գեր։ Մեսրոպ արքեպիսկո-
պոս Միքատեան (ներկայում Շամախուայ թեմական առաջ-
նորդը), որ 60-ական թուականների սկզբից զբաղուել է Այ-
րարատեան գաշտում սեպագրութիւններ յայտնագործելով,
ընդօրինակելով և հրատարակութեան տալով «Արարատում»
և ոռւսական մի երկու պարբերական թերթերում։ այնու-
հետեւ յիշուելու է ներսէս վարդապետ Մարգիսեան, Միի-
թարեան ուխտից, որ իր «Տեղագրութեան» մէջ (Վենետիկ,
1864) մի քանի ընդօրինակած արձանագրութիւններ է հրա-
տարակել պէտք է յիշել և նոյն ուխտից Դ. Գ. Սլեշանին և
նորա եղբօրը Ս. Ալեշանին, որոնք Մորգամանին բևեռագիր-
ների ընթերցման գործում աջակցում էին և նորանոր պատ-
ճէններ էլ հասցնում էին գերմանացի գիտնականին. վերջա-
պէս պէտք է յիշատակենք Ք. Պատկանեանին, որը սովորա-
բար ստանում էր այդպիսի արձանագրութիւնների պատ-
ճէնները կտոր լուսանկարները զեր. Մեսրոպ արքեպիսկոպոսից
և ուղարկում էր Սէ յսին թարգմանելու համար, կամ ինքն
էր հրատարակութեան տալիս Լոնդոնի «Մասքոն»-ում և թարգ-
մանում էր Սէ յսը։ Այս բոլոր ջանքերի շնորհիւ մինչեւ այժմ
հրատարակուած են և թարգմանուած մօտ 70 արձանագրու-
թիւններ. խօսք ըզկայ, որ մեր հայրենիքը հետազոտողների
աչքից զերծ մնացած շատ այդպիսի քարեր ունի դեռ թար-
գրած իր ծոցում, որը երեսում է նոցանից «Հայոց պատմու-
թիւնը» հանող մեր այս հեղինակի՝ Խվերնատի բերած ցու-

ցակից, որտեղ մէկ-մէկ նկարագրելով բոլոր յայտնի և հրատարակուած արձանագրութիւնները, բերում է և չըհրատարակուած՝ բայց իրեն հեղինակին պատահած կամ տեղը մատնանիշարած՝ արձանագրութիւնների ցուցակը, որից երեսում է, որ այժմ դեռ 30 այդպիսի արձանագրութիւններ կան: Նոցանից մի քանիսի պատճենը վերցրել է ինքը հեղինակը, իսկ Միւլլեր-Սիմոնի լուսանկարել է: Առ այժմ մենք պէտք է բաւականանանք մեր ձեռքին եղած այդ վաւերական աղբիւրներով և տեսնենք թէ ինչպէս են նոքա ներկայացնում մեզ հայոց հին աշխարհը:

Հայոց հին աշխարհի պատմութիւնը տալուց առաջ՝ ասորեստանագէտ հեղինակը մեզ ուղղում է տալ Հայաստանի հին աշխարհագրութիւնը, ոչ այն աշխարհագրութիւնը, որտեղ հարաւային Հայաստանը նկարագրելիս մեզ տալիս են Տուրուքերանի, Վասպուրականի, Մոկաց, Աղձնեաց, Կորճէից նահանգների ու Ծոփաց աշխարհի և նոցա գաւառների ու քաղաքների անունները, այլ բոլորովին ուրիշ աշխարհագրութիւն իւր խորթ ու տարօրինակ անուններով, որոնք վերաբերում են այն ամենահին ժամանակներին, երբ Խորենացու պատմած աւանդութիւնների համաձայն՝ Հայկը, Արամը, Արան ու Շամիրամն էին մեր աշխարհի գիւցազունքը: Սակայն ճանապարհորդութեան հեղինակ Միւլլեր-Սիմոնից իմանում ենք, որ այդ գրուածքի ձեռապիրը Ամերիկա էր ուղարկուել իրեն՝ Էվերնատին (սա այնտեղի մի կաթոլիկ համալսարանում ասորեստանագիտութեան ուսուցչապետ է) վերջին անգամ՝ տպագրութիւնից առաջ՝ անցկացնելու, և ճանապարհին շոգենաւում կորել է, այդ պատճառով զիրքը հրատարակուել է առանց այդ կարեսը մասի: Մեզ խոստանում են սակայն մի նոր աշխատութիւն ընծայել նոյն նիւթի մասին և նոյն հեղինակի, աւելի մշակուած ու աւելի լիակատար: Բայց մենք ուղում ենք համառօտ կերպով մի երկու անուններ տալ այստեղ՝ Հայաստանի հին աշխարհագրութիւնից՝ յետագայ պատմական նիւթի պարզութեան համար:

Գլխաւոր աշխարհագրական անունը, որին պատահում ենք,
Ուրարդուն է: Ի՞նչ պէտք է հասկանալ այդ ասելով: Ասո-
րեստանի արձանագրութիւնները մեզ ասում են, որ դա է Հայաս-
տանի գլխաւոր ու ամենազօրաւոր թագաւորութիւնը և նորա մայ-
րաբաղաքն է Արքասկու: Անզը սովորաբար նոյնացնում ենք
այդ անունը մեր Այրարատեան գաշտի ու նորա թագաւորութեան
հետ: Աակայն արձանագրութիւններից չի երևում՝ թէ ասորեստան-
ցիք երբ և իցէ Արաքսն անցած լինեն Ուրարդու մտած ժամանակ.
բոլոր նշաններից երևում է, որ Ուրարդուն ընկած էր Արքանիո
(Արածանի կամ Առուրադ կամ Արքելեան Խփրատ) գետից անմի-
ջապէս հիւսիս և ուրեմն պարունակում էր ի միջի այլոց հագրեան-
դի ընդարձակ գաշտերը (Ալաշկերտը) և շրջակայքը: Պուցէ այդ-
երկրների մէջ մտնում էր նաև ամբողջ Այրարատեան երկիրը կամ
նորա մի մասը, բայց դեռ այդ յայտնի չէ: Իսկ յայտնի է, որ
սեմական ազգերը Արարատ ասելով հասկանում էին ոչ թէ Այրա-
րատեան աշխարհը, այլ հարաւային Հայաստանի լեռնոտ երկիրը
և Ա անայ լճի շրջակայքը: Ա անի արձանագրութիւններով սրբ-
ուուած տեղերն աչքի անցկացնելով՝ մեզ տեսնում ենք, որ նորա
խմբուած են մի ընդհանուր կերպոնի՝ Ա ան քաղաքի՝ շուրջը, և
հեռանալով այդտեղից գէպի ծայրերը նուազում է նոցա թիւը,
այնպէս որ Ա անի արձանագրութիւնները դեռ չըկարգացուած՝ կա-
րողացել էին Հայաստանի գլխաւոր թագաւորութեան սահմաննե-
րը գծել: Աժմ արգէն այդ արձանագրութիւնները մեզ ասում են,
որ Հայաստանի գլխաւոր թագաւորութիւնը ընկած էր Ա անայ
լճի մօտ, և նորա անունն էր ոչ թէ Ուրարդու, այլ Ի ի ա ի ն ա
կամ Ա ի ա ի ն ա, իսկ նորա մայրագաղաքը կոչուում էր Տուրուս-
պ ա ս կամ Դ ո ւ ս պ ա ս, Ա ի ա ի ն ա ն փոխուել է Ա ա ն և երկրի
անունը անցել է քաղաքին (դեռ Պտղոմէոս կոչում էր քաղաքը
Տուանա, իսկ Կեդրենոս Ի բ ա ն), իսկ Դ ո ւ ս պ ա ս ը նոյնպէս
փոխուել է հին Հայոց մէջ Տուպ և, հակադարձաբար, քաղաքի
անունն անցել է շրջակայ երկրին: Կոյն իսկ Ասորեստանի մի քա-
նի արձանագիրներում Ուրարդու անունը յատկացրած է այդ Ա ի-
ահնային և ուղղակի յիշուած են նորա Տուրուսպա և Օ ի բ ա ս
մայրագաղաքները:

Բայց այն ժամանակ ո՞րտեղից գուրս եկաւ Ուրարդու անու-
նը և ո՞րն է Արզասկու մայրագաղաքը: Այս հարցը դեռ լաւ պար-

զուած չէ, և մեր հեղինակը, որ վանի արձանագրութիւններից հանում է «Հայոց պատմութիւնը» Աշոքին հետեւլով, չի համաձայնում նորա՝ բաւական յաջող կերպով փաստաբանած՝ կարծիքի հետ-Ուրարդուի և Շիահնայի նոյնութեան մասին։ Ասորեստանցիք բոլորովին այլ անուններ են տալիս մեր երկրին ու նորա բնակիչներին, քան ինչ որ գործածական էր տեղացիների մէջ (ինչպէս այժմ էլ օտարների արմէնը և մեր հայը). դորա պատճառն այն էր, որ նոցա գործ դրած այդ անունները իրենց սկիզբը շատ հին ժամանակներից են առնում, երբ Ասորեստանը գեռ չը դուրս եկել Անաստի գաշտերից և երր գեռ վառ էր քաղդէական ազդեցութիւնն ու լեզուն սկզբնական ազդերի վերայ։ Ուրարդու բառը ոչ թէ իրանական կամ մինչեւ անգամ արիական ծագում ունի, ինչպէս կարծում էր Ալենորման, այլ զուտ քաղդէական, և բարիլունեան բենուագիր արձանագրութիւններից մինում, որ համում է մինչեւ Ճ.Օ. կամ Ճ.Յ. գարը Վրիստոսից առաջ, խօսուում է Ուրգուի՝ կամ որ նոյն է Ուրարդուի՝ մասին, իսկ այդ ժամանակ արիացիք իրենց գաղթական շարժումներում գեռ այնքան հեռու արեմուտք չէին գնացել Աւրիշ՝ զուտ լրգուաբանական պատճառաբանութիւններով, որ այսուել չենք բերում նոցա մասնագիտական բնաւորութեան պատճառով, Աշոք ապացուցանում է փոքր ինչ ձգձգուած կերպով, որ ասորեստանցիք չեն անգիտացել և գործ են ածել նաև Շիահնա անունը։ Ինչ և իցէ, այս հարցը գեռ լիովին չի պարզուած, և մեր հեղինակը ծանր առարկութիւններ է անում (Օքսֆորդի համալսարանի ուսուցչափետէն նորա արած պատճառաբանութիւնների գէմ)։ սակայն բոլորովին չի էլ հերքում նորա հիմնական միտքը—Ուրարդուի և Շիահնայի նոյնութիւնը։ Կա կարծում է, որ Ուրարդուն իր Արդասկու մայրաքաղաքով պէտք է որոնել ոչ թէ Վանում, այլ արեմուտք ընկած մի տեղի շուրջը, որ Արդասկու մայրաքաղաքի տեղն է լինելու և որը նոյնպէս գեռ անյայտ է։ արդ կամ արծ արմատով հայքաղաքների անուններ յաճախ են պատահում Վանայ լճի և երկու Եփիրատների խառնարանի միջն ընկած երկրներում, ինչպէս որ արտ կամ արդ արմատը, որ գուցէ նորա հետ կապ ունի, յաճախ է պատահում Արաքսի հովտում ընկած քաղաքների անունների մէջ։ Կաժբախտաբար նոյն իսկ այս յաճախութիւնը գժուարացնում է Արգասկուի տեղը ճշտութեամբ որոշելու գործը։ Արով բանի՝ նա կարծում է, որ բուն Ուրար-

զուի թագաւորութիւնը Այրարատեան նահանգն է, որ առաջինը կանգնել է ասորեստանցոց դէմ յանդիման. նորան հպատակում էին շատ երկիրներ, ի միջի այլոց վասպուրական նահանգը, բայց երբ այդ թագաւորութիւնը վերջնականապէս ջախջախուեց ասորեստանցոց հարուածների տակ (իմ, դարի կէսերին), այն ժամանակ վասպուրականի կառավարիչը Ոեղուրի կամ Սարդուրիս իրեն թագաւոր հռչակեց Տիահնայում, և մատաղահաս թագաւորութիւնը ասպարէզ մտաւ իւր իշխանութեան տակ առնելով նաև նախկին Ուրարդուի երկիրները: «Կուցէ այս վերջին պատճառով, կամ գուցէ արհամարհանքից դէպի նոր ծաղկող թագաւորութիւնը, ասորեստանցիք սկսեցին այնուհետեւ Ուրարդու անունը յատկացնել Ա անայ երկրին, մինչդեռ իրենք բնակիչները շարունակեցին գործ ածել Ծիաին անունը. դրանից առաջ ասորեստանցիք Ա անայ երկրին տալիս էին Մաննա անունը:

ՈՒիւ նշանաւոր աշխարհագրական անունը, որի վերայ հարկաւոր է կանգ առնել: «Եայիրին է, այն լայնածաւալ աշխարհը, որ ձգուած էր երկու Եփրատների խառնարանից մինչև Օագրոշվ շղթան, երկու Տիգրիսների բազմաթիւ գետակների վերայ ընկած երկրներում (Կայիրի—գետերի երկիր): «Եա մի մեծ գաշնակցութիւն էր կազմում՝ բազկացած բազմաթիւ, հարիւրի չափ, մանր իշխանութիւններից, և կցուում էր բուն Հայաստանի անմիջական սահմաններին: Վայդ իշխանութիւններից յիշեցինք արդէն Ա աննան. նորանից հարաւ ընկած էր Վարպետ իշխանութիւնը՝ Օաւ գետի ակունքներում, իսկ սրանից արևելք՝ Խոռոպաշտ կա: Որմիոյ լճից և Խոռոպաշտից հիւսիս ընկած էր Գիլղան: Վանի նեղ մոքով Նայիրին ձգուած էր երկու Եփրատների խառնարանից մինչև Ա անայ Ծի արևմտեան ափերը: Վարեստանցիք Հայաստանը նուաճելու համար նախ պէտք է գործ ունենային այդ մեծ գաշնակցութեան հետ: Երկար ժամանակ աշխարհակալները բաւականանում էին Տիգրիսն ի վեր բարձրանալով մինչև Առուինատ (այժմ Օիրէնէ-սու) գետի ակունքը և այնտեղից ասպատակելով այդ՝ այն ժամանակ բաւական հարտած և ծաղկեալ երկիրները, աւար առնելով և ծանր հարկեր գնելով, անգթօրէն պատժելով անհնազանգներին և գերի վարելով դէպի Վաստանցիք իսարհակալը հեռանում էր թէ չէ, զանազան կէտերում ապստամբութիւնները նորից բռնկում էին և նորից ծանր հոգսեր պատճա-

ոռւմ Ասորեստանին: «Երբից արշաւանքներ, նոր աւերներ ու աւարներ: Կայիրին ձգտում էր Ուրարդուի կողմը, իսկ Ուրարդուի թագաւորները այդ երկրի տիրապետութեան համար շատ անգամ դուրս էին գալիս պատերազմի իրենց դաշնակիցներով և Ասորեստանինի աշխարհակաների ճանապարհը փակում, կամ ապստամբեցնելով նորանուած երկրները՝ ծանր հոգսերի մէջ էին ձգում նոցա: Ա երջապէս մը, դարում Նայիրին ուժասպառ. եղաւ այն բոլոր հարուածներից, որ Ասորեստանը երկու դար անընդհատ հասցրեց նորան, և աշխարհակաների առաջ ազատ ճանապարհ բաց արեց գէպի Հայաստանի սիրտը: Այստեղ յիշուելու են բացի Ուրարդուից նաև հետեւեալ իշխանութիւնները, որոնք նորան ստորագրուած էին զինուորական կողմից կամ նորա դաշնակիցներն էին՝ Նայիրիի տիրապետութեան համար վիճելու Ասորեստանի հետ,— Մուսասիր՝ Ա անայ լծի հիւսիսային ափում՝ Օապարի քաղաքով, գէպի հիւսիս ընկած էին Ո ու Խ մէ և Դ ա յ ե ա ն ի իշխանութիւնները. Ո ե ծ Մասիսի մօտ Միլդիշ իշխանութիւնն էր: Ուրարդուի թագաւորներին ստէպ դաշնակից էին Միլիդի կամ Միլի դութիւն (այժմ՝ Մալաթիա՝ Եփրատների խառնարանից փոքր ինչ ցածր) թագաւորները, որոնք խաթաների կամ խաթերի կամ հէթէների թագաւորներն էին:

Յիշենք գարձեալ մի քանի հետաքրքրական անուններ՝ Վանի արձանագրութիւններից հանուած: Ախուրեանի հովիտը, Արմաւիրի դաշտը և Օանգուի ամրողը հովիտը, մի խօսքով՝ գրեթէ ամբողջ Այրարատեան աշխարհը բռնել էր Եթիուս թագաւորութիւնը, բաժանուած շատ մանր երկրների՝ իրենց զատ-զատ թագաւորներով. այժմեան Արմաւիրի աւերակների տեղում կանգնած էր Եթիուսի երկրներից մինի գլխաւոր քաղաքը՝ Լունունիս. Օանգուի հովտում գտնուում էին Ուլվանիս երկիրը և Դարաս քաղաքը. Ախուրեանի հովտում, Աղեքսանդրապոլի մօտերքը, գտնուում էր Խսկի դուլուս երկիրը իւր Խրդանի ուս մայրաքաղաքով: Արածանու վերայի բաղմաթիւ քաղաքներից յիշուում են Պուտէրի աս կամ Պուլէրի աս (երկի Պալուն) և Խուզանաս քաղաքները. նոյն գետի խառնարանի մօտ էին Գուպաս երկիրը, խաթերի թագաւորութիւնը՝ իրենց Միլի դ. քաղաքով և Աղգիս գաւառը (Աղձնիք, ասորեստանցոց Աղու): Կոյն իսկ գետը կարծուում է թէ կոչուել և Մեդայիս:

Դարօն գաւառը այժմեան Մշոյ երկիրն էր: Որմիոյ լճի արեմտեան կողմը, մինչև Կոթուր-դաղ կոչուած լեռները, ձգուած էր Պան թագաւորութիւնը իւր Շուստուս, Շարսուս և այլ երկներով: Եմիթիւղա և Ուլթուղայիս կազմում էին մի թագաւորութիւն, Աէյսի կարծիքով՝ Մանազկերտի շրջակայքում: մեր հեղինակը, ընդհակառակն, կարծում է համեմատելով բենուագիր այլ և այլ ցուցումները իրար հետ՝ որ այդ թագաւորութիւնը պէտք է որոնել արևելքում: սակայն աչքի առաջ ունենալով այն ծանրակշու իրողութիւնը որ թագաւորութեան մասին խօսող արձանագրութիւնը գտնուել է Մանազկերտի մօտ,—որի վերայ էլ Աէյսի է հիմում իւր կարծիքը,—մեր հեղինակը բացատրում է, որ, ուրեմն, այդ թագաւորութիւնը տարածուած էր Վանից հիւսիս և բաւական տեղ ձգուած էր գէսի արևմուտք և արևելք, այնպէս որ Վանից Արաքսի հովտին համեն համար պէտք էր երկար անցնել նորա միջով: իրբե առանձին նշան այդ թագաւորութեան՝ պէտք է ի նկատի առնել նորա հարստութիւնը ոսկով, արծաթով ու պղնձով: Խնքը Դրասպաս քաղաքը հին ժամանակ հասանորէն կոչուել է Վ. Է. մուն. կամ այդպէս է եղել նորա թաղերից մինի անունը, որ ընկած պէտք է լինէր այժմեան «Խակալի-Գարկեալ»-ի (Նաւահանգստի դուռը) կշտին: Լճի ափին, հաւանօրէն այժմեան Հախավանք գիւղի մօտերը, գտնուում էր Վ. Խ. ի ու նիք աս քաղաքը՝ մի գաւառում, որ կրում էր Վենուասի որդու «գաւառ անունը, երեխ այն պատճառով, որ Մենուաս թագաւորը այդ գաւառի կառավարութիւնը յանձնել էր իւր որդուն: Վղթամարայ կղզին կոչուում էր Վ. Ս. ի դուս, և մի անգամ միայն, կարծում է մեր հեղինակը, այդ կարեւոր կղզին յիշատակուում է Վանի արձանագրութիւններում: Վիւս երեք կղզիները բոլորովին չեն յիշատակուում ոչ մի տեղ: Վանի արձանագրութիւններում յիշուում են բազմաթիւ քաղաքներ, օրինակ՝ Վ. Ր. ծուինիս, Վ. Բ. նիս, Վ. Ր. իգրաս, Վ. Ր. աղաս, Վ. Ր. ինաս, Վ. Ր. ծիբալդինիս, որոնց տեղերը առ այժմ չեն կարողացել ցոյց տալ, որովհետեւ արձանագրութիւնները չեն տալիս ցուցումներ նոցա տեղադրութեան մասին, ինչպէս որ այդ անում են Վ. Սորեստանի թագաւորները, այս պատճառով ուրիշ հետազոտութիւններով և ուրիշ միջոցներվ պէտք է նոցա տեղերը որոշուեն: Այդ միջոցներից մինը մատնանիշ է անում մեր հեղի-

Նակը. բեեռագիր արձանագրութիւնները իրենց բնագիրներում
դուռն են կոչուած արձանագրող թագաւորների կողմից, ինչ-
պէս որ մինչև այօր էլ ժողովուրդը անուանում է (Մհերի-դուռը).
ուրեմն, այն քաղաքները, որոնց մօտ յիշուած է դուռը, պէտք է
գտնուէին արձանագրութիւններ եղած տեղերում: Յիշենք և մի
իրողութիւն, և վերջացնենք այս ակնարկը: Մենուաս թագաւորի
արձանագրութիւնները դուռը չեն կոչուած, այլ արմանի դադ,
որը Աէյս փորձում է թարգմանել իրեւ բնագիր, արձանա-
գրութիւն և կարծում է, որ իրանցիք այսատան գալով և
բաղմաթիւ այդպիսի արմանիդագներ կամ արձանագրութիւններ
գտնելով՝ կոչեցին մեր երկիրը Արմէնիա: Խնչպէս կուզէք: . . .

Նախ քան պատմութեանն անցնելը պէտք է յայտնենք,
որ մատղիր էինք մեր հին պատմութեան մասին մի ամփոփ
ուսումնակրութիւն տալ այստեղ՝ հիմնուելով վերջին տա-
րիներս այդ նիւթի մտախն հրատարակուած նոր հետազօ-
տութիւնների վերայ, և այդպիսով լրացնել և գուցէ նաև
ուղղել մեր հեղինակի մի քանի տեղերը, որովհետև նա հա-
մառօտ է անցնում իր նիւթը, և բացի այդ՝ չէ զիտեցել ոչ
հայերէն և ոչ ուստերէն, և ուրեմն հաւանօրէն ծանօթ չէ հայ-
ազգի զիտնականների—մանաւանդ Մ. Էմինի և Ք. Պատկա-
նեանի—գրուածքների հետ հայոց հին պատմութեան մա-
սին: Սակայն այժմ մեզ այդ ըլյաջողուեց՝ պ. զրաքնիչի ա-
մառնային կանուխ ուղեւորութեան պատճառով, ուստի և
տալիս ենք միայն մի քաղուածք իվերնատի գրուածքից՝ մի
քանի տեղերում միայն յաւելումներ անելով պարզութեան
համար:

Բարիլոն-ասորեստանեայ սեպագիրների ուսումնակրու-
թեան անսպասելի ու զարմանալի հետեանքն եղաւ այն նշա-
նաւոր իրողութեան յայտնութիւնը, որ հնդու-Երողական կամ
արշական գերդաստանին պատկանող ազգերի գաղթական շար-
ժումներից առաջ՝ Միջին Ասիրյ խորքից, Արալեան լճի ա-
րեելեան կողմի դաշտերից՝ զուրս եկան և տարածուեցին
աշխարհիս ամեն կողմերը Առ-Եանական կամ Արաւա-Ֆին-Եան
գերդաստանի ազգերը՝ իրենց հետ տանելով մի սեփական ինք-

նուրոյն քաղաքակրթութիւն, — սարէականութիւն կրօնի մէջ (տարրապաշտութիւն) առանց գաղափարական հիմունքների, նիւթական ու արդիւնաբերական բաւական յառաջազիմած ծանօթութիւններ, քաջ և պատերազմական ոգի ու վարչական մշակուած ընդունակութիւններ և վերջապէս զրութեան մի առանձին եղանակ՝ սեպազրութիւնը կամ բևեռագիրը, — և տարածեցին այդ քաղաքակրթութիւնը այն բոլոր երկրներում, որտեղ նոքա կանդ առան ու հաստատուեցին, — Հնդկաստանում, Արիանայում կամ Իրանում, Սենաարում և ամբողջ Առաջաւոր Ասիայում: Մադայից կամ Մարաստանից (այժմեան Աղերբէյջանը) նոցա մի մասն անցնում է Այրարատեան դաշտը և այնտեղ հաստատուում: մի ուրիշ հատուած անցնում է Վանայ լճի աւազանը և տարածուում է Քիւրդիստանի լեռներում: Այստեղից սոցա մի մասն իջաւ Միջագետքի դաշտերը և աշխարհակալութեամբ տիրապետող զիրք բոնեց Սենաարում քուշանեան, թուրանեան և սեմական ցեղերի վերայ, մասամբ ձուլուելով նոցա հետ և զարմանալի յարմարուող ու ձկուն բնաւորութիւն ցոյց տալով ստորադրեալ ցեղերի նկատմամբ: Փոքր ինչ յետոյ՝ երբ Սենաարից դուրս եկաւ սեմական Ասսուր ցեղը և դէպի հիւսիս զիմելով Տիգրիսի վերայ կազմեց Ասորեստանի ահարկու պետութիւնը, — որ սկսեց թուրանական Սենաարի վերայ աւերիչ արշաւանքներ, — այն ժամանակ այդ նոյն աշխարհակալ և բաւական յառաջազիմած թուրանցոց մեծ մասը զատուելով Ասորեստանի իշլանութիւնից՝ զնաց դէպի հիւսիսային լեռները, հաստատուեց Ուրարդիում, և կազմակերպելով կանոնաւոր պետութիւն ու զինուորական զօրութիւն՝ սկսեց մի անհաշտ կոփւ Ասորեստանի դէմ: Մեր ժողովրդական հին աւանդութիւնը այս իրողութիւնը մարմնացրել է Հայկի ապստամբութեան մէջ Բէլի դէմ և նոցա պատերազմում:

Թուրանական շարժումներից յետոյ սկսուեցին արիական գաղթականութիւնները, որոնք կամաց կամաց առաջ դիմելով դէպի արեմաւաք և թուրանցոց հետ երկար ժամանակ

փոփոխակի բախտով կռուելով՝ վերջապէս յաջողում են իրենց ձեռքն առնել նոցա գրաւած երկրների իշխանութիւնը, որի հետեւանքը լինում է թուրանական պետութիւնների անկումը, նոցա ձուլումը արիականների հետ և մի ամբողջ հայ պետութեան կազմութիւնը։ Այս գէպը տեղի է ունենում Քրիստոսից մօտ վեց հարիւր տարի առաջ։ Վանի արձանադրութիւնները մեզ պատմում են Թուրանեան ցեղի տիրապետութեան ամենափառաւոր ժամանակի մասին, երբ արիականները դեռ չեն կարողացել վերջնականապէս կոտրել նոցա ցժը և մինչեւ անգամ նոցա ստորագրուած էին։ Քաղաքականապէս մեռնելով և ձուլուելով նորեկ աշխարհականների հետ՝ Հայաստանի թուրանական ժողովուրդը թողեց նոցա՝ իբրև մայուն ժառանգութիւն՝ իւր հոգու լաւագոյն յատկութիւնները, — անվեհեր արիութիւնը, տոկունութիւնը, նուրբ և վերին աստիճանի ընդունակ միտքը, գործնական խելքը, իւր քաղաքական ու զինուորական բոլոր ձիրքերն ու հիմնարկութիւնները, և վերջապէս իւր անմոռայ սեպագիրները։ Նա խիստ հեշտութեամբ ձուլուեցաւ նորեկների հետ, և հայի հոգու և արեան մէջ ժառանգութիւն թողած իր նշանաւոր յատկութիւններով, իր անցեալի փառաւոր աւանդութիւններով՝ վերակենդանացաւ նորից յետագայ դարերում հայոց պատմութեան փառաւոր էջերի մէջ, բայց արդէն քրիստոնէութեան ներգործութեամբ աւելի նրբացած ու աղնուացած ձեռվ։ Քաջ ու խստաբարոյ լեռնականները դարձան մաքի ու դաղափարի տոկուն մշակներ։ Արժէ այդպիսի ազգի գլխին անցածներին վերահասու լինել.

Ասորեստանի պետութիւնը իւր գոյութեան սկզբներից մինչեւ իւր վերջնական անկումը շարունակ և անհաշտ պատերազմներ է մղել իւր հարեւան Հայաստանի հետ։ Ի՞նչն էր պատճառը. ի՞նչ էր ուղում Ասորեստանը մեր աշխարհից, և ի՞նչ էր մեր աշխարհի ձգտումը Ասորեստանի հանդէպ։ Իվերնատ պատերազմների պատճառը համարում է «ոչ այնքան, որպէս թուում է, այն՝ որ ասորեստանցոց առանձնապէս զրաւում էր այս բարձր ու ցուրտ լեռների երկիրը,

այլ՝ հաւանօրէն այն՝ որ նոքա ուրիշ միջոց չըւնէին զապե-
լու այդ բարձր լեռնագաշտերի թափառաշրջիկ ազգաբնա-
կութիւնների արարքները, որոնք այն ժամանակ,—ինչպէս
այսօր էլ—յարմար էին տեսնում ամեն տարի դնալ և Ասո-
րեստանի բնակիչներից նախօքաք խել այն, ինչ որ նոյա եր-
կիրը, կամ աւելի յաճախ՝ նոյա անհոգութիւնը, չէր տալիս
նոյա»։ Այս՝ հաւանականութեամբ, սակայն, հաստատուած՝
կարծիքի հետ հազիւ թէ կարելի լինի համաձայնել։ Հստ
մեղ՝ այստեղ աւելի ցեղական գարաւոր ատելութիւնն էր
զործում, որ ձգտում էր Առաջաւոր Ասիայում հաստատել
կամ թուրանական, կամ սեմական ընտանիքի գերիշխանու-
թիւնը։ Սեմական ցեղի ներկայացուցիչ Ասորեստանը՝ գուրս
գալով թուրանական Սենարից՝ զարմանալի արագութեամբ
սկսել էր մեծանալ ու ընդարձակուել, և սպառնում էր օքն-
չացնել ամեն ուրիշ ինքնուրոյն գոյութիւն։ Նորա հարեւանը
և աչքի փուշը, Քաղդէան, որի իշխող դասակարգը սկզբներում
նոյնպէս քաղդէացի կոչուած քաջ թուրանցիք էին, միշտ նորա
ամենասարսափելի թշնամին է եղել, և քանի՛ քանի՛ տարիներ
ու նոյն իսկ գարեր, —թող՝ որ իր անհանդիստ շարժումնե-
րով ու ապստամբութիւններով կորսարեր հոգսեր է պատ-
ճառել ահազին պետութեանը, —քանի՛ քանի՛ տարիներ ու
դարեր, ասում ենք, նորան իր լծին է ենթարկել և անար-
գել ու ստորացըել է սեմականութիւնը։ Բայց ահա նոյն այդ
խոռվարար բնից մի՛ նոյնպիսի վտանգաւոր՝ ոսոխ հատուա-
ծել դնացել է հիւսիսի լեռները և այնտեղ կազմակերպելով
մի զօրեղ գաշնակցութիւն շրջակայ մանր թագաւորներից՝
վիճումէ Ասորեստանի հետ նորա հիւսիսային-արևմտեան կողմն
ընկած երկրների տիրապետութեան համար, որով և ամբողջ
Փոքր-Ասիոյ Ճանապարհը փակում է նորա առաջ։ Այսպէս
ուրեմն, Ասորեստանը ձգտում էր Ուրարդուի ոյժը կոտրել
իւր գցյութեան ապահովութեան համար, և ոչ թէ ինչպէս
թուում է թափառաշրջիկների վայրագութիւնները զսպե-
լու համար, ինչպէս որ նա նոյն նպատակով ձգտում էր ի-
րենից քաղաքակրթութեամբ շատ բարձր Քաղդէացի ոյժը

կոտրել՝ անդադար արշաւանքների ու պատերազմների ձեռնարկելով նորա վերայ: Ասորեստանը շատ լաւ էր հասկանում, ինչպէս նկատում է և մեր հեղինակը այդ պետութեան մի աշխարհակալ թագաւորի մասին, «որ ինքը երբէք չէր կարող ճշմարտապէս տէր դառնալ Ասորիքին և Փոքր-Ասիային, մինչև որ անհանգիստ ու խռովարար հայաստանը իրեն ըսպատկանէր»: Սեմական Ասորեստանին այսպիսով վիճակուած էր իր գոյութիւնը շարունակել ընկած իր երկու երգուեալ թշնամիների մէջ, որոնք հիւսիսից ու հարաւից հերթով և անընդհատ գրգռում էին նրան դէպի պատերազմները՝ ապրատամբելով ու ապսամբեցնելով շրջակայ բոլոր հպատակ իշխանութիւններին Մարաստանում, Նայիրիում, Ասորիքում և Սուզիանայում: Բայց այդ հսկայ պետութիւնը շնորք չունէր որ կարողանար մի շարք նպատակայարմար միջոցների դիմել ստորագրեալ ազգերին հպատակութեան մէջ պահելու համար, այդ պատճառով միակ միջոցը տեսնում էր շարունակ յարձակումներով, աւերածութիւններով և գերութիւններով նորանուած կում խաղաղացրած երկրների ոյժը թուլացնել. իսկ այդպիսի անընդհատ ու յախուռն պատերազմները՝ բացի այն որ խիստ վլասում էին Ասորեստանի պետական գոյութեանը, խիստ յարատե ներդործութիւն էլ չէին ունենում տանջուողների վերայ. Ուրարդուն ու Քաղդէան երբէք ըսոնչայան այդքան աւերիչ յարձակութիւնից, և ամեն անդամ նորից վեր էին բարձրանում, նորից և աւելի մեծ ոյժերով էին սկսում Ասորեստանի պետութեան հիմքերը փորել ու նորան դէպի անկումը մօտեցնել: Այս դարաւոր մեծ ցեղական մրցութիւնից, որը կարող էր մի նոր «Շահ-Նամէ» կազմել, մի քանի հատուածներ *) կան մեր ձեռքում, որոնցից մի երկուսը առաջարկում ենք ընթերցողներին:

*) Եյտ հատուածների մեծ մասը Ասորեստանի աշխարհակալ թագաւորների թողած սեպագիր արձանագրութիւններից են հանուած: Մեր գրականութեան մէջ այս աղբիւնների համաձայն կազմել են հայոց պատմութիւնը, որքան մէզ յայտնի է, պ. Մատութիւն Գարագաշեան իւր «Քննական հայոց պատմութեան» մէջ (1882, Պուլիս), և համառօս կերպով Ս. Պալասանեան իւր «Հայոց պատմութեան» մէջ (Թիֆլիս, 1890): Ուսւերէն այդ նիւթը մանրամասն աւանդել է Ք. Պատկանեան իւր մի գրուած-

Ասորեստանի թագաւորները դանդաղ առաջ խաղալով դեպի Հայաստանի ներսերը՝ այդ երկրի կեդրոնական թագաւորութեան հետ իրենց հաշիւը տեսնելու համար՝ վերջապէս ձա դարու կեսրին սկսեցին իրենց կործանիչ արշաւանքները Ուրարդուի վերայ. Աշղմանասար Կ.-ն (859—825) էր, որ իր 859, 857, 850—849 և 845 թթ. ձեռնարկած սարսափելի պատերազմներով Ուրարդուի հետ աւերակ գարձրեց այդ երկիրը, իսպառ ջախջախեց այդ թագաւորութիւնը, և նորա ամբախտ Արամ թագաւորը այդքան պարտութիւններից յետոյ կորցնելով իր վստահութիւնը, ինչպէս շատ հաւանականորէն կարծում է Սէյս, առիթ տուեց իր ստորագրեալ Ա ասպուրականի կառավարից Լուտիզրիսի որդի ոմն Անդուրիին կամ Արդուրիսին օգուտ քաղել այդ հանգամանքից և իրեն թագաւոր հռչակել 833 թուականի մօտերքը: «Իս սկիզբն դրեց մի նոր թագաւորական հարստութեան, որ իւր աթոռը հաստատեց Դրուսպայում և որի թագաւորները սկսեցին կոչուել Տիայինայի թագաւորներ. նոցա բաժինն եղաւ նաև Ուրարդուի երկիրը: Այդ հարստութեան առաջին թագաւորը, որին Ա արդուրիս Ա. Են անուանել, Ալմուն քաղաքի (երկի Դրուսպայի նախկին անունն է) տեղում շինել տուեց մի միջնաբերդ: Այս թագաւորից մեզ հասած միակ երկու արձանագրութիւնները, որոնք մեզ յայտնում են միջնաբերդի շինութիւնը, գտնուում են Ա անայ ժայռի հիւսիսարկեմութեան անկիւնում, որտեղ «Խսկալի-Վարդեախ»-ն է, ժայռի ներքեւ, երկու քարէ կոշտերի վերայ, որոնք այժմ Յովշաննէս Ակրտչի անունով մի աւերակ եկեղեցու ստորերկրեայ շենքի արև-

քում (Ванскія надписи и значеніе ихъ для истории Передней Азіи, Спб. 1881), որի ագեղ ժարդմանուած մի ինչոր «Քաղուածքը» ճգնելէ տալ մեզ մի պարոն Գ. Եաղուան: Մեր հեղինակը նյունպէս օգուտ է քաղել այդ աղբիներից իւր «Հայոց Պատմութեան» համար, բայց աւելի այդ պատմութեան ընդհանուր շրջանակը գծելու և Անիի արձանագրութիւնների ցուցումները լուսաբանելու նպաստակով այս պատմասով նորա զրուածքի այս մասը, որ կրում է «Պատմական տեղեկագիր ասորեստանցոց և հայոց յարաբերութիւնների մասին» Ասորեստանի թագաւորների տարեգրութիւնների համաձայն» վերնագիրը, համառօտ է: Մենք կըթողնենք այդ մասը, որովհետեւ յիշեալ զրուածքներից մեզ փաքր ի շատէ ծանօթ է այդ նիւթը և վերջապէս մինչեւ օրս հաւաքուած նորանոր նիւթերը միաւորելու և մի ամիսով ու մշակուած «Հայոց Պատմութիւն» տալու համար շատ աւելի ջանք ու ժամանակ է պէտք: Մենք կըթաւանանանք քաղուածքներ անելով հեղինակի գրուածքի երկրորդ մասից, որ ունի «Տեղեկագիր Հայաստանի հնագոյն պատմութեան մասին» հայկական արձանագրութիւնների համաձայն» վերնագիրը և որի նիւթը, որքան մեզ յայտնի է, առաջին անգամն է երեսում մեր գրականութեան մեջ:

մտեան պատումն են, մէկը 7 տողը միւսը 8 տողը Ախալ չէ լինի կարծել, որ այդ շէնքը եւր ներկայ վիճակում մինչև Արդուրիսի օրերն է հասնում:

Կորան յաջորդեց որդին Խոպ ու ին ի ս, Ասորեստանի Ամամի- Պամման Վ (824—812) թագաւորի ժամանակակիցը, որ մեղ թողել է հռչակաւոր «Մհերի-Գաան» արձանագրութիւնը: Ժագաւորը այս- տեղ օրինագրում է թէ ի՞նչպէս և ո՞րքան զոհեր պէտք է ըերել Բիախինայի թագաւորութեան մէջ պաշտօնապէս ընդունուած աս- տուածներին: Դեռ կենդանութեան ժամանակ թագաւորը իրեն գործակից և ընկեր դարձրեց իւր որդի Մենուասին, այս պատճա- ռով այդ կրօնական հրահանգը հօր և որդու, երկուսի անունով էլ գուրս է եկել: Ժագաւորը, սակայն, ոչ մի տիտղոս իրեն չէ յատկացնում այս և միւս արձանագրութիւններում, և չէ յիշում ո՛չ իր թագաւորութեան, ո՛չ էլ նորա մայրաքաղաքի անունը. ինքը պարզապէս՝ Արդուրիսի որդի Խոպուինիսն է, ուրիշ ոչինչ:

«Մհերի-Գաան» արձանագրութիւնը, ինչպէս յայտնի է, գըտ- նուում է Ակուփուռ-Քարի կամ Օքեմզեմ-Գաղի ապառաժներից մինի վերայ, Վանայ Սյդեստանի հիւսիսային սահմանում, որտեղ Ակուփի որձաքարէ ժայռերը ձգուած են արեմուտքից արեելք՝ կազմելով այս- տեղ մի կիսաշրջանակ. կիսաշրջանակի գրեթէ մէջտեղը, գետնից մօ- տաւորապէս 10 սաժէն բարձր, ժայռը յզկուած է այնպէս, որ կազմում է մի ուղղանկիւն քառանկիւնի տախտակ՝ մօտ 7 արշին բարձրութեամբ, 3 արշին լայնութեամբ և ժայռի մէջ մօտ 6 վեր- շոկ խոր ընկած, բայց այնպէս՝ որ տախտակի բնական երեսից դէ- պի փոս ընկած տեղը էջքը երկու աստիճաններով է, իւրաքան- չիւրը 5—6 վերշոկ լայնութեամբ. փոսումն ընկած է արձանա- գրութիւնը,—երկու պատճէն, վերեինը մանր տառերով՝ 31 տող, նոյնը և ներքեւնը մեծ-մեծ տառերով՝ 53 տող, շատ լաւ պահ- պանուած,—որն այսպիսով թէ՛ պաշտպանուած է ժամանակի հա- րուածներից և թէ՛ կատարելապէս աչքիդ առաջն է մնում: Դաշ- տից իսկ որ «դուան» է նմանում այդ փոսը, ուստի և արձանա- գրութեանը յատկացրած այդ անունը ոչ միայն պատմական, այլ և զուտ նիւթական խորհուրդ ունի: Տացի «Մհերի-Գաան» անունից, արձանագրութիւնը կոչուում է նաև «Միւհերի-Գաան» (Անքի-դու- ռըն) և «Զոբան-Գաան» (Հովուի-դուռն): Յայտնի է թէ որ- պիսի առասպելներ է ստեղծել մեր ժողովուրդը՝ իւր խելքով այդ

«գռան» գաղտնիքը բացատրելու համար: — Այս թագաւորից մեզ հասած մնացեալ երեք արձանագրութիւնները գտնուում են կալաջիկ և Օռուստան գիւղերում՝ Անից հիւսիս, բոլորն էլ փշացրած:

Խապուինիսին յաջորդեց որդին Մենուաս, Ասորեստանի Ուամ-ման-նիրար Վ (811—783) թագաւորի ժամանակակիցը, որ բազմաթիւ տաճարներ շինեց ու նորոգեց և բազմաթիւ «գռներ» կամ արձանագրութիւններ թողեց: Նորա գործն են նմանապէս վանայ ժայռի հիւսիսային երեսին, գագաթի մօտերքը, փորուած մի շարք սենեակները կամ այրերը, որոնք գերեզմաններ լինելու համար են շինուած, ինչպէս վկայում է այդ այրերից մինի մուտքի աջ կողմը փորագրած արձանագրութիւնը 17 տողից, այժմ՝ բերդի պարսպի մէջ առնուած: Մենուասի հասարակաց օգտաւէտ գործերից ամենալաւը անշուշտ Հ ամիրամայ-ջուր կամ Հ ամիրամայ-գետ կոչուած ահագին ջրանցքի անցկացնելն է, որ մինչև այսօր էլ գոյութիւն ունի և իր շուրջը այնքան բարիքներ է սփռում; բազմաթիւ գիւղերի ջաղացները գարձնելով, այդիներն ու արտերը ջրերով: Մենք վերև յիշեցինք, որ գեռ իր հօր կենդանութեան ժամանակ Մենուաս մասնակցում էր կառավարութեանը: Անշուշտ այս հանդամանքի շնորհիւ նորա թագուհի-մայրը, Ծարիրիսա, կը շարունակէր պահպանել իր ազգեցութիւնը կառավարութեան վերայ նաև իր ամուսնու մահից յետոյ, երբ իր որդին այնուհետեւ միայնակ կըսկսէր իշխել: և յիրաւի, Ծարիրիսա մեծ մասնակցութիւն ունեցաւ ջրանցքը փորելու գործում, և անշուշտ այդ է եղել սկզբնապատճառը, Այսի կարծիքով, այն առասպելի, որ այդ առութի շինութիւնը յատկացնում է մի ինչ որ թագուհու՝ Հ ամիրամայ անունով:

Ուշագրութեան արժանի է Հ ամիրամայ-ջուրը նոյն իսկ ներկայ վիճակում: Նորա «զուլալ» ակունքը գտնուում են Հայոց Չոր գաւառի կեդրոնում, Սարբուլակ լեռան լայնատարած ստորոտներում, որտեղ 8—10 իրարու մօտիկ ձեղքուածքներից հանդարտ գուրս է գալիս վճիտ ջուրը և լճանալով՝ սկիզբն է տալիս սիգածեմ գետին: Սա ծանր ու բարակ առաջ գնալով գէպի հիւսիս և լնդունելով իր մէջ նոյն լեռան միւս կողմերից բղիսած մի քանի ուրիշ յորդ աղբիւրներ էլ՝ գեռ կէս ժամ իր ակունքներից չըհեռացած՝ արդէն հասնում է իւր յորդութեան ամենաբարձր կէտին: Վպահ հասնելով խառնուրդ գիւղին՝ իսաշաճե անց է կենում խո-

շաբ գետի վրայից մի փոս կամուրջի կամ՝ մեծ խողովակի միջով, որ կոչուած է «Խաչ-կամուրջ»։ Ը արունակելով իր ընթացքը գեղի հիւսիս և առատօրէն սփռելով իր շուրջը անհամար բարիքներ՝ Ը ամիրամի պարզ ջրերը մտնում են Արտամէտի կանաչ այգիները, ապա դէպի Վան են ուղղում իրենց ընթացքը և վերջը թափուում են Վանայ լիճը։ Արտամէտը, ինչպէս երեսում է, մեծ կերտոն է եղել Մենուասի ժամանակ, այդ հիանալի գիւղը, որ Վանից երկու ու կէս ժամ հեռաւորութեամբ հարաւ է ընկած, առանձնապէս վայելում է առուի տուած բարիքները, առուն այստեղ մնացել է՝ ինչպէս որ եղել է իւր շինուած օրը, ահագին քարերով ամրափակուած է հսկայ առուն և նորա բազմաթիւ ճիւղաւորութիւնները։ Վայղից երեք քառորդ ժամ արևմուտք՝ Կատեպանց կոչուած տեղում, առուի երկու եղերքին՝ դիմացէդիմաց՝ կանդնած են երկու մեծ և տաշուած քարեր, որոնցից առուի ձախակողմեանը կրում է երեք անգամ կրկնուած հետեւեալ արձանագրութիւնը։ «Այս յուշարձանը Մենուասի մայր Ծարիբիասինն է. նա անուանել է այդ Ծարիբիասի որդու տեղ»։ Նոյն բանն է ասում և աջ կողմի արձանագրութիւնը՝ իրեն Մենուասի բերանից։

Մինչև այժմ Մենուասին մենք տեսանք իրեւ բարեպաշտ ու գթու վեհապետ։ Իայց նա յայտնի է նոյնպէս և իւր աշխարհակալութիւններով։ Դեռ հայրը կենդանի էր, և Մենուաս գործակցում էր նրա կառավարութեանը, որ նա փայլեց զինուորական ասպարիզում։ Ա անայ Քաղաքամիջն թաղի Պօղոս-Պետրոս եկեղեցու պատում գրուած 30 տողանի մի եղծուած արձանագրութիւն՝ Խաղուինիսի և Մենուասի անունով՝ պատմում է մի արշաւանքի մասին Լուսաս երկրի Ուգհար նի թագաւորի և Լոթիու երկրի Կատար զաս թագաւորի գէմ։ Ա երջը Մենուաս կրկին գարձաւ Լոթիու, որտեղ նա տիրեց Լոթի ախի թագաւորի կամ իշխանի գաւառին նորա Լուսունիս մայրաքաղաքի հետ միասին։

Իայց Մենուաս իւր զինուորական ոյժերը տարաւ աւելի իւր թագաւորութեան արևելեան և արեւմտեան կողմերը։ Հիւսիսարեւմտեան ուղղութեամբ նա նուաճել է գրեթէ մինչև կարին եղած ամբողջ երկիրը, որովհետեւ Հասան-Պալայի մօտ, Երաքսի վտակներից մինի հովտում, գտնուած է մի արձանագրութիւն ինը տողից, որտեղ նա խօսում է մի տաճարի շինութեան մասին։ Հարաւային ուղղութեամբ Մենուաս նուաճեց Պարօնի երկիրը։

Ա երջապէս նա իջաւ Արածանու հոսանքովը ցած՝ մինչև նորա խառնութիւնը Արևմտեան Եփրատին, որը վկայում է Բալուում Արածանու աջ ափին գլուխը բարձրացրած մի ապառաժի վերայ փորագրած 28 տողից արձանագրութիւնը: Այստեղ Սենուաս գոհութիւն է տալիս իւր աստուածներին՝ որ նոքա իրեն շնորհեցին Պուտերիաս կամ Պուլերիաս և Խոռզանաս քաղաքները, Գուպաս երկիրը և Խաթերի երկիրը, նոյնպէս և՝ որ նորան շնորհեցին յաղթութիւն Սիլիդի Խուդանի զաւադաս թագաւորի վերայ: Մենուաս մի ուրիշ անգամ էլ արշաւանք է արել այս կողմերը և Ալզիս գաւառում ու խաթաների վերայ յաղթութիւններ է տարել ինչպէս այդ ցոյց է տալիս Վանայ Պօղոս-Պետրոսի մի ուրիշ արձանագրութիւնը Մենուասի անունով: Մանայի թագաւորութեան դէմ էլ մի արշաւանք ձեռնակեց Մենուաս, և, ինչպէս երևում է, մեծ կարեսութիւն ունեցաւ այդ պատերազմը, ընայելով որ Ասորեստանի Ուամման-Նիրար Գ թագաւորը, որին ժամանակակից էր Սենուաս, տիրապետել էր ամբողջ Մադային և Հիւսասյին Պարսկաստանին: Այս արշաւանքի նշանակութեան մասին վկայում է Քելիշն-Ռւշնէյի (Կապոյա-սեան կիրճ) արձանագրութիւնը պարսկա-թրքական սահմանագլխում, Ուրմիա քաղաքից հարաւ: Դա մի մութ կապոյտ քարից շինած սիւն է—որ իւր անունը տուել է կիրճին—6 ոտք բարձր, 2 ոտք լայն և մի ոտք հաստութեամբ, անկիւններին և գագաթին բոլորակ ձև տուած և բարձրացրած միաձոյլ քարակոշից պատրաստած մի պատուանդանի վերայ, որի քարն էլ նման է սեան քարին. յիշատակարանը դրուած է մի փոքրիկ բարձրութեան վերայ ձանապարհի կշրին, և ունի 43 տողից բաղկացած, գժբախտաբար խիստ եղծուած, մի արձանագրութիւն, որը արևելք է նայում: Արձանագրութեան եղծուած լինելու պատճառով Սէյս գժուարութկամբ է կարողանում որ և է աղօտ գաղափար կազմել Մենուասի զօրաբանակի ընթացքի մասին: Մի բան միայն պարզ է մեզ համար, որ Մանայի այս կարեսոր պատերազմը տեղի ունեցաւ Սաղմանասար Դ. (782—773) թագաւորութեան ժամանակ, ուրեմն Մենուաս գեռ կենդանի էր 782 թուից յետոյ էլ նա պէտք է որ այդ ժամանակ ծերացած լինէր, և 778 մօտերքը մեռած պէտք է լինի:

Մենուասի որդու և յաջորդի, Արգիստիս Ա, թագաւորութեան ժամանակ հին Հայանտանը իւր բարձրութեան գագաթնա-

կէտին հասաւ: Այդ թագաւորը, որ ժամանակակից էր Ասորեստանի Սաղմանասարար Գր և Ասսուր-դան-ի Ը (772—755) թագաւորներին, — երբ Ասորեստանի երկրորդ թագաւորութիւնը դէպի իւր անկումն էր դիմում, — այս թագաւորը ամենից առաջ մեծ զինուորական անձն էր: «Կա վերահաստատեց իւր հօր աշխարհակալութիւնները և ինքն էլ իւր կողմից նշանաւոր կերպով ընդարձակեց նոցա սահմանները: Սակայն պէտք է առել, որ նորա յաղթութիւնները համեմատաբար հեշտ պէտք է լինէին նորա համար, որովհետեւ, ինչպէս ակնարկեցինք, Ասորեստանի երկրորդ տէրութիւնը անկման շրջանումն էր գտնուում, իսկ Հիւսիսի տիրապետութեան համար Տիայինայի թագաւորութեան հետ կարող էր միայն Ասորեստանը մրցել: «Կորա հայրն ու պապը կարողացան իրենց անկախութիւնը պահպանել Ասորեստանի ամենամեծ թագաւորներից երկուսի, Սամսի-Ուամման Գրի և Ուամման-նիրար Գրի դէմ: Ճիշտ է, չե երեւում՝ որ նրանք ուղղակի պատերազմած լինեն այս երկու աշխարհակալների դէմ (որոնք սակայն կարծես խոհեմութեամբ խոյս են տուել նոցանից): բայց նոյն իսկ այն իրողութիւնը, որ Սամսի-Ուամման և Ուամման-նիրար մեզ երբէք բան չեն ասում կոթուր-դաղից այն կողմը իրենց տարած յաղթութիւնների մասին, պարզ կերպով ցոյց է տալիս, որ նոքա չեն համարձակուել յարձակում գործել Ուրարդուի վերայ, կամ թէ եթէ գործել էլ են, առանց որևէ է յաջողութեան:

Արգիստիսից մեզ հասած հինգ արձանագրութիւնների մէջ ամենամեծն է Հոչշակաւոր Խոռոխոռի այլերի ահագին արձանագրութիւնը՝ հաւանօրէն նորա թագաւորութեան վերջին տարիներում փորագրած, որ կարելի է 15 մասի բաժանել բովանդակութեան կողմից, այն է 14 պատերազմների պատմութիւններ, որոնք թուումէ թէ պէտք է համապատասխանեն Արգիստիսի թագաւորութեան նոյնչափ տարիներին, և վերջաբան: Ըստ հաւանական է, որ արշաւանքների կարգը ժամանակագրական լինի, ինչպէս Ասորեստանի թագաւորների «Տարեգիրներն» են. յամենայն դէպս այդ կարգը աշխարհագրական չէ: — Արգիստիս գլխաւորապէս Պարսկաստանի կողմերը, Մանայի Շուստուս և Շարուաւա երկիրները տարաւ իր լեգէոնները (հինգերորդ և վեցերորդ պատերազմում):

Այս երկրներում, որ փոքր ինչ առաջ Ասորեստանին էին ստորագրուած Ուամման-նիրար Գրի օրերից ի վեր, դեռ այստեղ-այնտեղ

գտնուում էին ասորեստանեայ պահակ գնդեր, և Ծիայինայի թագաւորը պէտք է պատերազմէր ոչ միայն այդ երկրների՝ արդէն կրկին անկախութիւն ստացած փոքրիկ թագաւորների հետ, այլ և «Ասորեստանի զօրաբանակների» հետ, ինչպէս ասում է նա իր յիշատակարանում։ Քանի որ, եթէ հաւանական չէ որ Արգիստիս երբ և իցէ Ասորեստան մտած լինի, բոլորովին աներկրայելի է՝ սակայն՝ որ նա մի քանի անգամ հանդիպեց «Այնուէի թագաւորների զօրագնդերին և որ այդ հանդիպումների ժամանակ միշտ յաղթող դուրս եկաւ ու տիրեց նոցա գրաւած երկրներին։ Վանէ այդպէս պէտք է հասկանալ «Ասորեստանի զօրքեր» խօսքը։ «Կրկնում ենք, ասում է մեր հեղինակը, Արգիստիսի յաղթանակները Ասորեստանի վերայ անկարելի է վիճելի համարել և այդ յաղթանակների արդիւնքն այն եղաւ, որ Ծիայինայի թագաւորը՝ գէթ առ ժամանակ՝ տէր դարձաւ Պարսկաստանի հիւսիսային մասին, ի վես «Այնուէի թագաւորների»։ Եյդ՝ ի հարկէ՝ բացատրուում է Ասորեստանի այն ժամանակ կրած զարհուրելի ճդնաժամով, որի շնորհիւ մազ մնաց որ բոլորովին կորստեան անդունդը գլորուէր։

Ջընայելով այս մեծամեծ յաղթանակներին Մարաստանում, մենք չունենք այդ կողմերը Արգիստիսի անունով ոչ մի արձանագրութիւն, այն ինչ նորա հայրը Վենուաս՝ մեղ թողել է գոնէ Վելիշեն-Աւշնէյի արձանագրութիւնը։

Արգիստիս մի արշաւանք էլ ունեցաւ գէպի հարաւ-արևմուտք՝ խոթերի գէմ, որոնց առաջնորդում էր Սիլիդի Խոթեր վագ առ թագաւորը, նա յաղթութիւն յաղթութեան վերայ, տանելով ճանապարհին պատահած քաղաքների վերայ, որոնց անունները յիշում է իր արձանագրութեան մէջ (երրորդ պատերազմ), հասամինչև Վիլիդ քաղաքը, կողոպտել տուեց այն և յետ դարձաւ աւարներով։ Արգիստիս երեք անգամ էլ արշաւել է Աթիուսի երկրը։ Առաջին անգամ (երկրորդ պատերազմ) մասնաւորապէս նըպատակ ունէր մի կողմից Ամիթիսայի և Ուլմուզայիսի թագաւոր Ուրդուրուսիս Դիառուէ Խի-ին, միւս կողմից Աթիուսի (կամ գէթ Աթիուսի մի գաւառի) թագաւոր Ուգհուրիսին։ Երրորդ անգամ (տասներկուերորդ պատերազմ) նա սկսեց Վանի երկրից, այնտեղից իջաւ Արաքսի հովիտը, գէպի Աթիուս, ապա վեր բարձրացաւ գետի հոսանքին հակառակ, որ յարձակում գործի Խոկիգուլուս երկրի վերայ, այն ժամանակ այդ երկրի թագաւորն էր

Երիա Խիք յաղթեց նրան և տիրեց նորա Երկրին, ինչպէս վկայում է և Պանլիջայում՝ (Աղեքսանդրապոլի մօտ) գտնուած արձագրութիւնը՝ 5 տողից: Վրդիստիս յաղթութիւններ է տարել նաև Ուլվանիս Երկրի և Պարաս քաղաքի վերայ, ինչպէս այդ ցոյց է տալիս Խյլեառի մօտ մի հովտում գտնուած արձանագրութիւնը (Երեանի մօտերը): Ինչպէս Երևում է, Պահուելիսի թագաւորը խիստ մեծ դեր է Խաղացել Տիայինայի թագաւորութեան պատմութեան մէջ, որովհետեւ մենք տեսնում ենք Արդիստիսին դարձեալ երկու անգամ պատերազմի դուրս եկած նորա դէմ և յաղթելուց յետոյ՝ նորանից թանգաղին մետաղներ առած իբրև տուգանք, ինչպէս այդ ցոյց է տալիս Աանայ Քաղաքամիջի Ուուրբահակ եկեղեցում գտնուած արձանագրութիւնը բեմի տակ, 40 տողից: Վրդիստիս նրանից ստացաւ 41 մնաս ոսկի, 37 մնաս արծաթ և մի քանի հազար մնաս արոյր:

Կորա յաջորդն ու որդին Աարդուրիս Տան էլ որ թուում է թէ ժամանակակից է Եղել մասամբ Ասուր-Նիրարին (754—746), ապա Ֆակլաթ-Փալասար Տին (745—728), փառաւոր կերպով սկսեց իր թագաւորութիւնը: Ու միայն Մանայի և Խթիուսի դէմ փայլուն պատերազմներ մղեց, — ինչպէս այդ ցոյց է տալիս Աանայ ժայռի Հիւսիս-արկեւելան կողմը «Խազնէ-Պալուսի» կոչուած խոռոշումն ընկած արձանագրութիւնը՝ 29 տողից, որտեղ բուլորովին այլ Երկրների անուններ են յիշուում, քան իւր հօր ու պապի հարկատու արած Երկիրները, — այլ և Միլիդի Խիլար վագաս թագաւորի դէմ, որ Սախուսի որդի է կոչուած և վերել յիշուածից յետոյ Երկրորդն է նոյն անունով: Պատերազմը խիստ նշանաւոր եղաւ, եթէ ի հաշիւ առնենք կրակի մատնուած քաղաքների ու պալատների թիւը. նոյն իսկ այն տեղը, ուր գտնուած է այս պատերազմի պատմութիւնն անող արձանագրութիւնը (Մալաթիայից արեւելք և նորան մօտիկ, Եշվաաի ձախ ափին՝ մի ժայռի վերայ՝ 40 տողից), Խաօլուի և Քիւմիւրիսանի միջն, բաց ասում է, որ հասարակ զինուորական զքօսանքի խնդիր չի Եղել այդ: Սարդուրիսի կողըստել տուած քաղաքների մէջ մէկի անունից (Կար-Նիսի) Երևում է, որ դա մի ասորեստանեայ գաղթաշէնք է Եղել:

Այսուհետեւ լուսմ են Վանի արձանագրութիւնները: Հայաստանի բարօրութեան դարն անցել էր: Տիայինայի թագաւորութիւնը ի՞նչ պատմի մեջ իւր ամրախտութիւնների ու ստորացում-

ների մասին։ Ծակղաթ-Փալասար Շ-ի հետ միասին Ասորեստանը բարձրանում էր աւելի զօրեղ և աւելի ագահ քան երբ և իցէ, և չընայելով որ Ասրդուրիս Շ-ին չէր պակասում անշուշտ ոչ եռանդ, ոչ էլ նախաձեռնող ոդի, այնուամենայնիւ նորա օրով Շիահինան արագապէս սկսեց թեքուել։ Ասորեստանէ երրորդ թափաւորութիւնը վերջապէս լիովին իրագործեց Հայաստանի նկատմամբ այն, ինչ որ առաջինը փորձել էր, և երկրորդը նախապատրաստել։

Ասրդուրիս Շ-ի յաջողութիւնները հրապուրեցին նրան, անշուշտ, աւելի հարաւ՝ Ասորիքի կողմերը առաջ մղել իր աշխարհակալութիւնները։ Այս պատճառով մենք տեսնում ենք նրան հայերից և իրեն դաշնակից դարձած խաթերից կազմուած մի մեծ բանակի գլուխն անցած և Ծակղաթ-Փալասարի ճանապարհը կտրելիս, որ գնում էր Ասորիքի Արփատտա (այժմ Ծելլ-Արփադ աւերակները Հալէպից հիւսիս-արևելք) ապստամբուած քաղաքը պաշարելու։ այդ քաղաքը Ասորիքի և Փոքր-Ղահայի բանալին էր և այն ժամանակ՝ անտարակոյս՝ խաթերի ձեռքին էր։ Ծակղաթ-Փալասար առանց վարանելու խկոյն յարձակողական գործողութիւններին գիմեց և հակառակորդներին ստիպեց նահանջել գեպի կոմմագէնի սարերը. այստեղ նա երկու անդամ ջարդեց նոցա։ Սարդուրիս փախուստի դիմեց, բայց Ասորեստանի թափաւորը խոչեմութիւն համարեց հետամուտ ըլլինել նորան գեպի նորա երկրի խորքերը, և իւր յաղթական ընթացքը Եփրատի ափին դադարեցրեց. ապա դարձաւ, Արփատտան պաշարեց ու առաւ։ Աերջապէս 740-ին Ծակղաթ-Փալասար իրեն բաւական ազատ համարեց իր ուշքն ու զէնքը հիւսիսի գաւառների վերայ դարձնելու։ Հայաստանի այս կարեռ պատերազմը տեղի ունեցաւ 737 կամ 735 թուին։ Ծակղաթ-Փալասար իր լեգեններով մտաւ Շիահինա, ճանապարհին ամեն ինչ կրակի ու սրի մատնելով՝ հասաւ մինչե Տուրուսպայի պարիսպների առաջ և պաշարեց մայրաքաղաքը։ Բայց Սարդուրիսն ու իւր հայրը Վանայ առանց այն էլ բնականից լաւ պաշտպանուած ժայռը—որի վերայ էր բարձրանում միջնաբերդը—ծածկել էին ահարկու ամրութիւններով ուստի աշխարհակալի ջանքերն այստեղ ապարդիւն եղան և նա ստիպուեց բաւականանալ երկիրը կողոպտել տալով 140 մղոն մի ասպարէզի վերայ, և իր արձանը կանգնեցնելով պաշարուած քաղաքի դիմացը հեռացաւ, իր հետ բազմաթիւ գաղթականներ փոխադրելով Ասորեստան։

Հարուածը օրհասական էր Հայաստանի համար, գոնէ մի առժամանակ, և Օռակղաթ-Փալասարին ու նորա յաջորդ Սաղմանասար Ե-ին (727—723) անհանգստացնող դէպք չեղաւ այս կողմից: Մենք այլ ևս չենք շարունակի պատմել Ուրսայի, Արդիստիս Շ-ի, Խրիմենասի և նորա որդու Ուռւսասի կամ Ուռւսայի և Սարդուրիս Գ-ի մասին, որոնք Սարդուրիս Բ-ից յետոյ միմեանց յաջորդեցին. այդ ամենը մեղ յայտնի են Ասորեստանի արձանագրութիւններից: Դոքա էին վերջին թագաւորները այն փառաւոր ազգի, որ շուտով, գրեթե իր ոսոխ Ասորեստանի հետ միաժամանակ, կնքեցիւր քաղաքական գոյութիւնը և տեղի տուեց նոր աշխարհակալների առաջ՝ տասնուհինդ դարից աւելի Հայաստանի սարադաշտերում իշխելուց յետոյ: «Նորեկները (իրանական ծագում ունեցող Հայերը)—այսպէս է վերջացնում մեր հեղինակը իւր գրուածքը—շուտով տիրապետութիւն ստացան և հիմնեցին մի թագաւորութիւն, որ նախ աճեց, ապա մեծացաւ, զօրացաւ, և ’ի վերջյ այնպէս արեց, որ մի օր կարողանում էր Հռովմայեցոց հսկայ պետութեան առաջը փակել ինչպէս որ հին թուրանական թագաւորութիւնը Ասորեստանի լեզոնների առաջն էր փակել»:

Այժմ մի քանի տեղեկութիւններ էլ տանք հայոց հին կեանքի մասին և վերջացնենք:

Կրօնը:—Ինչպէս տեսանք, իսպուխինիս և Մենուաս սահմանում են Բիահնայի թագաւորութեան մէջ պաշտօնապէս ընդունուած աստուածներին անելիք զոհերը: Այդ աստուածների թիւը քառասուն ու ինն է. նոցա մեծ մասը Հայաստանի կամ նուածեալ երկրների քաղաքների ու ամրոցների պաշտպանագութեան են: Նոցա զլիին կանգնած է մի Երրորդունեն, բաղկացած Խալչիսից, որ դերագրն աստուածն է և բոլոր աստուածների հայրը, Թէյիսէասից, որ օգերի աստուածն է, և Արդիսիսից, որ արեի աստուածն է: Այս երրորդութեանը պէտք է վեց գառը զոհ բերել: Բայց այս երրորդութեան անդամներից իւրաքանչիւրը կարող է ընդունել զատ պաշտամունք, և այն ժամանակ Խալդիսին նուիրում են ասանուեօթը եղը և երեսուն ու չորս ոչխար, Թէյիսպասին՝ վեց եղը և քսան ու չորս ոչխար, Արդինիսին՝ չորս

եղը և ութը ոչխար: Մնացեալ աստուածների մէջ պատահում են մի քանիսը, որոնք որոշուած են իրեւ այս կամ այն քաղաքի աստուած: օրինակ՝ մէկը կոշուած է Դուսպասի տասուած, միւսը Արծուլինիսի աստուած, և այլն: Մննուասի մի արձանագրութեան մէջ պատահում ենք Ուրարդուի «Պաթէոնի» միակ Շէցունը, Սարչու անունը: Պարզ է, որ այդ անունը Սարիգուրիս կամ Սարդուրիս անուան առաջին մասն է կազմում: Մեր Հեղինակը կարծում է, որ այդ դիցուհու անունը Ասորեստանի Էստար դիցուհու անուան աղջատումն է և Ասորեստանից է նորա պաշտամունքը Հայաստան ներմուծուած: Մենք դժուարանում ենք համաձայնել դորան:

Տալիս ենք այստեղ Լընորմանից (Lettres Assyriologiques, P. 1871) Մուսասիր քաղաքում եղած Խալդիու բանարք^{*)} նկարագրութիւնը: «Խալդիս աստուծոյ տաճարը, երեսի կողմից տեսած, ամբառնում է մի քառանկիւն պատուանդանի վերայ. շէնքի քիւրը վերջանում է ծայրին մի խարիսխով, որի ուռուցիկ փորը բրդաձև նոճի փորն է յիշեցնում: Շէնքի ճակատի մէջտեղը բացուումէ մի գուռն մի փոքրիկ քիւրով. Ճակատը զարդարում են չորս քառանկիւն սիւներ: Ուխտի վահանները, խիստ ուռուցիկ, բոլորաձև, կեղրոնում առիւծի դէմքով զարդարուած, կախուած են այստեղ. ասորեստանցի վինուորները, որոնք կողոպտում են շէնքը, յափշտակում են այդպիսի վահաններ, խնկոց բազիններ մի միակ բոլորակ ոտով և եռոտանիներ: Դուան երկու կողմից էլ ամբառնումէ մի մի զարդարիչ ձող ծայրը բրդանման նոճու ձեռք: Մուտքի մօտ, ձախ կողմը, զետեղուած է մի անդրիազործութիւն, որ

*) Եյդ տաճարի ծեփած ստորաքանդակը Խորսարադի Դուրսարիսկին անունով պալատի սրահներից մէկում՝ մնեք պարտական ենք Սարգոն Բ-ի (722—705) վերջին պատերազմին (714) ողբերգական մահով իր կեանքին մերջ տուած Ուրասյի և նորա ազգական ու դաշնակից Մուսասիրի արքայ Ուրգանայի գէմ. պալատի յիշեալ մի սրահը ամբողջապէս նուիրուած է այս պատերազմի մանրամասնութիւններին, և այն ստորաքանդակը որի մէջտեղն է այդ տաճարի պատկերը, ամրողջապէս Մուսասիր քաղաքն է պատկերացնում: Բոլոտա իւր ահապին շքեղ հրատարակութեան մէջ (Les monuments de Ninive) գուրս է բերել այդ տաճարի պատկերը:

Ներկայացնում է իր հորթին ծիծ տուող մի կով,—մի խոր հըրդաւոր պատկեր, որ այնքան կարեոր տեղ ունի Առաջաւոր Ասից բոլոր կրօններում։ Տաճարի առաջ և նորա պատուանդանի մօտ երեւում են քաւութեան ջրի երկու մեծ աւազաններ, իսկը «պղնձէ ծովեր» բոլորակ յատակով, ամբարձած յշի սրունքներով եռոտանիների վերայ։ Ամեն բան այս շէնքի մէջ ընծայում է ասորեստաննեայ արուեստի կնիքը»։

Աւելորդ ենք համարում այստեղ նկարագրել Վանայ թագաւորների գերեզմանները, Խոռոչոոի և միւս այրերը։

Քաղաքահան կէան+։—Բիահինայի թագաւորները Սարդուրիս Ա-ից սկսած իրենց արձանագրութիւններում նինուէի թագաւորների պէս «Եծ Շահաւոր, հզը Շահաւոր, բազնուն-նենների Շահաւոր, Շահաւոր առանց հակառակորդէ», ոչին միւս Շուր Շահաւորները հայրի են ուալիս» տիտղոսն են գործ ածում իրենց համար. բայց այդ թագաւորութեան յիշեալ հիմնագիրը այդ ամենի հետ միասին իրեն կոչում է «Նայելի Շա-հաւոր»։ Կարծես գեռահաս թագաւորութիւնը, որի անունը դրանից առաջ հաւանօրէն հազեւ թէ ծանօթ էր, կամենում է պՃնուել մեծ նայիրի երկրի անունով, որի մի ան-նշան մասն էր միայն կաղմում երկար ժամանակ և որի տէ-րըն էր դարձել այժմ։ Սարդուրիսից յետոյ այդ «Նայելի Շա-հաւոր» տիտղոսը փոխարկուեց «Բիահինայի Շահաւոր» տիտղո-սի. այսպէս՝ նորա թոռան Մենուասի արձանագրութեան մէջ կարգում ենք առաջին անգամ։ «Մենուաս, Խոպուինիսի որդի, հզօր թագաւոր, բազմութիւնների թագաւոր, Բիահինա աշխարհի թագաւոր, որ նստում եմ Դուսպաս քաղաքում»։ Բիահինայի երեք մեծ աշխարհակալ թագաւորները (Մենուաս, Արգիստիս Ա, Սարդուրիս Բ) դործ են ածում նաև «Շահաւորների Շահաւոր» տիտղոսը. իսկ Սարդուրիս Բ առանձնա-պէս իրեն կոչում է ի միջի այլոց «Առ-ջասկ Շահաւոր», որի իմաստը պարզուած չէ. Մէյսի կարծիքով՝ Սուրասը Բիահինա աշխարհի մի նահանգը պէտք է լինի:—ի վերջը, մենք ու-նենք Մուսասիրի Ուրղանա թագաւորի գլան-էնիւր, որ այժմ չոլանդիոյ հաագա քաղաքի արքայական թանդարանումն է,

գտնուում: Գլանի վերայ երեսում է մի թեաւոր անձն՝ կանգնած երկու ջայլամների միջև, որոնց վղներից բռնել է մի մի ձեռքով, կասես թէ խեղղել է ուզում: Լընորմանի կարծիքով դոքա լեռան չար ոգիներն են, որոնց յաղթել է բարի ոգին: Այդ պատկերի կողքին Ասորեստանի լեզուով հետեւալ սեպազիր արձանագրութիւնն է փորագրուած.

«Կնի+ Ո-րպանայի,

Ռադաս-որի Մո-սասից +աղաւիչ և
Հո-աբենի ւաղաւիչ.

Վէճ բարի ուն-

ուն իշրւ օյէ

Սար վա-ների մէջ՝

բերանը բաց է»:

Այսահագու-նի-ները:—Վանի արձանագրութիւններից մի քանիսը գրուած են Ասորեստանի լեզուով, բացի այն որ Բիախնայի թագաւորները գործ են ածում Նինուէի թագաւորների պատմական արձանագրութիւնների ոճը և գրութիւնը (տառերը): Այս բանը տուիթ է տալիս կարծելու, որ Ուրարգուն Ասորեստանից սովորեց գրութիւնը, և որ այդ բանը տեղի ունեցաւ Սարդուխս Ա-ի օրով. իսկ նրանից առաջ որ և է գրաւոր յիշատակարան գյութիւն չէ ունեցել Հայաստանի հողի վերայ: Նշանաւոր Արամ թագաւորի մասին յիշատակութիւն չի լինում ոչ մի հայ արձանագրութեան մէջ, և մեր հեղինակը այդ կարծիքին հետեւող լինելով՝ պընդում է այդ հիման վերայ, որ շատ հաւանօրէն՝ Հայաստանի հողի վերայ, գէթ զրաւոր յիշատակարաններում; Նորա հետքը երբէք չեն էլ գտնի: Թուրանական Հայաստանցոց ծագման մասին մեր վերեր տասածներն աչքի առաջ ունենալով՝ դժուար է լինում համաձայնել դորան. բայց ահա և Վանի մի արձանագրութիւն (Վանայ ժայռի հիւսիսարևելք) Մենուասի անունով՝ մել ասում է որ այդ արձանագրութեան փորագրած տեղում՝ մի ժամանակ կային ուրիշ արձանագրութիւններ, որ կամ ժամանակը, կամ մարդոց ձեռքը եղծել էր: Կարելի է համոզուել որ այդ արձանագրու-

թիւնները չեն եղել Մենուասի հօր կամ պապի ժամանակներից, որ ժամանակը փայցրել է նոյա կամ թշնամիք եղծել էին. դոքա Սարգուրիսից շատ առաջ պէտք է եղած լինեն: Աէյս կարծում է, որ զրութիւնը բեեռազիր տեսակներից չէ եղել այլ զրութեան մի ուրիշ եղանակի է վերաբերուել որին նաև անուանում է Հէթէնների զրութիւն:

Արձանազրութիւնը սովորաբար սկսուում է Խալդիսին զիմելով. «Ես կոչեցի Խալդիս աստուածներին, աշարկու զօրութիւններին, որոնք չնորհ արեցին Արգիստիսի (կամ Մենուասի, կամ Սարգուրիսի), տոհմին (այս կամ այն) քաղաքը ու երկիրը»: Սովորաբար այսպէս են վերջանում. «Ով կը ոչնչացնի այս արձանազրութիւնը, ով կը ջնջնջի (փորազրել տուողի) անունը, ով կը ոչնչացնի (անունը, ծածկելով այն) հողով ով կը պնդի թէ ես եմ (այս յիշատակարանը) շինողը, ով կը եղջիւ արձաններն ու այրերը, և ջրով կը հեղեղի նոյա, թող Խալդիսը, օդերի Աստուածը և Արեի Աստուածը չըրս անզամ նրան անիծեն քառակի անէծքով, թող նոքանրա անունը, ցեղն ու քաղաքը կրակի ու ջրի մատնեն»:....



Անուն աւերտիներից հանունք արքունունք:

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ՎՐԱՑ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԵՐԳԵՐ

* *

Ալս երանի՞ որ քեզ ու ինձ
Մի արտ տային քաղցանէինք,
Կշտին անտառ՝ ու հլ ոչինչ
Ուր գէթ մի ժամ կեանք անէինք:
Կըտանէի քեզ խոր կածան,
Որ ժողովներ բան չըլսեն.
Կ'աղացէի՝ գէթ զանազան
Լըսածները դուրսը չասեն:

* *

Գլուխը ձրգած կախ խոնարհ,
Լըռիկ յառաջ է գրնում:
Կարծես կեանքում նրա համար
Ամեն ինչ է միենցին:

Անմեղ նայում շարունակ,
Միայն իւր կողմն, ոչ հեռուն.
Սակայն դէմքից կարմրատակ
Վառ կայծեր են շուրջ ցոլում:
Ինչու, նորան հարցնում ես,
Նեահարում ես վերաւոր.
Մեղմիկ ժըպտով ասում քեզ,
— «Բընաւ ես չեմ մեղաւոր»:—

Զարածրձի, ով որ հուր
Խաղալով շուրջն է ցանում;
Արդիօք նա չէ մեղաւոր,
Որ շուրջն հրձիդ է անում:—

Ձեռ Հայ - այսուհետև.



ԱՅԼ ԵՒ ԱՅԼ Ք

Ծեղւյս եկեղեցական գոյբերը կառավարող վարչութեան վեց անգամներից այս տարի հերթով թողին իրենց պաշտօնը՝ գեներալ Խ. Մ. Դոլուխանները և թնդանօթաձիգ զօրաց հարիւրապետ Պ. Սուլթան-Շահը: Ծխականների ընդհանուր ժողովին, որ կայացաւ ապրիլի 25-ին, մասնակցում էին 49 հոգի: Առաջին քուէրարկութեամբ ընտրուեցաւ 26 ձայնով 23-ի գէմ իրաւաբան Էմմանուէլ Սուրաշին, իսկ մնացեալ քուէարկուողները, բոլորն էլ, ներկայ մասնակցողների թուի կիսից պակաս ձայն ստանալու պատճառաւ հարկ եղաւ քուէարկութիւնը երկրորդել երրորդել վերջապէս չորրորդ անգամ քուէարկել ընտրուող թեկնածուներին, որով և 33 ձայնով ընտրուեցաւ երկրորդ անգամ Պ. Գր. Տիգրաննեանը:

* *

Անցեալ տարուայ առաջին զրքում տեղւյս հայոց եկեղեցապատկան տան անյաջող վերաշնուրթեան մասին խօսելով, որի առթիւ 203,000 ռուբլի հաշիւ է ցոյց տուած, մի տեղեկութիւն էլնք հաղորդել: Ինչպէս յայտնի է, առանը վերաշնուել էր համարեա միայն Պ. Գասպար Եաղուրեանի վերահսկողութեամբ և կառավարութեամբ, թէև եկեղեցական խորհրդի անօրինութեամբ: Այս տեղեկութեան առթիւ, որ տպած էինք, շատ շատերը մեր ծխականներից գիմում են մեզ՝ խնդրելով որ այդ վերաշնուրթեան մասին մանրամասնորէն ծանօթացնենք հասարակութեանը իրաց վիճակի հետ: Ծխականների այս գիմումները և հետաքրքրութիւնները, անշուշտ, ունին իրենց պատճառը: Կաշխատնենք մանրամասնորէն խօսել:

Յայտնի հայ լուսանկար պ. Յովհաննէս Քիւրքչեանի գովելի ձեռնակութիւնը, որպէս սպասելի էր, ունեցաւ իր արդիւնաւէտ հետևանքը: Նորա հրատարակած Անւոյ աւերակների լուսանկարների ժողովածուն, ինչպէս յայտնի է, մեծ տարածում ստացաւ և դովասանքի արժանացաւ: Պ. Քիւրքչեանից յետոյ, որը այժմ բնակութիւն է հաստատած Ճավակողում, և նորանոր զործերով յայտնի է անզիշական հասարակութեանը, երեւան եկան մի կարգ հայ երիտասարդներ, որոնք մեծ սիրով և անձնութիրութեամբ անձնատուր եղան հայ Հնութիւնների, տաճարների և զանազան տեսարանների լուսանկարելուն, որով անշուշա շօշափելի ծառայութիւն են մատուցանում հայկական քանդակագործութեան և Շարտարապետութեան զործի ուսումնասիրութեանը, ելքնք ասում որ գորանով որքան նպաստում են ինքնաճանաշութեան զգացմունքի զարգացմանը: Այս ուղղութեամբ զործոների մէջ առաջին տեղն է բռնում Պ. Մատթէոս Փափաղեանը, որը յայտնի է հայ հասարակութեանը իր մեծադիր չորս հատոր հայկական Հնութիւնների ընտիր ժողովածուներով. այնուհետև նշանակելի է Պ. Վրոյրի նկարչական ժողովածուն, որը թէե Պ. Մ. Փափաղեանի նման առանձին ժողովածուներ չէ կազմած և որի նիւթը շատ աւելի սակաւ. է առաջնից, բայց և այնուամենայնիւ ուշակրութեան արժանի բաներ ունի ժողոված: Այս կարգին պատկանում են և աւելի սակաւ յայտնի մի քանի անձինք. Պ. Տիգրան Փեշտիմալճեան և Պ. Տէր-Դանիէլեանց, որոնց զործերը աւելի Սիւնեաց և Կոտայք աշխարհի Հնութիւններն և տեսարաններն են կազմում: Այս բոլորի մասին պատեհ առթիւ խօսելու ենք մանրամասնօրէն:

* * *

Մեր յարգելի գերասանուհի տիկին Սաթենիկ Զմշկեանի երեսունամեւայ զործունէութիւնը հայ բեմի վերայ լրանում է այս տարի, որի առթիւ յաջորդ գրքում խօսելու ենք և դնելու ենք յարգելի տիկնոջ պատկերը:

Այս գրքից սկսեալ «Արաքսի» շատկի նկարը փոխում
և նոր պատճեան նկարը նկարած է ռուս յայտնի նկարիչ Պ. Կրի-
ժիցկին, իսկ փորագրել է Վ. Մաթէ անուանի փորագրիչը:

* *

«Արաքսին» ստորագրուող նոր անձինք կարող են ստա-
նալ նաև առանձին Դոստուեսկու «Յիշատակարանի» սկիզբը, որը
տպուած է 1892-ի Բ. գրքում, 50 կոպէկի նամակադրոշմով:

* *

«Արաքսի» գրքերը, սկսեալ 1887 թ. դեկտեմբեր գրքից
մինչև 1892 թ. երկու գրքերը ոսկէկազմած, ուղարկած ենք Ամե-
րիկա, Զիկագօի ցուցահանդէսը, ուր արուած է 931 համարաւ:

* *

«Արաքսից» ածբաղջօն յօդուածներ արտատպելը միանգա-
մայն արգելվում է. կարելի է միայն քաղուածքներ անել իւրա-
քանչեւր յօդուածից, ինչպէս որ ընդունուած է ամենուրեք,
սակայն հանդիսի անունը միշտ յիշելով հանդերձ:

* *

Այն բաժանորդները, որոնք ստորագրվում են կազմով
«Արաքսին», նոքա միշտ կըստանան իրենց օրինակները մի երկու
շաբաթով ուշըստ որում կազմելու համար միանգամից յանձնե-
վում է հարիւր օրինակ, որի առթիւ ժամանակի կորուստ է լի-
նում, մանաւանդ որ շոգեմեքենաների միջոցաւ են կազմվում:

* *

«Արաքսում» ղետեզուող նկարները ծախսվում են հատով
առանձին, իւրաքանչեւրը 25 կոպէկով:

* *

Մեղմեծապէս կըպարտաւորացնեն զանազան լուսանկար-
ներ, եթէ հայկական կեանքից, աշխարհից ու բնութիւնից հա-
նած լուսանկարներ ուղարկեն, իւրաքանչեւրի արժէքը զատ
զատ նշանակելով:

* *

«Արաքսի» տառերով տպուեցաւ և ժամանակին հրա-
տարակուեցաւ. «Պիտանի ընթեցուածն նախնի հայեցէն, ընդ որո՞ւ-
նառարան հայ-սոսուեցէն ի այլու նորանարժէց, Ն. Մար»:

Յուտով կրվերջանսց նաև մեր տառերով տպագրուող
«Գաճառ-Քանիպայի ընդիր Երիտարշո-Ռի-նները» երկու հատորից:

* *

Մասնաւորապէս խնդրում ենք թէ՛ մասնաւոր անձերից,
որոնք մեզ հետ յարաբերութեան մէջ են գտնվում և թէ՛
մասնաւանն հայ թերթերի խմբագրութիւններից, յայտարա-
րութիւններ տպելիս կամ «Արաքսի» առիթով խօսելիս, մեր
ազգանուան տառերը չաղաւաղել այլ գրել-տպագրել այնպէս,
ինչպէս տպագրվում է «Արաքսի» շապկի վերայ:

* *

Խնդրում ենք նաև մեզ դրամ, ծրար կամո և է թղթակ-
ցութիւն ուղարկելիս, մեր հասցէն բնաւ ընշանակեն տեղ-
ւոյս հայ եկեղեցու վերայ կամ չգրել հին հասցէներով, նոյնը
և բարեկամների միջոցաւ չանել, ըստ որում այս բոլոր գէտ-
քերում թէ՛ աւելի ուշ են հասնում մեզ թղթակցութիւն-
ները և թէ՛ կորչում են, այլ պէտք է գրել այնպէս, ինչպէս
«Արաքսի» շապկի վերայ է տպուած. բայց եթէ մի քանի
գաւառական քաղաքներում տեղական փոստային վարչութիւն-
ները չհամաձայնն առանց մանրամասն հասցէիւ գրա-
մական թղթակցութիւն ընդունել այդ գէպքում կարելի է
մեր ազգանուան ներքոյ աւելցնել. Յէ Ռեդակցիո „Առաքս“.

* *

«Արաքսի» անցեալ զրքից մեր հանդիսի ընթերցողնե-
րին ծանօթ «Գիշացի+ վարչուցան+ անելիս Արագածոտն-
պոտ» նկարի հեղինակ Պ. Գրիգոր Գարբիէլեանցը, որը ու-
սանում էր տեղւոյս Կայսերական Գեղարուեստից Ճեմարա-
նում և միենոյն ժամանակ լսում էր նոյն Ճեմարանի ման-
կավարժական բարձր գասընթացքները, այս տարուաց քննու-
թիւններին յաջողութեամբ աւարտեց իր ուսումը:

* *

Տեղւոյս հայ բժիշկներից՝ Պ. Լևոն Բերբերեանը, ներկայ
տարուաց մայիսի ծին յաջողութեամբ պաշտպանելով Կայ-
սերական Բժշկական Ճեմարանում իր գիսաերտացիան, ստա-
ցաւ բժշկապետի կոչում: —

Բժիշկ Պ. Երկայնաբազուկ-Արզութեանը, որի մասնագիտութիւնն է երեխայոց հիւանդութիւնը, այս օրերս վերագառնալով Փարիղից, ուր ուղարկած էր կառավարութիւնը երկու տարով՝ Ղազանի Համալսարանի բժշկական բաժնի ուսուցչապետութեան պաշտօնի մէջ նշանակուեցաւ:

* *

Մեծապատիւ Պ. Առ. Մատուրեանից խմբագրութիւնս ստացաւ 125 ռուբլի «Արաքսի» ներկայ տարուայ զրեերից քառասուն մէկ օրինակ նուէլներ ուղարկել ազգային Հաստատութիւններին։ Դէպքերի բերմամբ թէ այս և թէ անցեալ տարուայ ուղարկելիք տեղերի անունները այս զրքում չենք կարող զետեղել այլ անպատճառ երկրորդ զրքում։

ԽՄԲԱԳՐԱԻԹԵԱՆՍ ՄԷջ ԱՏԱՔՈՒԱԺ ԵՆԱԿՅԱ ՀՐԱՏԱՐԱԿԱՅԻԹԻՒՆՆԵՐԸ

Վ. Ա. Շետուալիքի Մակրէթ, ողբ. Հինգ արարուածով, թարգ. Ար. Մալիսաւանց, Թիֆլիս, 1892 տպ. «Արօր»։ գինն է 50 կ.

Բաֆֆի. Կայծեր, Ա. Հատոր, Բ. ապագրութիւն. գինն է 2 ռբլի, ապարան Յ. Մարտիրոսեանցի. Թիֆլիս, 1893։

Բաֆֆի. Վէպիկներ և պատկերներ, երկրորդ հատոր, գինն է 2 ռ. Ճանապարհածալը 31 կոպ. Թիֆլիս, 1893։

Վ. Մ. Քիշտիւան. Համառօտ պատմութիւն ընդհանուր ազգաց. Մասն Ա. Արևելեան Հին պատմութիւն։ Կ. Պոլիս, 1892, տպագրութիւն։ Ն. Ճ. Արամեան, գին 4 զըշ։

Մակար Ծ. Վ. Բաբիս-Ռայեանց. Աղուանից երկիր և դրացիք (Միջն Դաշտան): Թիֆլիս, տպ. Շարաձ. 1893 գինն է 1 ռ.

Լւսն Միլունչան. Ամսւանական խնդիրներ. Մասն Ա. Ծնողը և զաւակունք. Կ. Պոլիս. տպ. Ներսէս Ճ. Արամեանի, Հրատ. Զարդարեան գրատան, 1893. գին 50 փարայ։

Յովհաննէս Թունանեան. Բանաստեղծութիւններ, II Հատոր, Մոսկուա, տպ. Մ. Բարխուղարեանի, 1892 գին 60 կ.

Պէտք Պատօվընաց. Սկիզբն երկանց, վէպ. Թիֆլիս, տպ.
«Արօրի», 1892 զինն է 1 ռ. 20 կպ.

Մէսրուլը Դաւ-Ռէտան Թաղիշտիւնաց. Եղերերդութիւն, Յօր-
հաս Թանկայ Թաղիադեանց. Արար Հեղինակ Քնարին Սիրա-
հարի—1837:—Հրատարակեալ ծախիւք Պ. Յովհաննու Շահ-
նակար Սարգսեանի. Թիֆլիս տպ. Շարաձէ. 1893 զինն է 40 կպ.

Ֆրդուսի. Խոսասամ և Սոհրաբ, ամբողջ վէպ և զանա-
զան հատուածներ Շահ-Նամայից. Գ. Թարգմանեց բնագիր
պարսկերէնից Սահ-Էլ Դի-Լզարէտանց. Հրատ. Գր. Այվա-
զեանի, Շուշի, տպ. Միրզաջան Մաշտեսի Յակոբեանցի 1893.

Զատ. Գրիգորէտանց. Տարրական նախագիտելիք բնական գի-
տութեան Մասն 1. Զուր. Թիֆլիս, տպ. Մելիք-Շահնազարեան-
ցի. Հրատ. «Կովկաս.», գրավաճառանոցի. 1893. զինն է 35 կպ.
Բագրայոց հայոց Մարդաստիական ընէրդուէտան Դրամական
հաշիւ վասն 1892 ամի.

Մակար Զէլիւն. Օրացոյց, ժողովրդական-պատկերագարդ
1893 թ. Զ. տարի, Թիֆլիս, տպ. Խոտինեանցի. զինն է 25 կպ.

Հ. Գրիգորիս Վ. Գալէճէլտարէտան. Միսիթ. ուխտէն. Պատմու-
թիւն հայ լրագրութեան, ի սկզբանէ մինչեւ մեր ժամանակը:
Հատոր Ա. Վիեննա, Միսիթարեան տպ. 1893. զինն է 2 ֆր. 50 ռ.

Մ. Ա. Գաբրիէլէտան. Ատենախօսութիւնք, Նիւ-Եորք, 1893,
տպարան Գաբրիէլէտան, զինն է մէկ ֆրանք.

Սիրոյ ձարակք, Տիրան և Արփենիկ, Կաղզուանի ան-
յեալից առնուած մի իրական պատկեր. Աղէքսանդրոպոլ,
տպ. Գ. Սանոյեանցի, 1891, զինն է 40 կպկ.

Կոստանդնէն Աղրէլէտան. Հայրենիքից դուրս, վէպիկ, Թիֆ-
լիս 1893 Հրատարակութիւն Մ. Թաղիշտիւնի.

Арманские беллетристы, томъ первый, 1893, изданные подъ
редакціей Юрия Веселовскаго и Минаса Берберова, Москва. Тип.
Кушнерева. Цѣна 1 р. 75 к.

Къ вопросу о сахарѣ въ мочѣ у беременныхъ, родильницъ
и кормящихъ грудью. Диссертация на степень доктора медицины
Леона Берберова. СПБ. 1893.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐԱԲՈՒ ԽՄԲԱԳՐԱՒԹԵԱՆ ՄԵԶ ՎԱՀԱԽՈՎՈՒՐ ԵՆ
Ի ՄԵԶԻ ԱՅԼՈՅ ԱՅՍ ԳՐՋԵՔ

ԹԱՖՖԻԻ ՀԵՂԻՆԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Սամուչէլ Ա. Բ. Գ. զիրըր.	3—	“
Դաւիթ բէկ. Ա. Բ. և Գ. զիրըր վերջարանով.	3—	“
Խենթ և Զալալէդղին.	2—	50
Կայծեր Բ. (2—50) և Գ. (50 կ.) հատոր.	3—	“
Խաշագողի յիշատակարան Ա. և Բ. մաս	1—	20
Խաշագողի յիշատակարան Գ. և Դ. մաս	1—	50
Հայ կինը և երիտասարդութիւնը	1—	50
Կայէնի կտակը: Զախէր-Մազօխ.	1—	20
Մինն այսպէս, մինն այնպէս.	1—	“

Торговля Бр. Тумасовыхъ

ԿԱՌԱՏՈՒՆ ԵՐԱՐ ԹՈՒՇԵԱՆԵՐԻ

С.-Петербургъ, Вознесенский пр., д. № 21.

СКЛАДЪ

ПЕРСИДСКИХъ, ТЕКИНСКИХъ и КАВКАЗСКИХъ
КОВРОВЪ.

БОЛЬШОЙ АССОРТИМЕНТЪ

портретъ салфетокъ и роскошной турецкой,
мебели. Мебель-жепринимается и на заказъ.

ДЕПО

золотыхъ, серебряныхъ и античныхъ во-
щей и драгоценныхъ камней.

ОПТОВАЯ ТОРГОВЛЯ

ПЕРСИДСКИМИ, БАКАЛВИЙМИ

и

ФРУКТОВЫМИ ТОВАРАМИ.

ОПТОВАЯ ТОРГОВЛЯ

КАХЕТИНСКИМИ И КАВКАЗСКИМИ ВИНАМИ.



1882 г.



1846 г.



1865 г.

А. Ралле и К°.

ВЪ МОСКВѢ.

Фабрика въ Москвѣ:

Хамовники, Теплый пер., собственный домъ.

Оптовая торговля:

Никольская, Богоявленский пер., домъ Чижевыхъ.

Розничный магазинъ:

Кузнецкій мостъ, домъ Солововикова.

Въ С.-Петербургѣ:

Оптовый магазинъ: Мариинскій рынокъ, Чернышевскій пер., № 19,
близъ Садовой.

Розничный магазинъ: Невскій проспектъ, № 18.

Въ Харьковѣ:

Рыбная ул. и на ярмаркахъ: Крещенск., Троицк., Успенск. и Покровск.

Въ Одесѣ:

Оптовый магазинъ: Полтавская ул., д. Раушъ.

На Нижегородской ярмаркѣ:

Серебряно-Галантерейный рядъ, №№ 27, 28 и 29.

На Ирбитской ярмаркѣ:

Екатеринбургская улица, домъ наследниковъ Смирновыхъ.

Въ Курсѣ:

На Коренной ярмаркѣ.

Въ Полтавѣ:

На Ильинской и Никольской ярмаркахъ.

Въ Ромнахъ:

На Масляницкой, Вознесенской, Александровской. и Михайлов. ярм.

Въ Ростовѣ:

На Соборной ярмаркѣ.

Во всѣхъ городахъ Россіи у главныхъ торговцевъ.



Лубянско-Ильинская торгов. помыщ. подъездъ № 2

Число 1000-е въ Симбирске № 969.

Симбирскъ. Адъ-дамскимъ кружевомъ
Кружево-Москвъ.

Տերութիւնից

ՄՈՍԿՈՎԻԱՅԻ

ԿՐՈՇԵ

Հաստառուած

ԿՐՈՒԺԵՎԱՅԻ

ՏԱՐԻՔ,

գործարանի

ԳՈՐԾԱՐԱԿԻ

ԲՐԱՆԴ,

ռուսկուն

բնակարան մը՝ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՀԱՍՏԱՐԱԿԻ ԲՆԱԿԱՐԱԹԻՒԽԻ

ԿՐՈՇԵ

շրջանակներով

ԲՐԱՆԴ,

շրջապատուած ՎԱՐՉՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՊԱՀԵՍՏԱԾ

ՏԱՐԻՔ,

գլխանկարն է.

ՄԱԼՏԵՍԱ,

ՄՈՍԿՈՎԻԱՅՈՒՄ

ԱՅՆ-ԿՐՈՇԵՎԻ,

ՖԻՇԻՆ.

Լուսականութիւն-ի լինուեա գորդութիւն պահանջնեա,
ուղղեղութ № 2.

ПЕРСИДСКАЯ
СИРЕНЬ
НАСТОЯЩЕ
ДУХИ
САМАГО
ВЫСОКАГО
СОРТА

БРОКАРЬ И К°



ГЛИЦЕРИНОВАЯ
ПУДРА

НОВОЕ ИЗОБРѢТЕНИЕ
ОСВѢЖАЮЩАЯ
КОЖУ.
ОБЕЗПЕЧЕНО
ПРАВОМЪ
СОСТ.

50 коп.

БРОКАРЬ И К°

ЗА КОРОБКУ •

БРОКАРЬ ВЪ ЛЪЧ. ШЛУЧЛЪИЗЛЪИ

ЗОЛОТАЯ МЕДАЛЬ

Парижской Всемир. Выст. 1889 г.



БРОКАРЬ И К°

ИЗОБРѢТАТЕЛЬ

ЦВѢТОЧНОГО

О-ДЕ-КОЛОНА

РАЗНЫХ ЦВѢТОЧНЫХ ЗАПАХОВЪ.

Этот о-де-колоно употребляется какъ духи, туалетная вода и куренія.

Можно получать во всѣхъ городахъ Россіи у главныхъ торговцевъ.

ЗОЛОТАЯ МЕДАЛЬ

Парижской Всемир. Выст. 1889 г.



Извѣстное своимъ качествомъ
ГЛИЦЕРИНОВОЕ МЫЛО
и всевозможные благовонные
косметические товары

ФАБРИКИ

БРОКАРЬ И К°

могно получать во всѣхъ лучшихъ
магазинахъ

РОССІЙСКОЙ ИМПЕРІИ.

ԱՐԱԲՈՒ

ԳԵՂԱՐՈՒԻԵՍԱԿԱՆ

Բ Ա. Ժ Ի Ն Ը





H. P. & B. L. H. S. O.



ԳԵՂԱՐՈՒԵՏԸ ԵՒ ՆՈՐԱ ՆՇԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

Այս հինգերորդ տարին է, որ մեր հանդիսում տպագրելով այն ամենը, ինչ որ ընդունակ է գրաւել և հետաքրքրել մեր հայրենակիցներին տեղագրական, պատմական, գրականական, ժամանակակից հայ հասարակական աշխարհներից, մենք մեր յօդուածները զարգարում ենք ոչ միայն նշանաւոր մարգկանց պատկերներով և զանազան տեղերի ու կարևոր շինուածքների տեսարաններով, այլ նաև բացել ենք մի առանձին գեղարուեստական բաժին, որի մէջ մտնում են թէ՛մեր հայրենի և թէ՛ օտարազգի գեղարուեստագէտների ամենալաւ արտադրութիւնների արտատիպ պատճէնները։ Յանկանալով աւելի և հարստացնել մեր նկարների մէջ հայ կեանքը, անցեալ տարուանից մենք բացել ենք նաև նկարների մի նոր և առանձին բաժին «Բնութիւնը Հայաստանում» անունով, իսկ այս գրքից սկսում ենք նաև «Հայկական Շարտարապետութեան» բաժինը, որի մէջ կը մտնեն հայ հին գեղարուեստի այդ ձիւղի ամենից աչքի ընկնող ձեռակերտների նուրբ արտադրութիւնները։

Վենք յաճախ առիթ ենք ունեցել լսելու այսպիսի հարցեր, թէ ի՞նչն է մեղ ստիպում մեր գրքերում տեղաւորել այնպիսի բաժին, ինչպիսին ոչ մի հայ հրատարակութիւն չէ տուել և որը մեծ ծախսեր և հոգսեր է պահանջում։ Այս իսկ պատճառով մենք կարևոր ենք համարում գէթ այս անդամ խօսել այս մասին և առիթից օգտուելով, պարզաբանել մեր ընթերցողներին ընդհանրապէս գեղարուեստի և նորա նշանակութեան վերաբերութեամբ ունեցած մեր հայեացքը։

Բոլոր գարերում գեղարուեստը համարուել է իբրև մարդկային հոգու ամենաբարձր արգասիք և թէ այս և այն ձեռվայտուկ է եղել բոլոր ազգերին սկսեալ նորա նախնական գրութիւնից մինչև նորա կուլտուրային բարձր աստիճանի զարդացման շրջանը։ Մինչև անգամ զարդացման ամենաստորին աստիճանի վրայ կանգնած բոլոր ազգերի մէջ էլ մենք տեսնում ենք բանաստեղծութիւն։

Անութեան գեղեցկութիւնը, թուչունի երգը, գաղանների մուլնչեւնը, ծովի գոռում-գոչումը, քամու շառաչիւնը մարդու մէջ առաջացնում են ուրախութեան և սքանչացման կամ վախի ու սարսափի զգացումներ։ Այս զգացումները արտայայտում են ձայներով, մերթուրախ և մերթ տիսուր։ Այց այս ձայները, որոնք երաժշտութեան հիմունքն են կազմում, խիստ անորոշ են և մարդս երկար ժամանակ չեն կարողանում դորանով գոհանալ, ուստի նա ձգտում է իւր հոգեկան յուզումները, իւր միտքը աւելի շշափելի ձեռվ արտայայտել։

Աս կենդանի խօսքերի մէջ է որպնում այդ ձայներին համապատասխան ձևերը, գտնում է և մարդու յատուկ գեղեցկի զգացմունքով այս խօսքերին սիրուն ձև է տալիս, որոնք ժողովրդական երգերի հիմքն են կազմում, և որը կուլտուրական աղգերի մէջ բանաստեղծութեան է փոխուում։ Ահա այսպէս է երաժշտութեան և բանաստեղծութեան սկզբնաւորութիւնը, ուստի և հասկանալի է թէ ինչո՞ւ այս երկու արուեստները այնպէս սերտ կապուած են ժողովրդի բնաւորութեան, նորա պատմական կեանքի և իրենց շրջապատող բնութեան հետ։ Այց այսպէս կոչուած պլաստիկ գեղարուեստները, ինչպէս են նկարչութիւնը, քանդակագործութիւնը և ճարտարապետութիւնը, արդէն մարդկութեան սեփականութիւնն են լինում, նորա որոշեալ չափով զարդացման շրջանում։ Առանց ծաղկելն արդէն անմիջական կախումն ունի ժողովրդի նիւթական բարօրութիւնից, նորա արտաքին թէ ներքին անդորրութիւնից։ Կարելի է իբրև անշերքելի ճշմարտութիւն ընդունել որ ազգերի մէջ գեղարուեստները ծաղկում են միայն այն ժամանակ, երբ միւս բարեյաջող հանգամանքների հետ ի միասին՝ նորա վայելում են երկարատև անդորրութիւն և կարող են՝ առանց վաղուան հոգսը քաշելու՝ անձնատուր լինել իրենց խաղաղ զբաղմունքներին։ Ահա սորանով են զանգանուում բանաստեղծութիւնը և երաժշտութիւնը պլաստիք գեղարուեստից։ առաջին երկուսը

այս կամ այն չափով՝ յատուկ են բոլոր ազգերին առանց բացառութեան, իսկ վերջինները—միայն քանի մի ընտրեալ ազգերին, որոնք հասել են զարդացման որոշ աստիճանին։ Ի՞այլ պլաստիկ գեղարուեստներն էլ միաժամանակ չեն երևան եկել։ «Արանցից ամենաշինը, անկասկած, ճարտարապետութիւնն է (ՅՈՃՎԵՏՅՕ) որ վայրենի վիճակից դուրս եկող մարդու կարիքիցն է բղխում անմիջապէս։ Ա ատ եղանակից պատսպարուելու համար նորան բնակարան էր հարկաւոր, որ սկզբներում անտաշքարերի մեծ մեծ կտորներից էին շինուում կամ ջրի մէջ ցիցերի վերայ էին կանգնեցնում։ Ճամանակի ընթացքում մարդուս կարիքները աճում էին, նորա հոգին՝ բնութեան հետ մաքառելիս՝ որոնում էր իւր նեցուկը գերբնական ոյժի մէջ, նրան աշխատում, նրան զոհ էր բերում։ ի վերջոյ նա կարեւոր համարեց իր պաշտամունքը արտայպտել կուռքին շշափելի ձեռվ ու զետեղեց ծածկած յարկի տակ։ Վարդուս միտքն սկսեց գործել, նրա հոգին ամրարձաւ աստուածութեան գաղափարին։ Երեակայութիւնն սկսեց նորանում վառուել և բնութիւնը օրինակելով՝ ընծայեց նորան գեղեցիկ ձևեր, երեան եկան տաճարներ սիւնաշարբերով, որոնք նմանութիւն էին ծառի բունին *), որը ծառայում էր որպէս անհրաժեշտ նեցուկ տների կտորների համար, երեան եկան գմբէթներ, որոնք երկնակամարի տեսանելի ձևն էին պատկերացնում։ Քիչքիչ ճարտարապետութիւնը մի որոշ ձև ստացաւ, տաճարներից անցաւ պալատներին, հասարակական շէնքերին և վերջապէս մասնաւոր բնակարաններին։ Ժողովրդի բնաւորութիւնը, շինուածքի տեղական նիւթի յատկութիւնները, կլիմայական պայմանները և կրօնական ուղղութիւնը զանազան ճարտարապետութեան ոճերի բաժանուելու պատճառը եղան։ «Արանցից ամենայատնիներն են եգիպտականը, յունականը, հռովմէականը, ռոմանականը, գոթականը, բիւզանդականը, մաւրիսականը և այլն։ Վենք չենք յիշատակում այլ և այլ ազգերի ճարտարապետութիւնները, որոնք զուտ—տեղական բնաւորութիւն ունեն և մարդկութեան ընդհանուր սեփականութիւն չեն դարձել։

*) Եգիպտական սիւնը գրեթե ճիշտ լուսա ծաղկի ձևերի արտառիպ օրինակն է, մանաւանդ ուսան խցեակը, որ լոտոսի սաղարթն է ձևացնում։ Յունական սիւնները թէե շեղուել են իրենց նախատիպ օրինակից, բայց նոցա խցեակների մէջ էլ ծաղկի ծառի սաղարթը յիշցնող զարդարանքների շատութիւնը ցոյց է տալիս, որ նոքա էլ յառաջացել են ծառի բունին նմանելոցց։

Ո՞ւնք վերեռում յիշեցինք որ պլաստիք գեղարուեստները,
որոնց մէջ և ճարտարապետութիւնը, ծաղկել են բոլոր ազգերի
մէջ միայն այն ժամանակ, երբ երկար ժամանակամիջոցներ անդոր-
րութեամբ վայելել են երկարատև խաղաղութիւն և դրանից
բղխող նիւթական բարօրութեան բարիքները: Եւ այդպէս, եգիպ-
տական ճարտարապետութիւնը ծաղկեց փարաւոնների ամենազօրեղ
ժամանակ, յունական բազմաթիւ տաճարները, որոնք մինչև այժմն
էլ ամբողջ լուսաւորեալ մարդկութեան ապշեցնում են, կառուցուել
են այդպէս կոչուած ոսկէ-գարում, երբ Յունաստանը իւր զօրե-
ղութեան բարձրութեան վերայ էր կանգնած և երբ նորան չէին
անհանգստացնում ոչ արտաքին յարձակումները և ոչ ներքին խոռո-
վութիւնները: Այս ընդհանուր կանոնի վերաբերութեամբ, հա-
մարեա միակ բացառութիւնն է կազմում Հայաստանը: Օուրկ լի-
նելով սեփական-բնական սահմաններից, շրջապատուած ամեն կող-
մից էլ վայրենի ազգերով, հանապազ ենթարկուելով մերթ պար-
սիկների, մերթ ՈՒջին-Սիայի ասպատակ իմբերի յարձակմանը,
համարեա անընդհատ զէնքը ձեռքին պաշտպանելով իւր անկախու-
թիւնը ընդդէմ յունաց, հռովմայեցոց և ապա բիւզանդացիների
աշխարհակալական ձգտումներին, կարելի է համարձակ ասել որ
հայերը բնաւ չեն էլ ունեցել բարօրութիւն, նոյն իսկ ամենակարձ
ժամանակամիջոցով: Այսուամենայնիւ, հէնց որ քրիստոնէութեան
ըստ ճառագայթեց այս մաքառումների մէջ տանջուած, թէե
ռազմական հոգով ուժեղ ազգի վերայ, չնայելով նոյն իսկ նորա
ամենաանպատճ քաղաքական պայմաններին, նա ոչ միայն Ճմարիտ
նախանձաւորի եռանդով ընդունեց աստուածային ուսումը և նո-
րան հասկանալի անելու համար յատուկ գրեր ստեղծեց, այլ և
այնպիսի փառաւոր ձևեր հնարեց իւր տաճարների համար, որոնք
մինչև այսօր էլ ապշեցնում են օտարերկրացիներին իրենց գեղեց-
կութեամբ, ինքնուրոյնութեամբ և խիստ կրօնական բնաւորու-
թեամբ: Հազարաւոր հոյակասպ տաճարները, որոնցից շատերը գեռ
կանգուն են, իսկ շատերն էլ թաղուած աւերակների տակ, վկայում
են, որ հայերը շատ դարերի ընթացքում, կոիւ տալով և ենթար-
կուելով վայրենի հրոսակների աւերումներին չեն դադարել կառու-
ցանել մէկից վեհապանծ, մէկը մէկից Ճոխ, հիասքանչ և իր տե-
սակին մէջ յատուկ տաճարներ: Լանգուն մնացած հայկական ճարտարա-
պետութեան յիշատակարանները վերաբերում են բոլոր շրջաններին,

սկսելով հինգերորդ դարից մինչև տասնեւութերորդ դարը (1820). իսկ այս երկարատև ժամանակամիջոցում հայերը համարեա չեն ունեցել նոյն իսկ մի տարի խաղաղ և անվրդով կեանք: Ինչո՞վ բացատրել, որ այդպիսի աննպաստ հանգամանքների մէջ դժուռելով, հայոց ազգի գեղարուեստական հանճարը այնպիսի կարող զօրութեամբ երեան եկաւ գլխաւորապէս եկեղեցական ճարտարապետութեան մէջ և ստեղծեց ինքնուրոյն հայկական ոճ, որը վերջին ժամանակներում մանրազնին ուսումնասիրութեան և հետևողութեան առարկայ է դարձել ինչպէս Որուսաստանում, նոյնպէս և արևմտեան Եւրոպայում: Ուրիշ ոչնչով, կը պատասխանենք մենք, բայց եթէ ոչ միայն այն կրօնական աւինով, որը հայոց ազգի բնաւորութեան հիմքն է կազմում: Քրիստոնէական վարդապետութիւնը նորա արեան և մարմնի մէջ մտաւ, ուստի և հասկանալի է, որ ոչ մի հալածանք, քամբաղտութեան չէր կարող խանգարել այսպիսի ազգին, զարդարելու իւր երկիրը բազմաթիւ տաճարներով, որոնց մէջ նա ապաստան և միսիթարութիւն էր դժուռամ այն պատուհասների և անբաղդութիւնների երեսից, որոնք անընդհատ նորան էին վիճակուած:

* * *

Մինչև այժմ մենք խօսում էինք ճարտարապետութեան մասին: Անք աւելի կ'մօտենանք մեր ներկայ յօդուածի նպատակին, եթէ անցնենք քանդակագործութեանը և նկարչութեանը: Հազիւթէ կարելի է տարակուսել որ հին ազգերի կրօնն է եղել քանդակագործութեան սկզբնապատճառը: Եգիպտական աստուածների անդրիները, մարդկային քարեղին բիրտ արձանները, որոնք պատահում են հարաւային Որուսաստանի անապատներում, և որոնք կոչուում էին բաբա՝ պարզ ապացոյց են վերոյիշեալ կարծիքի հաւանականութեան: Բայց այս արուեստը ամենաբարձր արտայայտութեան հասաւ շնորհիւ յոյների, որոք 2500 տարի սորանից առաջ այն աստիճանի կատարելութեան հասցրին, որը անմատչելի է նոյն իսկ մեր ներկայ շրջանի համար:

Յայտնի է, որ հին յոյները մարդկային հոգու բոլոր շարժումները, բնութեան լոլոր ոյժերը և երեսոյթները և մինչև անգամ մարդուս առօրեայ գործունէութիւնը, մարմնացնում էին մի

առանձին աստուածութեան մէջ մարդկային կերպարանքով և մինանգամ մարդկային թերութիւններով։ Աէրը մարմնանում էր լ'ստղիկի (Աններայի) մէջ, որուը Անահիտի (Գիհանայի), վաճառականութիւնը՝ Վերկուրիսուի, իմաստութիւնը և արուեստը Աթենասի (Ախներվայի) մէջ, և այլն։ Այդպիսի հաւատքը պէտք է ստեղծէր քանդակագործութիւն, որը և յիրաւի երեան եկաւ յոյների մէջ, գլխաւորապէս իբրև աստուածների արձաններ։ Յունաց արուեստագէտները ստեղծելով իրենց քանդակագործական արտադրութիւնները, ձգտում էին ոչ միայն պատկերացնել մարդուն ծիշտ այնպէս, ինչպէս որ նա կայ, ըստ արտաքին ձևերի, ոչ միայն նորան այն բնաւորութիւնն էին յատկացնում, որը համապատասխանում էր այս ինչ աստուածութեանը, այլ և ձգտում էին մարմացնել նորա մէջ, աստծուն վայել գաղափարական գեղեցկութիւն որը և հին յունաց ճարտարապետութեան էութիւնն է կազմում։ Եւ յիրաւի մինչև մեր օրերը հասած Գիդիասի, Իրասակսիուլոսի և Յունաստանի այլ անուանի քանդակագործների արտադրութիւնները բոլոր գաղափակրժութեան ազգերի միաբերան խոստովանութեամբ կաղմում են յաւիտենական գեղեցկութեան օրինակներ։ Քրիստոնէութեան տարածուելը, որի հովիւնները հալածում էին մարդկանց և կենդանիների քանդակուած պատկերները, որպէս զի կարողանան ջնջել չեթանոսական յիշատակները և ժողովրդի միջնց արմատախիլ անել, երկար ժամանակ արգելը եղաւ քանդակագործութեան ծաղկելուն Եւրոպիոյ քրիտոնեայ ազգերի մէջ։ Քանդակագործութիւնը նորից երևաց միջնէ դարերի վերջում, երբ հալածանքները դադրել էին, ըստ որում, հեթանոսութեան վերադարձ այլ ևս անհնարին էր։ Այս դարու շրջանում, որը գեղարվութեամբ վշրածներն են է ինչուո՞ն, սկզբները Խտավիայում, և ապա Եւրոպիոյ միւս լուսաւորեալ երկրներում, սկսուեց յունաց և լատինացւոց մատենագիրների ուսումնասիրութիւնը, զարթեց և ճաշակ գէպի հին գեղարուեստները, բայց նոր ազգերի մէջ քանդակագործութիւնը շատ դարերի ընթացքում, համարեա մինչև մեր օրերը, միայն մի հետեւողութիւն էր հին վարպետներին, նոյն Աստղիկները, Պահելէյաները և Ապոլոնները անթիւ ձևափոխութիւններով, սկսեցին պալատների, գալերէյաների, այգիների և հասարակական շինութիւնների զարդը լինել։ Վիայն մեր դարու երկրորդ կիսից, քանդակագործութիւնը շարունակելով նմանել հին օրինակներին,

սկսեց միւնոյն ժամանակ առաջ դնալ, ինչպէս և միւս գեղարուեստները, բէալական ուղղութեամբ և մշակել ժամանակակից նիւթեր:

Հայերն էլ որի մասին վկայում են տարեգիրները, ունեցել են իրենց աստուածները, իրենց կուռքերը. բայց հեթանոսական շրջանում հայերը շարունակ պատերազմներ մղելով, հազիւթէ այնքան զարգացած լինէին, որ գեղարուեստները նորանց մէջ կարողանային երեան գալ. իսկ քրիստոնէութիւնն էլ բոլորովին անհնարին գարձրեց հայերի մէջ քանդակագործութեան գոյութիւնն անդամ. հայոց յետագայ բաղդն էլ այնպէս եղաւ, որ գեղարուեստների վերածնութեան մասին անդամ խօսք չէր կարող լինել:

Եթէ քանդակագործութիւնը երեան եկաւ և կատարեալ զարգացում ստացաւ հեթանոսութեան շրջանում, ապա և նկարչութիւնը (живопись) պէտք է համարել առաւելապէս քրիստոնէական շրջանի (эра) արուեստ, թէև դա հին ազգերի մէջ միայն սկզբնական վիճակում գոյութիւն ունէր: Արդէն քրիստոնէութեան սկզբներում, տաճարները զարդարուում էին քրիստոսի, Աստուածամօր և եկեղեցու սուրբ մարտիրոսների կենդանագիր պատկերներով: Բայց նկարչութիւնը կատարեալ փայլ ստացաւ ԺԵ. գարում, գեղարուեստների վերածնութեան շրջանում, երբ դասական քանդակագործութեան վեհ օրինակները, ուժգին ցունց տուին Խոտլիայում և Գերմանիայում գեղեցկութեան ճաշակին և այն ժամանակ այս երկրներում տիրապետող կրօնական տրամադրութիւնը ոգեսրեց մեծ գեղարուեստագէտներին պատկերացնելու սրբազն նիւթեր գեղեցկութեան այն սիրուն ձևերով, որ ժամանդութիւն էր թողել դասական աշխարհը: Առափայէլ Անցիոն, Աէստրդօ գօ Ա հնչի, Տիցիան, Վուրիլիո, Հոլեէյն և ուրիշներն ամենամծ ստեղծիչները էին նկարչութեան այն օրինակելի արտադրութիւնների, որոնք մինչև այժմ էլ բոլոր լուսաւորեալ երկրների նկարիչների նիւթե են գարձել իրեւ մարդկային հանձարի գերագոյն արդիւնքներ:

Հայերի մէջ գեղարուեստի այս ճիւղն էլ չկարողացաւ զարդանալ այն պատճառներով, որ վերել բացատրեցինք: «Նկարչութիւնը գործ էր գրուում միայն եկեղեցական պատկերագրութեան մէջ. բայց և դոքա, որքան այդ կարելի է տեսնել մեզ հասած հին օրինակներից, նմանողութիւն էին բիւզանդական պատկերագրութեան: Միայն մենաստանների խոր լուսութեան մէջ պատմական տարեգրութիւնները և եկեղեցական գրքերը զարդարում էին ման-

րանկար նկարչութեամբ, որոնց մեզ հասած օրինակները ցոյց են տալիս, որ հայերը օժտուած են եղել մեծ ձիրքերով այս արուեստի մէջ, որը նորանց մէջ միանգամայն ինքնուրոյն և առանձին բնաւորութիւն էր ստացել: Այրանից կարելի է անսխալ եզրակացնել որ բարեյաջող հանգամանքներում, նկարչութիւնը հայերի մէջ էլ կարող էր խիստ ծաղկել ինչպէս և միւս կուլտուրական ազգերի մէջ:

* *

Համառօտիւ պատմելով գեղարուեստների ծագումը, և հայ ժողովրդի յարաբերութիւնը գէպի գեղարուեստը, ի հարկէ գեռ ևս ոչինչ շասացինք այն հարցի մասին թէ ինչո՞ւ համար «Վարքսը» մի առանձին հոգածութեամբ զետեղում է ժամանակակից գեղարուեստների օրինակները, և թէ գորանք՝ ի՞նչ օգուտ կարող են ընձեռնել հայոց ազգին: Մենք այս հարցին պատասխանած կլինենք, եթէ պարզենք այստեղ մեր կարծիքը գեղարուեստի ազգեցութեան մասին ժողովրդի ստուար մասերի վերայ և բացատրենք նորա օգտաւէտ նշանակութիւնը ժողովրդական արդիւնագործութեան համար:

Գեղարուեստները ծառայում են իրեւ միջոց արտայայտելու, այս կամ այն շշափելի ձեռվ, մարդկային հոգու ամենաբարձր երևոյթները և գեղեցկութեան ու կատարեալի այն գաղափարները, որոնց ինքը բնութիւնն է ներշնչել մարդուն և որոնք չեն ենթարկուում խոհականութեան սառն վերլուծութեան: Գեղարուեստագէտի ստեղծագործութեան մէջ, աւելի քան մարդկային մի այլ գործունէութեան մէջ, արտայայտուում է այն ձգտումը գէպի վսեմը և գեղեցիկը, որը մօտեցնում է մարդուն աստուածութեան գաղափարներին: Վհա ինչո՞ւ երաժշտութիւնը, բանաստեղծութիւնը, ճարտարապետութիւնը, քանդակագործութիւնը և նկարչութիւնը ամեն ազգերի մէջ և ամեն ժամանակ ծառայել են աւելի կամ պակաս նշանակութեամբ իրեւ միջոցներ, որոնցով կատարուում էր ստուածների պաշտամունքը: Վյդպէս էր հեթանոս ազգերի մէջ, այդ միևնույնը պահպանուել է և քրիստոնեայ ազգերի մէջ: Բացի գորանից գեղարուեստը լրացնում է գիտութեան պակասը, որը հիմուած է գատողութեան գործունէութեան վերայ: Վյնտեղ, ուր մարդս խոհականութեամբ չէ կարողանում տիրապետել իր ըմբռնողութեան անմատչելի սահմաներին, այնտեղ գեղարուեստը, երևակայութեան թևերով վերասլացնում է մարդուն բարձր գաղափարների աշխարհը և լրւսաւորում է գիտութեան հեռաւոր ուղին:

Ճ' շմարտի և բարւոյ գաղափարները, որոնք մտել են ժամանակակից մարդկութեան օրէնդրութեան և հասարակական կեանքի պայմանների մէջ, գեռ ևս ազգերի բիրտ և կոպիտ վիճակում փառարանուում էին բանաստեղծներից և արտայայտութիւն ստանուում մեծ գեղարուեստագէտների ստեղծագործութեանց մէջ։ Այդպիսով սահմանուում է հաստատուն կազ և փոխադարձ ներգործութիւն ոչ միայն արուեստների բոլոր տեսակների մէջ, այլ և գիտութեան և գեղարուեստների մէջ։ Ահա ինչո՞ւ բոլոր ազգերի մէջ մեծ գեղարուեստագէտները ոչ միայն համարուում են իրակ պարծանքի նիւթ հաւասարապէս մարդկային մտքի հանձարաւոր շարժիչների հետ, այլ և շրջապատուում են առանձին սիրոյ փայլով։ Եթէ դասաւորենք Շէկոնի և Շէկուպիրի, Ուափայէլի և Գալիլէյի, Պէտրարկի և Մակիալէլիի անունները, այն ժամանակ մեր ասածները կատարելապէս հասկանալի կ'լինի։

Իայց իւրաքանչիւր գեղարուեստ ունի իւր շրջանը, կամ աւելի լաւն ասած, իւր փունկցիան։ Երաժշտութիւնը և բանաստեղծութիւնը իրենց ծաղկման մի յայտնի շրջանում, մատչելի են հասարակութեան աւելի զարգացած դասակարգի խաւերին և ներգործուում են մարդկային հոգու յայտնի լարերի վերայ, տրամադրելով նորան դէպի սէրը, բարին և ճշմարիսը։ Այդպիսի նշանակութիւն ունին և պլաստիկական գեղարուեստները, բայց նորանք ներգործուում են անմիջապէս աչքի միջոցաւ, ուստի և նորանց ներկայացրած պատկերները աւելի նորն և ուղղակի են տպաւորում հոգւոյ մէջ։ (Օրինակ, նկարչութիւնը իւր շօշափելիութեամբ հնարաւոր է դարձնուում նոյն իսկ կիսակիրթ մարդուն հասկանալու բարւոյ և գեղեցկութեան այն բարձր գաղափարները, որոնք առաջնորդուում էին գեղարուեստագէտի ձեռքը այն ժամանակ, երբ նա ստեղծուում էր իւր արտադրութիւնները։

Եկեղեցոյ զինուորի սուրբ սիրագործութիւնը, երկրագործի ծանր աշխատանքը բնութեան գրկում, մարդու բիրտ կամքի երեսյթները, ընտանեկան կեանքի ուրախութիւնները, բնութեան սքանչելի գեղեցկութիւնը, — այս ամենը գեղարուեստի այնպիսի նիւթեր են, որոնք բարձրացնուում և կրթուում են մարդու հոգին, ներշնչելով նորա մէջ սէր դէպի բարին և դէպի պարզութիւնը, ցաւակցութիւն դէպի անբախտութիւնը և զզուանք դէպի ամեն չարիք։ Վեղարուեստի ունեցած այս բարերար ազգեցութիւնը վաղուց

Են հասկացել արևմտեան Եցւրոպայում, ուր գրէթէ իւրաքանչիւր քաղաք, իւրաքանչիւր մենաստան ունի իւր սեփական նկարչական և քանդակագործական վեհ օրինակները, որոնք մատչելի են իւրաքանչիւր կրթուած կամ անուսում այցելուի տեսողութեանը և չէ կարելի ժիտել որ քաղաքակրթութիւնը գեղարուեստական այս արտադրութիւնների տպաւորութեանն է պարտական ժամանակակից հասարակութեան մէջ բարքերի փափկանալուն և հոգեկան սկզբ բունքների զարգանալուն: Միևնոյն ժամանակ, գեղարուեստի վեհ օրինակները եւրոպական ազգերի մէջ զարգացրել են նոցանում գեղեցիկի ճաշակը և գաղափարը: Այս կողմից գեղարուեստական ճաշակը ժողովրդի մէջ զարգացնելու համար ամենից շատ աշխատեցին Փրանսիացիները, նորանք երկրի ամեն կողմերում գեղարուեստական թանգարաններ հիմնեցին և բոլոր քաղաքներում նկարչական դպրոցներ շնորհին: Դոցա աշխատութեանց բարերար հետևանքները շուտով երեան եկան: Ոչ միայն նոյն իսկ գեղարուեստները Փրանսիայում անհամեմատ բարձրութեանը հասան, այլ և այս երկրի արուեստները և արտադրութիւնները սոցա ազգեցութեան ներքոյ այնպիսի բարձր ճաշակ և գեղեցկութիւն ունեցան, որ այս կողմից ոչ մի երկիր չէ կարող նորանց հետ մրցել: Այսպիսով գեղարուեստները ոչ միայն ունեն բարձր բարոյական կրթիչ նշանակութիւն, այլ և անմիջապէս ներգործում են երկրի արդիւնաբերութիւնը բարձրացնելու վերայ: Ահա ինչո՞ւ Փրանսիական արտադրութիւնները հրապարակի վերայ միշտ աւելի բարձր են գնահատուում, քան միւս երկրների արտադրութիւնները:

Մեր ազգը, որը ունի լաւ երկրագործներ և գործունեայ վաճառականներ, վերջին ժամանակներում սկսեց գուրս հանել իւր ծոցից և գեղարուեստներին նուիրած մարդիկ, բայց այդպիսիների թիւը մեծ չէ, ուստի և նորանց թողած ազգեցութիւնը աննշան է: Այս բացատրուում է նորանով, որ այն երկրներից և ոչ մէկում, ուր հայերը մեծամասնութիւնն են կաղմում, չկան հասարակաց գեղարուեստական ժողովածուներ, որոնց կարողանար դիտել ժողովուրդը և զարգացնէր իւր մէջ գեղեցկի ճաշակը: Մեր հարուստներն էլ գեռ չեն հասել այն ըմբռնողութեան, որ կարողանան գնահատել գեղարուեստական արտադրութիւնները և նորանցով զարդարեն իրենց ընակարանները: Այս պատճառով մեր ազգը, զթկուած լինելով գեղարուեստների արտադրութեանց իսկական օրինակների հետ ծա-

Նօթանալու հնարաւորութիւնից, չէ օգտուում այն զօրաւոր լծակ-ներից գէթ մէկով, որով կարող է բարձրացնել իւր բարոյական մակերևոյթը և զարդացնել գեղեցկի ճաշակը։ Չխօսելով արդէն գեղարուեստի բարձրագոյն խնդիրների վերայ, անտարակոյս է որ եթէ մեր ժողովը բականական ուսումնարաններում լուրջ ուշադրութեան առնեխն և սովորցնէին մանուկներին գծադրութիւն և ծանօթացնէին գեղարուեստի օրինակելի արտադրութեան հետ գոնէ պատճէններով և արտանկարներով, այն ժամանակ սորանով բազմաթիւ սովորողներից շատերի մէջ կըզարթնէր գեղարուեստական ընդունակութեան բողըոջները և յամենայն դէպս որոշ ճաշակ և գեղեցկութիւն կմոցներ դէպի այն արհեստագիտական գործուածքները, որոնցով հայերը պարապում են շատ տեղերում։

Վհա այս մեր ճիշտ հասկացողութեամբ հայոց ազդի առօրեայ կարիքը դրգեց մեղ տեղաւորել «Վրաքսում» հայ և օտար նշանաւոր գեղարուեստագիտների ամենալաւ արտադրութեանց պատճէնները այն յուսով, որ նորանք վաղ մէկ ուշ կըզարթեցնեն մեր ազդի իւրաքանչիւր անհատի մէջ թագնուած գեղեցկի զգացմունքը, որը հանդիսանում է իբրև ամենակարող լծակ նորա հոգեոր—բարոյական կատարելութեան։



ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԲԱԺՆԻ ՆԿԱՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վարդկային հոգու ոյժը և կարողութիւնը ոչ մի բանում չէ արտայայտուում այնպիսի պարզութեամբ, որքան մեծ բանաստեղծների, փիլիսոփաների և գեղարուեստագիտների հանձարաւոր ստեղծագործութեանց մէջ։ Վմբողջ գարեր շարունակ, մարդկութիւնը իւր ամենալաւ ներկայացուցիչներով աշխատում է գիտական հարցեր վճռելու, բանաստեղծների և գեղարուեստների մի ամբողջ շարք ձգտում է արտայայտելու իւր գործերի մէջ ճշմարտութեան և գեղեցկութեան գաղափարները, նորանցից իւրաքանչիւրը իւր—ովսան բերում է մարդկութեանը իւր բաժինը, բայց այս վաս-

տակաւորների անունները, ինչպէս և նորանց արտադրութիւնները մոռացուում են յետնորդներից, որոնց միջից գուրս են գալիս այլ վաստակաւորներ, և որոնք իրենց հիրթին շարունակում են նախորդների գործը, դանդաղօրէն նորան առաջ մղելով։ Ծայց ահա հանդէս է գալիս հանձարաւոր փիլիսոփան, բանաստեղծը, գեղարուեստագէտը և տարածութեան ու ժամանակի սովորական պայմաններից գուրս գործելով կարծես, միանդամից ամբողջ դարերով առաջ է մզում մարդկային մտքերի թոհիչքը և, իբրև աստուածային կերոն, լոյս է սփոռում տիեզերքի գաղտնիքների և բնութեան ամենամեծ գաղտնիքի—մարդկային հոգու վերայ։ Այս հանձարաւոր մարդիկ տիրապետում և նուաճում են գարերով աշխարհիս բոլոր քաղաքակիրթ աղքերին։ Զինգեղ-խանների, Ղանկթամուրների, Կապօլէոնների միլիոնաւոր մարդկանց արիւնով գնած աշխարհակալութիւնները, յաջորդ սերնդի մէջ չեն պահպանել ազնիւ յիշատակներ և նոցա սիրաբործութեանց արդիւնքները վաղուց արդէն ոչնչութեան են դատապարտուած, մինչ դեռ ուոմերունները, Շէկսպիրները, Ուաֆայէլները, Կիւտոնները առանց զօրագնդերի, սպառազինուած միմիայն աստուածային աւելնով, մի շարք գարերից յետոյ տիրում են մարդկանց սրտին և մտքին, նորանց ուրախացնում, սփոփում, կրթում ու քաջալերելով առաջնորդում նորանոր աշխարհակալութիւններ անելու գիտութեանց և արուեստների աշխարհում։ Հազիւթէ համոզիւ փաստերի կարօտի մարդու հոգեկան ոյժերի մեծութիւնը, որը երկում է իբրև աստուածային հոգու, Ճշմարտութեան և գեղեցկութեան արտացոլացումն և որոյ համեմատութեամբ ոչինչ են նիւթական ոյժերը, որքան և վերջիններս մեծ լինեն։

Ուաֆայէլ Անցիոն, Ուրբինոյ քաղաքից, աշխարհիս գեղարուեստագէտների մեծագոյնը, հանդիսանում է իբրև մարդկային հոգեկան ոյժի ամենապայծառ արտայայտութիւն։ այդ ոյժը չնայելով հանձարաւոր գեղարուեստագէտի կարծառե կեանքին՝ արտասովոր զօրութեամբ արտայայտուեց նկարչութեան խիստ բազմաթիւ և մեծագոյն գործերի մէջ, որոնց նկարելու համար հերիք չէր լինի սովորական ձիբքերով օժտուած տասնեակ նկարիչների եռանդուն աշխատանքը։ Ո՞ր լուսաւորուած մարդը չէ լսել Ուաֆայէլի անունը, դժբաղդաբար մեր մատաղ գրականութեան մէջ ահազին պակաս է զգացվում այն ամենի, որ վերաբերում է գեղարուեստներին, իսկ այս գեղարուեստագէտի գործերի պատճէնները

Երբէք մեր մէջ լոյս չեն տեսել: Իբր նախաձեռնութիւն, մենք գնում ենք Ուաֆայէլի վրձինի ամենալաւ արտադրութեան պատճէնը և հարկաւոր ենք համարում «Վրաքսի» ընթերցողներին տալ նորա կարծ կենագրութիւնը: Ուաֆայէլը ծնուել է Ուրբինոյ քաղաքում 1483 թուին և վախճանուել է Հռովմում ապրիլի 6-ին 1520 թուին՝ 33 տարեկան հասակում: «Ա, նկարչութիւնը սովորում էր իւր հօր՝ Զ հովաննա-Անտի և յետոյ Պետրո Պերուջնոյի մօտ: Ուաֆայէլի առաջին նկարները յիշեցնում են Պերուջնոյի նկարելու եղանակը և աչքի են ընկնում դէմքի գծերի գաղափարական և պարագանայտութեամբ: Ուաֆայէլի այս շրջանի ամենալաւ նկարն է՝ Յովսէփի և Մարիամի հարսանիքը, որը գտնվում է Խոտալիոյ Միլան քաղաքում: Տեղափոխուելով Գլուխեցիայ, Ուաֆայէլը բարեկամանում է անուանի Վիելլ-Շնդելյի հետ, որը փառաբանուում էր համահաւասար թէ՛ իբրև նկարիչ (Վ. Տ. Պատաստան), թէ՛ իբրև քանդակագործ (Մոլսէս) և թէ՛ իբրև ճարտարապետ (Հռովմի սուրբ Պետրոսի տաճարը), նոյնպէս նկարիչ Ֆրա-Շարժօլոմէզյի հետ, որից իւրացրեց պայծառ գոյներ (Կոլորիտ): Ուաֆայէլը վայելում էր գեղարուեստների նշանաւոր նախանձաւորների՝ Յուլիոս Բ., և Լեոն Ջ., պապերի առանձին հովանաւորութիւնը: Քանան մէկ տարեկան հասակում Ուաֆայէլը պյնգիսի հուշակ ստացաւ, որ Յուլիոս Բ., պապը 1508 թ. նրան հրաւերեց Հռովմ, ուր նա բազմաթիւ պատկերներ նկարեց, որոնք պյնգան բարձրացրին նորա փառքը, որ յաջորդ Լեոն Ջ. պապը յանձնեց Ուաֆայէլին իւր վեհարանի բոլոր սենեակները նկարներով զարդարել: Այդ իսկ պատճառով հրամայեց ջնջել պատերի վերայից միւս նկարիչների աշխատութիւնները: Վ. Յ. շրջանում նորա նկարների աչքի ընկնող յատկութիւններն էին՝ դէմքերի արտայայտութեան սրբութիւնը, վայելչութիւնը, ազնուութիւնը և արժանաւորութիւնը, գոյների թարմութիւնը և դէմքերի գեղեցկութիւնը: Գեղարուեստագէտի այս բոլոր արժանիքները կատարելութեան վերին աստիճանին հասան նորա գործունէութեան վերջին շրջանում, երբ նա նկարեց «Վ. Յ. Նկարիչ դպրոցը», «Տաճարից արտաքսուած լմբշամարտը», «Բօրգոյի հրդէհը», «Կոստանդիանոսի յաղթութիւնը» և այլն: Վ. Յ. միենայն շրջանում նա շատ կենդանագրեր (ուրբերեց) և պատկերներ (կարտոններ) նկարեց պապի վեհարանի պատերի վերայ, և տասը նկարներ Ալբուսոսի մատուռի գոր-

գերի համար: «Ա, հոչակուեց նաև ինչպէս տաղանդաւոր ճարտարապետ մի քանի պալատների յատակագծեր կազմելով: »Առա ամենալաւ նկարներն համարուում են. «Քրիստոսի պյլակերպութիւնը, (Առովմում), Վատուածամայր (Madonna della sedia) (Պլօրենցիայում), Սուրբ Ծննդակիքը (Փարիզում), Սուրբ Յեցիլիայ (Բոլոնիայում), Խաչի կրելը (Վադրիդում): Բայց Ուաֆայէլի գործերից ամենանշանաւորը համարուում է սուրբ Վիքստոսի Վատուածամայրը, որը գտնվում է Կրէզդէնում և որի պատճէնը մենք տեղաւորում ենք ներկայ գրիպում: Վագերի վերայ փառաւոր քայլուածքով գնացով Վատուածամօր գէմքի արտայայտութեան սրբութիւնը, Յիսուս մանուկի աստուածային գէմքը, այնպիսի կատարելութեամբ է նկարած, որ՝ ով տեսել է այս պատկերի իսկականը, նա երբէք չի մոռանալ նորա թողած խիստ տպաւորութիւնը: Երկար նայելով այդ պատկերներին, չքանում են աչքիցդ այլ ևս նորա ներկերը, մոռանում ես բոլոր աշխարհայինը և երեակայութեանդ աչքերի առաջ ներկայանում է Վատուածութիւնը, իւր գեղեցկութեան և ոյժերի ամենայն փառայեղութեամբ: «Ակարչի ձեռքին ի հարկէ ուղղութիւն էր տալիս խորին կրծնական զգացմունքը, որը նորան հասցրել էր մինչև աշխարհիս Փրկչի և Տիրամօր աստուածանման դիմագծերի յայտնութիւնը: Վանդութիւնը ասում է, որ այս նկարի մէջ նա նոյնութեամբ կենդանացրել է իրեն երազում երևեցած Տիրամօր և Սուրբ մանկան պատկերները:

Վնցել է աւելի քան երեք դար և մեծ գեղարուեստագէտի ստեղծագործութիւնները, որոնց մեծամասնութիւնը նուիրուած է սրբազն նիւթերի պատկերացմանը, մինչև այժմ էլ մնում են իրրեւ գեղարուեստի աննման օրինակներ այն ամենի համար՝ ինչ որ վերաբերում է աստուածային անարատութեան և մարդու գաղափարական գեղեցկութեան պատկերացմանը:

1892 թուականի աշնան և ձմրան մի մասը մեր նշանաւոր նկարիչ Վալվազովսկին անց է կացրել հիւսիսային Վանդեմիկայում, ուր վաղուց նորան ձգում էր ովկիանոսի գեղեցկութիւնը և աչեղութիւնը ուսումնասիրելու փափագը: Զնայելով իւր տարիքին, Վալվազովսկին այս Ճանապարհորդութիւնը կատարեց՝ կատարեալ յաջողութեամբ, այցելեց նոր աշխարհի քաղաքներից մի քանիսը և նկարեց տեղնուատեղը՝ «Ակադարայի ջրվէժի տեսարանը: «Ան-Շօր-

կում նա իւր 12 նկարների ցուցահանդէս բացեց, որոնց թուռում էր և «Լիագարան», որի պատճէնը և մենք տեղաւորում ենք։ Միայն Այլաղովսկու նման մեծ տաղանդը կարող էր յաղթութեամբ լուծել գժուարին խնդիրը՝ արտայայտել միապաղաղ ջրային քանակութիւնն, որը զարհուրելի ոյժով թափուում է անդունդի մէջ։ Այս նկարը խիստ մեծ տպաւորութիւն գործեց թէ Ամերիկայում և թէ Պետերբուրգում, ուր նա ի ցոյց էր տրուած ներկայ տարւոյս յունուար ամսին։ Ամերիկայում Այլաղովսկին աշագին յաջողութիւն ունեցաւ, այնտեղի գրականական և գեղարուեստական աշխարհի նշանաւոր ներկայացուցիչները ներկայացան նորան, ըստ ամերիկեան սովորութեան ոուսաց գլխաւոր հիւպատոսարանում ծանօթանալով նորա հետ և հրասիրելով նորան իրենց մօտ։ Այս ժամանակ Այլաղովսկին շոյեց Ամերիկացոց ինքնասիրութիւնը, նուիրելով Այւազովի թանգարանին մի նկար, որը պատկերացնում է 1892 թուին սովեալների համար ամերիկական հացի ոուսաց գիւղը տանելը։

* * *

Ն. Ամերիկայու «Քրիստոս և Ամարացի կինը» այս տաղանդաւոր գեղարուեստագէտի մի շարք արտադրութեան նկարներից մինն է, որոնց մէջ նա կարողանում է պատկերացնել պատմական նիւթը իրենց էական գրութեամբ, այնպէս խորին հմտութեամբ և ճշութեամբ։ Քրիստոսը դաւնալով Ամարացի կնոջը խօսում է նորա հետ, և այս գուք զգում էր՝ ինչպէս նորա պատկերի բոլոր շարժուածքից, նոյնպէս և նորա ձախ ձեռքի շարժումից։

* * *

Օ. իմէլի Գելլահ-կինը այս նշանաւոր գերմանացի գեղարուեստագէտի մի շարք արևելեան կանանց տաղանդաւոր պատկերներից մինն է։ Եղիպտական գեղեցկութիւնը, նորա ամուր կազմուածքը և հին պօղան՝ երեխան ուսին և ձեռքը գրած սալիորի վերայ՝ այս բոլորը պատկերացած է զարմանալի վարպետութեամբ։ Այս արևելքի հեշտասէր գեղեցկուհիներից չէ, այլ կատարեալ տռողութեամբ օժտուած կին է, որը ստեղծուած է աշխատելու և իւր տոհմը շարունակելու համար։

«Արաքս»

Պառում ենք և գերմանացի նկարիչ Պ. Ռառմանի գեղեցիկ արտադրութիւններից մեկի պատճենը: Յաւերժահարան, գետերի անտառների և լեռների այս շրածնի առողջութիւն, թեքուել է ջրի հայելիանման մակերևոյթի երեսին և նայում է նորա մէջ: Նորա թեթև, գեղեցիկ պատկերը մատաղ կեանք է բուրում: իսկ թեկիները նորան ճախրող թիթեռնիկի տեսք են տալիս:

* * *

Ո՞ւր առաջ կանգնած է մի մատղաշու գեղեցիկ աղջիկ. գերմանական հէքիաթի հերոսուհին, շաղ անցած մազերով նայում է հեռուն, ուղղելով իւր հրաշալի աչքը մի բանի վերայ, որը նորան հիացը էլ է. նորա ոտքի մօտ բուն, իմաստութեան այդ նշանակը, պտտուում է խոտերի մէջ: Այս պատկերից բնութեան թարմութիւնն է բուրում և կուսական անմեղութեան մաքրութիւն շնչում:

* * *

Լամ. Ամահղեսեանի «Փոթորիկից առաջ» նկարը պէտք է դասել նորա ամենալաւ արտադրութեանց շարքը: «Ա, նորանով արտայայտել է ծովագնացի այն ծանր բոպէն, երբ նա պէտք է լարէ իւր բոլոր ոյժերը, սպասելով վերահաս փոթորիկի հետ կռուելու բոպէին: Ափերի ժայռերին զարկուող ալիքների կոծը ցոյց են տալիս, որ ծովը արդէն սկսում է ալեկոծուել և սպասում է ճայթել իւր ուժգին կատաղութեամբ:

* * *

Այս գրքում զետեղած մեր երիտասարդ նկարիչ Վարդիկ-լեանցի էտիւդները պատկերացնում են մեզ լաւ ծանօթ, հայ բեռնակրի տիպը, որը իւր արտասովոր փիզիքական ոյժով, առողջ կազմուածքով և պարզամիտ ազնուութեամբ մշտապէս իր վերայ է գարձընում օտարազգիների ուշադրութիւնը Պոլսում և Անդրկովկասում: Կայեցէք ծխող մշեցու վերայ, սա ծանր աշխատանքով և հարբեցողութեամբ մեղկացած եւրոպացի բանուորը չէ, այլ հանդարտաբարոյ և իւր ոյժով հպարտ բնութեան պարզ որդին: Տաւական է միայն

Հայեացք ձգել միւս արագ շարժուող պատկերի վերայ, որ տեսնել թէ
դժուարատար կողովը բնաւ չէ ծանրաբեռնում նորա հզօր թիկունքը:

* * *

Ելի մի յաւերժահարսն, մի ձեռքով բոնելով իւր երկար հան-
գերձը, կարծես վախենալով որ չ'թրջէ ծածկուած առաւօտեան խո-
տի մէջ ցօղով, բարձրանալով ոտքերի մատների վերայ մօտեցնում
է քթին ծաղիկը և ագահութեամբ ներշնչում է նորա բոյրը:
Աղջկայ մատաղութիւնը և գեղեցկութիւնը ներդաշնակութեան մէջ
են գտնուում շըջապատող գարնանային բնութեան հետ:

L. F.



Աղջկայ գեղեցկութիւնը և ներդաշնակութեան մէջ:

My goodness is with me, the Lord my strength and power, who has made me.
I will not be afraid of what men can do to me.

He who is with me, he will not leave me alone; he who is with me, he will not let me down.

For I am with you always, from this day to the end of the age. Amen.



Saint Mary, O Queen of Heaven.




Тип. Ф. Гоппе.

ՏԻՐԱՄԱՐԱՐ, ԹԱՅԱՅԵԼԻ ՀՈԶԱԿԻՆՈՐ ՆԿԱՐԸ.

Рафаэля Санціо. — Мадонна.

Автотипія Ангерера въ Вѣнѣ.





СРУБЕЖСКАЯ ФОТОГРАФИЯ.


ТИП. ВД. ГОЛЛЕ.


Чиңгизин әрчөй, үчир з. изчишучичиң.
И. К. Айвазовский. — Ниагарский водопадъ.

Автотипія Ангерера въ Вѣнѣ.

Карт. «Архтъ» № 1751.

Изд. худ.-лит. обозр. „Араксъ“








ՅԻՍՈՒՍ ԵՒ ՍԱՄԱՐԻԱՆԻ ԿԻՆԸ, ՆԿԱՐ Հ. ԱԵՄԵՐԱԴԱԿՈՒՆԻ.

Г. И. Семирадский. — Иисусъ и Самаритянка.

Автотипія Ангерера въ Вѣнѣ.

Изд. лит.-худ. обозр. „Араксъ“.








Тип В. Гоппе.

8016РФИЗИУ, 1ЧАР 9. МПКУСН.

II. Тумана. — Психея у воды.

Автотипія Ангерера въ Вѣнѣ,





ТИП. ЗД. ГОЛЛЕ.

Գելահ կին, սկար ւ. Օքիուելի.

Н. Зихель.— Фелашка съ ребенкомъ.

Автотипія Лінгерера въ Вѣнѣ.






ГРАФ. ФАУСТО СОЛЛЕР

«БЕРНІСІФ, үЧДР Ч. РОДЕНХІЛЬДЕНН.
К. Боденгаузенъ. — Нѣмецкая сказка.

Автотипія Ангерера въ Вѣнѣ.





ТИП. ВД ГОЛЛЕ.


ՓՈՔՈՐԻԿԻՑ ԱՊԱԶ, ԽՎԱՐ ԷՍ. ՄԱՀԴԵՍԻԱՆԻ.
Э. Я. Магдесианцъ. — Передъ бурей.

Автотипія Ангерера въ Вѣнѣ.

Հրատ. «Արքուն» Հանդիսական

Изд. лим.-худ. обозр. „Аракс“.







Тип. ВД. ГОПЛЕ.


Տաճկահայ բեռնակիրը, էտիւդ Գր. Գարբրիէլեանցի.

Гр. Габріэляնцъ. — Носильщикъ армянинъ.

Автотипія Ангерера въ Вѣнѣ.

Հրատ. «Արքուն» հանդիսէ:

Изд. лит.-худ. обозр. „Аракс“.





Տաճկահայ բանուորը, էտիւդ Գ.ր. Գաբրիելեանցի.

Гр. Габріелянцъ — Рабочий армянинъ.

Автотипія Ангерера въ Вѣнѣ.



Ես մնաս բարետւ ասացի Ակիմ Ակիմիչին և իմանալով,
որ ինձ կարելի է բանտ վերադառնալը առայ ձիաւոր պահ-
նորդին և տուն զնացի: Ամբոխը արդէն հաւաքվում էր: Ա-
մենից առաջ վերադառնում են աշխատանքից դասով աշ-
խատողները: Կալսնաւորին եռանդով աշխատել ստիպելու
միակ միջոցն է նրան դաս տալը: Երբեմն ահագին դասեր
են արվում, բայց այնուամենայնիւ նրանք երկու անդամն
աւելի շուտ են վերջացնում, բան թէ եթէ ստիպէին աշխա-
տելու մինչև ճաշի թմբկահարութիւնը: Վերջացնելով դասը,
կալսնաւորն անարդել առուն էր գնում, և արդէն ոչ ոք
նրան չէր կանգնեցնում:

Միասին ճաշ չեն ուտում, այլ ինչպէս պատահեց, ով
որ կանուխ եկաւ. խոհանոյն էլ բոլորին միանգամից չէր
տեղաւորիլ: Ես ասլուր պահանջեցի, բայց սովորութեանս հա-
մեմատ չէի կարող ուտել այն և ինձ համար թէյ ձգեցի:
Մինք նստեցինք սեղանի ծայրը: Ինձ հետ կար մի ընկեր,
նոյնպէս, ինչպէս ես, ազնուականներից:

Կալսնաւորները գնում-դալիս էին: Սակայն արձակ էր.
գեռ ամենքը չեն ժողովուած: Տինդ մարդուց բաղկացած մի
խումբ զատ նստեց մեծ սեղանի առաջ: Կերակուր եփողը նրանց
համար երկու պնակների մէջ ապուր լցրեց և սեղանի վե-
րայ դրեց մի ամբողջ սկաւառակ տապակած ձկնով: Նրանք
մի ինչ որ տօն էին տօնում և ուտում էին իւրեանց կերա-
կուրը: Մեր վերայ նրանք ծուռծուռ նսյեցան: Ներս մտաւ
մի լեհ և նստեց նրանց մօտ:

— Տանը չեմ եղել բայց բոլորը գիտեմ, բարձրաձայն
աղաղակեց մի կալսնաւոր, մտնելով խոհանոց և ամենքի
վերայ հայեացք ձգելով:

Նա յիսուն տարեկան էր, մկունքաւոր և նիշար: Նորա
դէմքին մի ինչ որ խորամանկ և գորա հետ միասին ուրախ
բան կար: Նամանաւանդ նշանաւոր էր նորա հաստ, ցածի,
կախուած պոռշը. նա նորա դէմքին մի չափաղանց ծիծա-
ղելի տեսք էր տալիս:

— Հը, լաւ գիշերեցիք: Ի՞նչու ողջոյն չէք տալիս: Մեր

Կուրսկցիների, աւելացրեց նա, նստելով իւրեանց կերակուրն ուտողների մօտ, — Հացը հալալ: Դիմաւորեցէք հիւրին:

— Մենք, եղբայր, Կուրսկցի չենք.

— Թէ՛ Տամբովցիներին:

— Տամբովցի էլ չենք: Դու մեզանից ոչինչ չես կարող առնել: Դու գնա մի Հարուստ գիւղացու մօտ, այնտեղ ինդրի՛ր:

— Այսօր, եղբայրներ, փորիս մէջ Իվան-Տասկունը և Մարիա-Իկոտիշնան է նստած, բայց ուր է այդ Հարուստ գիւղացին ապրում:

— Ա՛յ Գաղինը Հարուստ գիւղացի է, նրա մօտ էլ զնա:

— Թէֆ է անում, եղբայրներ, այսօր Գաղինը Հարրել է, բոլոր քսակը պարագում է:

— Քսան մանեթ ունի, նկատեց մի ուրիշը: — Չեռնառու է դինելաձառ լինելն, եղբայրներ:

— Ի՞նչ է, չ՞ք ընդունում հիւրին: Դէհ, անուշ անենք և արքունականը:

— Դէ՛ դու գնա թէյ խնդրի՛ր: Ահա աղաները խմում են:

— Ի՞նչ աղաներ, այստեղ աղա չկայ, նոքա նոյնալիս են, ինչպէս մենք այժմն, մռայլ կերպով ասաց անկիւնում նստած մի կալանաւոր: Մինչև այդ ժամանակը նա ոչ մի խօսք չէր ասել:

— Թէյ կրիմէի, բայց թէ խնդրել ամաջում եմ: մենք էլ ինքնառութենք, նկատեց հաստ պառշով մի կալանաւոր, բարեհոդութեամբ մեզ նայելով:

— Եթէ ուզում էք, ես կրտամ ձեզ, ասացի ես, Հրաւիրելով կալանաւորին, — կամենում էք:

— Կամենում եմ: Եւ ինչպէս ընկամենամ: Նա մօտեցաւ սեղանին:

— Տես է, անը արեխով թան էր ուտում, իսկ այստեղ թէյի համն էլ առաւ, սիրաը աղայի ըմակելիք ուզեց, ասաց մռայլ կալանաւորը:

— Բայց միթէ այստեղ ոչ ոք թէյ չի խմում, Հարցրի ես նրան: Բայց նա ինձ պատասխանի չարժանացրեց:

— Աշա և բոքոններ են բերում: Արժանի արէք ինձ
բոքոնի:

Ներս բերեցին բոքոնները: Մի երիտասարդ կալանաւոր
մի ամբողջ կապ էր տանում և ծախում էր բանտում: Բո-
քոն ծախող կինը զեջանում էր նորան տասներորդ բոքոնը.
Նորա յոյար հէնց այդ բոքոնի վերայ էր:

— Բոքոններ, բոքոններ, կանչում էր նա խոհանոց մանե-
լով, Մոսկուայի տաք բոքոններ: Ինքս էլ կուտէի, բայց փող
է հարկաւոր: Դէ՞հ, աղերք, վերջին բոքոնը մնաց, ով մայր
ունէր:

— Եյս հրաւերը դէպի մայրական սէրը ամենքին ծի-
ծաղեցրեց, և նրանից առան մի քանի բոքոններ:

— Ի՞նչ, եղբայրներ, ասաց նա, — Հօ Գաղինը այսօր չա-
փաղանց քէֆ կ'անի: Աստուած վկայ: Նա էլ ե'րբ մասձեց
քէֆ անել: Անտակնկալ կերպով ութնաշքանին կըգայ:

— Կըթաքցնեն: Բայց ի՞նչպէս է, խիստ հարբած է:

— Օ՝ օ, չարացած է, եախից է կպչում:

— Այնքան քէֆ կ'անի, որ բռունցքեր էլ կ'ուտի...

— Ո՞րի մասին են խօսում, հարցրի ես մօտ նստած լեցին:

— Եյդ կալանաւոր Գաղինի մասին է: Նա այստեղ օղիով
առեւտուր է անում: Երբ փող հաւաքի, նոյն ժամկին խմում-
միսում է նրան: Նա անազորցն է և չար. սակայն չհարբած
ժամանակը հանուքարա է, իսկ երբ հարբի, նա բոլորովին ինքն
իրեն կըմոռանայ. գանակով մարդոց վրայ կըյարձակուի: Եյս
ժամանակ ահա նրան զսպում են:

— Ի՞նչպէս են զսպում:

— Նորա վերայ յարձակովում են տասնի չափ կալանաւոր-
ներ և սկսում են սարսափելի կերպով ծեծել մինչև որ իւր
բոլոր ուշքը կորցնում է, այսինքն ծեծում են մինչև որ կի-
ստմահ է լինում: Այն ժամանակ պառկեցնում են տախտի
վերայ և ծածկում են կիսամուշտակով:

— Բայց չ՞ որ նրան կարող են սպանել:

— Մի ուրիշին սպանած կը լինէին, բայց նրան ոչ: Նա
սասաիկ ուժեղ է, բանտում եղածներից ամենքից ուժեղ՝ և

ամենաամուր կազմուածք ունի: Միւս առաւօտ նա վեր է
կենում բոլորովին առողջ:

— Եսացէք, խնդրեմ, շարունակեցի ես հարցուփորձ անել
լեհին—Հօ ահա նրանք ել նոյնպէս իւրեանց կերակուրն են
ուտում, իսկ ես թէյ եմ խում: Մինչդեռ նրանք այնպէս են
նայում, կարծես նախանձում են այս թէյի համար: Այս
ի՞նչ է նշանակում:

— Այդ թէյի համար չէ, պատոսխանեց լեհը:—Նրանք
շարանում են ձեր վերայ նորա համար, որ գուք աղնուական
էք և նրանց չէք նմանում: Նրանցից շատերը կ'ուղէին ձեղ
հետ կոռուի բռնուել: Նրանք շատ կրցանկային ձեղ վերաւորել,
ստորացնել: Դուք գեռ շատ անախորժութիւններ կրտեսնէք
այստեղ: Այստեղ զարհուրելի ծանր է մեզ ամենքիս համար:
Մեղ հօ ամենքից ել ծանր է ամեն կողմերից: Մեծ ստոնասրբ-
տութիւն է հարկաւոր, որպէսզի գորան ընտելանաս: Դուք գեռ
շատ անախորժութունների և յանդիմանութիւնների կրպա-
տահէք թէյի և առանձին կերակրի համար, չնայելով որ
այստեղ շատ շատերը և շատ յաճախ են ուտում իրենցը,
իսկ մի քանիսը մշտապէս թէյ են խմում: Նրանց կարելի
է, իսկ ձեղ ոչ:

Այս ասելով նա վեր կացու և հեռացաւ սեղանից: Մի
քանի բուղէից նորա խօսքերն ել կատարուեցան:

Ա. Ռ Ա Զ Ի Ն

ՏՊ Ա Ի Ո Ւ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր Ս

Հազիւ գնացել էր Մ-ցկին (այն լեզն, որը խօսում էր ինձ հետ) Գաղինը բոլորովին հարբած խոհանոցն ընկաւ:

Հարբած կալանաւորը, լոյս-ցերեկով, լի օրին, երբ ամենքը պարտական էին դուրս գալ աշխատելու, խստապահանջմեծաւորի, որն ամեն բոպէ կարող էր բանտ գտլ, ենթասպայի, որը հսկում էր կալանաւորներին և շարունակ դժնվում էր բանտում, պահապանների, ինվալիդների ներկայութեամբ, մի խօսքով այս բոլոր խստութիւնների մէջ,—բոլորովին խճրճվում էր իմ մէջ կազմուած բոլոր գաղափարները կալանաւորական կեանքի մասին: Եւ բաւական երկար ստիպուեցայ ես ապրել բանտում, նախ քան ես ինձ պարզեցի բոլոր այդպիսի իրողութիւններն, որ այնքան անլուծելի էին ինձ համար տաժանակրութեանս առաջին օրերին:

Ես ասացի արդէն, որ կալանաւորներն ունէին միշտ սեփական աշխատանք և որ այդ աշխատանքը տաժանակրական կեանքի բնական պահանջն է, որ, բացի այդ պահանջեց, կալանաւորը սաստիկ փող է սիրում և նրան ամեն բանից վեր է դասում, գրեթէ ազատութեան հաւասար, և որ նա արդէն մսիթարուած է համարում իրեն, երբ նա զնկզընկում է իւր զրպանում: Ենդհակառակն, նա ախուր, ալրտում, անհանդիստ է և յուսահատվում է, երբ փող չունի, և նա այն ժամանակ պատրաստ է գողութիւն էլ ամեն բան էլ անելու, միայն թէ փող ձեռք բերէր: Չնայելով, որ փողն այնպիսի թանգագին բան էր, բայց նա երկար չէր մնում

այն բախտաւորի մօտ, որի մօտ նա կար: Նախ, որ գժուար
էր լինում այնպէս պահպանել, որ չըգողանային նրան կամ
չըլլէին: Եթէ մայեօրը մէկի մօտ փող գտնէր յանկարծակի
խուզարկութիւնների ժամանակ, անյապաղ խուզ էր: Գու-
ցէ, նա գործադրում էր նրան կալանաւորների կերակուրը
լաւաշնելու համար, գոնէ փողը նրան էր յանձնվում: Բայց
ամենից աւելի փողը գողանում էին. ոչ ոքի վերայ կարելի
չէր վստահանալ: Յետոյ մեղ մօտ միջոց գտան կատարեալ ա-
պահովութեամբ պահպանելու փողը: Նրան պահպանութեան
էին տալիս մի աղանդաւոր ծերուկի, որ եկել էր մեղ մօտ
Ստարօդուրի զիւղերից, որ մի ժամանակ պատկանում էին
Վէզկովյեններին: Բայց ես չեմ կարող լոռութեամբ անցնել և
մի քանի խօսք չասել նորա մասին, թէ գրանով հեռանում
եմ իմ նիւթից:

Այդ մի փոքրիկ, ալեոր վաթսուն տարեկան ծերուկ էր:
Նա սաստիկ ափշեցրից ինձ առաջին հայեացքից: Նա բոլո-
րովին չէր նմանում միւս կալանաւորներին. այն տատիճանի
մի հանգիստ ու խաղաղ բան կար նորա հայեացքի մէջ, որ,
յիշում եմ, ես մի տեսակ առանձին բաւականութեամբ էի
նայում նորա պարզ ու դրաւիչ աչերին, որոնք շրջապատած
էին մանր, շողաւոր կնճիռներով: Յաճախ ես խօսում էի
նորա հետ և սակաւ եմ պատահել իմ կեանքում մի այգակի-
սի բարեհոգի էակի: Նրան ուղարկել էին մի խիստ մ.ծ յան-
ցանքի համար: Ստարօդուրի աղանդաւորների մէջ սկսեցին
երեան գալ հաւատափոխներ: Կառավարութիւնը շատ էր
քաջալերում նրանց և սկսել էր գործադրել բոլոր ոյժերն, որ
միւս անհամաձայններին էլ դարձնէ: Ծերուկը միւս մոլե-
ռանդների հետ միասին վճռեց «պաշտպանել հաւատը», ինչ-
պէս ասում էր նա: Սկսուեց շինուել միադաւանական եկե-
ղեցի և նրանք այրեցին նրան: Իբրև զլիաւոր զրգուխներից
մէկը, ծերուկն ուղարկուեցաւ տաժանակիր աշխատանքի: Նա
ունեոր, առեւտուր անող աեղացիններից մէկն էր. տանը թո-
ղեց կնոջն ու զաւակներին, բայց հաստատամութեամբ գնաց
աքսոր, որովհետեւ կուրացած՝ կարծում էր թէ դա «նահա-

տակութիւն է Հաւատի Համար»։ Նորա հետ մի քանի ժամանակ ապրելով, գուրք ակամայ ձեզ հարց կըտայիք, թէ ինչ պէս կարող էր այդ խոնարհ ու հեզ, մանուկի նման, մարդը խռովարար լինել։ Ես մի քանի անգամ խօսել եմ՝ նորա հետ «Հաւատի մասին»։ — Նա ոչինչ չէր զիջանում իւր Համող մունքներից. բայց երբէք ոչ մի շարիք, ոչ մի արհամարհանք չէր լսվում նորա հակածառութիւնների մէջ։ Մինչդեռ նա կործանեց եկեղեցին և այդ չէր ժխտում։ Թվում էր թէ իւր Համողմունքների համեմատ, իւր վարմունքը և նորա համար կրտծ «տանջանքները» նա պէտք է, երեսելի զործ համարէր։ Բայց, որքան էլ որ դատեցի, որքան էլ որ քննեցի նրան, երբէք սնափառութեան և հպարտութեան ոչ մի նշոյլ չընշմարեցի նորա մէջ։ Մեր բանտում կային ուրիշ աղանդաւորներ էլ մեծ մասամբ սիբիրցիներ։ Այդ մի սասակի զարդացած ժողովուրդ էր, խորամանկ, չափաղանց թունդ-կարգացողներ և մանրակրկիտ և, իւրեանց ասելով մեծ պերճախօններ, զոռող անբարտաւան և վերին աստիճանի աննեղամիտ մի ժողովուրդ։ Բոլորովին ուրիշ մարդ էր ծերուկը։ Երբե թունդ կարգացող շատ կարելի է, որ դրանից էլ աւելի, նա խօս էր տալիս վէճերից։ Բնաւորութեամբ վերին աստիճանի հաղորդասէր էր։ Նա ուրախ էր, յաճախ ծիծաղում էր — ոչ թէ այն կոպիտ աղտեղի ծիծաղով, ինչպէս ծիծաղում էին տաժանակիրներն, այլ պարզ հանդարա ծիծաղով, որի մէջ կար շատ մանկական պարզամտութիւն և որը տռանձին կերպով սաղում էր իւր ալեսոր մաղերին։ Գուցէ, ես սխալվում եմ, բայց ինձ թվում է, որ ծիծաղից կարելի է ձննաշել մարդուն, և, եթէ ձեզ առաջին պատահմունքից ախորժելի է բոլորովին անծանօթ մարդկանցից մէկի ծիծաղը, համարձակ ասացէք, որ այդ լաւ մարդ է։ — Ամբողջ բանտում ծերուկը զրաւեց բոլորի յարգանքը, որով երբէք չէր պարծենում։ Տաժանակիրները նրան պապի էին կանցում և երբէք չին վերաւորում նրան։ Ես մասամբ հասկացայ, թէ ի՞նչ աղղեցութիւն կարող էր նա ունենալ իւր դաւանակիցների վերաց։ Բայց, չնայելով ակներև հաստատամտութեան, որով նա

իւր ատաժանակրութեան օրերն էր անցկացնում; նորա մէջ ծածկուած էր մի խորին, անբուժելի տրտմութիւն, որը նա աշխատում էր բոլորից ծածկել: Ես ապրում էի նորա հետ միենոյն բռնատան մէջ: Մի անգամ՝ զիշերուան ժամը երեքին ես արթնացայ և լսեցի մի մեղմ զապուած լայ: Ծերուկը նստած էր վառարանի վերայ (այն վառարանի, որի վերայ նրանից առաջ ազօթում էր զիշերները շատ կարդացողը, որն ուզում էր սպանել մայեօրին) և ազօթում էր իւր ձեռագիր զրքի վերայից: Նա լսց էր լինում և ես լսեցի թէ ինչպէս նա ժամանակ առ ժամանակ ատում էր. «Տէ՛ր, մի թողնի՛ր ինձ: Տէ՛ր, զօրացրու ինձ: Իմ փոքրիկ մանուկներ, իմ սիրելի մանուկներ, էլ մենք երբէք չենք տեսնուիլ»: Չեմ կարող պատմել, թէ ինչպէս ես արտմեցայ:— Ահա հէնց սյս իսկ ծերուկին փոքր առ փոքր զրեթէ բոլոր կալանաւորները սկսեցին իւրեանց փողերը պահպանութեան տալ: Տաժանակրութեան մէջ բոլորն էլ գող էին, բայց յանկարծ ամենքը մի ինչ որ պատճառով հաւատացին, որ ծերուկն ոչ մի կերպով չէ կարող գողանալ: Գիտէին, որ նա մի ինչ որ տեղ պահում էր իրեն յանձնուած փողերը, բայց մի այնպիսի թարուն տեղը որ ոչ ոք չէր կարող գտնել նրանց: Վերջը նա ինձ և լեզերից մի քանիսին բացատրեց իւր զաղանիքը: Չողերից մինին մէջ կար մի Ճիւղ որ ըստ երեսյթին, պինդ կալած էր փայտին, բայց նա հանվում էր և ծառի մէջ յայտնուեցաւ մի մեծ փոս: Հէնց այստեղ էլ պահում էր ծերուկը փողերը և յետոյ գարձեալ տեղն էր դնում Ճիւղն, այնպէս, որ ոչ ոք երբէք չէր կարող ոչ մի բան գտնել:

Բայց ես իմ սպատմութիւնից շեղուեցայ: Ես կանդ առայ այն բանի վերայ, թէ ինչպէս փողերը չէին մնում կալանաւորի զրպանում: Բայց բացի նոյցա պահպանելու գժուարութիւնից, բանառում էլ այնքան թախիծ կար, կալանաւորն էլ իւր բնութեան համեմատ, այն աստիճանի ազատութեան ծարաւի էակ է և վերջապէս, իւր ընկերական գրութեամբ, մինչեւ այն աստիճան թեթեամիտ է և անկարգ՝ որ նրան բնականապէս հրապուրում է յան-

կարծ միսել ամէն բան և վատնել իւր բոլոր զրամագլուխը
որոտնունքով և երաժշտութեամբ, այնպէս, որ գէթ մի բոպէ
մոռանայ իւր թախիծը: Մինչև անդամ տարօրինակ էր նայել
թէ ինչպէս մինը նրանցից աշխատում է, վեզ չ'ձկելով, եր-
բեմն մի քանի ամիս, միայն և եթ նորա համար, որ մի օ-
րում բոլորովին միսէ իւր աշխատածն, իսկ յետոյ նորից,
մինչև նոր քէֆը, մի քանի տմիս տնքայ աշխատանքի վերայ:
Նատերը նրանցից սիրում էին ձեռք բերել իւրեանց համար
նոր հագուստներ և անպատճառ աշխարհական տարագի, մի
ինչ որ անձեւ, սև վարտիկներ, բաճկոններ, սիրիրեականներ:
Մեծ գործածութեան մէջ էին նշյալէս չիմէ շապիկներ
և գոտիներ պղձեայ կոճակներով: Զարդարվում էին տօնե-
րին և զարդարուողը անպատճառ ման էր գալիս բոլոր բըռ-
նատներում, որպէս զի ցոյց տայ իրեն ամենքին: Լաւ հաղ-
ուածի բաւականութիւնը հասնում էր մինչև տղայակա-
նութեանը: շատ բաներում էլ կալանաւորները կատարեալ
տղայ էին: Ճշմարիտ է, որ այդ բոլոր լաւ իրերը մի կեր-
պով յանկարծ չքանում էին տիրոջ մօտից, երբեմն հէնց
նշյն իսկ գիշերը զրաւ էին զրվում և էժան զնով վաճառ-
վում: Սակայն կերուխումը տստիճան առ աստիճան էր
զարդանում: սովորաբար կերուխումը տօն օրերին էր կա-
տարվում կամ թէ կերուխում անողի տօնի օրը: Տօնա-
աէր-կալանաւորը, վեր կինալով առաւօտեան, սուրբի պատ-
կերի գիմաց մոմ էր վառում և աղօթք էր անում: յետոյ
զուզվում էր և իւր համար ճաշ էր պատուիրում: Առնում
էին կովի միս, ձուկ, եփում էին սիրիրեան պել'մենի: նա ու-
տում էր եղի նման, զրեթէ միշտ միայնակ, հաղիւ երբէք հրա-
ւիրելով իւր ընկերներին մասնակից լինելու սեղանին: Յետոյ
երեան էր գալիս օղին, տօնատէրը խմում էր սաերջ կովի պէս
և անպատճառ ման էր գալիս բանատներում, երերուելով և սայ-
թաքելով աշխատելով ամենքին ցոյց տալ, որ ինքը հարբած
է, որ ինքը «քէֆ է անում» և զրանով արժանանալ ընդհա-
նուրի յարգանքին: Ամեն աեղ ռուս աղդի մէջ մի աեսակ
համակրութիւն է զգացվում գէպի հարբած մարդը. իսկ

բանտում մինչև անդամ՝ յարդանքով էին վերաբերվում դեպի հարբածը: Բանտային քէֆի մէջ կար մի տեսակ աղայութիւն: Քէֆը գալով, կալանաւորն անպատճառ՝ երաժիշտ էր վարձում: Բանտում կար մի լեհ՝ փախտական զինուորներից, որը շատ գարշելի էր, բայց որն ածում էր ջութակ և ուներ իւր մօտ նուազարան, որն իւր բոլոր կայքն էր: Նա ոչ մի արհեստ չուներ և միայն նրանով էր պարապում որ քէֆ անողների մօտ էր վարձվում ուրախ պարերդներ ածելու: Նորա սպաշտոնը կայանում էր նրանում, որ անբաժան հետեւ իւր հարբած տիրոջը մի բռնասնից միւսը և կչէցացնել ջութակի վերայ, որքան ոյժ ունի: Յաճախ նորա դէմքին ձանձրոյթ, ժամանիծ էր նկատվում: Բայց «ածի՛ր, փող ես տռել» աղաղակը ստիպում էր նրան նորից կզկզացնել ու կզկզացնել: Կալանաւորը, քէֆ անել սկսելով, կարող էր հասաւու հաւատացած լինել որ եթէ նա չափազանց հարբելու լինի, անպատճառ նորա վերայ կըհսկին, ժամանակին կըպառկեցնեն քնելու և միշտ մի տեղ կըծածկին, երբ իշխանաւորներն երեւն և այս ամէնը բոլորովին առանց շահասիրութեան է: Իւրեանց կողմից ենթասպան և ինվալիտներն, որոնք ապրում էին բանտում կարդ պահպանելու համար, նոյնպէս կարող էին բոլորովին հանդիսան լինել. Հարբածն ոչ մի անկարգութիւն չէր կարող անել: Նորա ետեից հսկում էր բոլոր բռնատունը և եթէ նա աղմուկ հանէր ու խռովութիւն սկսէր— նրան հէնց նոյն ժամին կըհանդարացնեին, մինչև անդամ ուղղակի կըկապէին: Դորա համար էլ բանախ ստորին վարչութիւնը հարբածութեան վերայ շատ թեթև էր նայում, նկատել էլ չէր ուղում: Նա շատ լաւ գիտէր, որ եթէ օղին արգելէ, աւելի էլ վատ կրլինի: Բայց որտեղից էին օղի ճարում:

Օղին զնում էին հէնց նոյն իսկ բանտում, այսպէս կոչւած զինեվաճառներից: Նոքա մի քանի հոգի էին և իւրեանց վաճառականութիւնն անում էին անընդհատ և յաջողութեամբ, չնայելով որ արեցողների և «քէֆ անողների» թիւն առհասարակ շատ քիչ էր, որովհետեւ քէֆը փող էր պահանջում, իսկ կալանաւորների փողը դժուարութեամբ էր

ձեռք բերվում: Վաճառականութիւնը սկսվում: Ընթանում ու թոյլարվում էր բաւականին ինքնուրոցն կերպով: Մի կալանաւոր, գիցուք թէ, արհեստ չունի և աշխատել չէ ուղում (այդպիսիները լինում էին), բայց ուզում է փող ունենալ և դորա հետ միասին անհամբեր մարդ է, ուզում է շուտով հարստանալ: Նա մի քիչ փող ունի սկսելու համար և նա վճռում է օղի վաճառել. սա մի համարձակ ձեռնարկութիւն է, որ մեծ բիսկ է պահանջում: Նորա համար կարելի էր ծեծ ուտել և մի անգամից զրկուել և ապրանքից և՝ գրամագլխից: Բայց զինեվաճառը այդ բանին պատրաստ է: Նա սկզբից փողքիչ ունի և դորա համար առաջին անգամ նա ինքն է օղին բանոը բերում և, ի հարկէ, ծախում է նրան արդիւնքով: Նա փորձը կրկնում է երկրորդ և երրորդ անգամ և եթէ իշխանութեան ձեռքը չընկնի, շատ շուտ ծախում վերջացնում է ապրանքը, և միայն այն ժամանակ է հիմք դնում ընդարձակ առեւարին. արտօնատէր, գրամատէր է դառնում, գործակալներ և օգնականներ է պահում, բիսկ է անում շատ քիչ իսկ հարստանում են աւելի և աւելի: Նորա տեղ բիսկ են անում օգնականները:

Բանտում միշտ լինում են բաղմաթիւ սնանկացած, տանուլ տուած և մինչեւ վերջին կոսէկը միսած մարդիկ, առանց արհեստի, թշուառ և ցնցուաիներ հագուծ, բայց մի որոշ աստիճան օժտուած համարձակութեամբ և վճռականութեամբ: Այսպիսի մարդկանց մօտ ողջ է մնում, իբրև գրամագլուխ, միայն կռնակը. նա կարող է գեռ ծառայել մի բանի և ահա տանուլ տուած արբեցողը վճռում է ի գործ գընել իւր վերջին գրամագլուխը: Նա գնում է արտօնատիրոջ մօտ և վարձվում է նորա մօտ օղին բանաւոր հանելու համար. հարուստ զինեվաճառը ունի այդպիսի մի քանի աշխատողներ: Բանտից գուրս մի ինչ որ տեղ գոյութիւն ունի այսպիսի մի մարդ—զինուորներից, տեղացիներից, երբեմն մինչեւ անգամ աղջիկ,—որն արտօնատիրոջ փողով և յայտնի նուէրով, համեմատաբար շատ չնչին գնով, օղի է գնում գինեանից և պահում է նրան մի որ և է ծածուկ աեղ, ուր

կալանաւորները գալիս են աշխատելու։ Գրեթէ միշտ մատակարարը սկզբից փորձում է օղիք ազնվութիւնը և խմածի տեղը, տմարդի կերպով ջուր է աւելացնում։ թէկուղ առնես՝ թէկուղ ոչ բայց կալանաւորին չի էլ կարելի չափազանց խարութիւն անող լինել. այն էլ լաւ է, որ գեռ բոլորովին չեն կորել նորա փողերը և օղին մատակարարուած է, ինչ պիսին էլ չ'լինի, բայց գարձեալ խօ օղի է։ Ահա հէնց այս իսկ մատակարարին և ներկայանում են բանտի զինեվաճառի կողմից նրան առաջուց ցոյց տուած եղի աղեքներով անցկացնողները։ Այդ աղեքները սկզբից լուացվում են, յետոյ ջրով են լքցվում և, այս կերպով պահպանում են սկզբնական խոնաւութեան և ձգտող զրութեան մէջ, որպէս զի ժամանակին օղի ընդունելու յարմարաւոր լինին։ Լքցնելով աղեքներն օղիով, կալանաւորը նրանց իւր շուրջն է փաթաթում, կարելոյն չափ իւր մարմնի ամենածածուկ տեղերում։ Ի հարկէ, այստեղ երեսում է մաքսանենդի բոլոր ճարպիւթիւնը և գողի խորամանկութիւնը։ Նորա պատիւը մասսամբ վերաւորուած է. նա պէտք է խափէ և ձիաւոր պահնորդներին և պահպաններին։ Նա նրանց խափումէ. լաւ գողի առաջ ձիաւոր պահնորդն, երբեմն մի որ և է հասարակ զենուորը, միշտ կրխափուի. Ի հարկէ, ձիաւոր պահնորդին ուսումնասիրում են նախապէս. մի և նոյն ժամանակ ի նկատի է առնվում ժամանակն ու աշխատանքի տեղը։ Զօրօրինակ հնոցագործ կալանաւորը վառարանի վերայ է բարձրանում։ ով կ'տեսնի, թէ նա ի՞նչ է անում այնտեղ։ Խօ ձիաւոր պահնորդն էլ նորա ետեից չի բարձրանալ։ Մօտենալով բանտին, նա, յամենայն դէպս, ձեռքն է առնում դրամը, — տասն և հինգ կամ քսան-կոպէկ արծաթ և գարպասի մօտ սպասում է եֆրեյտօրին։ Աշխատանքից վերադառնող իւրաքանչիւր կալանաւորին պահպան եֆրեյտօրը զննում է չորս կողմից և շշափում է և յետոյ արդէն բայց է անում նորա առաջ բանտի գոները։ Օղի փախցնող-տանողն առհասարակ յոյս ունի, որ կամաչեն չափազանց մանրակրկիտ կերպով շշափել իւր մի քանի տեղերը։ Բայց երբեմն սատանայ-եֆրեյտօրը

ձեռք հասցնում է այդ տեղերին էլ և շօշափում օղին։ Այդ ժամանակ մնում է միակ վերջին միջոցը—մաքսանենդը, լըոիկ ու պահնորդ ձիաւորից զաղտնի, եֆրեյտի ձեռքն է զնում ձեռքում պահած դրամը։ Պատահում է, այդպիսի հնարքի շնորհիւ նա բանտ է մտնում յաջողութեամբ և անց է կացնում օղին։ Բայց երբեմն այդ հնարքը չի յաջողվում, և այն ժամանակ հարկ է լինում հաշիւ տալ իւր վերջին գրամագլխով այսինքն կռնակով։ Տեղեկացնում են մայեօրին, դրամագլուխը ծեծում են և լաւ են ծեծում, օղին զանձարանն է մտնում, և մաքսանենդն ամէն բան իւր վերայ է առնում, չմատնելով արտօնատիրոջը, բայց նկատեցէք, ոչ թէ նորահամար, որ զգվում էր մատնութիւնից, այլ միայն և եթ նորահամար, որ մատնութիւնը իւր համար ձեռնտու չէ։ Նրան դարձեալ կըթակէին։ բոլոր միսիթարութիւնը այն կը լինէր, որ երկուսն էլ միասին ծեծ կ'ուտէին։ Բայց արտօնատէրը զեռ նրան հարկաւոր է, թէե, ըստ սովորութեան և նախապէս կայացած պայմանին համաձայն, թակուած կռնակի համար մաքսանենդն արտօնատիրոջից ոչ մի կոպէկ չի ստանում։ Իսկ ինչ որ վերաբերում է առհասարակ մատնութիւններին, նրանք սովորաբար ծաղկած են։ Բանտում մատնիչը չի ենթարկվում անդամ ամենափոքր ստորութեան։ Նորա վերայ բարկանալը մինչև անդամ անմտութիւնն է։ Նրանից չեն փախչում, նորա հետ ընկերութիւն են անում, այդպէս, որ, եթէ դուք բանտի մէջ սկսէիք առաջուցանել մատնութեան բոլոր վատութիւնը, ձեզ բոլորովին չեին հասկանայ։ Այն ցոփ ու լիրը ազնուական-կալանաւորը, որի հետ ես խզեցի բոլոր յարաբերութիւններս, ընկերութիւն էր անում մայեօրի ծառայ Ֆէտկայի հետ և ծառայում էր նորամօտ իբրև լրտես, իսկ նա՝ կալանաւորների մասին լսած բոլոր բանները հաղորդում էր մայեօրին։ Մեղանում այս ամէնը դիտէին, և ոչ ոք երբէք մինչև անդամ չմտածեց էլ պատժել կամ գէթ կ'շտամբել անպիտանին։

Բայց ես շեղուեցի։ Ի հարկէ, պատահում է, որ օղին անց են կացնում յաջող կերպով էլ։ այն ժամանակ արտօնա-

աէրը ընդունում է բերած աղիքները, նրանց համար է վճա-
րում, և սկսում է հաշիւ անել: Հաշուից երեսում է, որ ապրան-
քը նրան արգին շատ թանգ է արժենում, ուստի աւելի մեծ
վաստակի համար նա օղին մի անդամ էլ մի ամանից միւսն է,
ածում, նոր ի նորոյ միանդամ ևս ջուր աւելացնելով. գրե-
թէ, կիսով չափ և այլպիսով բոլորովին պատրաստուելով
յաճախորդի է սպասում: Հէնց առաջին տօնին, երբեմն էլ
լի օրին, յաճախորդը երեան է գալիք. այդ մի կալանաւոր է,
որն աշխատել է մի քանի ամիս պահախանոցի եղի նման և
որը կոսկէկը հաւաքել է նորա համար, որ ամէնը խմէ պրճնէ
դորա համար նախաղէս որոշուած օրը: Իւր գալուց գեռ-
ես շատ առաջ այդ օրը խեղճ մշակն երազումն էր աեսնում
աշխատանքի ժամանակ երջանիկ յնորքների մէջ էլ և իւր
թովութեամբ խրախոյս էր տալիս նրան տաժանակիր կեան-
քի ձանձրալի ասպարիզում: Վերջապէս պայծառ օրուան
արշալոյն երեսում է արեելքում: Փողը հաւաքուած է,
խլուած չէ, գողացուած չէ և նա նրան զինեվաճառին է
տանում: Նա տալիս է նրան նախ և առաջ օղի, կարելոյն
Յափ մաքուրն այսինքն ընդամէնն երկու անդամ միայն ջրով
խառնուած. բայց որբան որ, խմվում էր շշեց, բոլոր խը-
մուածն անյատազ աւելացվում էր ջրով: Օղիի մի բաժակի
համար վճարվում է հինգ, վեց անդամ աւելի, քան թէ գի-
նետանը: Կարող էք երեակայել, թէ որքան պէտք է պար-
պէլ այլպիսի բաժակներ և որքան փող վճարել նրանց հա-
մար, որպէս զի խմէ կշտանայ: Բայց խմելու սովորութիւնը
թողնելուց և նախօրօք ժուժկալութիւնից կալանաւորը բաւա-
կանին շուտ է հարբում և սովորաբար շարունակում է խմել
մինչեւ որ բոլոր փողը միսսում է: Այն ժամանակ զործ են
զրվում բոլոր նոր հագուստեղէնները, ըստ որում զինեվա-
ճառար միենոյն ժամանակ վաշխառու էլ է: Նախ և առաջ
նորա ձեռքն են ընկնում զործածութեան մէջ գեռ նոր մաս
մասնաւոր իրերը, յետոյ կարզը հասնում է և հին քուրջե-
րին և վերջապէս թագաւորական իրերին էլ: Ամէն ինչ մին-
չեւ վերջին քուրջը օղիի տալուց յետոյ՝ հարբեցողը քուն է

մտնում և միւս օրը զարթնելով գլխի մէջ անհրաժեշտ ճար-
ճատմունքով ի զուր խնդրում է զինեվաճառից գէթ մի
կում օղի զիլացաւը փարասելու համար։ Տրամութեամբ նա
տանում է ձախողակ ելքը և հէնց նոյն իսկ օրը դարձեալ
ձեռք է զարնում աշխատանքի և դարձեալ աշխատում է մի
քանի ամիս, վեղը չ'ձկելով, խորհելով յաւիտենականութեան
մէջ անդարձ կորած երջանիկ քէֆի օրուան մասին, և փոքր
առ փոքր սկսելով քաջալերուել և սպասել մի ուրիշ այսպի-
պիսի օրուան, որը դեռ հեռու է, բայց որը դարձեալ կը գայ
երբ և իցէ, իւր կարգին։

Ինչ որ վերաբերում է զինեվաճառին, վտառակելով վեր-
ջապէս աշաղին գումար, մի քանի տասնեակ րուբլի, նոս վեր-
ջին անդամ պատրաստում է օղի և արդէն մէջը ջուր չի
խառնում, որովհետեւ այդ իւր համար է նշանակում։ Հերիք
է վաճառականութիւն անել. ժամանակ է իրեն էլ քէֆ ա-
նելու։ Սկսվում է քէֆը, կերուխումը, երաժշտութիւնը։ Մի-
ջոցները մեծ են, մինչև անդամ բանտային ստորին իշխա-
նութեան, սիրտն էլ է դրաւում։ Քէֆը երբեմն մի քանի օրեր
է շարունակվում։ Ի հարկէ, պատրաստուած օղին շուտով կր-
լանվում է. այն ժամանակ քէֆ անողը գնում է միւս գի-
նեվաճառներին, որոնք արդէն սպասում են նրան, և խը-
մում է մինչև որ իւր վերջին կոպէկը միսում է։ Ինչպէս էլ
կալանաւորները չը պահպանէին քէֆ անողին, բայց և այն-
պէս նա երբեմն բարձրագոյն իշխանութեան աչքին է ընկր-
նում, մայեօրի կամ ենթասպայի։ Նրան արգելանոց են տա-
նում, խլում են նորա գրամակլուխը, եթէ միայն այդ
գտնին նորա մօտ և ի վերջ ամենայինի թակում են։
Սթափուելով, նա կրկին բանտ է գալիս և մի քանի օրից
նորից զինեվաճառի արհեստին է ձեռք զարնում։ Քէֆ
անողներից մի քանիսը, ի հարկէ, քիչ շատ հարուստնե-
րը, խորհում են գեղեցիկ սեռի մասին էլ։ Մեծ փողեր տա-
լով նոքա երբեմն զաղանի անցնում գնում են աշխատանքի
փոխանակ, ամրոցից զուրս մի ինչ որ աեղ դէպի արուար-
ձան, կաշառուած ձիւաւոր պահնորդի առաջնորդութեամբ

Այնտեղ հեռու ընկած մի տնակում, մի տեղ քաղաքի տմե-
նածայրը մի շատ ճոխ խնձոյք է դրվում և վատնվում
են Ճիշտ որ մեծ գումարներ: Փողի համար կալանաւորից
էլ չեն գարշում: Խոկ Ճիշտոր պահնորդը մի կերպով առա-
ջուց է գալիս գործին լաւ տեղեակ լինելով: Սովորաբար այդ-
պիսի Ճիշտոր պահնորդներն իրանք բանաի ապագայ փոխա-
նորդներն են: Սակայն փողով ամէն բան կարելի է անել, և
այդպիսի Ճանապարհորդութիւնները զրեթէ միշտ գաղտնի
են մնում: Պէտք է աւելացնել, որ նրանք շատ սակաւ են
պատահում: այդ բանի համար շատ փող է հարկաւոր, և
գեղեցիկ սեռի սիրողները ուրիշ բոլորովին անվտանգ միջոց-
ների են դիմում:

Դեռ իմ բանտային կեանքի առաջին օրերից մի երի-
տասարդ կալանաւոր, մի չափաղանց գեղեցիկ տղայ, զար-
թեցրեց իմ մէջ մի առանձին հետաքրքրութիւն: Կոչում էին
նրան Սիրոտկին: Նա շատ կողմերից բաւականին հանելուկ
մի էակ էր: Ամենից առաջ ինձ ափշեցրեց նորա գեղեցիկ
դէմքը: Նա քսան և երեք տարեկանից աւելի չէր լինի: Նա
գտնվում էր մի առանձին բաժանմունքի մէջ, այսինքն անո-
րոշ ժամանակի բաժանմունքի՝ հետեւապէս ամենամեծ զինու-
որական յանձաւորներից մինն էր համարվում: Հանդարա ու
հեղ քիչ էր խօսում: սակաւ էր ծիծաղում: Նորա աչերը
կապոյտ էին, գծերը կանոնաւոր, փոքրիկ դէմքը մաքուր ու
քնքոյց մազերը բաց խարտեաշ: Կիսով չափ ածելուած զլու-
խըն անզամ նրան շատ չէր տղեղացնում: այնչափ գեղեցիկ
տղայ էր նա: Նա ոչ մի արհեստ չուներ, սակայն թէև փող
քիչ էր գտնում: բայց յաճախ: Նա նկատելի կերպով ծյլ էր,
ման էր գալիս կեղառա, գուցէ մի ուրիշը նրան լաւ հագնէ,
երբեմն նոյն խոկ կարմիր շապիկ և Սիրոտկինը ըստ երեսյ-
թին ուրախ է նոր շորի համար, ման է գալիս բռնատները
իրեն ցոյց տալու: Նո չէր խմում, թուղթ չէր խաղում, զրեթէ
ոչ ոքի հետ էլ չէր կռվում: Պատահում էր ման էր գալիս
բռնատների ետեղ—ձեռքերը զրպանների մէջ դրած, հեղիկ,
մտախոհ: Ի՞նչի մասին նա կարող էր մոածել, դժուար էր

իմանալն էլ: Երբեմն կրկանչես, հետաքրքրութիւնից կրհարցնես
մի բանի մասին, նա իսկոյն կրպատախանի, մինչեւ անդամմի
տեսակ յարգանքով, ոչ կալանաւորի պէս, բայց միշտ կարծ՝ ա-
ռանց երկար բարակ խօսելու, իսկ ձեր վերայ էլ կընայի որպէս
տասնամեայ մի մանուկ: Փող էլ եթէ ունենայ, նա չի գնումիւր
համար մի անհրաժեշտ բան, չէ տալիս բաժկոնը կարկատելու,
ձեռք չի բերում նոր կոշիկներ, այլ գնումէ բոքոն, շաքարահաց
և ուտում, կարծես եօթնամեայ երեխայ լինի:— Է՛ջ դու, Սիրոտ-
կին, ասում էին նրան կալանաւորները, Ղազանի դու որբիկ: Պա-
րապ ժամանակնա ոսկորաբար թափառումէ օտար բռնատները.
գրեթէ ամենքը զբաղուած են իւրեանց դործով, նա միայն անե-
լու բան չունի: Նրան մի բան կասեն, զրեթէ միշտ ծաղրով
(նորա և նորա ընկերների վերայ այնպէս յաճախին էին ծիծաղում)
— նա ոչ մի խօսք չ'ասելով, յետ է դառնում և միւս բռնատունն
է գնումի, իսկ երբեմն, եթէ նրան արդէն շատ ծաղրեն, կարմրում
է: Ես յաճախ մտածում էի թէ ինչպէս այս հեղ պարզահոգի էա-
կը բանտ է մատել: Մի անդամես պառկած էի հիւանդանոցում,
կալանաւորների սենեակում: Սիրոտկինն էլ նոյնպէս հիւանդ էր
և պառկած էր իմ մօտ. ինչպէս եղաւ որ երեկոյեան դէմ մենք
նորա հետ խօսել սկսեցինք. նա յանկարծ ոգևորուեցաւ և, ի դէպ
պատմեց ինձ, թէ ինչպէս նրան զինուոր տուին, ինչպէս, ձանա-
պարհ գնելով նրան, լաց էր լինում մայրը և ինչպէս ծանր էր
նրան զինուոր գնալը: Նա աւելացրեց, թէ ոչ մի կերպով չը
կարողացաւ տանել նորակոչ զինուորի կեանքը, որովհետեւ այն-
տեղ ամէնքն էլ այնպէս բարկացու, խիստ էին, իսկ հրամանա-
տարները գրեթէ միշտ նրանից անբաւական:

— Իսկ ինչպէս վերջացաւ, հարցրի ես:— Ի՞նչ բանի
համար դու այստեղ ընկար: Այն էլ առանձին բաժանմունք:...
Ս. լս, դու Սիրոտկին, Սիրոտկին:

— Այո, ես, Ալեքսանդր Պետրովիչ ընդամենը մի տարի
մնացի զորաբաժնում, իսկ այստեղ եկայ նորա համար, որ
մեր գնդի հրամանատար Գրիգորի Պետրովիչն սպանեցի:

— Ես այդ լսել եմ, Սիրոտկին, բայց չեմ հաւատում:
Ո՞րին դու կարող էիր սպանել:

— Այդպէս պատահեց, Ալեքսանդր Պետրովիչ Արդէն
շավից դուրս ինձ անտանելի թուեցաւ:

— Բայց ի՞նչպէս են ապրում միւս նորակոչներն: Ի հարկէ,
ծանր է սկզբից, իսկ յետոյ ընտելանումեն, և, նայումես, լաւ
զինուոր է դուրս գալիս: Քեզ երեխ, մայրդ երես է տուել. շաբա-
րահայ ու կաթ է ուտացրել մինչև 18 տարեկան հասակդ:

— Մայրս ինձ, ձշմարիտ է, շատ էր սիրուհի երբոր ես
զինուոր գնացի, նա ինձանից յետոյ անկողին ընկաւ, և, ինչ-
պէս լսեցի, էլ տեղից վեր ընկայաւ: Վերջի վերջոյ շատ գառն
թուաց նորակոչ զինուորի կեանքը: Հրամանատարը ըստ սիրեց,
ամէն բանի համար պատժում էր, — և ինչի համար: Ես ա-
մենքին հնազանդում եմ, ապրում եմ կարգին, օղի չեմ խմում,
ոչ ոքից ոչ մի բան չեմ վերառնում: Իսկ այդ արդէն, Ալեք-
սանդր Պետրովիչը վատ բան է, եթէ մարդ մի բան է ուրիշեց
վերառնում: Չորս կողմը բոլորն էլ այնպէս խստասիրտ են:
Չդիտես էլ որտեղ լաց լինիս: Պատահում է զնում ես այնտեղ
փողոցի անկիւնը և լաց ես լինում: Մի անգամ ես ահա այդպէս
պահնորդ էի: Արդէն գիշեր է: Ինձ գիշերապահ կանգնեցրին պա-
հանոցում, հենարանի մօտ: Քամի է, աշուն էր, և այնպէս մութն
էր, որ հէնց ուզում ես աշերդ պատառի՛ր: Եւ այնպէս սիրտս
սկսեց խառնել: Հրացանս ոտքիս կպցրի, սուխնը հանեցի մօտ
դրի, հանեցի աջ ոտքիս կօշիկը, հրացանի բերանը դրի կրծքիս
յենուեցի նորա վերայ և ոտքիս բութ մատով քարշեցի չախ-
մախը: Նայում եմ, փստաց: Ես զննեցի հրացանս, մաքրեցի վա-
ռօթ լցնելու ծակը, նոր վառօթ աւելացրի, մանր կայծաքարեր
լցրի և դարձեալ կրծքիս դրի: Եւ ի՞նչ վառօթը բռնկեց, իսկ
հարուած դարձեալ չկայ: Ի՞նչ պիտի լինի այս — մոտածում եմ
ես: Առայ և հագայ կօշիկս, սուխնը ամրացրի, ձայն չեմ հանում
ու ման եմ դալիս: Հէնց այստեղ ահա ես որոշեցի այդ գործն ա-
նելու, ուր ուզում ես գնա՞ միայն դուրս եկ զինուորութիւնից.
Կէս ժամից հրամանատարն է գալիս, որ զինաւոր պահնորդու-
թիւնն էր կառավարում: Ուղղակի վերաս եկաւ. «Միթէ այդ-
պէս կը կանգնեն պահնորդութեան ժամանակ: Ես հրացանս
ձեռքս առայ և խրեցի սուխնը նորա մարմնի մէջ մինչեւ հրա-

ցանի բերանը: Զորս հազար վերստ անցայ, և ահա այստեղ
էլ առանձին բաժանմունք մտայ...»

Նա չէր խափում: Եւ ի՞նչու համար մի առանձին բաժան-
մունք կուղարկէին նրան: Հասարակ յանձանքներն աւելի թե-
թե պատիժ են կրում: Սակայն միայն Սիրոտկինն էր այնպէս
գեղեցիկ իւր բոլոր ընկերների մէջ: Ինչ որ վերաբերում է միւս,
իրեն նմաններին, որոնք մեղ մօտ ընդամէնը մօտ 15 հոգի էին,
մինչեւ անգամ օտարութի էր թվում նայել նոցա վերայ. միայն
երկու երեք հոգի գեռ ևս տանելի էին. մնացեալները բոլորն է
այնպէս կախ ականջ, անձոռոնի, անշնորհք էին, ոմանք մինչեւ
անգամ ալեռոր: Եթէ հանդամանքները ներեն, ես երբ իցէ կր-
խօսեմ այս բոլոր խմբի մասին աւելի մանրամասնորէն: Սիրոտ-
կինը յաճախ մտերմանում էր Գաղինի հետ, հէնց այն անձի
հետ, որի առիթով ևս սկսեցի այս գլուխը, յիշատակելով որ
նա հարբոծ՝ խոհանոցն ընկաւ և որ այդ խճճեց իմ սկզբնա-
կան զաղափարները տաժանակիր կեանքի մասին:

Այս Գաղինը մի սարսափելի էակ էր: Նա ամենքի վերայ
մի աշռելի, տանջողական տպաւորութիւն էր գործում: Ինձ
միշտ թվում էր, որ ոչ մի բան չէր կարող նրանից աւելի
անտղորոյն և հրէշաւոր լինել: Ես Տօրով՝ սկում տեսայ իւր
ոճրագործութիւններով յայտնի՝ աւազակ կամենեին: Յետոյ
տեսայ դատապարտուած կալանաւոր Սոկոլովին, փախստական
զինուորներից, որը մի սարսափելի մարդասպան էր: Բայց նո-
ցանից և ոչ մինը այնպիսի զաղըելի տպաւորութիւն չէր գոր-
ծում վերաս, որպէս Գաղինը: Երբեմն ինձ թվում էր, որ ես
տեսնում եմ մի ահազին հսկայական սարդ մարդու մեծութեամբ:
Նա թաթար էր. ուժեղ էր սաստիկ, բանտում եղածներից ա-
մէնից ուժեղ. միջին հասակից բարձր էր, չերակլէսի կազմուած-
քով, անձոռոնի, անհամեմատ աշազին զլառով, ման էր զալիս մի
քիչ կոր, նայում էր յօնքերը կիտած: Բանտում նորա մասին
օտարութի լուրեր էին պտտում: զիտէին, որ նա զինուորական-
ներից էր, բայց կալանաւորները զըսց էին անում միմեանց
մէջ, չըգիտեմ, ուղիղ է արդեօք, որ նա փախստական է ներչե-
նսկից. Սիրիր աքսորուելն առաջին անգամը չէ, փախչելն էլ

առաջինը չէ, անուննն էլ շատ է փոխած և վերջը ընկաւ մեր
բանտի առանձին բաժանմունքը: Նորա մասին նոյնպէս պատ-
մում էին, որ նա առաջ փոքրիկ մանուկներ էր սիրում մոր-
թել միմիայն զուարձութեան համար, տանումէ եղել մանու-
կին մի որ և է յարմար տեղ, նախ վախեցնում է եղել նորան,
տանջումէ և թշուառ փոքրիկ զոհի սարսափից և սարսուռից
լիովին զուարձանալով, մորթում է եղել հանդարտ, դանդաղ,
զուարձութեամբ: Այս ամենը, շատ կարելի է, հարումէին այն
ընդհանուր ծանր տպաւորութեան տակ, որ գործումէր Գա-
ղինը իւր անձնաւորութեամբ ամենքի վերայ. բայց այս ամեն
մտահնար բաները մի տեստկ սազում էին նրան: Սակայն և
այնպէս նա բանտում իրեն լաւ էր պահում, չէր հարում, և
հասարակ ժամանակ խելացի էր վարվում: Միշտ հանդարտ էր,
ոչ ոքի հետ երբէք չէր կռվում և կռիւներից էլ խցյս էր տալիս,
կարծես դէպի ուրիշներն արհամարհանք զգալուց, կարծես ի-
րեն բարձր համարելով մնացեալներից, խօսումէր շատ քիչ և
ասես թէ դիտակցաբար անհաղորդասէր էր: Նորա բոլոր շարժ-
մունքները դանդաղ, հանդարտ, յանձնասպաստան էին: Նորա
աչքերից երեսում էր, որ նա շատ յիմար չէ և չափազանց խո-
րամանկ է. բայց մի ինչ որ ամբարտաւան ծիծաղաշարժ և
դաժան բան կար նորա դէմքի վերայ և ժապտի մէջ: Նա առ-
ևտուր էր անում օղիով և բանտում ամենաունեոր զինեվա-
ճառներից մինն էր: Բայց տարին մի-երկու անդամ պատա-
հում էր, որ ինքն էլ էր հարբում և ահա հէնց այստեղ էր
երեւան գալիս նորա բնութեան բոլոր զաղանութիւնը: Խմելուց
աստիճանաբար զլուխը մթնելով, նա սկսումէր մարդկանց ա-
ռաջ իւր ամենաչար ծաղըերը, որոնք որոշուած և կարծես վա-
զուց պատրաստուած էին լինում: Վերջապէս բոլորովին հար-
բելով նա սարսափելի կատաղութեան մէջ էր ընկնում, վերցը-
նում էր դանակը և յարձակվում մարդկանց վերայ: Կալան-
ւորները իմանալով նորա սարսափելի ոյժը, փախցում էին և
թաք էին կենում: Նա յարձակվում էր ամեն մի յանդիպողի վե-
րայ: Բայց շուտով նորան ընկճելու հնարը գտան: Նորա բըռ-
նատնից 10-ի չափ մարդյանկարծ բոլորը միասին ընկնում էին

նորա վերայ և սկսում էին ծեծել: Անկարելի էր երեակայել այս
ծեծից մի աւելի անողոք բան. զարկում էին նորա կրծքին, սրտի
դրդալի տակին, փորին. զարկում էին շատ երկար, և դադարում
էին միայն այն ժամանակ, երբ նա կորցնում էր իւր բոլոր զգաց-
մունքները և մեռեալ էր դառնում: Մի ուրիշին չին վստահա-
նայ այդպէս ծեծել այդպէս ծեծել—նշանակում էր սպանել,
բայց միայն ոչ Գաղինին: Ծեծելուց յետոյ նրան, բոլորովին զգա-
յացուրկ, փաթաթում էին կիսամուշտակի մէջ և տանում էին
տախտի վերայ:—«Կը պարկի, կը լաւանայ»:—Եւ ձիշտ, որ նա
առաւօտը վեր էր կենում գրեթէ առողջ և լրսիկ ու տըր-
տում գնում էր աշխատելու:—Եւ ամէն անգամ, երբ Գաղինը
հարրում էր, բանտում ամէնքը գիտէին, որ նորա համար օրը
անպատճառ կը վերջանայ ծեծով: Այդ նա ինքն էլ զիտէր, բայց
և այնպէս դարձեալ հարբում էր: Այսպէս անցաւ մի քանի տա-
րի: Վերջապէս նկատեցին որ, Գաղինը սկսում է ընկծուել: Նա
սկսեց գանդատուել զանազան ցաւերի վերայ, սկսեց նկատելի
կերպով տկարանալ հիւնանդանոց աւելի յաձախ էր գնում...
«Խօ ընկծուեց», ասում էին կալանաւորներն իրենք իրենց:

Նա խոհանոց մտաւ հինց այն անշնորհը ջութակահար լե-
հի ուղեկցութեամբ, որին սովորաբար վարձում էին քէֆանող-
ներն իրենց քէֆը լիտիատար անելու համար, և կանգնեց խո-
հանոցի մէջտեղը, լոփիկ և ուշադրութեամբ զննելով բոլոր ներ-
կայ եղողներին: Ամենը լուցին: Վերջապէս, տեսնելով այն
ժամանակ ինձ և ընկերոջս, նա չարութեամբ և քմծիծաղով
նայեց մեր վերայ, ինքնազոհ ժպտաց, կարծես ինքն իրեն մի բան
մտածեց և, սաստիկ տատանուելով, մօտեցաւ մեր սեղանին:

—Բայց թոյլ տուէք հարցնել, սկսեց նա, դուք ո՞ր հա-
սոյթներից էք բարեհաճում այստեղ թէյ խմել:

Ես լուռ փոխանակուեցի. Հայեացքով ընկերոջս հետ,
հասկանալով, որ աւելի լաւ է լոել և ըլպատասխանել նրան:
Առաջին իսկ հակածառութիւնից նա կը կատաղէր:

—Նշանակում է, որ դուք փող ունիք, շարունակեց նա
հարցութիւն անել:

—Նշանակում է, որ ձեր փողը բօլ է, հը:—Բայց մի՞թէ

դուք դորա համար էք տաժանակրութեան եկել որ թէյ խմէք:
Դուք թէյ խմելու էք եկել: Դէ՛հ, ասացէք, որ ձեզ...

Բայց տեսնելով, որ մենք վճռել ենք լուռ մնալ և չնկատել
նրան, նա կաս-կարմիր գարձաւ և կատաղութիւնից դողդողաց:
Նորա մօտ, անկիւնում, կար մի մեծ տաշա, որի մէջ դարսվում
էր կալանաւորների կերակրի կամ ընթրիքի համար կարտած
բոլոր հացը: Այնպէս մեծ էր նա, որ նորա մէջ բանտի կիսի հա-
մար հաց էր տեղաւորվում, իսկ այժմ նա դատարկ էր: Նա վեր-
ցրեց նրան երկու ձեռքով և ճօճեց մեզ վերայ: Մի քիչ էլ, և
նա կը ջախջախէր մեր դլուխները: Զընայելով, որ սպանութիւ-
նը կամ սպանելու միաքը մեծ անախորժութիւններ էր սպառ-
նում բոլոր բանտին՝ կսկսէին որոնումներ, խուղարկութիւններ,
խստութիւնները կաւելանային, դորա համար էլ կալանաւոր-
ները բոլոր ուժով աշխատում էին չհասցնել իրենց այդպիսի
ծայրահեղութիւնների, — չնայելով դրան, այժմ ամէնքը հան-
գիստ էին և սպասում էին վախճանին: Մեզ պաշտպանելու
համար և ոչ մի խօսք: Ոչ ոք չըգոռաց Գաղինի վերայ, — մինչեւ
այն աստիճան մեծ էր նոցա դէպի մեզ ունեցած արհամարհան-
քը: Նրանց, ըստ երեսյթին, ախորժելի էր մեր վտանգաւոր վե-
ճակը... բայց գործը վերջացաւ բարեյաջող կերպով. հէնց որ
նա ուզում էր իջեցնել դաշտը, ի՞նչ մինը կանչեց զաւթից.

— Գաղին, օղին գողացան...

Նա շպրտեց տաշտը յատակի վերայ և խելագարի նման
դուրս վաղեց խոհանոցից:

— Աստուած փրկեց, ասում էին միմեանց կալանաւորնե-
քը: — Եւ յետոյ երկար ժամանակ նրանք ասում էին այդ:

Ես չկարողացայ յետոյ իմանալ, թէ արդեօք օղին գողանալու
լուրը Ճիշտ էր թէ՝ ի դէպ հսարուած մեղ փրկելու համար:

Երեկոյեան, արդէն մթին, բռնատները փակելուց առաջ,
ես ման էի գալիս ձողերի շարքի մօտ և մի ծանր վեշտ պատեց
իմ հոգուն և յետոյ երբէք ես չեմ զգացել այդպիսի վեշտ իմ
ողջ տաժանակիր կեանքի ընթացքում: Ծանր է տանել աքսո-
րանքի օրն, ուր որ չըլինէր, թէ բանտի մէջ, թէ կազեմատում,
թէ տաժանակրութեան մէջ... բայց յիշում եմ, որ ամենից ա-

ւելի հետաքրքրում էր ինձ իմ տաժանակիր կեանքի բոլոր ժամանակը,—մի միտք, մասամբ անլուծելի,—անլուծելի ինձ համար հիմա էլ—այդ միենոյն յանցանքների համար պատժի անհաւասարութիւնն է: Ճշմարիտ է, յանցանքներն էլ չի կարելի համեմատել մինը միւսի հետ, մինչև անգամ մօտաւորապէս: Զօրօրինակ, սա էլ, նա էլ մարդ են սպանել երկու դործերի բոլոր հանգամանքները կշռուած են, և այս և այն գործի համար գրեթէ միենոյն պատիժն է դուրս գալիս: Մինչդեռ տեսէք, թէ ինչպիսի ղանազանութիւն կայ յանցանքների մէջ: Մէկը, զօրօրինակ, մարդ է մորթել այնպէս, մի ոչինչ բանի, մի սոխի համար. դուրս եկաւ ձանապարհի վերայ, մորթեց մի անցկացող գիւղայու, իսկ նորա մօտ գտնուեց մի հատ սոխ: «Է՞հ, ի՞նչ արած, այ մարդ: Դու ինձ աւարի ուղարկեցիր. ահա ես մի դիւղացի մորթեցի և ընդամենը մի սոխ գտայ:—Յիմար: Մի սոխ — և աշա մի կոպէկ: Տարիւր հողի—հարիւր սոխ, ահա քեզ մի բուրլի»:—(Բանտային առասպել) — Իսկ միւսը սպանեց, պաշտպանելով հեշտասէր բոնակալից հարսի, քրոջ, գստեր պատիւը:— Մինը սպանութիւն է դործում թափառաշըջելիս, պաշարուած լրտեսների ամբողջ գնդով՝ պաշտպանելով իւր աղատութիւնը, կեանքը, երբեմն սովամահ մեռնելով, իսկ միւսը փոքրիկ մանուկներ է մորթում մորթելու, իւր ձեռքերի վրայ նոյա տաք արիւնը զգալու, նոյա վախով, նոյա վերջին աղաւնեկան դողով նոյն իսկ դանակի տակ զուարծանալու հաջոյքից եւ ի՞նչ: Սա էլ, նա էլ, միենոյն տաժանակիր կեանքի մէջ են մտնում: Ճշմարիտ է, կայ տարբերութիւն դատապարտելի պատիժների ժամանակամիջոյների մէջ: Բայց այս տարբերութիւնները, համեմատաբար քիչ են, իսկ զանազանութիւններ միենոյն տեսակի յանցանքների մէջ—անթիւ, անհամար: Քանի բնաւորութիւն, այնքան էլ տարբերութիւն: Բայց դիցուք, թէ հաշտեցնել հարթել այդ տարբերութիւնը, անկարելի է, որ այդ իւր տեսակի մէջ մի անլուծելի խնդիր է—այսպէս ասած, շրջանի կվաղրատուրա է: Բայց եթէ մինչև անգամ այդ անհաւասարութիւնը գոյութիւն էլ չունենար—նայեցէք միւս տարբերութեան վերայ,

պատմի նոյն իսկ հետեւանքների տարբերութեան... Ահա մի
մարդ, որը հիւծվում է բանտում, հալվում է ճրագի պէս.
և ահա միւսը, որը մինչև տաժանակրութեան մէջ մտնելը
չըգիտէր անգամ, որ աշխարհումն կայ մի այդպիսի ուրախ
կեանք, ուրախ ու զուարթ ընկերների մի այդպիսի հայցա-
կան ակումբ: Այո՛, այդպիսիներն էլ են բանտ դալիս: Ահա,
զորօրինակ մի կրթուած, հասուն խղճով, զիտակցութեամբ
և սրտով մարդ: Նորա սեպհական սրախ ցաւը միայն իւր
բոլոր տանջանքներով ամէն պատիժներից առաջ, կըսպանէր
նրան: Նա ինքն իրեն կրդատապարտէ իւր յանցանքի համար
ամենախիստ օրէնքից աւելի անխնայօրէն և անգթաբար: Ահա
նորա հետ մի ուրիշն, որը մինչև իսկ չի մտածիլ և ոչ մի ան-
գամ իւր կատարած սպանութեան մասին, ամբողջ բանտարկու-
թեան ընթացքում: Նա մինչև անգամ իրեն արդար է համարում:
Բայց լինում են և այնպիսիներն, որոնք զիտութեամբ են յան-
ձանք զործում, որպէս զի միայն և եթ տաժանակրութեան մէջ
ընկնեն և, զրանով փրկուեն ազատութեան մէջ վայելած աւելի
տաժանակիր կեանքից: Նա այնտեղ ապրում էր ցածութեան ա-
մենավերջին աստիճանում, երբէք կուշտ հաց չէր ուտում և աշ-
խատում էր իւր արտօնատիրոջ համար առաւօտեանից մինչև
գիշեր. իսկ տաժանակրութեան մէջ աշխատանքն աւելի թեթև
է, քան թէ տանը. հացը առատ և այնպիսին նա գեռ չի տեսած.
տօն օրերին կովի միս, ողորմութիւն որ կայ, կոպէկ վաստակե-
լու հնար կայ: Իսկ հասարակութի՞ւնը: Վարպետորդի, ճարպիկ,
ամենազէտ մի հասարակութիւն, և ահա նա նայում է իւր ըն-
կերների վերայ յարգանաց զմայլանքով. նա գեռ ոչ մի ժամա-
նակ չի տեսել այդպիսիներին. նա նրանց ամենաբարձր հասա-
րակութիւն է համարում, որը կարող է միայն աշխարհիս մէջ
գտնուել: Միթէ այս երկուսի պատիժն էլ միակե՞րպ զգալի
է: Սակայն ինչու զբաղուեմ անլուծելի հարցերով: Թմբուկը
դարկում է, ժամանակ է հաւաքուել բոնատները:



ԲՆՈՒԹԻՒՆԸ

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

ՏԵՊԵՐ ԵԿ ՏԵՎՈՐՈՒՆՆԵՐ



Qarabagh (Şirvan) İmamzadeye Urfalıhanı



ՀԱՅ ԹԽԵԼԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ Մ

Հայ ընտանեկան տնտեսութեան մէջ, ինչպէս յայտնի է, ամենից աւելի երկար ժամանակ խլող ու զլիացաւանք պատճառող գործը հաց թխելն է: Այն մարդը միայն, ով որ ներկայ է գտնուել հաց թխելուս, զիտէ թէ որքան դժուարութիւններով է կատարվում այդ գործը: Հաց թխելու գործում առաջին տեղը բռնում է հացթուխը, ապա զրդնակ քաշողը, խմոր հունցողը, ալիւր մաղողը, հացը ետ տուողը և ապա ոտքի վերայ ծառայողները, որոնք բաղկացած են լինում տան ջահիլ աղջիկներից: Հացթուխը բացառապէս կանայք են, որոնք հաց թխելը իրենց համար իրեւ պատահական արհեստ չեն գործ ածում, այլ մշտապէս պարապում են այդ գործով և այնքան աւելի շատ հռչակվում, որքան աւելի հմտութիւն են ցըց տալիս: Շատ զիւղերում, նոյն իսկ քաղաքներում, երբեմն այնքան պակասութիւն է լինում հացթուխների, որ տանտիկինը ստիպուած է օրերով՝ նաև շաբաթներով՝ առաջ իմաց տալ և նախաղզուշացնել իւր հացթուխ Մարօյին, կամ հացթուխ Շուշանին, որ այս ինչ օրը ինքը հաց է թխում, ուրիշի «ումուգ» չտայ. Հացթուխներն էլ զարմանալի յիշողութիւն են ունենում: ամեն բան կարող են մոռանալ բայց «ումուգ» տուած օրերը երբէք չեն մոռանալ. կամենում էք՝ փորձի համար զիմեցէք մեր հացթուխ Մուխսուն, նա նոյն իսկ երկու ամիս շարունակ յետ յետեկի ումուգ տուած օրերը առանց սխալուելու կըթուի:

Հաց թխելու նախընթաց օրը՝ տանտիկինը հրաւէր է ուղարկում իւր հացթուխին, որը տնքտնքալով բարեհաձում է գալ: Այդտեղ պէտք է տեսնել թէ տանտիկինը ինչպէս է գուրգուրում հացթուխին հազար ու մի փաղաքական «նանի», «խաթուն», «քիքիր» ու այլ մեղքոտ ու շաբարոտ խօսքերով:

Եթէ թէյ են առաջարկում, երեք կտորի փոխարէն չորս կտոր
շաքար են ձգում, ընթրիբին արաղի բաժակը ամենից առաջ
հացթուլս Մուխուն են առաջարկում, որ հանդիսա քնի և
առաւտեան ծէզը չըբացուած Աստծու անունը տայ և թոնրի
շրթին նստէ: Մինչ հացթուլսը ննջում է հանգիստ քնով,
տանտիկինը ջահել հարսների ու աղջիկների հետ ամբողջ
դիշեր պատրաստուած էն պէսնուած, — ալիւր են մաղել տալիս,
հացի շորերն են մաքրում, ակչի ու շշի ժանգերն են քերում,
սեղանտախտակն ու գրդնակն են լուանում, մինչեւ որ հացթու-
լսի հետ ի միասին քնած խճոր հունցով ենում, աչքերը տրո-
րում է ու «Հայր մեր»-ը ծանր մրժնջալով, մի բուռը ջուր է
չոփ տալիս երեսին, գոգնոցով սրբում և նստում խմօրի տաշտի
առաջ հունցելու: Նախ քան հունցելը մի շարք բարեմազ-
թութիւններ են կտարուում տան ջահեների վերաբերու-
թեամբ, որ ամենքն էլ իրենց մուրազին հասնեն, բարով հարսա-
նիքի հաց էլ թիւնն և այլ շատ բաներ. ի հարկէ տանտիկինը յետ
չէ մնում անուշախօսութիւններին անուշախօսութեամբ պա-
տասխանելուց: Խճոր հունցուած էն մաս մաս, ամեն մի անգամուայ
հունցածը մի իաղաղ է ասուում: ամեն մի պաշտ երեք կամ չորս
փաղաղց է բաղկանում: Տաշտն էլ որոշ չափ է խմօրի. մի տաշտ
կամ երկու տաշտ ասելով հացթուլսը պարզ զաղափար է
կազմում խմօրի քանակութեան մասին: Երբ խմօր հունցովը
փաղաղ փաղաղ հունցելով վերջացնում է առաջ ին հունց,
այնուհետեւ բոլոր չորս փաղաղը ի միասին հունցում է տաշ-
տի մէջ և ծածկելով շորերով, որոնք ծեղար են կոչուում,
գնումէ հանգստանալու՝ մինչեւ որ խմօրը թթուի, կամ ինչ-
պէս իրենք են ասում, հունցուած խճոր գայ: Դեռ հացթուլսը
քնած է: Երբ մի քանի ժամից յետոյ տեսնում են որ հուն-
ցուածը թթուել է ու բարձրացել հաւաքուում են բոլորը
և սկսում գնութել մէկը նստում է տաշտի առաջ, աէլլազ հա-
ւասար չափով կտրում է խմօրը, իսկ միւսները այդ կտրա-
ծը ձեռքերի ափի մէջ տրորելով գնդի ձեւ են տալիս և նա-
խապէս փոռուած մաքուր սփոռոցների և մեզարների վերայ
կարգով զուգահեռական գծերով շարում: Դեռ գնդելը չըվեր-

ջացած տանտիկինը գնում է չոր փայտ՝ մացառ, կամ աթար, հաւաքում թոնրի շուրջը և սկսում է թոնիրը վառել: Թոնիրը շինում են կաւից և թրծում: Նրա խորութիւնը լինում է մօտ $2\frac{1}{4}$ արշին, իսկ արտաքին բերանի շրջագիծը մօտ $2\frac{1}{2}$ արշին. թոնրի ներքին կողմը լայն է արտաքինից, և դրսի օդի հետյարաբերութիւն ունի մի նեղ անցքով՝ որտեղից օդի հոսանք մանելով՝ նպաստում է շուտ վառուելուն. այդ անցքը կոչուում է ռադու:

Թոնիրը վարուսած է ու հաջրուած. աշա այս իսկ բոպէին տանտիկինը մեկին ուղարկում է հացթուխ Մուխսուն զարթեցնելու. հացթուխը վեր կենալով, լուացուում է իւր սովորական ծիսակատարութեամբ և սկսում է հագնուել: Բայց այս անգամ նա չէ հագնում այն հագուստը, որը երեկ ունէր հագին, այլ մի աշագին կապոց հին շորեր, գլխին կապում է մի քանի թաշկինակներ, ձեռքերին անցնում վերացնելով և մտնում հացարուն, աչքով անց է կացնում ամեն ինչ, նկատողութիւններ անում և սրատաստվում իւր գործն սկսելու: Թոնրի շուրջը նստում են միմիայն հացթուխը և գյուղակնողը, որը միշտ հացթուխի ձախ կողմն է նստում: Հացթուխը երբ տեսնում է որ իրակը նստելէ ու հանդարտել *), նստում է իրեն համար պատրաստած ճնշտարչի վերայ, ձեռքն է առնում հացթուխի պատրարչը, որը ծառայում է իբրև ձեռնոց կրակի և տաքութեան դէմ, կողքին պատրաստ դնում է մի ամանով ջուր, երկայն՝ կեռ երկաթի շելը, որով թոնրի մէջ ընկած հացերն է հանում և ձեռքն է առնում ռատիկնեն, հաց թիսելու գործիքը **). որի յետեր

*) Առհասարակ ամեն հացթուխ էլ նախ քան առաջին հացի կողին կացնելը, առնում է իւր ձեռքով փոշիամնից մի բուռը ալիւր և աղօթելով ու «Յանուն Հօր» ասելով՝ իտու Ֆանչ ցըռուում է ալիւր կրակի վերայ: Թէ ի՞նչ նշանակութիւն ունի այդ արարողութիւնը, իրենք հացթուխներն էլ չին բացատրում, նորանց ասելով՝ դա կրակի դժբ շափելու մի միջոց է: Բայց հազիւ թէ այդպէս լինի: Մեզ յայտնի է թէ մեր հիթանոսական ժամանակներից որքան սովորութիւններ են մատցել մեր մէջ Յայտնի է նյոնպէս թէ հացերը հիթանոսական աստուածներից Միհրին, կրակի աստուծուն, ամենից շատ էին պատուում, ուստի և հաւանական է ենթադրել որ այս սովորութիւնն էլ Միհրի բագմատեսակ զահարերութիւններից մէկը պիտի լինի, որը ներկայում կատարվում է հեթանոսութեան միանդամայն հակառակ, խաչի նշանով:

**) Ռափաթէն նման է երկայնաձև բարձի. նորա երկարութիւնն է լինում $1\frac{1}{2}$ արշ: շինած է ուռենու մատաղ ճիւղերից գործուած ձուաձև սալից, որ մի երեսը լցնելով փափուկ խօսերով երեսից կարում են բրդի կառը, աղոթիսովնա նմանում է կէս արած ձուի

ձեռքի համար տեղ է շինած: Հացթուկսի հետ նոտում է և գրտնակ տաշով, որի առաջ դրուած է լինում կոլոր աւանդախտակը յած ոտքերով: Գրտնակը փայտեայ զնանակ է 1 արշ երկայնութեամբ և 5 վերշ շրջագծով: Սեղան-տախտակի մօտ զնում են մի կծում ալիւր, որին ժոշէ են ասում, և մի անօթով ջուր:

Հացթուկսի և դրդնակ քաշողի նատելով գործողութիւնը սկսուում է: Ձահիները մեծ պղնձի ոնկներ ու տեխո-չներ ձեռքերն առած գնում են՝ գնդած խմորը բերում և յանձնում զրդնակ քաշողին, որը մէկ գունդ առնելով, տափակացնում է սեղան-տախտակի վերայ, փոշի է յանում վերան և զրդնակով տրորելով բարակացնում է, այնուհետեւ յանձնում է այդ զրդնակած խմորը հացթուկսին, որը առնելով սկսում է այս ձեռքից այն ձեռքի վերայ ձգելով աւելի լայնացնել և յարմարեցնելով իւր ռափաթի ձեխն փոռում է նորա երեսին և «Յանուն հօր և Որդւոյ» ասելով ու կրկին բարեմաղթութեանց տոպրակը բանալով առաջին հացը կպցնում թոնրի տաք կողին: Կացնում է երկրորդ, երրորդ, չորրորդ հացը յետ յետեկի: Այս ժամանակամիջոցում առաջին անդամուայ թիսած հացը արգէն եփած է լինում; ուստի և հացթուկը ձեռքը տանելով հանում է թոնրից առաջին հացը: Նորից բարեմաղթութիւններ են սկսուում: Առաջին հացը չեն ուտում, որովհետեւ առաջին հացի հետ էլ կապուած են մի շարք հրաշագործ զօրութիւններ. որպէս թէ ով առաջին հացը ուտի, նորա կինը տղայ կ'բերէ, ուստի և տանտիկինը պահում է այդ հացը և ուտացնում է նորան, ով տղայ չունի: Ի հարկէ երբեմն առաջին հացը ուտող հարսի վերայ կատարվում է նորա հրաշագործ զօրութիւնը և մի սիրուն տղայ տալիս, որով աւելի ամրապնդուում է առաջին հացի զօրութիւնը:

Առաջին հացը հանելուց յետոյ հացթուկսի գործը պարբերական է զառնում: Նա սկսում է մէկ խմոր զարկել և մի եփածը հանել մինչև որ վերջացնում է մի տաշտը: Տաշտը մօտ 300 գնդից՝ թիսելու համար հարսի վերայ կատարվում է նորա հրաշագործ զօրութիւնը և մի սիրուն տղայ տալիս, որով աւելի ամրապնդուում է առաջին հացի զօրութիւնը:

իսկ գաղտնի խօսակցութիւն, տանտիկինը բանումէ իւր սիրտը
հացթուխի առաջ, պատմումէ ամեն բան, միանգամցն Հա-
ւատացած լինելով, որ հացթուխը քաշանայի պէս լսածնե-
ները իւր մէջ իրեւ խօստովանութիւն կըպահէ և ոչ ոքի
չի ասիլ: Տանտիկինը բացի առօրեայ ընտանեկան կառավա-
րութեան վերայ խօսելուց, եթէ ջահիլ պսակուելու տղայ
ունէ, իւր հարսնացուների անուններն է աալիս, հացթուխի
կարծիքն էլ իմանալու. եթէ պսակելու կոյս աղջիկ ունի,
պարծանքով յայտնումէ, թէ այս ինչ տղան ուզեց չտուեց,
և վերջն էլ մատնացոյց է անում, թէ իւր աչքը դրանցից
որի վերայ է: Բացի այս տեսակ խօսակցութիւններից, տեղի
են ունենում և զուտ տնտեսութեան վերաբերեալ գատողու-
թիւններ, որոնք իսկը տնտեսական դասախոսութեանց ձե
ունին: Մինչ այս մինչ այն, թոնիրը սառչում է, պէտք է
տաքացնել, որովհետեւ այլ ևս հացը չէ եփում: Հացթուխը
վեր է առնում մի երկայն փայտի ձող, որին աննշաց են
ասում և սկսում է կրակը խառնել: բայց երբ տեսնում
է որ գորանով ոչինչ չէ լինում: Հարկաւոր է համարում նոց
անել: Բերում են մի կապոց խաղողի որթի Ճիւղեր՝ արտադ
և մի թեթեւ վառում թոնիրը: ահա այս թեթեւ վառելը նոց
է ասուում: Այնուհետեւ նորից քաղցր, երկար ու բարակ
զրոյց անելով սկսում են թիսել և վերջացնում են տաշտը:
Զպէտք է մոռանալ, որ հաց թիսելու մի լաւ սպորութիւն
է պահպանուում: իւրաքանչիւր տանտիկին պարտական է
թարմ նախայ հացերէց բաժին հանել իր հարեւաններին ու
բարեկամներին: Ի հարկէ նորանք էլ իրենց հերթին չեն զլա-
նում փոխարէնը գարձնել: Ահա այսպիսով հացթուխ Մուխ-
սին ու գրդնակ քաշող հոռոմսիմը վերջացնում են իրենց
գործը, ստանում են իրենց աշխատանքի վարձը (իւրաքան-
չիւր տաշտ խմորի համար 40 կ. և 20 հաց) և համեղ ընթ-
րիք վայելելուց յետոյ ուրախ՝ շնորհակալ սրտով հեռանում
են իրենց տները: Հացթուխի գնալով ընտանիքի անդամների
գործը չէ վերջանում: նորանք ետ տուած և փուած հացերը
ֆունչուն: Են և դաս դաս երաց վերայ դաշտուն: Կարենք հացը

ջոկ են գարսում: սովորակը ջոկ, ի՞ո՞ւիսո՞յը ջոկը, այսուած կամ նոնիցն ընկած հացը, որին կուպ են ասում, ջոկ: Երբ հացերը լրանում են, վերցնում և խիստ զգուշութեամբ դարսում են առանձնապէս հացի համար շինած մեծ սնդուկներում, նախապէս հացերի տակը քահանայից ստացած նշխարքը դնելով: Հացը դարսելուց յետոյ միւս օրը ջուր են տաքացնում և լուանում այն ամեն անօթները և շորերը, որոնք գործ են ածուել հաց թխելիս: Սորանով արդէն գործը վերջանումէ, տանտիկինը հանգիստ է, որ մի քանի ամսուայ համար պատրաստ հաց ունի: Նա փառք է տալիս Աստուծուն, գոհանում ու ցանկանում, որ շատ բարինէր և «որդիս որդուն ցածատ ալուն հաց նիւել դայ ու իւր ընտանիքի հետ վայելի *):

Առ հասարակ հայ ընտանիքներում և այն էլ բուն հայաստանում, ինչպէս հաց թխելը, նոյնպէս և շատ տնտեսական գործողութիւններ աւանդութեանց, ծիսակատարութեանց և ժողովողի բարոյական գծերի արտայայտման մի մի աղբիւրներ են: Մենք մոռանում ենք որ այս տնտեսական գործերը իրենց կապերով նկարագրելով ահազին օգուտ տուած կլինինք ապագայ ուսումնասէր սերնդին. մի ժողովրդի գցն, բարոյականութիւն ու ջերմեռանդութիւնը պէտք է նորա նիստ ու կացի մէջ որոնել իսկ եթէ այդ նիստ ու կացը այժմ ընկարագրենք, որը պահպանուում է գեռ նահապետական ընտանիքներում, այն ժամանակ կանցնեն տարիներ, դար, ժողովուրդը ենթարկուելով ուրիշ պայմանների, հետզհետէ կրմուանայ իւր աւանդութիւնները, ծէսերը, և ապագայ ուսումնասիրի գէպի հեռուն անցեալը թափանցելու ձգտումը կըպսակուի կատարեալ ապարդիւն աշխատանքով:

|| Պ Ե Ր Ա Յ Լ Ի Շ Խ Ը Յ Լ Ի Շ Խ Ը ||

*) Քաղաքներում երկու երեք ամիսը մի անդամ են թխում, և այդ թխուածը կոչուում է բարնանահաց, անժանահաց, և այլն. իսկ գիւղերում մեծաւ մասամբ տանտիկինը ինքն է թխում և համարեա ամեն օր կամ դոնէ շաբաթը երկու անդամ:






Тип. єд. Гоппе.


Հայ կանայք հաց թիւրիս.
Армянки, пекущія хлѣбъ.

Автотипія Ангерера въ Вѣнѣ.

Հրատ. «Արտօն» հանդիսէ:

Изд. лит.-худ. обозр „Аракес“.







тип. ЗД. Гоппе.

ՎԱՆԻՑ ԵՐԿԵ ԵՒ ՄԻՓԱՆԱՑ ԱՌՈՅ.
Ванское озеро.
Автотипія Ангерера въ Вѣнѣ

Հայոց առաջնա քահանե:

Изд. Апт.-худ. обозр. „Аракес“.








Фото А. Родионова

А. РОДИОНОВЪ


Варакскія горы въ Турецкой Армени.

Автотипія Ангерера въ Вѣнѣ.

Зб.-ч. «Вѣрблюдъ» № 2-3-4-5-6

Изд. зем.-худ. обозр. «Аракесъ»







ТИП. ЗД. ГОДЧЕ


ԲԱՇԿԱԼԵ ՔԱՂԱՔԸ ՏԱՐԿԱՆԱՅԱՍԱՆՈՒՄ.
Башкале, въ Турецкой Армении.

Автотипія Ангерера въ Вѣнѣ.

Հրատ. «Արգում» Գանդիսի:

Изд. лит.-худ. обозр. „Аракес“.







Типъ за Године

ԱՐՄԵՆԻԱՆ ԳԻՒՂԻ ՏԵՍԱՐԱՆԸ.

Видъ села Сарушен.

Автотипія Ангерера въ Вѣнѣ.

Հրատ. «Երտու» հանդիսական:

Изд. лит.-худ. обозр. „Аракес“.





ՀԱՅԿԱԿԱՆ

ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹԻՒՆ

THE MUSEUM

OF NATURAL HISTORY



Ա. Գևարգի ժամատան արևմտեան դուռը.
Западный входъ Кегартского монастыря.

Автотипія Ангерера въ Вѣнѣ.






Тип. Ф.Д. Томас.

Ա. Փողոս Պետրոսի մատուռը Եշվայում.
Часовня Св. Петра и Павла въ Елидже.

Автотипія Ангерера въ Вѣнѣ.



ЧАС. 53. ТОПКА.

Գոշ Արևիթարի հրաշակերտ խաչքարը.

Каменный крестъ въ монастырѣ Гоша-Мхитара.

Մ. Փափագեանի լուսանկարից.

Автотипія Ангерера въ Вѣнѣ.

ՀՐԱՄ. «ԱՐԵՎԻ» ՀԱՆՐԵՎԵԼ:

Изд. лим.-худ. обозр. „Аракс“.






Числ. за голове.

Գոշ Միհթարի մի ուրիշ հրաշակերտ խաչքար.
Каменный крестъ въ монастырѣ Гоша-Мхитара

Մ. Փափազեանի լուսանկարից.

Автотипія Ангерера въ Вѣнѣ.



„ԱՐԱՔՍԻ“ ԱՅՍ ԳՐՁԻ ՆԿԱՐՆԵՐՆ

ԲՆ ԱԳՐՈՒՄ

1.	Գլխանկար.	1
2.	Սարուշեն զիւղե ահսարանը	33	
3.	Սարուշեն զիւղե եկեղեցին.	44		
4.	Սարուշենի զիւղականք և «Այլապեան» գողբ. սաներ.	48		
5.	Վանի միջնարերգը Սյդեստանից	57		
6.	Վարագայ վանքի ասձարը	59		
7.	Վարագայ վանքի միաբանութիւնը և Սենեքերիմ՝ թագաւորի գահը.	62		
8.	Մատթէոս եպ. Եղմիրլեան.	65		
9.	Ստեփաննոս եպ. Միսիթարեան.	119		
10.	Խորէն արքեպ. Նար-Պէյ.	156		

ԲՆ ՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

11.	Վանայ ծովը և Միփանայ առըր.
12.	Վարագայ լեառը.	
13.	Բիթլիս.	
14.	Բաշգալէ.	
15.	Հայ կանայք հաց թիսկիս.	
16.	Զանգուի (Յրազգան) կամուրջը Երևանում.	

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՏՏՐԱՊԱԳԵՏՈՒԹԻՒՆ

17.	Ա. Գեղարզի ժամատան արևմտեան գուռը.
18.	Ա. Պողոս Պետրոսի մատուռը Ելեջայում.	
19.	Գօշ Միսիթարի հրաշակերտ խաչքարը.	
20.	Մի նոյնպիսի ուրիշ խաչքար.	

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԲԱԺԻՆ

21.	Տիրամայր, Ռաֆայէլ Սանցիզի. (Դարձութե և Դարձութե).
22.	Նիսգարի Զրվէժը, Յ. Այլազովսկին.	
23.	Ցիսուս և Սամարացի կինը, Յ. Ալեքսանդրովսկին.	
24.	Ցուերժահարս, Պ. Թումանյան:	
25.	Ֆելլահ կինը իւր մանկան հետ, Ն. Զիելէլի.	
26.	Հեքիաթ, Կ. Բարեկամուղլունի.	
27.	Փոթորիկից առաջ, Է. Մահմետանցի:	
28.	Տաճկահայ բեռնակիրը, Էտիւդ Գ. Գաբրիէլէլեանցի.	
29.	Տաճկահայ բանուորը, Էտիւդ Գ. Գաբրիէլէլեանցի.	
30.	Արշալոյս, Ակար Հանրի: Շապիկի երկորդ երեսում:	
31.	Վանդակի փայտի վերայ, Ակար Զիահուշւլը.	

ԱՐԱՔՈՒ

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՎԵՑԱՄՍԵԱՅ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ ՀԱՆԴԻՍԻ ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է Յ ՈՈՒԲԻ
ԻՒՐԱԲԱՆՉԻՐ ԳԻՐՔԸ ԱՈԱՆՉԻՆ ԱՐՁԵ . . . 2 Ռ. 50 Կ.
ԱՄԵՆ ՄԻ ԳԻՐՔԸ ԲԱՂԱԿԱԼՈՒ Է 12 ԹԵՐԹԻՑ ՈՒԹԱՑԱԼ ԴԻՐՔՈՎ ԵՒ 24 ՆԿԱՐԻՑ

„ԱՐԱՔՈՒ“ 1892 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ ՓԱԿՈՒԱԾ Է

ՇԱՐՈՒՆԱԿՈՒՄ Ե

«ԱՐԱՔՈՒ» 1893 թ. ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆԸ

ԱՊԱՋԻՆ ԵՒ ՎԵՐԱԴԻՐ ՎՃԱՐՈՎ, ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ
Ա.ՄԵՐԵԲԻՆ ԶԵ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ԵՐԿՐՈՓ ԳԻՐՔԸ ԼՈՅ ԿԵՏԵՈՒԻ ԳԵԿՑԵՄԲԵՐԻՆ

„ԱՐԱՔՈՒ“ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԵՏ ԳՈՐԾ ՈՒՆԵՑՈՂՆԵՐԸ ԵՒ ԲԱԺԱՆՈՐԴ
ԳՐՈՒԹԱՆԵՐԸ ԴԻՄԵԼՈՒ ԵՆ ՍԻՄԵՕՆ ԳՈՒԼԱՄԻՐԵԱՆՑԻՆ ԸՆԴ ՄԻԴԱՆ ԱՅՐՈ ԵՒ
ՄԻԱՆԳԱՄԱՅՆ ԱՊԱՋՈՎ ՀԱՍՑԵՈՎ.

С.-Петербургъ. Симеону Гуламирянцу *կոմ* St. Petersbourg. Simeon Goulamirantz.

Արտասահման բաճանորդ Գրուել ՅԱԿԱՅՈՂՆԵՐԸ ԿԱՐՈՒ ԵՆ ԴԻՄԵԼ ՆԱԵՐ ՄԱՐՍԵՅ, ԱՐԺ.
ՖԱՅՐ. ՍԱՀԱԿ ՎԱՐԴԱՐԵԱ ԱՎԱԼԵԱՆՆ ԱՅՍ ՀԱՍՑԵՐ.

Rev. Père Sahak Ayvadian. Rue de l'Orgueau, 13, Marseille.
(France)

ԱՐԱՋԱՎԱՐԻ ՀԱՄԱՐ ԽԱՋԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է 4 ԱԽՏՈՒՐԻԿԱՆ ԳՈՒՂԵՔՆ ԿՈ. 8 ՁՐԱԿ

Дозволено цензурою. С.-Петербургъ, 18 Мая 1893 года.

Паровая Скоропечатня Я. И. Либсмана (Вознесенский пр., № 38-4).